Тест "Что лишнее?" позволяет судить о степени сформированности мышления, умения находить существенные признаки предметов, умения сравнивать и обобщать. Результат оценивается в баллах:

9 - 10 баллов - высокий уровень (ребенок правильно решил все задания менее чем за 1,5 минуты).

7 - 8 баллов - выше среднего (ребенок справился с задачей за 2 минуты).

5 - 6 баллов - средний уровень (ребенок за 3 минуты справляется с заданием; возможно, не выполняет одно из заданий).

3 - 4 балла - ниже среднего (ребенок за 3 минуты не выполняет 2 - 3 задания).

0 - 2 балла - низкий уровень (ребенок за 3 минуты не справляется с заданием или выполняет только одно из заданий).

Исходя из полученных данных, можно сделать вывод о том, что уровень развития мышления у учащихся этого класса низкий и ниже среднего.

И лишь 44% детей имеют средний уровень развития мышления.

Таким образом, по результатам диагностик можно говорить о том, что учащиеся нуждаются в занятиях, направленных на развитие познавательных способностей.

График 2. Уровень развития мышления у второклассников по результатам первоначальной диагностики

Поэтому на втором этапе нашего исследования, мы считаем, целесообразным проведение интеллектуальных игр во внеурочное время.

В течение 5 недель с младшими школьниками проводились разнообразные игры на развитие познавательных способностей, а именно на мышление и внимание.

Исходя из полученных данных, после проведения с детьми дидактических игр, результат значительно отличается от первоначального; а именно возросла концентрация внимания, оно стало более устойчивым, об этом свидетельствует увеличение количества верно выделенных слов.

В результате проведенной выходной диагностики, можно сделать вывод, что результаты показанные детьми в основном повысились, сформировались умения находить существенные признаки предметов, умение сравнивать и обобщать. После проведения дидактических игр, мы видим, что большинство детей имеют средний уровень развития мышления, даже 27,7% учащихся имеют уровень развития мышления выше среднего, что не наблюдалось при проведении первоначальной диагностики.

График 3. Сравнительные контрольные данные результатов (тест "Что лишнее?")

Выводы и рекомендации: анализируя проведенное исследование, можно судить об эффективности использования дидактических игр для развития познавательных способностей, а именно внимания и мышления у младших школьников. Подтверждением выше сказанному служат полученные нами результаты диагностик - возросла концентрация внимания, оно стало более устойчивым, сформировались умения находить существенные признаки предметов, умение сравнивать и обобщать. У учащихся происходит становление и развитие форм сознания и самоконтроля, исчезает боязнь ошибочных шагов.

2.2 Дидактические игры на уроках математики как основа развития познавательных способностей младших школьников

В последнее время педагоги и родители часто сталкиваются с трудностью приобщения детей к активному отдыху. Одной из самых доступных форм активного досуга остается игровая деятельность.

Большим успехом пользуются интеллектуально - творческие игры для младших школьников. Можно выделить следующие виды таких игр: литературные игры: формируют интерес к чтению у учащихся. Познакомившись с какой - либо книгой, дети всем классом готовят домашнее задание и приходят на игру, которая включает интеллектуальные, творческие, подвижные задания и конкурсы. Цель таких игр - формирование познавательного интереса у учащихся, развитие индивидуальных способностей, освоение навыков коллективной деятельности.

Игры на комбинирование: это такие игры, как танграм, игры со спичками, логические задачи, шашки, шахматы, головоломки и другие - предусматривают умение создавать новые комбинации из имеющихся элементов, деталей, предметов.

Игры на планирование: лабиринты, головоломки, магические квадраты, игры со спичками - направлены на формирование умения планировать последовательность действий какой - либо цели. Способность планирования проявляется в том, что ученики могут определить, какие действия выполняются раньше, а какие позже.

Игры на формирование умения анализировать: найди пару, найди лишнее, загадки, продолжи ряд, занимательные таблицы - предусматривают умение объединять отдельные предметы [5, с.31].

Своеобразие дидактических игр заключается в том, что она одновременно является формой обучения, в которой содержатся все структурные элементы (части), характерные для игровой деятельности детей: замысел (задача), содержание, игровые действия, правила, результат. Но проявляются они в несколько иной форме и обусловлены особой ролью дидактической игры в воспитании и обучении детей дошкольного возраста.

Результат дидактической игры - показатель уровня достижения детей в усвоении знаний, в развитие умственной деятельности, взаимоотношений, а не просто выигрыш, полученный любым путём.

Игровые задачи, действия, правила, результат игры взаимосвязаны, и отсутствие хотя бы одной из этих составных частей нарушает её целостность, снижает воспитательное и обучающее воздействие.

В дидактических играх перед детьми ставятся те или иные задачи, решение которых требует сосредоточенности, внимания, умственного усилия, умения осмыслить правила, последовательность действий, преодолеть трудности. Они содействуют развитию у дошкольников ощущений и восприятий, формированию представлений, усвоению знаний.

Эти игры дают возможность обучать детей разнообразным экономным и рациональным способам решения тех или иных умственных и практических задач. В этом их развивающая роль.

Необходимо добиваться того, чтобы дидактическая игра была не только формой усвоения отдельных знаний и умений, но и способствовала бы общему развитию ребёнка, служила формированию его способностей.

Дидактическая игра содействует решению задач нравственного воспитания, развитию у детей общительности. Учитель ставит детей в такие условия, которые требуют от них умения играть вместе, регулировать своё поведение, быть справедливым и честным, уступчивым и требовательным.

Успешное руководство дидактическими играми, прежде всего предусматривает отбор и продумывания их программного содержания, чёткое определение задач, определение места и роли в целостном воспитательном процессе, взаимодействие с другими играми и формами обучения. Оно должно быть направлено на развитие и поощрение познавательной активности, самостоятельности и инициативы детей, применение ими разных способов решения игровых задач, должно обеспечивать доброжелательные отношения между участниками, готовность прийти на помощь товарищам.

Учитель намечает последовательность игр, усложняющихся по содержанию, дидактическим задачам, игровым действиям и правилам. Отдельные, изолированные игры могут быть очень интересными, но, используя их вне системы, нельзя достигнуть общего обучающего и развивающего результата. Поэтому следует чётко определять взаимодействие обучения на занятиях и в дидактической игре.

Дидактическая игра как одна из форм обучения проводится во время, которое отводится в режиме на занятия. Важно установить правильное соотношение между этими двумя формами обучения, определить их взаимосвязь и место в едином педагогическом процессе.

Дидактические игры иногда предшествуют занятиям; в таких случаях целью их является привлечение интереса детей к тому, что будет содержанием занятия. Игра может чередоваться с занятиями, когда необходимо усилить самостоятельную деятельность детей, организовать применение усвоенного в игровой деятельности, подвести итог, обобщить изученный на занятиях материал.

Заключение

Сегодня, как никогда широко осознается ответственность общества за воспитание подрастающего поколения. Преобразование общеобразовательной и профессиональной школы нацеливает на использование всех возможностей, ресурсов для повышения эффективности учебно-воспитательного процесса.

Далеко не все педагогические ресурсы используются в сфере воспитания и развития ребенка. К таким мало используемым средствам воспитания относится игра.

А между тем, педагогика и психология видят в игре такие важные особенности как:

полифункциональность - возможность предоставить личности позицию субъекта деятельности вместо пассивного "потребителя" информации, крайне важные для эффективности учебно-воспитательного процесса.

Дидактическая игра является основой развития познавательных способностей младших школьников. При организации дидактических игр необходимо учитывать возрастные особенности учащихся, так как младший школьный возраст - это период позитивных изменений и преобразований. Поэтому так важен уровень достижений, осуществленных каждым ребенком на данном возрастном этапе. Если в этом возрасте ребенок не почувствует радость познания, не приобретет умения учиться, сделать это в дальнейшем будет значительно труднее и потребует неизмеримо более высоких душевных и физических затрат. В игре в той или иной мере формируются свойства, необходимые для учения в школе, обуславливающие готовность к обучению.

На разных этапах развития детям свойственны разные игры в закономерном соответствии с общим характером данного этапа. Участвуя в развитии ребенка, игра сама развивается. Для того чтобы игра была эффективным средством развития и воспитания ребенка, при организации и проведении игр необходимо выполнение следующих условий:

Содержание игры должно служить развитию и воспитанию. Игры должны быть обязательно: эмоциональные (чтобы привлекали ребенка, доставляли ему удовольствие, радость); познавательные, обучающие (ребенок должен учиться чему-то новому, что-то узнавать, решать, мыслить); игры должны быть социально ориентированные.

Основная цель педагога - последовательно руководить процессом формирования самостоятельной игры у каждого ребенка и коллектива в целом, т.к. только игра в форме детской самостоятельности в наибольшей степени влияет на психическое развитие ребенка. В этом заключается её педагогическая ценность. Необходимо, чтобы игра не потеряла своей ценности, свободы и непринужденности.

Необходим учет индивидуальных и возрастных особенностей.

При соблюдении этих условий игра будет служить развитию и воспитанию ребенка.

Анализируя проведенное исследование, можно судить об эффективности использования дидактических игр для развития познавательных способностей, а именно внимания и мышления у младших школьников. Подтверждением выше сказанному служат полученные нами результаты диагностик - возросла концентрация внимания, оно стало более устойчивым, сформировались умения находить существенные признаки предметов, умение сравнивать и обобщать.

Поэтому, мы считаем, целесообразным проведение дидактических игр и активное включение учащихся в этот процесс.

Список литературы

1. Алферов А.Д. Психология развития школьников: Учебное пособие по психологии. - Ростов на/Д: изд-во Феникс, 2000. - 384с.
2. Вахрушева Л.Н. Проблема интеллектуальной готовности детей к познавательной деятельности в начальной школе // Начальная школа. 2006. - № 4. - с.63-68.
3. Гальперин П.Я. Введение в психологию: Учебное пособие для вузов. - 2-е изд. - М.: Университет, 2000. - 336с.
4. Гуров В.А. Интеллектуально - творческие игры // Начальная школа. 2005. - № 5. - с.121 - 122.
5. Жукова З.П. Развитие интеллектуальных способностей младших школьников в ходе игры // Начальная школа. 2006. - № 5. - с.30-31.
6. Лейтес Н.С. Возрастная одаренность школьников: Учебное пособие по психологии. - М.: Академия, 2000. - 320с.
7. Люблинская А.А. Учителю о психологии младшего школьника: Учебное пособие для учителя. - М.: Просвещение, 1997. - 224с.
8. Немов Р.С. Психология: Учебное пособие для студентов пед. учеб. заведений. - 2-е изд. - М.: Просвещение, 1995. - 496с.
9. Орлик Е.Н. Тексты, развивающие логику и мышление. - М.: Грамотей, 2003. - с.48-56.
10. Педагогический словарь. / Под ред. И.А. Каирова. - М.: Изд-во Академии педагогических наук, 1960, Й том. - 775с.
11. Петровский А.В. Психология. - М.: Академия, 2000. - 512с.
12. Смирнова Е.О. Психология ребенка. - М.: Школа-пресс, 1977, с. 200-215.

13. Талызина Н.Ф. Формирование познавательной деятельности младших школьников. - М.: Просвещение, 1988, с.38-48.
14. Тарабарина Т. И. 50 развивающих игр. - Ярославль: Академия, 2003. - с.12-43.
15. Шагрева О.А. Детская психология // теоретический и практический курс. - М.: Владос, 2001. - с.243-254.

Приведём пример урока.

Математика. Тема: <<Деление с остатком>>. Класс: 2-ой.

Тип урока: урок-путешествие. Форма проведения: игра

Цель: 1. Ознакомить с приёмами деления с остатком; 2. Закрепить умение выполнять внетабличное умножение и деление; 3. Развивать логическое мышление, память, математическую речь; 4. Воспитывать любознательность, любовь к математике

Ход урока:

1. Организационный момент, мотивация. Звучит фонограмма <<Ты слышишь, море?>> Под музыку ученики отправляются в путешествие по морю в поисках математических сокровищ. Дети строят парус при помощи решения задач на карточках (3 ученика). Дают название паруснику.

Карточка 1 На камбузе на одну порцию матроса дают 3 блина. Сколько надо испечь блинов для экипажа из 16 человек?

Карточка 2 В нашем экипаже 14 мальчиков и 12 девочек. Чтобы доплыть до берега, они садятся в 2 шлюпки поровну. Сколько человек уместится в каждую шлюпку?

Карточка 3 Кит-полосатик имеет длину 20 м., он на 16 м короче рыбы-меча. Какова длина рыбы-меча?

Даём название кораблю

по	бе	да
----	----	----

На обратной стороне карточек – примеры на умножение и деление

Остальные ученики изучают карту путешествия.

II.Актуализация знаний.

а)Карта разделена на кусочки. Нужно её восстановить. Дети работают на индивидуальных дощечках.

- Напишите пример с ответом 48
- Найдите произведение чисел больше этого на 4
- Делимое 56, делитель 28. Запиши частное
- Первый множитель 18, второй 5. Запиши произведение
- Чему равно частное чисел 96 и 16?

Карта восстановлена.

Необходимо проверить двигатель: 23X3, 15X6; 93:31; 72:4

Продолжается путешествие. Необходимо пройти преграду-рифмы

Кодограмма

A	7	6	
b		9	8
aXb	49		48
C	32		36
d		8	4
c:d	4	7	

б) Банановый остров. На острове дети встречают грустных мартышек. Они выбросили бананы с задачами, т.к. не могут их решить. Дети помогают.

Задача: У двух мартышек 5 бананов. Смогут ли они разделить бананы поровну? $5:2=?$ $5:2=2$ (ост. 1) (Ученики убедились, что не всегда можно делить без остатка)

В) Остров сокровищ: Находят сундук с замком. Они должны расшифровать, решив пример $23:4$ с объяснением

III. Закрепление. а) Остров Богатого Улова

Дети вылавливают из озера золотые рыбки, на которых примеры. Решают их с объяснениями

Физкультминутка (встретили аборигенов и с ними танцуют танец <<Чунга-чанга>>

В) Пещера Флинта. Вход закрыт. Его можно открыть, составив задачу по выражению $21:3$; чтобы забрать сокровища решают выражение $48:6 \times 7$; $27:3 \times 5$; $48 \times 1 + 56 \times 0$; $0 \times 75 + 5 \times 16$; чтобы увести сокровища строят плот: решают задачу: Как разделить между тремя пиратами 3 жемчужины, и одну оставить себе?

IV. Самостоятельная работа по карточкам с объяснением решения.

V. Рефлексия: чему научило путешествие; что привезли в сундуке; какие математические сокровища открыла каждая драгоценность?

Выставление оценок.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
Դասընթացներ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Բնագիտության ուսուցումը և բնապահպանական
վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը»
առարկայի միջոցով»

Կատարող՝ ԱԼԼԱ ԱՍԱՏՈՒՐԻ ՆԻԱԶՅԱՆ

Ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ ԼՈՒՍԻՆԵ ՄԻՐԱԲՅԱՆ

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն -----	3
Բաժին 1. «Ես և շրջակա աշխարհը» >> ինտեգրված առարկայի պատմական նախադրյալները-----	5
Բաժին 2. Բնագիտության ուսուցումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով -----	9
Բաժին 3. Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով -----	11
Բաժին 4. Ուսումնաճանաչողական արդյունքների գնահատումը -----	18
Եզրակացություն -----	20
Գրականություն -----	21

Ներածություն

Մինչ հետազոտությանն անցնելը, նախ իմանանք, թե ինչ է հետազոտությունը: Հետազոտել՝ նշանակում է իրականացնել որոնողական աշխատանք՝ կարծես նայելով դեպի ապագա: Երևակայությունը, երազանքը, որոնք հենվում են գիտության և տեխնոլոգիայի իրական նվաճումների վրա, համարվում են գիտական հետազոտության կարևոր գործոններ:

Հետազոտել՝ նշանակում է փնտրել-գտնել կապեր երևույթների, փաստերի և իրադարձությունների միջև:

Հետազոտության ընթացքում ոչ միայն պիտի գտնենք նոր փաստ, այլև տանք դրան բացատրություն, ցույց տանք ճանաչողական, տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտությունների գաղափարները ծնվում են պրակտիկայից, շրջակա աշխարհի դիտարկումներից և կյանքի պահանջներից: Մեզ հայտնի են պատահական հայտնագործություններ (օրինակ՝ պենիցիլին՝ 1929թ., պլաստմասսա՝ 1907 թ., չիպսը՝ 1853 թ., շոկոլադե հատիկներով թխվածքաբլիթ՝ 1937թ.), այնուամենայնիվ միայն պլանավորված, ժամանակակից միջոցներով (հեռախոս, համակարգիչ, տեսախցիկ) հետազոտությունն է հնարավորություն տալիս բացահայտել և ճանաչել բնության ու հասարակության օբյեկտիվ օրինաչափությունները:

Արդիականությունը կայանում է նրանում, որ ամբողջ աշխարհում ուղեկցվում են հիմնարար բարեփոխումները, որի ընթացքում կրթական համակարգի խնդիրներն են մանկավարժական մոտիվացիայի և կոմպետենցիոնալ բարձրացումը, մանկավարժների գործունեության արդյունավետության և սովորողների առաջադիմության կապակցվածությունը:

Այժմ մանկավարժն իր գործունեության ընթացքում օգտագործում է այնպիսի ժամանակակից միջոցներ, մեթոդներ, հնարներ, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում նպատակին հասնելու համար:

Հետազոտության նպատակներն են՝

- ուսումնասիրել բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը միտված առկա գիտական, գիտատեսական, գիտամեթոդական գրականությունը,

- ծանոթանալ <<Բնագիտության>> ու <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաների ուսուցման միջոցով բնապահպանական վերաբերմունքի ձևավորման վերաբերյալ գոյություն ունեցող առաջավոր մանկավարժական մոտեցումներին:

Հետազոտության խնդիրները

- նկարագրել ` առարկայական ինտեգրման առանձնահատկություններն ու միջոցներ,
- Բացահայտել ` նպատակը և խնդիրները, ժամանակակից տեխնոլոգիաները
- Նշել ` ուսուցման արդյունքների վերահսկողության տեսակները, մեթոդներն ու ձևերը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման գործընթացում, Իրականացնել ` ուսումնաճանաչողական գործունեության արդյունքների գնահատում:

Բաժին 1. <<Ես և շրջակա աշխարհը>> ինտեգրված առարկայի պատմական նախադրյալները

Բնագիտության դասավանդման մեթոդիկան, որի մասն է կազմում <<Ես և շրջակա աշխարհը>> ինտեգրված առարկայի ուսուցման մեթոդիկան, անցել է պատմական զարգացման երկարատև ուղի: Այդ ընթացքում սահմանվել են առարկայի նպատակները, խնդիրները՝ ըստ արդիական անհրաժեշտության: Այդ խնդիրներից շատերն այսօր էլ արդիական են և <<Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասավանդման շրջանում նոր լուծումներ են ստանում՝ համապատասխանեցնելով ժամանակակից հասարակությանը:

Բնության մասին առաջին գիտելիքները մարդը ձեռք է բերել դեռևս իր ծագման սկզբում: Նախամարդը բնության հետ պայքարում (սննդի հայթայթում, վայրի կենդանիներից, բնական երևույթներից պաշտպանվել և այլն) կուտակել է բնության մասին որոշակի գիտելիքներ:

Բնագիտական գաղափարների ձևավորումը սկսվել է դեռևս հնագույն ժամանակներում: Թեոֆրաստը (մ.թ.ա 370-288թ.թ.) <<Հետազոտություն բույսերի մասին>> աշխատության մեջ սահմանել է որոշակի հասկացություններ, դիտարկել է բնակլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի դերը բույսերի զարգացման գործում: Ելնելով մարդ-բնություն փոխհարաբերությունից՝ Հիպոկրատն ասել է, որ մարդու կենսագործունեությունը պայմանավորված է շրջակա բնական միջավայրով: Բնության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև եգիպտացիները, ասորիները, հրեաները, հայերը: Պատմական փաստերը վկայում են, որ մ.թ.ա. 12-րդ դարում Տուշպա քաղաքում Մենուա I թագավորը կառուցել է արքայական այգի, որտեղ մշակվել են արժեքավոր դեղաբույսեր:

Բնապահպանական մշակույթ ունեցող հայ ժողովուրդը առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել բնության նկատմամբ, որի մասին վկայում են բազմաթիվ օրինակներ: Օրինակ՝ 330թվականին Խոսրով Բ Կոտակ թագավորի տնկած Տաճար Մայրի և Խոսրովակերտ արգելոց անտառները, որի նպատակն էր պահել Էկոհամակարգը, բնական հարստությունները:

Ըստ IV դարի հայ մտածող Եզնիկ Կողբացու՝ բնությունը կազմված է չորս տարրից՝ հրից, օդից, ջրից, հողից՝ որոնք իրարամերժ են, սակայն, երբ հանդես են գալիս որոշ համադրությամբ, դառնում են օգտակար և վերանում է ներքին հակադրությունը:

Եղիշե պատմիչը (V դար) «Արարածոց մեկնությունը» աշխատությունում նույնպես անդրադարձել է բնագիտական գաղափարներին, իսկ 5-6-րդ դարերի փիլիսոփա Դավիթ Անհաղթն ասել է, որ բնությունը ճանաչողության աղբյուր է և անհրաժեշտ է ուսումնասիրել բնագիտությունը, քանի որ նպաստում է մարդու ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Նրա գաղափարների հիման վրա զարգացավ բնագիտական մի նոր ուղղություն, որի ներկայացուցիչներից էր Անանիա Շիրակացին: Նրա «բնագիտություն» առարկայի բովանդակության մեջ և ուսուցման գործընթացում առաջնային էր համարվում ընդհանուրից մասնավորին անցումը՝ ամփոփել ընդհանուր մասը (բուսաբանություն), հետո անցնել յուրաքանչյուր բույսի ուսումնասիրմանը:

Միևիթար Գոշն իր առակների ժողովածուն կազմել է ուսուցողական- խրատական նպատակներով: Նրա առակների բովանդակության մեջ ներառված են նաև բույսերի մասին ավելի քան չորս տասնյակի հասնող նկարագրություններ:

Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց» աշխատության մեջ առանձնացրել է բուսաբանական բաժին, որտեղ տեղեկություններ է ներկայացրել կենդանական և բուսական օրգանիզմների քիմիական բաղադրության նմանությունների ու նրանց կյանքի տևողության վերաբերյալ:

1818 թվականին բժիշկ-գիտնական Ստեփանոս Շահրիմանյանը գրել է «Տնկաբանություն կամ փղորայ Հայոց» աշխատությունը, որը մինչ օրս ձեռագիր պահվում է Մատենադարանի ձեռագրերի ֆոնդում:

Ավելի ուշ՝ 1884 թվականին, Համազասպ Սափարյանը կազմել է «Բուսաբանություն» դասագիրքը, որում ներկայացված ուսումնական թեմաները կից տրվաց նկարները, բույսերի նկարագրությունը վկայում են, որ հեղինակի կողմից ապահովվել է կրթական բովանդակությունը, ուսման սկզբունքների, մեթոդների, միջոցների արդյունավետ և նպատակային հարաբերակցումը: Խոսելով զննականության մասին՝ Գ. Մենեվիշյանն առաջարկել է դասի ընթացքում կիրառել դիդակտիկ պարագաներ, այդ թվում նաև կենդանի բնության օբյեկտներ: Նա

բնագիտության դասավանդման մեթոդիկան՝ որպես գիտություն, բարձրացրեց ավելի բարձր մակարդակի վրա՝ դիտարկելով տեսության և պրակտիկայի օրինաչափ կապը, համակարգելով դիդակտկ սկզբունքները, ուսուցման միջոցները, մեթոդները, շեշտադրելով միջառարկայական կապերի ապահովման անհրաժեշտությունը:

Բնագիտության դասավանդման մեթոդիկայի զարգացման գործում մեծ ներդրում ունի հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանը: Խորապես ծանոթ լինելով հայրենի բնաշխարհի կլիմային, ռելիեֆին՝ Խ. Աբովյանն առաջարկում է գյուղատնտեսական աշխատանքների առավել նպատակային բաշխում. Հայաստանը բաժանել՝ լեռնահովտային և ցածրադիր գյուղատնտեսական շրջանների՝ դրանցում մշակելով այնպիսի բույսեր, որոնց վեգետացիոն շրջանը համապատասխանում է տվյալ բնակլիմայական պայմաններին: Խաչատուր Աբովյանի աշխատություններում բնագիտական կրթության տարրերը, բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը սերտորեն կապված էին անձի բարոյական որակական ձևավորման հետ: Ըստ մեծ մանկավարժի՝ բնությունը ուսուցման և դաստիարակության կարևորագույն միջոցն է, և նպաստում է սովորողների ճանաչողական ակտիվության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Մեծ մանկավարժի «Պատմության Տիգրանի» աշխատությունում խոսվում է զբոսանքների, շրջագայությունների, էքսկուրսիաների մասին:

Խ.Աբովյանը սեփական նախաձեռնությամբ և միջոցներով ուսումնարանին կից հիմնում է ուսումնափորձական հողամաս: Կարևորելով սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հարցը՝ նա գրում է, որ ամեն երեխա պետք է «...բաղում բանի», տեսնի իր աշխատանքի արդյունքները և գնահատի: Այսինքն՝ Խ.Աբովյանը բնագիտական կրթության հարցերը դիտարկել է բարոյական, գեղագիտական, աշխատանքային, էկոլոգիական դաստիարակության խնդիրների համատեքստում: Խ.Աբովյանից բացի բնագիտական կրթության և դաստիարակության գործընթացում էքսկուրսիանների, Ճանապարհորդությունների դերի մասին խոսել են նաև Բաֆֆին, Գ.Մենշելվիշյանը, Բ.Թորոսյանը, Ս.Մանդինյանը և այլոք: Ըստ Հ.Հինդլյանի՝ «Ուսուցիչը պետք է կարողանա երեխայի ուշադրությունը ողջ դասի ընթացքում վառ պահել: Հատկապես բնական գիտությունների ուսուցման գործընթացում երեխայի զգայարանները և ուղեղը պետք է անդադար գործունեության

մեջ գտնվեն: Երեխան պետք է անդադար դասի ժամանակ շարժվի, ոտքի էլնի, տեսնի, շոշափի, հոտոտի, ճաշակի, խոսի, գրի, գծագրի և նկարի>>:

Բնագիտության դասավանդման մեթոդիկայի զարգացման ճանապարհին կարևոր ներդրում ունեն նաև Ն. Տեր-Ստեփանյանը՝ «Ընթացք.երկրագործական» Մ. Քաջունին՝ «Պտղաբանություն», «Տարերք երկրագործության», Ն.Բյուզանդացին՝ «Քննադատություն Հայբուսակի», Ս.Փիլոյանը՝ «Զրույցներ բնական պատմությունից», Գ.Կոստանյանը՝ «Բուսաբուծության համառոտ» աշխատություններով:

Բնագիտության դասավանդման մեթոդիկայի զարգացման գործում մեծ է ռուս մանկավարժ Կ. Դ. Ուշինկու դերը: Նա համոզված էր, որ կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում բնությունն անփոխարինելի գործոն է: Մեծ մանկավարժը գրում է. «Երեխաներն ունեն բնության նկատմամբ ոչ գիտակցական, բնական ձգտում, նրանք սիրով են դիմում, ուսումնասիրում շրջապատի առարկանները, որի արդյունքում նրանց մեջ առաջանում են մի շարք հարցեր, որոնց պատասխանները պետք է ունենա գիտական սկիզբ: Դա նշանակում է, որ սկզբնական կրթությունը պետք է սկսվի բնական գիտությունների ուսումնասիրմամբ: Իր «Մայրենի խոսք», «Մանկական աշխարհ» աշխատություններում նա ներառել է կենդանի բնության վերաբերյալ հսկայածավալ նյութ: Կ.Դ.Ուշինսկին առաջարկում էր ճանաչողությունն սկսել հայրենի եզերքի, բնության աշխարհագրության ուսումնասիրությամբ և մանուկների հետ իր կատարած աշխատանքներում առաջնորդվում էր հենց այդ սկզբունքով:

Այսպիսով, ի մի բերելով հայ մանկավարժական (և ոչ միայն) մտքի երախտավորների արժեքավոր դրույթը, տեսակետները, վստահաբար կարող ենք փաստել, որ նրանք առաջնորդվել են անձնակենտրոն մանկավարժության հայեցակարգով: Այսօր, երբ մանկավարժական իննովացիաները հենվում են նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների ներդրման անհրաժեշտության վրա, կարելի է հավաստել, որ հայ մանկավարժական ժառանգության մեջ այդ մոտեցումները վաղուց արդեն առաջարկվել են և հաջողությամբ իրականացվել:

Բաժին 2. <<Բնագիտության ուսուցումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով>>

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4րդ դասարանների համար: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված ուսումնական դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Այս ինտեգրված դասընթացի ուսումնասիրումը տարրական դպրոցում նպաստում է՝

- Կրտսեր դպրոցականների կողմից կյանքի և բնության ճանաչողության փոխադարձ կապերի բացահայտմանը,
- Էկոլոգիական գիտելիքների, վարքի նորմերի յուրացմանը, դրանց բարոյական որակների զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը,
- Սեփական կարողությունների բացահայտմանը, ինքնաճանաչմանը, առողջ ապրելակերպի մշակույթի տարրերի ձևավորմանը
- <<Բնագիտություն>> առարկայի յուրացման նախապատրաստմանը:

Այս դասընթացն առավել կարևոր է որպես նախապատրաստություն բնագիտության մեթոդի հետ ծանոթացման և միջին ու ավագ դպրոցներում բնագիտական առարկաների ինքնուրույն ուսումնասիրության համար: Բնագիտական փորձերի միջոցով սովորողը կենրոնացնում է իր ուշադրությունը այս կամ այն երևույթի վրա, ձևավորում հարցեր տալու սովորություն, բնության և բնական երևույթների նկատմամբ ուշադրություն, փորձարարական և բնապահպանական աշխատանքի նախնական հմտություններ, պարտիզպանական աշխատանքներ: Բնագիտական աշխատանքի արդյունքում զարգանում են նրա ուսումնական ընդհանուր կարողությունները, հմտությունները՝ տրամաբանություն, հետևողականություն, ինքնուրույնությունը, վերլուծելու, համագործակցային ունակությունները, ինքնուրույն հայտնագործելու ձգտումը:

Փորձերը կատարվում են լաբորատոր սարքերով: Սովորողն ըստ իր ընդունակությունների զարգացնում է իր կարողություններն ու հմտությունները:

Այսօր շատ հաճախ հանդիպում ենք իրողությունների, երբ սովորողը յուրացնում է ուսումնական առարկայի բովանդակությունը, ունի գիտելիքների որոշակի պաշար,

սակայն ունակ չէ դրանք կյանքում ինքնուրույն կիրառելու, համադրելու, համեմատելու, գնահատելու: Պատճառներից մեկն այն է, որ սովորողը չի պատկերացնում, թե ձեռք բերված գիտելիքն ինչ դեր, նշանակություն ունի իր կյանքում, որտեղ կարելի է կիրառել, այդ պատճառով պետք է պարզել ոչ միայն սովորողների կողմից կրթության բովանդակության պարտադիր նվազագույն բաղադրիչի յուրացման մակարդակը, այլև ճանաչողական, արժեկողմնորոշիչ և հաղորդակցական խնդիրների լուծման նպատակով յուրացված գիտելիքները գործնականում կիրառելու նրանց կարողությունը: Այդ պատճառով <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման ընթացքում օգտագործվում են մանկավարժական մոդելավորման բոլոր հնարավոր մեթոդները՝

- Առարկայական (մուլյաժներ, պատրաստուկներ)
- Մտային (երևակայական մոդելներ)
- Նշանային (մոդելներ, սխեմաներ, գծագրեր, բանաձևեր)
- Համակարգչային (համակարգչային ծրագիր)

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի կարևոր բաղադրիչն ինտեգրված գիտելիքներն են, որոնց կառուցվածքային տարրերն են կերպարը, փաստը, կապը, մասը, հատվածը:

Կերպարն առաջանում է շրջակա աշխարհի օբյեկտի զգայական ուսումնասիրման գործընթացում մարդու հուզական ընկալման արդյունքն է: Մենք պետք է հաշվի առնենք, որ տրամաբանական մտածողությունը ձևավորվում և զարգանում է դիտողականության հիման վրա՝ կերպարների, գործողությունների համադրմամբ:

Փաստը բնական և հասարակական երևույթների իրական բնութագիրն է, նրանց օբյեկտիվ գնահատումը: Յուրոքանչյուր գիտելիք (բնագիտական, էկոլոգիական, աշխարհագրական և այլն) կազմված է բազմաթիվ փաստերից: օրինակ՝ մարդու գործունեության հետևանքով օդի, ջրի, հողի բաղադրության փոփոխությունը հանգեցնում է շրջակա միջավայրի աղտոտմանը, կամ տերևաթափը, թռչունների չվելը բնորոշ են աշնանը:

Փոխադարձ կապերի բացահայտումն ընկած է բնական և հասարակական երևույթների ուսումնասիրման հիմքում: Փոխադարձ կապերի իմացությունն

սովորողներին օգնում է ընկալել աշխարհի ամբողջական պատկերը, նպաստում է վերլուծելու և համադրելու կարողությունների ձևավորմամբ:

Մասերի՝ բաղադրիչների ուսումնասիրմամբ է սկսվում շրջակա աշխարհի ճանաչողությունը:

Բաժին 3. Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով:

Ի՞նչ է բնությունը: «Բնությունն այնպես է ամեն բանի մասին հոգացել, որ դու ամեն ինչից ու ամենուր սովորելու բան ունես:

Լեոնարդո Դա Վինչի

Բնությունն այն է, ինչը մեզ շրջապատում է, բայց չի ստեղծվում մարդու կողմից: Բնությունը մշտապես շարժվում է և զարգանում, ընդգրկում անօրգանական և օրգանական աշխարհները: Անօրգանական աշխարհին են պատկանում տիեզերական մարմինները, ջուրը, հողը, օդը, ապարները, օգտակար հանածոները: Բուսական և կենդանական օրգանիզմների ողջ բազմազանությունը կազմում է օրգանական աշխարհը:

Բնության հանդեպ վերաբերմունքի ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար, ինչպես նաև զարգացնում է տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ, տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Մա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական

բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին:

Իմացական գործունեությանը խթանում են այնպիսի իրավիճակներ, որոնք նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը, որոնք սովորողների մոտ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի մեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը:

Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները:

Բնության, շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքով կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ հասարակության մասին: Թե որքանով է այն գրագետ ու կիրթ, գիտակից ու խելացի, զուսպ եւ հայրենասեր: Թե ինչ վերաբերմունք ունի սերունդների, ապագայի, սեփական պետության նկատմամբ:

Երեխային սիրելը միայն կուշտ կերակրել ու բրենդային հագուստ առնելով չէ՛, այլև նրան ժառանգություն թողնվելիք բնության հանդեպ ցուցաբերած խնամքով ու հոգածությամբ:

Բաժին 3.1 Բնության հանդեպ վերաբերմունքը դեռ վաղ հասակից:

«Էկոլոգիա» բառը ինքնին ձևավորվել է հունական երկու բառերից՝ «էկոս», որը նշանակում է «տուն», իսկ «լոգոն»՝ գիտություն: Հետևաբար կարող ենք ասել, որ էկոլոգիան տան գիտությունն է:

Տարիքային առանձնահատկությունների բերումով երեխաների մոտ հուզականորեն է ընկալվում բնության գեղեցկությունն ու անկրկնելիությունը, հաճախ շնչավորում է նույնիսկ անշունչ առարկաներն ու բնության երևույթները: Նա պատրաստ է բնության ցանկացած փոքրիկ էակի մեջ տեսնել բնության ամբողջականությունն ու գեղեցկությունը: Երեխայի աշխարհճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից, հաճույքով ուսումնասիրում է իրեն շրջապատող կենդանիներին և բույսերը, փորձում հասկանալ նրանց կենսակերպի առանձնահատկությունները և էական տարբերությունները մարդկանցից:

Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցահասակի անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է: Էկոլոգիական գործունեության շնորհիվ երեխայի մեջ ձևավորվում են բնության և ռեսուրսների նկատմամբ խնայողական վերաբերմունք և ճիշտ վարքագիծ:

Բնության հանդեպ վերաբերմունքը երեխաների մոտ ձևավորում է էկոլոգիական աշխարհայացք, զարգացնում դրական հուզական, արժեքային վերաբերմունք բնական միջավայրի նկատմամբ: Առաջադրանքների միջոցով

ձևավորվում է գիտելիքները բնության մասին, դրա նկատմամբ զգույշ և հոգատար վերաբերմունք:

Զարգանում է երեխաների ստեղծագործական ունակությունները, արագ արամտությունը, դրանց ժայթքումը, դաստիարակում սեր և հարգանք բնության և բնական միջավայրում գեղեցիկին տեսնելու և արձագանքելու կարողություն:

Հիմա ամբողջ մոլորակը խոսում է այն մասին, թե որքան վատ է մեր էկոլոգիան, որ այն պետք է փրկել:

Հայաստանը լեռնային երկիր է, որը բնութագրվում է բույսերի և կենդանիների տեսակների, ինչպես նաև լանդշաֆտների եւ բուսականության տիպերի հարուստ

բազմազանությամբ: Բույսերի եւ կենդանիների բազմաթիվ տեսակներ, որպես հազվագյուտ և անհետացման եզրին կանգնած տեսակներ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում: Հայաստանում տարբերվում են չորս կատեգորիայի բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ պետական արգելոցներ, բնության հուշարձաններ, ազգային պարկեր և արգելավայրեր:

Պետք է լինել բնության բարեկամ, ծանոթանալ բնությունը պահպանելու կանոններին, ինչպես նաև կանխել կենդանիների, թռչունների, միջատների և բույսերի բազմաթիվ տեսակների անհետացումը: Վաղ հասակից պետք է երեխաներին տեղեկացնել, որ «Կարմիր գրքում» ընդգրկվում են հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, թռչունների, միջատների և բույսերի բազմաթիվ տեսակներ: Քանի որ մարդու գործունեության արդյունքում սպանվում են բազմաթիվ կենդանիներ, կտրվում են բազմաթիվ ծառեր, վերացվում են բազմաթիվ բույսեր, ինչպես նաև աղտոտվում են օդն ու ջուրը, այդ իսկ պատճառով, դեռ մանկուց, պետք է զարգացնել սեր դեպի բնությունը: Ծնողների խնդիրն է երեխաներին հասկացնել, որ մեզանից յուրաքանչյուրը անհատապես պատասխանատու է Երկրի համար, և յուրաքանչյուր ոք կարող է պահպանել եւ կատարելագործել բնության գեղեցկությունը: Այս գործունեությունը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորել ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի

նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

Այս գործունեությամբ երեխաներին նախնական գիտելիքներ ենք տալիս բուսական և կենդանական աշխարհի, բնության եղանակային երևույթների, կենդանի և անկենդան բնության վերաբերյալ:

Բաժին 3.2 Եղանակային դիտումներ

Գարուն

- Ձևավորել պարզագույն գիտելիքներ՝ գարնանը բուսական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների, զարթոնքի վերաբերյալ (արևը ջերմացնում է հողը, ձյունը հալչում է, եղանակները տաքանում են, օրերը՝ երկարում, հողի տակից դուրս է գալիս խոտը, գարնան առաջին ծաղիկները ձյան միջից բարձրացնում են իրենց գլխիկները, ծառերը բողբոջում են, ծաղկում են, հայտնվում են մայիսյան բզեզները եւ թիթեռները, թռչունները հետ են վերադառնում տաք երկրներից),
- ընդլայնել բնության մեջ գոյություն ունեցող պարզ կապերի մասին երեխաների պատկերացումները (արևը սկսում է ջերմացնել, ծառերը ծաղկում են, թռչուններն ուրախ երգում են, մարդիկ տաք հագուստները փոխարինում են ավելի թեթև՝ գարնանային հագուստներով, դաշտերում սկսվում է գարնանացանը, բանջարանոցներում տնկում են բանջարեղեն, պարտեզներում՝ ծաղիկներ),
- ճշտել և ամրապնդել պատկերացումները ծառերի, բույսերի կառուցվածքի մասին (ծառն ունի բուն, ճյուղեր, տերևներ, թփերն ունեն մի քանի բարակ բներ, ճյուղեր, տերևներ, դրանք ծառից ցածր են, բույսերն ունեն արմատներ, որոնց միջոցով հողից ներծծում են խոնավություն, սննդարար նյութեր),
- սովորեցնել դասակարգել պտղատու և դեկորատիվ ծառերը,
- ծանոթացնել գարնանային 2-3 ծաղկատեսակների (մանուշակ, կակաչ, նարգիզ), նրանց կառուցվածքին (գլխիկ, տերևներ ցողուն, արմատ),
- Ճանաչողական գիտելիքներ տալ անտառի վերաբերյալ, ներկայացնել անտառների, այգիների դերը օդի մաքրման խնդրում,
- ընդլայնել երեխաների գիտելիքները կենդանիների զարգացման մասին. թռչունները ձու են ածում, կենդանիները ծնում են ձագեր, որոշ կենդանիներ նրանց կերակրում են իրենց կաթով, պաշտպանում և խնամում են,

- տեղեկություններ տալ ընտանի կենդանիների օգտակարության մասին,
- գիտելիքներ տալ բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցվածության մասին,
- պարզագույն գիտելիքներ տալ հայկական բնաշխարհին բնորոշ քարերի մասին, ներկայացնել դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- սովորեցնել տարբերել տարվա եղանակներն ըստ ամիսների:

Ամառ

Ընդլայնել երեխաների պատկերացումներն ամռանը բնության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ (շոգ է, արևն ուժեղ է տաքացնում, ծաղկում են ծաղիկները, մարդիկ լողում են գետերում, լճերում, ամենուր թովռում են թիթեռները, երևում են գատիկները և այլ միջատներ, ուրախ երգում են թռչունները, բներում հայտնվում են նրանց ճտերը և այլն):

Աշուն

- Ամրապնդել տեղեկություններն աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին. եղանակները ցրտում են, հաճախակի անձրև է տեղում, ծառերի տերևները դեղնում են և թափվում,
- ընդլայնել երեխայի պատկերացումներն այն մասին, որ այգիներում բանջարանոցներում հասունանում են մրգերն ու բանջարեղենը, դաշտերում կատարում են բերքահավաք,
- ընդլայնել երեխայի պատկերացումները աշնանը կենդանական աշխարհի եղանակային վարքի և փոփոխությունների մասին. թիթեռները, բզեզները, մոծակներն անհետանում են, թռչունները չվում են տաք երկրներ:

Զմեռ

- Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ՝ բնության եղանակային երևույթների վերաբերյալ (ցերեկը կարճանում է, գիշերը՝ երկարում, եղանակները ցրտում են, ձյուն է տեղում),
- կազմակերպել ձմեռող թռչունների վարքի դիտում, կերակրել նրանց հացի փշրանքներով և ցորենի հատիկներով,
- կարողանալ տեսնել ձմեռային բնության փոփոխությունը. Բնությունը ծածկվում է ձերմակ սավանով, ջրավազաններում սառնամանիքից ջրերը սառչում են՝

վերաձվելով սառույցի, սառույցը կոշտ է, նրա վրա սահում են, ծառերն ու թփերն առանց տերևների են,

- ձևավորել պատկերացումներ կենդանիների ապրելակերպի որոշակի պայմանների և դրանց եղանակային փոփոխությունների վերաբերյալ,
- սովորեցնել նկատել բնության գեղեցկությունը ձմռանը, բնության երևույթների փոխկապակցվածությունը,
- ճանաչողական ունակություններ ձևավորել ձյան, սառույցի մասին,
- սահմանել կապեր բնության երևույթների միջև. երբ եղանակը ցրտում է՝ անձրևը փոխվում է ձյան, ցրտի հետևանքով և սառեցնելիս ջուրը վերաձվում է սառույցի, սառույցը տաքացնելիս վերաձվում է ջրի,
- կազմակերպել ձմեռային խաղեր. սահնակով սահել, ձնագնդի խաղալ կամ ձնեմարդ ծեփել, ձնե կառույցներ պատրաստել:

Բնական երևույթների մասին առեղծվածներով հանելուկները, առածները և ասացվածքները երեխաների մոտ զարգացնում է հարգանք և հետաքրքրություն բնության հանդեպ:

Հոսում է, չի արտահոսում,

Վազում է բայց չի փախչում:

Ժապավեն է մի գեղեցիկ,

Մի ծայրը սարում, իսկ մյուսը՝ ծովում:

(Գետ)

Առավոտյան խոտի վրա

Միրուն-սիրուն մարգարիտներ,

Ցերեկը փորձեցի փնտրել,

Հետքը նույնիսկ չի մնացել:

(Ցող)

Մարդկության համար մեր ամբողջ հսկայական և միևնույն ժամանակ նման փոքր Երկիր մոլորակը տունն է: Հիմա մեր բնական տունը վտանգի տակ է: Խնայելու համար յուրաքանչյուր մարդ պետք է գոնե մի քիչ էկոլոգ դառնա:

Այնուհետև ամբողջ հասարակությունը կապրի բնության հետ ներդաշնակ և համատեղության մեջ:

Բնապահպանությունը մեզ սովորեցնում է հոգ տանել մեր շրջապատի աշխարհի մասին՝ Երկրի տնային մոլորակի մասին: Երեխայի աշխարհաճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից: Դպրոցականը հաճույքով ուսումնասիրում է իրեն շրջապատող կենդանիներին և բույսերը, փորձում հասկանալ նրանց կենսակերպի առանձնահատկությունները և էական տարբերությունները մարդկանցից:

- ❖ Էկոլոգիական դաստիարակությունը շատ կարևոր է 21-րդ դարում մոլորակի և մարդկության համար, քանի որ մարդկության անհեռատես գործունեության արդյունքում հասարակությունը և մոլորակը կանգնած են աղետի առաջ:
- ❖ Այսօր մասնագետները կարևորում են էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական գիտակցության ձևավորումը, բայց այն պետք է սկսել վաղ տարիքից: Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման մեջ կարևոր դեր պետք է զրավի բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը:
- ❖ Բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները ենթադրում են ծանոթացնել երեխաներին բնության հետ, սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ:

Բաժին 4. Ուսումնաճանաչողական արդյունքների գնահատումը

Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Գնահատվում են պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացման, գործնականում դրանք կիրառելու կարողությունների ու հմտությունների, մտավոր զարգացման մակարդակները:

Թվանշանը գնահատականի կոնկրետ արտահայտությունն է, ուսումնականնվաճումների մակարդակի արտահայտման պայմանական նիշը:

Կիրառվում են նաև գնահատման որակականեղանակներ՝ բնութագրային և ստուգարքային:

Տարրական դպրոցում գնահատման օբյեկտիվությունը, նպատակայնությունը պայմանավորված է գնահատման սկզբունքներով՝ արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության և այլն:

Տարրական դպրոցի զարգացման արդի փուլում նպատակ է սովորողի անձի զարգացումը: Առանձնացվում են հետևյալ բնութագրիչները.

- ✓ առարկայական գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման որակը, դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին,
- ✓ կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության ձևավորվածության աստիճանը (նպատակադրումը, պլանավորման, աշխատանքի կատարման, արդյունքների գնահատման կարողությունը)
- ✓ մտավոր գործունեության զարգացվածության աստիճանը (դիտելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու, ստեղծագործելու կարողությունը)
- ✓ ճանաչողական ակտիվության, հետաքրքրությունների զարգացման մակարդակը: [5. Էջ 130-133]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ կատարած հետազոտությունը ցույց տվեց, որ երեխան վաղ հասակից արդեն ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շրջայական կապերը, հետևաբար ընդունակ է պատկերացնելու բնության ամբողջականությունը, բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները:

Երեխաների բնության հետ անմիջական շփումը նրանց սովորեցնում է շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանում շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ երեխան կառուցում է իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումները, զգացողությունները, մտքերի և նախասիրությունների շրջանակը: Երեխայի մեջ քայլ առ քայլ ձևավորվում է այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, և բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ, և դրանք բոլորը փոխկապակցված են:

Այս և նմանատիպ հետազոտությունները վկայում են այն մասին, որ տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտությունն ընտրած անձինք մեծ մասամբ մանկավարժության նվիրյալներ են: Նրանք ձևավորում են երեխաների կրթության հիմքերը և մտահոգ են նրանց կայացման խնդրով: Սակայն ցանկացած ուսուցիչ գիտի, որ նվիրումով և սիրով հնարավոր չէ դառնալ լավ ուսուցիչ: Անշուշտ այդ կարևոր և շարժիչ ուժն անհրաժեշտ է, սակայն միայն այդքանը բավարար չէ՝ տալու բազում հարցերի պատասխանները:

Ուսուցիչն իր աշխատանքում միշտ պետք է աչքի առաջ ունենա ուսումնական գործընթացի կառուցվածքը՝ չմոռանալով երեք գլխավոր հիմնահարց.

1. ուսման/ ուսուցման նպատակը (ինչու՞ սովորել/սովորեցնել),
2. բովանդակությունը (ինչու՞ սովորել/սովորեցնել),
3. ռազմավարությունը, ձևերն ու մեթոդները (ինչու՞ սովորել / սովորեցնել):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Նախաշավիղ 2012» գիտամեթոդական հանդես
2. «Ես եւ շրջակա աշխարհը» դասագիրք Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան
3. «Բնության պահպանության հիմունքներ» Է. Ս. Հայրապետյան
4. «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը» Բնության համաշխարհային հիմնադրամ WWF
5. Ասատրյան Զ. Ա. Կրտսեր դպրոցականների գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Մխիթար Գոշ, Վանաձոր, 2008,
6. <https://www.youtube.com/watch?v=qE98fT6Ok1o>

ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԶՈՒԼԻԵՏԱ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

Թեմա՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԼԵՐԻ և ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ.Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Ներածություն

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁևԵՐԻ և ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

1.1 Գնահատումը դպրոցական համակարգում

1.2 Ուսուցանող և միավորային գնահատում

Եզրակացություն

Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության որոշմամբ նախագիծ է մշակվել, ըստ որի 1-4-րդ դասարաններում գնահատական չի նշանակվելու. ամփոփիչ գնահատումը կիրականացվի սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագրման միջոցով: Հանրակրթական ոլորտում աշակերտներին առնվազն 1-4- րդ դասարաններում չգնահատելու վերաբերյալ նոր համակարգին անցումը, երեխային կկապեն ոչ թե գնահատականի, այլ գիտելիքի և կրթության հետ: Այն, որ տարրական դասարանում գնահատման համակարգն արդյունավետ չի աշխատում, հաստատել են բազմաթիվ մանկավարժ փորձագետներ, տեսաբաններ ընդգծելով այն միտքը, որ պետք է սովորել գիտելիքի ,այլ ոչ թե թվանշանի համար:

Սույն թեման արդիական է նրանով, որ ներկա պահին կրտսեր դպրոցում գնահատման գործընթացը համակարգային փոփոխությունների փուլում է գտնվում:

Հետազոտության նպատակն է

ուսումնասիրել թեմայի հետ առնչվող առկա նորմատիվային փաստաթղթերը, գիտամեթոդական, գիտատեսական գրականությունը և կատարել եզրահանգումներ

Հետազոտության խնդիրներն են՝

1. նկարագրել գնահատման միավորային և ոչ միավորային համակարգերը
2. բացահայտել գնահատման ձևերի և մեթոդների կատարելագործման վերաբերյալ գիտական մոտեցումները
3. իրականացնել փորձարարական աշխատանքներ՝ ստեղծել գնահատման ռուբրիկի նմուշ, կատարել եզրահանգումներ
4. **Հետազոտական աշխատանքի կառուցվածքը՝** ներածական մաս,երկու բաժին՝ենթաբաժիններով,փորձարարական մաս ,եզրակացություն,գրականության ցանկ:Ծավալը՝ 17 տպագիր էջ;

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԱԵՐԻ և ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ժամանակակից դիդակտիկայի հիմնական օրինաչափություններից մեկն է ուսուցման արդյունավետության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետման մակարդակի կախվածությունը վերահսկողության օբյեկտիվությունից և որակից, մեթոդներից և օբյեկտիվությունից:

Իհարկե, մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում դեռևս միասնական մոտեցում չկա «վերահսկում», «ստուգում», «գնահատում» հասկացությունների սահմանման վերաբերյալ, սակայն մեր կարծիքով բոլորի համար համընդհանուր և ելակետային են համարվում «վերահսկում» և «գնահատում» հասկացությունները, ընդ որում **վերահսկումը** հանդես է գալիս որպես Ուսանողների գիտելիքների վերահսկման հիմնական բաղադրիչը ներառում է նույնականացում և չափում, այսինքն. սովորողների գիտելիքների վերահսկման հիմնական բաղադրիչ ենթադրում է բացահայտում և չափում, այսինքն՝ կատարում է ուսուցչին աշակերտի միջև հակադարձ կապի ապահովման և ուսումնական նյութի յուրացվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվական գործառույթ:

Գնահատումը աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Գնահատումը սովորողների ուսումնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության արդյունքները վերահսկելու գործընթացն է: Գնահատվում են չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացվածության մակարդակը, դրանց գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները, մտագործունեության մակարդակը:

Գնահատականը գնահատման հետևանքն է. այն ավելի կոնկրետ է, բխում է ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորությունից, դրանց կիրառման արդյունքից:

Հաշվառումը որոշակի ժամանակահատվածում՝ դասի, կիսամյակի, ուստարվա ընթացքում, ուսումնական գործունեության հանրագումարն է:

Թվանշանը գնահատականի կոնկրետ թվային արտահայտությունն է, ուսումնական նվաճումների մակարդակի արտահայտման պայմանական միջոց:

Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակների վերաբերյալ պատկերացում կազմելու համար նրանց դպրոցում նշանակում են գնահատական: Գնահատականը սովորողների առաջադիմությունը որոշող թվանշան է, չափանիշ: Գնահատականը ներկայացվում է որպես սովորողի առաջադիմությունը որոշող թվանշան:

Գնահատել՝ նշանակում է գինը, արժեքը նշանակել, որոշել, մեկի՝ մի բանի հարգը, արժեքը ճանաչել, արժևորել, արժանիքին համապատասխան վերաբերվել, որոշել սովորողի առաջադիմությունը, գիտելիքները, բնութագրել, որոշե լաշխատանքի գնահատականը, բնութագրել, բնորոշել, որակել, սահմանել ինչ-որ բանի մակարդակը, աստիճանը կամ որակը:

Գնահատումը սոցիալական իրականության տարբեր երևույթներին և մարդկանց արարքներին հավանություն տալը կամ դրանց դատապարտումն է՝ կախված դրանց բարոյական նշանակությունից:

Գնահատումը հաստատում է արդեն կատարված արարքի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը բարոյականության պահանջներին: Գնահատականի միջոցով կարելի է կարգավորել մարդկանց վարքը:

Կրտսեր դպրոցականների կողմից ուսումնաիմացական գործունեության գնահատումը նշանակում է սահմանել այն խնդիրների կատարման աստիճանը, որոնք դրված են նրանց առաջ ուսուցման գործընթացում, նրանց պատրաստության և զարգացման մակարդակը, ձեռք բերած գիտելիքների, ձևավորված կարողությունների ու հմտությունների որակը::

Մանկավարժության գիտության մեջ հատկապես կարևորվում են գնահատման ձևերը, կարողությունների և հմտությունների (գործունեության կատարման) գնահատումը, որը մեր կարծիքով, այսօր դպրոցներում էական նշանակություն չիտրվում: Մինչդեռ սովորողների գիտելիքների յուրացվածության աստիճանը դրսևորվում է գործնական իրավիճակներում դրանց կիրառման կարողությունով:

Այս համատեքստում պետք է տարբերել **«գնահատա կան» «նիշ», «ստուգում», «չ ավիում» և «արժևորում»** հասկացությունները:

Գնահատումը ոչ միայն տեղեկատվություն է տալիս աշակերտների ուսումնառության արդյունքների մասին, այլև այդ արդյունքների վավերականության, ուսուցչի կողմից կիրառված ձևերի, միջոցների և մեթոդների արդյունավետության, դասավանդման պլանավորման նպատակների իրացման, ուսուցչի՝ աշակերտին գնահատելու կոմպետենտության ձևավորվածության մասին:

Ջարգացումը բերեց գնահատման ժանակակալից մեթոդների ձևավորման, որոնք ավանդական մեթոդների հետ համեմատած ունեն որոշակի տարբերություններ:

Գնահատման մեթոդներն ու ձևերը ուսուցչի կողմից պիտի որոշվեն՝ կախված ուսուցման նպատակներից, թեմայի բարդությունից, առարկայի ուղղվածությունից, աշակերտների տարիքից, հոգեբանական և անհատական առանձնահատկություններից: Ընդ որում, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում, ուսումնական գործընթացում գնահատման դիդատիկական և դաստիարակչական գործառույթների բազմազանության հաշվառում: Իհարկե՞, գնահատման գլխավոր գործառույթը սովորողների գիտելիքների

տիրապետման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության և պատրաստվածության մակարդակի վերաբերյալ հիմնավոր տեղեկություն տալն է և յուրաքանչյուր դասի համար ուսուցչի և աշակերտի նպատակների որոշումը, նաև վերանայումը:

Դպրոցի կառավարման գործընթացում. «Գնահատումը» տեղեկատվության ժողովումն է այն բանի մասին, թե ուսումնառության որ աստիճանին է հասել սովորողը: Այստեղ եկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ եղանակներ[34, էջ 280]:

Այս համատեքստում տարբերակվում են՝ նախնական, ընթացիկ և ամփոփիչ գնահատումները:

Եթե ուսուցիչը իր առջև խնդիր է դնում գնահատել դասարանի կամ առանձին աշակերտի գիտելիքները, համեմատել այդ տրված նմուշ օրինակի հետ, ապա այստեղ առաջին պլան է մղվում գնահատման օբյեկտիվությունը: Եվ առավել նպատակահարմար ու պարզ է դառնում այդ վերաբերմունքը արտահայտել միավորի տեսքով: Այլ խնդիր է գտնել աշակերտի գիտելիքների բացերը, ուսումնասիրած նյութի յուրացման թերությունները: Այս դեպքում գլխավորն է՝ բացահայտել այն հարցերը, որոնք վատ է յուրացրել աշակերտը, մշակել նոր միջոցեր ու ձևերն կապված թերությունները վերացնելու համար: Այստեղ նպատակահարմար է որակապես բնութագրել դպրոցականի պատասխանը, նշել նրա դրական և բացասական կողմերը: Պատասխանի գնահատումը միավորներով բնավ էլ պարտադիր չէ: Իսկ եթե խոսքը գնում է գնահատականների միավորային համակարգը գիտելիքների գնահատման այլ համակարգով փոխարինելու մասին, ապա սկզբունքորեն նմանանցումը հնարավոր է հատկապես տարրական դասարաններում: Սակայն դա կպահանջի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացի վերակառուցում, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հոգեբանության փոփոխում, կազմակերպական-մանկավարժական բարեփոխումներ:

Այժմ էլ փիլիսոփայական, հոգեբանական, սոցիալական, մանկավարժական, բարոյագիտական և գեղագիտական գրականության մեջ նույնպես ակտիվ բանավեճ է գնում գնահատականի արժևորման շուրջ: Գնահատումը, առաջին հերթին, ուսումնական նպատակներին հասնելու ջանքերի անհրաժեշտ բաղադրիչն է:

Հոգեբանական, բարոյական տեսակետից ուսուցման գործընթացի կառավարման սուբյեկտը՝ ուսուցիչը պետք է աշակերտին ընկալի որպես այդ գործընթացի հավասարազոր սուբյեկտի և նրա ստացած գիտելիքներն արժևորի ու ճիշտ գնահատի:

Մենք արդեն նշել ենք, որ աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաշվառման, ստուգման և գնահատման համակարգը պատմական կատեգորիա է: Այն առաջացել է տարբեր երկրներում, տարբեր ժամանակներում, և ծառայել

է տարբեր նպատակների՝ կապվածությամբ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի ու քաղաքական կառուցվածքի հետ, իրականացվել է զանազան մեթոդներով, միջոցներով ու ձևերով: Մինչդեռ ուսուցումը, դաստիարակությունը ծագել և զարգացել են ավելի վաղ ժամանակներում՝ կապված դրա անհրաժեշտության հետ:

«Անբավարար» գնահատականը շատ հաճախ աշակերտների մեջ իր ուժերի նկատմամբ անվստահություն է առաջացնում, իսկ «լավ»-ը եսասիրություն: Ցավոք, դեռ ևս ուսուցման մեջ գլխավորը դեռ թվանշանն է: Ըստ Մ.Գ. Աստվածատրյանի, Ս. Վարդումյանի, Ա. Արնաուդյանի և այլոց՝ «Արևմտյան մասնագիտական գրականության մեջ այսօր «կրթությանորակը» սահմանվում է այն տեսանկյունից, թե «ի՞նչ ենք սովորեցնում», «ինչպե՞ս ենք սովորեցնում», «ու՞մ են քսովորեցնում» և «ի՞նչ է մնում մեր սովորեցրածից» (Henevelcb 1994)» (4, էջ 16):

Մենք համամիտ ենք նրանց այն փաստարման հետ, որ «Դպրոցիորակի և արդյունավետության բարձրացումն ակնառու կերպով պետք է դրսևորվի աշակերտների ձեռքբերած գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի աճի մեջ» (4, էջ 16):

Վերահսկողությունը հետադարձ կապ է,

Վերջին տասնամյակում հայ մի շարք մանկավարժ գիտնականների, մեթոդիստների ջանքերը նույնպես ուղղված էին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման մեթոդների ու ձևերի կատարելագործմանը: Մ.Աստվածատրյանը, Ա.Արնաուդյանը, Ս.Վարդումյանը և այլք գտնում են, որ «գնահատումը արդյունավետ դպրոցի կարևոր, անբաժանելի մասն է:

Դասավանդման և ուսումնառության գործընթացի էական բաղկացուցիչ մասն է կազմում աշակերտի առաջընթացի կգնա հատումը և դիտարկումը: Առանց դիտարկման և հետադարձ կապի դպրոցական ամբողջ համակարգը չի կարող գործել»: «Որքան հաջող են ստուգման և գնահատման միջոցները, այնքան արդյունավետ է դասավանդումը, հետևաբար նույնքան արդյունավետ է ուսումնառությունը: Լավ մշակված ստուգման համակարգը կարող է խթանել կրթական բարեփոխումները» (4, էջ 117):

Իհարկե՞, մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում դեռևս միասնական մոտեցում չկա «վերահսկում», «ստուգում», «գնահատում» հասկացությունների սահմանման վերաբերյալ, սակայն մեր կարծիքով բոլորի համար համընդհանուր և ելակետային են համարվում «վերահսկում» և «գնահատում» հասկացությունները, ընդ որում **վերահսկումը** հանդես է գալիս որպես սովորողների գիտելիքների վերահսկման հիմնական բաղադրիչ ենթադրում էբացահայտում և չափում, այսինքն՝ կատարում է ուսուցչի և աշակերտի միջև հակադարձ կապի ապահովման և ուսումնական նյութի յուրացվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվական գործառույթ / 5, էջ 24/:

Գնահատումը սովորողների կրթական գործունեության արդյունքների գնահատումն է՝ գիտելիքներ, հմտություններ, ակտիվություն, անկախություն, զարգացում, վարքագիծ: Գնահատումը ուսանողների կրթական արդյունքների մասին տեղեկատվության ստացման, կուտակման, վերլուծության և դրա հիման վրա հանրակրթության արդյունքների մոնիտորինգի գործընթացն է: Գնահատվում է չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացման մակարդակը, դրանք գործնականում կիրառելու կարողությունը, ինտելեկտուալ գործունեության մակարդակը:

Գնահատականը գնահատման հետևանքն է. Այն ավելի կոնկրետ է, բխում է ձեռքբերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորությունից, դրանց կիրառման արդյունքից:

Հաշվառումը որոշակի ժամանակահատվածում՝ դասի, կիսամյակի, ուստարվա ընթացքում, ուսումնական գործունեության հանրագումարն է:

Թվանշանը գնահատականի կոնկրետ թվային արտահայտությունն է, ուսումնական նվաճումների մակարդակի արտահայտման պայմանականնիշը:

Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակների վերաբերյալ պատկերացում կազմելու համար նրանց դպրոցում նշանակում են գնահատական: Գնահատականը սովորողների առաջադիմությունը որոշող թվանշան է, չափանիշ: Գնահատականը ներկայացվում է որպես սովորողի առաջադիմությունը որոշող թվանշան:

Գնահատել՝ նշանակում է գինը, արժեքը նշանակել, որոշել, մեկի՝ միբանիհարզը, արժեքը ճանաչել, արժևորել, արժանիքի համապատասխան վերաբերվել, որոշել սովորողի առաջադիմությունը, գիտելիքները, բնութագրել, որոշել աշխատանքի գնահատականը, բնութագրել, բնորոշել, որակել, սահմանել ինչ-որ բանի մակարդակը, աստիճանը կամ որակը:

Գնահատումը սոցիալական իրականության տարբեր եռյանքներին և մարդկանց արարքներին հավանություն տալը կամ դրանց դատապարտումն է՝ կախված դրանց բարոյական նշանակությունից:

Գնահատումը հաստատում է արդեն կատարված արարքի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը բարոյականության պահանջներին: Գնահատականի միջոցով կարելի է կարգավորել մարդկանց վարքը:

Կրտսեր դպրոցականների կրթական գործունեության գնահատումը նշանակում է որոշել նրանց ուսումնական գործընթացում դրված խնդիրների կատարման աստիճանը, պատրաստվածության և զարգացման մակարդակը, ձեռք բերված գիտելիքների որակը, ձևավորված հմտություններն ու կարողությունները: Գնահատումը պետք է հաշվի առնի ուսանողների կրթական և ճանաչողական գործունեության արդյունավետությունը,

բնութագրի գիտելիքների յուրացման որակն ու արժեքը, դրանց ձեռքբերման իրազեկվածությունը, արտադասարանական առարկայի հատուկ հմտությունների և կարողությունների առկայությունը:

Ուսուցումն ու գնահատումը պետք է փոխկապակցված լինեն [4, էջ 275]:

Մանկավարժական գիտության մեջ հատկապես կարևոր են գնահատման, հմտությունների և կարողությունների գնահատման (գործունեության կատարման) ձևերը, որոնք, մեր կարծիքով, այսօր դպրոցում էական նշանակություն ունեն: Միաժամանակ ուսանողների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի մասին է վկայում դրանք գործնական իրավիճակներում կիրառելու կարողությունը:

Այս համատեքստում պետք տարբերել «գնահատական», «նիշ», «ստուգում», «չափում» և «արժևորում» հասկացությունները:

Գնահատումը ոչ միայն տեղեկատվություն է տալիս աշակերտների ուսումնառության արդյունքների մասին, այլև այդարդյունքներ իվավերականության, ուսուցչի կողմից կիրառված ձևերի, միջոցների և մեթոդների արդյունավետության, դասավանդման պլանավորման նպատակների իրացման, ուսուցչի՝ աշակերտին գնահատելու կոմպետենտության ձևավորվածության մասին:

Մանկավարժական գիտության մեջ քննարկվում է նաև կյանքի իրական իրավիճակների վրա հիմնված գնահատման, ինչպես նաև իրական, հավաստի գնահատման հիմնական հասկացություններն ու բաղադրիչները

Ներկայացվում են նաև զանազան տարբերակներ, որոնք դպրոցներում կիրառվում են սովորողների առաջադիմությունը նշելու և արձանագրելու համար, այդ թվում՝ առաջադիմության թերթիկներ նկարագրական հաղորդումներ [4, էջ 276]:

Արտերկրյա հեղինակները տարբերակում են սովորողների ուսումնառության վերահսկման հետևյալ տեսակները՝ գնահատում, ստուգում, չափում և արժևորում:

Կրտսեր դպրոցականի գիտելիքի, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը առաջին հերթին կախված է ուսումնական նյութի ընտրությունից և գիտելիքների յուրացման մեխանիզմներից: Ինչպես նշում է Ի.Ա. Ջիմնյայան. «Յուրացումը բնութագրվում է նաև գիտելիքների արդիականացմամբ, պատրաստությամբ, դրանց լիարժեքությամբ և համակարգվածությամբ» [5, էջ 240]:

Գնահատման մեթոդներն ու ձևերը ուսուցչի կողմից պիտի որոշվեն՝ կախված ուսուցման նպատակներից, թեմայի բարդությունից, առարկայի ուղղվածությունից, աշակերտների տարիքից, հոգեբանական և անհատական առանձնահատկություններից: Ընդորում, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում, ուսումնական գործընթացում գնահատման դիդակտիկական և դաստիարակչական գործառույթների բազմազանության հաշվառում: Իհարկե, գնահատման գլխավոր գործառույթը սովորողների գիտելիքների

տիրապետման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության և պատրաստվածության մակարդակի վերաբերյալ հիմնավոր տեղեկություն տալն է և յուրաքանչյուր դասի համար ուսուցչի և աշակերտի նպատակների որոշումը, նաև վերանայումը:

Դպրոցի կառավարման գործընթացում. «Գնահատումը» տեղեկատվության ժողովումն է այն բանի մասին, թե ուսումնառության որ աստիճանին է հասել սովորողը: Այս տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ եղանակներ[34, էջ 280]:

Այս համատեքստում տարբերակվում են՝ նախնական, ընթացիկ և ամփոփիչ գնահատումները:

Եթե ուսուցիչը իր առջև խնդիր է դնում գնահատել դասարանի կամ առանձին աշակերտի գիտելիքները, համեմատել այդ տրված նմուշ օրինակի հետ, ապա այստեղ առաջին պլան է մղվում գնահատման օբյեկտիվությունը: Եվ առավել նպատակահարմար ու պարզ է դառնում այդ վերաբերմունքը արտահայտել միավորի տեսքով: Այլ խնդիր է գտնել աշակերտի գիտելիքների բացերը, ուսումնասիրած նյութի յուրացման թերությունները: Այս դեպքում գլխավորն է բացահայտել այն հարցերը, որոնք վատ է յուրացրել աշակերտը, մշակել նոր միջոցեր ու ձևեր նկատված թերությունները վերացնելու համար: Այստեղ նպատակահարմար է որակապես բնութագրել դպրոցականի պատասխանը, նշել նրա դրական և բացասական կողմերը. Պատասխանի գնահատումը միավորներով բնավ էլ պարտադիր չէ: Մանկավարժական գնահատումը պետք է նպաստի աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց գիտելիքների և դաստիարակվածության մակարդակի բարձրացմանը, ուսման դրդապատճառների ձևավորմանը: Իսկ եթե խոսքը գնում է գնահատականների միավորային համակարգը գիտելիքների գնահատման այլ համակարգով փոխարինելու մասին, ապասկզբունքորեն նմանանցումը հնարավոր է հատկապես տարրական դասարաններում: Սակայն դա կպահանջի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացի վերակառուցում, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հոգեբանության փոփոխում, կազմակերպական-մանկավարժական բարեփոխումներ:

Սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների որակի վերահսկման հաշվառման, ստուգման և գնահատման հարցը միշտ էլ վիճաբանության առարկա է եղել, քանի որ գնահատականը չի եղել գիտելիքների գնահատման ճշմարիտ չափանիշ:

Այժմ էլ փիլիսոփայական, հոգեբանական, սոցիալական, մանկավարժական, բարոյագիտական և գեղագիտական գրականության մեջ նույնպես ակտիվ բանավեճ է գնում գնահատականի արժևորման շուրջ: Գնահատումը, առաջին հերթին, ուսումնական

նպատակներին հասնելու ջանքերի անհրաժեշտ բաղադրիչն է: Շատ ավելի բազմակողմանի պատկերացում է պահանջվում այն մասին, թե ինչը պետք է գնահատվի՝ այդ թվում նաև աշակերտների վարքը, ծրագրային ընտրության տարբերակը, դասավանդման մեթոդիկան:

Հոգեբանական, բարոյական տեսակետից ուսուցման գործընթացի կառավարման սուբյեկտը՝ ուսուցիչը պետք է աշակերտին ընկալի որպես այդ գործընթացի հավասարազոր սուբյեկտի և նրա ստացած գիտելիքներն արժևորի ու ճիշտ գնահատի:

Մեր կարծիքով եթե դպրոցում կառավարման սուբյեկտը աշակերտին չի ընկալում որպես ուսումնադաստիարակչական գործընթացի հավասարազոր սուբյեկտի և ըստ իրեն արժևորում է օբյեկտի գիտելիքները, այն անվիճելի ճշմարտություն լինել է կարող:

Մենք արդեն նշել ենք, որ աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաշվառման, ստուգման և գնահատման համակարգը պատմական կատեգորիա է: Այն առաջացել է տարբեր երկրներում, տարբեր ժամանակներում, և ծառայել է տարբեր նպատակների՝ կապված տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի ու քաղաքական կառուցվածքի հետ, իրականացվել է զանազան մեթոդներով, միջոցներով ու ձևերով: Մինչդեռ ուսուցումը, դաստիարակությունը ծագել և զարգացել են ավելի վաղ ժամանակներում՝ կապված դրա անհրաժեշտության հետ:

«Անբավարար» գնահատականը շատ հաճախ աշակերտների մեջ իր ուժերի նկատմամբ անվստահություն է առաջացնում, իսկ «լավ»-ը եսասիրություն: Ցավոք, դեռևս ուսուցման մեջ գլխավորը դեռ թվանշանն է:

Մենք համամիտ ենք նրանց այն փաստարման հետ, որ «Դպրոցիորակի և արդյունավետության բարձրացումն ակնառու կերպով պետք է դրսևորվ ի աշակերտների ձեռքբերած գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի աճի մեջ» (4, էջ 16):

1.1 Գնահատումը դպրոցական համակարգում

Գնահատումը ուսուցման գործընթացի վերաբերյալ և նրա կատարելագործման համար փաստեր, հավաստի, բազմակողմանի տվյալներ հավաքագրելու շարունակական գործընթաց է՝ ուղղված ուսուցման գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը: Այն պետք է արտացոլի առկա լավագույն փորձը, ներկայացնի տարբեր կողմերից, խթանի սովորողների և դասավանդողների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

Անհրաժեշտ է, որ գնահատումը լինի.

- համապատասխան
- հավաստի
- համարժեք
- կառավարելի
- անկողմնակալ
- արդար
- արժանահավատ
- թափանցիկ

1.2 Ուսուցանող և միավորային գնահատում

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու ձևերից՝ ուսուցանող գնահատում և սովորողների առաջադիմության միավորային գնահատում:

Գիտելիքների ուսուցանող գնահատումն ակտիվացնում է սովորողների իմացական գործունեությունը, բարձրացնում ուսման արդյունավետությունը և որակը, այն դասավանդողին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի, խմբի ձեռքբերումները, ինչպես նաև բացահայտելու դժվարություններն ու բացթողումները: Գնահատման այս ձևը կարող է հանգեցնել դասավանդման ընթացքում առաջացած դժվարությունների հայտորոշման և շտկման գործողությունների: Ուսուցանող գնահատման ժամանակ թվանշանային գնահատում չի իրականացվում: Ուսուցանող գնահատում իրականացնելիս առաջարկվում են աշխատանքների տարբեր տեսակներ.

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,
- խմբային կամ զույգերով առաջադրանք,
- տնային աշխատանք,
- ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- փոխադարձ գնահատում,
- գործնական աշխատանք:

Ուսուցանող կարճատև գնահատումը կարող է իրականացվել գրավոր կամ բանավոր:

Միավորային գնահատումը կիրառվում է սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը ստուգելիս: Միավորային գնահատումն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով և ունի վերահսկող դեր: Միավորային գնահատումն ըստ նպատակահարմարության կիրառվում է՝

- դասաժամերին և ունի ծրագրային նյութի յուրացման մակարդակը ստուգող, խթանող և կարգավորող նշանակություն,
- դասավանդվող թեմայի ավարտին սովորողի՝ տվյալ թեմայից ձեռքբերումների մակարդակը պարզելու նպատակով,
- կիսամյակի ամփոփման փուլում, որի նպատակն է միավորով արտահայտել մեկ կիսամյակի ընթացքում սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով՝ ըստ հաստատված ձևի, յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է կրթական զարգացման բնութագիր:

Միավորային գնահատումը հանրակրթական ուսումնական հաստատությունում իրականացվում է սկսած երկրորդ դասարանից:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ արտահայտելու համար երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները.

- բանավոր հարցում,
- գործնական աշխատանք,
- թեմատիկ գրավոր աշխատանք,
- կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Բանավոր կամ գրավոր հարցումները և գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում դրանց կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունն ըստ առարկայական չափորոշչի պահանջների: Գործնական աշխատանքի դեպքում հաշվի են առնվում նաև աշխատանքի կատարման, վերլուծության և ամփոփման համար պահանջվող կարողությունն ու հմտությունը:

Ուսումնական որոշակի նյութից սովորողի ուսումնական ձեռքբերումները գնահատելիս ուսուցիչը կարող է կիրառել գնահատման այլ սանդակներ, բայց պաշտոնական գրանցումների համար դրանք պետք է բերվեն 10 միավորային սանդակի[Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005]:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՄ ՄԱՍ

Արդի փուլում , երբ տարրական դպրոցը նախապատրաստվում է անցում կատարել ոչ միավորային գնահատման համակարգի, ուսուցիչներս փորձում ենք ստեղծել գնահատման այլընտրանքային գործիքներ: Գիտական և գիտամեթոդական գրականության մեջ շրջանառվում են գնահատման ռուբրիկները, աշակերտական թղթապանակները, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման բազմաթիվ այլընտրանքային գործիքներ:

Իմ աշխատանքային պրակտիկայում կիրառում եմ մասնավորապես գնահատման ռուբրիկը,որն ըստ իս գնահատման բաց համակարգ է, որտեղ գնահատվողը գիտի իրեն ներկայացվող պահանջները,որից էլ բխում են նրա պատասխանի տրամաբանական քայլերը:

Ներկայացնում եմ բանավոր պատասխանի գնահատման ռուբրիկի նմուշ օրինակ`

ՀԱՏԿՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Դասարանը` 3-րդ

Առարկան` մայրենի

Նյութը` արձակ նկարագրական տեքստի բովանդակության վերարտադրում

Ռուբիկ` արձակ նկարագրական տեքստի բովանդակության վերարտադրում

Պահանջներ	Անուն, ազգանուն	Ա Ա	Ա Ա	Ա Ա	Ա Ա	Ա Ա	Ա Ա
1. Ուղղախոսություն							
2. Տրամաբանական հաղորդականություն							
3. Բառապաշար							
4.Տեմպ							
5. Եզրակացություն							

Եզրակացություն

Այսպիսով, տարրական դասարաններում գնահատելիս՝ անպայմանորեն պետք է հաշվի առնել նաև երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները, ջանքը, պատասխանատվության զգացումը: Ցանկացած աշակերտ պետք է համոզված լինի, որ լավ սովորելու արդյունքում, անշուշտ, գնահատվելու է, և բոլորովին էլ պարտադիր չէ, որ գնահատումը լինի գհահատանիշի միջոցով:

Թվանշանը պայմանականորեն արտահայտում է սովորողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների քանակական կողմը :

Մեր կարծիքով՝ տարրական դպրոցում չպետք է լինի երեխաների գիտելիքների քանակական կողմը որոշելու խնդիր. խրախուսանքը միայն դրդապատճառ է նրան ոգևորելու համար, և ամենևին էլ պարտադիր չէ, որ այն լինի թվանշանի տեսքով:

Գնահատանիշը տարրական դասարանում չպետք է որպես զենք օգտագործել կամ կիրառել որպես պատժիչ գործիք, քանի որ կրթությունը մրցակցային դաշտ չէ, և յուրաքանչյուրը, լինելով անհատականություն, շարժվում է իր հնարավորություններին համահունչ: Անժխտելի է, որ յուրաքանչյուր դասարանում կան մտավոր տարբեր ունակություններ և մակարդակներ ունեցող երեխաներ: Միատեսակ չեն նաև նրանց գիտելիքների պաշարը, հիշողության, մտապահման , մտածելու կարողությունները, կամքը, ներքին ակտիվության որակները ;

Ոսուցիչը պետք է առաջնորդվի «Երեխան իրավունք ունի լինել այնպիսին, ինչպիսին ինքը կա. ունի սխալվելու, ուժերը փորձելու իրավունք» սկզբունքներով [2, 32]:

Մենք պետք է կարողանանք կրթության գործունեության կազմակերպումն այնքան մոտեցնել սովորողի կյանքին, որ նա սկսի թվանշանի մասին չմտածել առհասարակ, կրթությունը նրա համար ոչ թե բեռ դառնա, այլ հաճույք:

Գնահատանիշը սովորողի գիտելիքի չափման միավորն է, և եթե սովորողի գնահատումը կատարվի այլ գործիքի միջոցով, որ աշակերտը ավելի հստակ կարողանա իր գիտելիքի չափելիությունը հասկանալ, ապա այս արմատական փոփոխությունը կրտսեր դպրոցում , կարծում եմ , կլինի արդյունավետ գործընթաց:

Գրականություն

1. Յ.Ամիրջանյան, Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, Երևան, 1985
2. Յ.Ամիրջանյան, Ժամանակակից դիդակտիկա, Երևան, 1990
3. Հ. Իսիբեկյան Օ. Պ. «Վարձիվ»-ը, ձեռնարկային ձևերի մասին խոսելու համար «Վարձիվ»-ը, 1990 թ. հունիսի 15-16, 319 էջ:
4. Թովմատյան Արմա, Սովորողների անհատականության բացահայտումը՝ որպես ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների հումանացման հիմք, Մանկավարժական միտք 2-3, 2005
5. Միրաբյան Լ. Ս. Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակներն ու ձևերը տարրական դպրոցում, մեթոդական ձեռնարկ, «Արտագերս» հրատ, Երևան 2020, 97 էջ
6. Իսիբեկյան Օ. Պ. «Վարձիվ»-ը, ձեռնարկային ձևերի մասին խոսելու համար «Վարձիվ»-ը, 1990 թ. հունիսի 15-16, 319 էջ:
7. Выготский Л.С. Кризис семи лет//. собр. соч.: В 6 т. М., 1894
8. Липкина А. И. Самооценка школьника. М., 1976
9. Крость В.М. Педагогика: Учеб. Пособие / В.М.Крость.- М.:Высш. шк., 2008.- 317 с.
10. Крутецкий В.А. Психология обучения и воспитания школьников. М., 1976.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական աստեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՆԱՀԻՏ ՎԻԿՏՈՐԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Թեմա՝

Սովորողի քննադատական մտածողության զարգացումը մայրենիի
դասաժամին

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Լուսինե Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	3
Մովորողների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում -----	4
Եզրակացություն -----	14
Օգտագործված գրականություն -----	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային առաջընթացի հետ փոփոխության է ենթարկվում նաև կրթական համակարգի գործընթացը: Փոփոխվում է ն՛ աշակերտի, ն՛ ուսուցչի դերն ու նշանակությունը:

Արդի կրթական համակարգում ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես, բացառիկ տեղ է հատկացվում ուսումնական գործընթացում սովորողների տրամաբանական մտածողության, ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, հաղորդակցական և այլ կարողությունների ձևավորմանը:

Արդի տեխնոլոգիաների օգտագործումը աշակերտներին մղում են ոչ թե մեխանիկական գիտելիքների ձեռք բերմանը, այլ բերում են իրենց ակտիվ մասնակցությունը կայուն գիտելիքների ձեռք բերման գործընթացին: Աշակերտը դառնում է ստեղծագործող, ինքնուրույն եզրահանգում կատարող:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունից:

Մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը:

Քննադատական մտածողությունը նպատակ ունի ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Քննադատական մտածողության կարողությունների ձևավորումն ու զարգացումը դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Քննադատական մտածողությունը իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռքբերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Քննադատական մտածողությունն այսօր չունի մեկ միասնական սահմանում: Այն մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

Քննադատական մտածողությունը մտածողության այնպիսի տիպ է, որը մարդուն օգնում է որոշել սեփական գերակայությունները անձնական, մասնագիտական ու հասարակական կյանքում, ինչպես նաև դրանք համեմատել արդիական չափանիշների հետ:

Մանկավարժական մտքի հետագա զարգացման ընթացքում այդ մոտեցումը ստացել է տարբեր ուղղվածություններ և հիմնականում ընկալվել է որպես աշակերտին դարձնող ուսուցման գործընթացի ավելի ակտիվ մասնակից, աշակերտներին դարձնել ուսուցման ակտիվ անդամ: Նրանց գիտելիքների պարզ մտապահողի և վերարտադրողի դերը փոխարինել ակտիվ որոնողական աշխատանքով, սովորել սովորեցնել, ի հայտ բերել և ուսուցման ընթացքում զարգացնել նրանց ներքին հնարավորությունը, զարգացնել նրանց ստեղծագործական մտածողությունը, որը միշտ մնում է անփոփոխ:

Ուսումնական գործընթացը խելամիտ ու հետաքրքիր կազմակերպելու, երեխաների մեջ սովորելու ցանկություն առաջացնելու և նրանց խրախուսելու համար կարևոր է ուսուցչի կողմից սովորողների կարիքներին համապատասխան ուսումնական բազմազան նյութերի ընտրությունը:

Անհրաժեշտ է ուսումնական գործընթացում ընդգրկված բոլոր աշակերտներին դիտել անհատ՝ իրենց ընդունակություններով, հետաքրքրություններով ու կարիքներով: Ուսուցիչներին անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ, հատուկ հմտություններ, ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն՝ դասավանդման գործընթացի ճկունությունն ապահովելու համար, որովհետև երեխաներն իրենց ընդունակություններով, զարգացման առանձնահատկություններով տարբեր են:

Սա ճանաչողական ակտիվ ու փոխներգործուն ընթացք է: Այն ընդհանրական մոտեցում է, որն օգնում է սովորողներին գնահատել գաղափարների, մոտեցումների

արժեքը կամ արդյունքները նախքան որոշումներ կայացնելը կամ տեսակետ ձևակերպելը:Որոշ տարբերություններով հանդերձ այս մոտեցումներն ունեն նաև մի շարք ընդհանրություններ:Այդ թվում ընդհանուր է այն,որ քննադատական մտածողություն հասկացողությունը և դրանից բխող մոտեցումները պետք է հավասարապես մատչելի լինեն բոլորին՝ դպրոցի ուսուցիչներին և դասախոսներին:

Չարգացած քննադատական մտածողության կարողությունների մասին ժամանակակից պատկերացումներն են.

- Նոր մտքերին պատրաստ լինելը
- Մեկական դատողություններում սխալներից խուսափելու ձգտում
- Իրադարձային և տրամաբանական մտածողությունների տարբերության գիտակցումը

Քննադատական մտածողությունը խթանելու կամ ընդհակառակը այն ստուգելու ամենագեղեցիկ միջոցներից են ուսուցչի հարցերը:

Հարցադրումները պետք է խթանեն աշակերտների մտավոր աշխատանքը,օգնեն հասկանալու,որ իրենք էլ կարող են ունենալ արժեքավոր մտքեր;Առաջադրվող բազմաթիվ հարցերի շնորհիվ աշակերտները կարող են հասկանալ,որ գիտելիքը քարացած չէ և գաղափարները փոփոխական են:Ուսումնասիրությունները ցույց են տվել,որ ուսուցիչների առաջադրած հարցերի մեծամասնությունը փաստերի մտապահմանն է վերաբերվում.

- Գիտելիքների և տեղեկատվության հսկայական աճի և աննախադեպ արագությամբ ստեղծվելու պայմաններում դպրոցական և մասնագիտական առաջընթաց
- Օգնել աշակերտներին ձևակերպելու և առաջադրելու ինքնուրույն հարցեր
- Խրախուսել սովորողների ինքնաարտահայտումը
- Ապահովել տեղեկատվության մշակումը
- Նպաստել քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը

ԽԻԿ համակարգը գերազանց միջոց է նկարագրական և պատմողական ուսումնական նյութեր անցնելիս աշակերտներին ուղղորդելու համար:Այն կարող է կիրառվել ուսուցման բոլոր աստիճաններում,բոլոր դասարաններում և բոլոր առարկաների դասավանդման ժամանակ:Դրանք օժանդակում են տեսնել բուն նյութի իմաստային կառուցվածքը:Հետևաբար դրանք ոչ մի կերպ չեն խոչընդոտում քննադատական վերլուծության ընթացքին:

Այսպիսով խթանում-իմաստի ընկալում-կշռադատում մոդելով կառուցված ուսուցումը դասավանդողին հնարավորություն է ընձեռում՝

- Ակտիվացնել սովորողների մտածողությունը

- Նպաստել գործուն քանավեճին
- Բարձրացնել ուսման շարժառիթները
- Ապահովել ակտիվ ուսումնական գործունեություն
- Սովորողներին հնարավորություն տալ լսելու տարբեր կարծիքներ
- նպաստել քննադատական զարգացմանը

Քննադատական մտածողության զարգացման համակարգի արդյունավետությունն ապահովվում է, երբ այն տարալուծվում է ողջ մանկավարժական գործընթացում և դրա բոլոր փուլերում:

Քննադատական մտածողության զարգացման երեք փուլերից բաղկացած համակարգն ուսուցման և ուսումնառության մի մոդել է, որը հիմնված է մարդու ճանաչողական ընդունակությունների գիտական հետազոտությունների տվյալների վրա: Քննադատաբար մտածող մարդը գտնում է խնդրի լուծման սեփական ձևերը և կարողանում դրանք հիմնավորել տրամաբանությամբ ու փաստարկներով: Քննադատական մտածողության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր միտք կամ եզրահանգում ստուգվում և հղկվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ վիճելիս, ժխտելիս, հաստատելիս կամ կարծիքներ փոխանակելիս անպայման միաժամանակ ճշտում, հստակեցնում ենք սեփական դիրքորոշումը: Քննադատական մտածողության զարգացման սկզբունքներով աշխատող մանկավարժն իր գործունեության մեջ տեղ է գտնում ուսուցման և անհատական ուսուցման սուբյեկտ-սուբյեկտ մոդելին: Դասարանում, ուր ուսումնական գործընթացի գլխավոր դերակատարն աշակերտն է, ուսուցիչը դադարում է լինել աշակերտների գիտելիքների միակ աղբյուրը: Նա դառնում է նրանց ուսումնառության և զարգացման գործընթացի ուղղորդողը: Ավելին ուսուցիչը ներկայանում է իբրև հետազոտող, փնտրող և լուծումներ գտնող տիպար, ինչը մեծապես խթանում է աշակերտների որոնողական աշխատանքը: Նա ոչ միայն աշակերտին օգնում է ձեռք բերելու ինքնուրույն գիտելիքներ, այլև օրինակ է ծառայում, որպեսզի սեփականը, իր ստեղծագործական մտքի արդյունքը իրականանա մանկավարժական գործընթացում:

Դպրոց մուտք գործող նորարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը:

<<Քննադատական մտածողություն>> եղրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է <<քննադատել>> բառին: Սակայն այս բառը ներառում է <<քննել>> և <<դատել>> բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողությունն այսօր չունի մեկ միասնական սահմանում: Սակայն բոլորի կողմից ընդունված է քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Այսօր ձևավորվել է քննադատական մտածողության խթանման մեթոդների մի ստվար քանակություն, որը բնավ չի սպառել իր բոլոր

հնարավորությունները և գտնվում է զարգացման փուլում:Կարևորն այն է,որ այս մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական կարողությունների,ինքնուրույնության,ստեղծագործական ներուժի բացահայտմանը և զարգացմանը:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոփոխական վստահության մթնոլորտի առկայություն:Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ,կարողանա մտածել,ներկայացնել իր տեսակետը,մտքեր փոխանակել ու լսել դիմացինին,հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր թեկուզ փոքրիկ ներդրումը:

Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը/խթանում/,նյութի մատուցման ընթացքում/իմաստի ընկալում/ և նյութը յուրացնելուց հետո/կշռադատում/:Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ համակարգ:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը,այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի,օժանդակում ինքնուրույն գիտելիքների ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,խթանում սովորողների ստեղծագործական մտածողությանը:

Ընդունված է,որ քննադատական մտածողությունը միայն միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաներին է հատուկ:Այս դեպքում հաշվի է առնվում,որ դրա շնորհիվ իրականացվում է բարդ ճանաչողական գործունեություն:Սակայն չենք տարակուսում,որ այն կիրառելի է բոլոր տարիքի մարդկանց,առավել ևս փոքրերի համար:Համենայն դեպս մեր աշխատանքի ընթացքում իրականացված գիտափորձերի արդյունքների հիման վրա վստահաբար կարող ենք պնդել,որ մեր փոքրիկներն ի վիճակի են անել ավելին, քան մենք ակնկալում ենք:

Ավանդական ոճով կազմակերպված դասարաններում երեխաների միջև բավականին ուշ են ձևավորվում ջերմ հարաբերություններ:Ցածր է փոխկապվածության աստիճանը:Մինչդեռ շփումների նպատակը հիմնականում տեղեկատվության փոխանակումը և առաջադրանքների կատարման եղանակի պարզաբանումն է:Յուրաքանչյուր աշակերտ աշխատում է անհատապես,և ինքն է պատասխանատվություն կրում իր իսկ կատարած աշխատանքի համար:Միմյանց հետ շփվելու հնարավորություն ստեղծում են դասամիջոցները:Դրանք,հասկանալի է,բավարար չեն կարող լինել միմյանց լավ ճանաչելու,հաղորդակցվելու և համագործակցելու առումով:

Համագործակցային ուսուցումը,ընդհակառակը,աշակերտակենտրոն է:Երեխաներն ուսուցման գործընթացի մեջ ներգրավվում են խմբերով,որոնք

անընդհատ փոփոխվում են:Այդ կերպ ապահովվում է շփումը դասարանի բոլոր աշակերտների միջև:

Համագործակցային խմբերը միավորում են ընդհանուր նպատակի շուրջ:Դա նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:Սովորողներն ակտիվորեն մասնակցում են գործընթացին,և ուսուցիչը կարողանում է աշխատել բոլորի,այլ ոչ թե միայն ընդհանուր ճակատի հետ:Համագործակցային ուսումնառությունը նպաստում է դասարանում ջերմ,դրական մթնոլորտի արագ ձևավորմանը:Աշակերտներն անընդհատ շփվում են միմյանց հետ,քննարկումների մասնակցում,որոշումներ կայացնում ինչպես անհատապես,այնպես էլ խմբով:

Փոխվում են նաև ուսուցչի և աշակերտների դերերը:Ուսուցիչը հանդես է գալիս որպես կազմակերպիչ,մասնակից,խորհրդատու,իսկ աշակերտները՝ որոշում կայացնողներ, ընտրություն կատարողներ և այլն:Ամեն ինչ համաձայնեցված է ուսուցչի և աշակերտի միջև:

Եթե շրջապատը երեխային լավ է վերաբերվում, դրական է գնահատում, ապա նրա մեջ ձևավորվում է բարձր ինքնագնահատական և ընդհակառակը: Ինքնագնահատականից են կախված նրա հետագա հաջողություններն ու անհաջողությունները:

Համագործակցային ուսումնասիրության սկզբունքներով կազմակերպված դասարաններում աշակերտների միջև դրական փոխկապվածություն է ձևավորվում:Նրանք սոցիալական աջակցություն են ցուցաբերում միմյանց հանդեպ:Նման միջավայրում երեխաները կարողանում են ճանաչել և՛ իրենց,և՛ միմյանց:Փոխադարձ դրական վերաբերմունք է մշակվում:Այս իրավիճակն օգնում է երեխային՝ հստակեցնելու ինքնագնահատականը:Նրանց հնարավորություն է ընձեռվում զարգացնել սեփական կարողությունները,հմտությունները,հաղթահարել դժվարությունները:Միայնակ դաս պատասխանելիս երեխաները վախենում են սխալվել և քննադատության արժանանալ ուսուցչի և ընկերների կողմից:Խմբային աշխատանքի ժամանակ պատասխանատվությունը բաշխվում է խմբի բոլոր անդամների միջև:Գրեթե վերանում են անհատապես սխալվելու և ամաչելու պայմանները:Այս հանգամանքը ևս ապացուցում է համագործակցային ուսուցման առավելությունը:

Այսպիսով համագործակցային ուսումնառությունն արդյունավետ է ոչ միայն գիտելիքների յուրացման,որոշակի կարողությունների և հմտությունների ձևավորման,քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման տեսանկյունից,այլև այն առումով,որ հոգեբանական դժվարությունների հաղթահարման մի շարք հնարավորություններ է ընձեռում:

Ի վերջո,երբ ուսուցիչները բանավեճ են կազմակերպում,նրանց առաջնահերթ խնդիրներից մեկն է դառնում բոլոր աշակերտների մասնակցության խրախուսումը:Դրա համար երբեմն անհրաժեշտ է լինում անունով դիմել

համեմատաբար անհամարձակ աշակերտներին և անգամ շրջանցել նրանց, ովքեր իրենց պարտքն են համարում պատասխանել անխտիր բոլոր հարցերին:

Շատ աշակերտներ խուսափում են մեկնաբանություններից, հարցերին պատասխանելուց, որովհետև դա ընկալում են որպես գնահատում/թվանշան/, այլ ոչ քննարկման մի մաս: Երբ ուսուցիչները հետզհետե հրաժարվեն գնահատական նշանակելու նպատակով տրվող հարցերից և ավելի հաճախ առաջարկեն քննադատական մտածողությունը խթանող հարցադրումներ, աշակերտները կսկսեն ավելի անկաշկանդ ներգրավվել քննարկումների մեջ: Երբ աշակերտները հասնում են փոխգործունեության այս մակարդակին, ուսուցիչների համար ավելի դյուրին է դառնում ուղղորդված քննարկումներ վարելը: Այս դեպքում աշակերտների գործուն մասնակցությունն արդեն դառնում է բնական:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Երբ առաջադրանքները կառուցվում են քննադատական մտածողության սկզբունքների հիման վրա, ապա ամեն սովորող ձևավորում է իր սեփական պատկերացումները, գաղափարները՝ ելնելով իր ուսումնառության հնարավորություններից ու յուրահատկություններից: Արդյունքում նա ոչ միայն յուրացնում է ուսումնական նյութը, այլև զարգացնում է իր մտավոր հնարավորությունները: Այդ դեպքում նոր գիտելիքը գնահատվում է սովորողի կողմից և հիմք դառնում համոզմունքների ձևավորման համար: Ահա ինչու դասարանում անհրաժեշտ է ստեղծել ազատ, անկաշկանդ մթնոլորտ, որպեսզի սովորողները կարողանան մտածել և ինքնուրույն գտնել անգամ ամենաբարդ հարցերի լուծումները: Ուսումնառության ընթացքում որպես սեփական կարող ենք ընդունել ուրիշների գաղափարներն ու համոզմունքները: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը, քանի որ նա մտածողության և հիմքերը, և ընթացքը, և արդյունքները, և դրանց վերահսկողությունը սուբյեկտիվ են:

<<Քննադատական մտածողություն>> գաղափարի ձևավորման համար որպես հիմք է ընդունվել 4 հիմնական դրույթ/ըստ Դեյվիդ Քլուսթերի/:

1. Բոլոր երեխաների ներքնաշխարհին հատուկ բնածին ընդունակությունների և արդյունավետ սովորելու կարողության առկայության գիտակցում: Երեխաների բնատուր հատկանիշն է հետաքրքրասիրությունը շրջապատող աշխարհի նկատմամբ:

2. Ստեղծագործաբար աշխատող ուսուցիչները, որոնք խրախուսում են շարունակական հարցադրումները և խթանում աշակերտների արդյունավետ մտածողության կարողությունների ու հմտությունների ձևավորումը:

3. Աշակերտների քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտության գիտակցում: իսկ դա նշանակում է աշակերտին քննարկումների մեջ ընդգրկելու ուսումնական և այլ հետազոտական գործընթացներում

քննադատական մտածողության կարևորում և այդ ամենի գործնական կիրառման կարողությունների ձևավորում և զարգացում:

4. Գործուն ուսումնառության ապահովման կարևոր նախապայման է նաև դասարանում ուսման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Այն ենթադրում է, որ աշակերտները՝ ելնելով իրենց բնական հետաքրքրություններից, կարողանում են.

- կատարել ուսումնական որոնողական աշխատանքներ, փնտրել և ուսուցման նոր մեթոդների շնորհիվ ավելի արագ ու դյուրին ընկալել ուսումնական նյութը:
- գիտական ձեռքբերումներն օգտագործել ոչ թե որպես սոսկ յուրացվելիք և մտածվելիք ճշմարտություններ, այլ իբրև նորն ստեղծելու գիտական հարցադրումները գիտակցելու և դրանց լուծումները որոնելու և գտնելու միջև:

Ուսուցումն ընկալվում է որպես աշակերտակենտրոն գործընթաց: Վերջինս ենթադրում է ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելի վերափոխում : Դասարանում ուր ուսումնական գործընթացի գլխավոր դերակատարն աշակերտն է, ուսուցիչը դադարում է լինել աշակերտների գիտելիքների միակ աղբյուրը: Նա դառնում թ նրանց ուսումնառության և զարգացման գործընթացի ուղղորդողը: Ավելին ուսուցիչը ներկայանում է իբրև հետազոտող, փետրող և լուծումներ գտնող տիպար, ինչը մեծապես խթանում է աշակերտների որոնողական աշխատանքը:


Այսօր ձևավորվել է քննադատական մտածողության խթանման մեթոդների մի ստվար քանակություն, որը բնավ չի սպառել իր բոլոր հնարավորությունները և գտնվում է զարգացման փուլում: Կարևորն այն է, որ այս մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական կարողությունների, ինքնիրրության, ստեղծագործական ներուժի բացահայտմանը և զարգացմանը:

Քննադատական մտածողության խթանման մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր թեկուզ փոքրիկ ներդրումը: Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը/խթանումը/, նյութի մատուցման ընթացքում/իմաստի ընկալում/ և նյութը յուրացնելուց հետո/կշռադատում/: Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ համակարգ, որը նման է ավանդական դասի կառուցվածքին՝ նախապատրաստական փուլ/խթանում/, նոր դասի հաղորդում/իմաստի ընկալում/ և ամփոփում/կշռադատում/:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությանը:

Ընդունված է, որ քննադատական մտածողությունը հատուկ է միայն միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաներին: Այս դեպքում հաշվի է առնվում, որ դրա շնորհիվ իրականացվում է բարդ ճանաչողական գործունեություն: Մակայն չենք տարակուսում, որ այն կիրառելի է բոլոր տարիքի մարդկանց, առավել ևս փոքրերի համար: Համենայն դեպս, մեր աշխատանքի ընթացքում իրականացված գիտափորձերի արդյունքների հիման վրա վստահաբար կարող ենք ասել, որ մեր փոքրիկներն ի վիճակի են անել ավելին, քան մենք ակրնկալում ենք:

Ստորև ներկայացնում եմ այն մեթոդները, որոնք կիրառել եմ այս ուսումնական նյութի մատուցման ընթացքում:



„Մտագրոհ,, մեթոդի միջոցով բացահայտեցինք Դավիթին, նրա բնավորության գծերը, նրա կատարած սխրանքները: Երեխաները այս բառերը օգտագործեցին բառակապակցություններ, նախադասություններ կազմելով:

Մրանից հետո կարդացինք դասը,բացատրեցինք անհասկանալի բառերն ու արտահայտությունները:

Հայրենիքի մասին ասվեցին ասացվածքներ.,Մուրբ է հայրենիքը: Նա մեր հացն է,մայրական գիրկը,մեր մանկությունն է,մեր պապերի գերեզմանն է և մեր մանուկների զվարթ օրորոցը., Ավ.Իսահակյան:

Երեխաները ըստ գույների բաժանվեցին խմբերի և սկսեցին աշխատել պատասխանելով հարցերին.

1.Վերընթերցիր այն հատվածները,որտեղ երևում է,որ Դավիթը`

ա/ հայրենասեր և ազատասեր է

բ/ կռվի մեջ արդար է ու ազնիվ,անհավասար կռիվ չի սիրում,ուրիշի թուլությունից չի

օգտվում

գ/ լսում ու հարգում է մեծերի խոսքը:

2.Ինչպես` կբացատրես հետևյալ արտահայտությունները`

ա/ Մսրա գորքին թիվ չկար

բ/ Արյան ծով

3.Ինչպես ես հասկանում Դավթի խոսքը` ուղղված Մսրա գորքին:

4.Կարդացած հատվածից դուրս գրիր

ա/անձ ցույց տվող/ով հարցին պատասխանող/ 4 հասարակ գոյական,

բ/իր ցույց տվող/ինչ հարցին պատասխանող/ 4 հասարակ գոյական էլ գրիր ինքդ:


Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուրը ներկայացրեց իր խմբի աշխատանքը,քննարկվեց և գնահատվեց հենց երեխաների կողմից:Խրախուսվեց այն խումբը,որն ավելի գեղեցիկ էր ձևավորել,ավելի խելացի և հանգամանալից պատասխան է տվել:Օգտագործվեց դադարի պահը,որտեղ գաղտնագրված էր թե,որ լեզուներով է թարգմանվել „Սասնա ծռեր,, վիպերգը:

Երեխաները միմյանց ուղղեցին հարցեր և ստացան սպառիչ պատասխաններ:

Եվ այսպիսով ստացանք թեմայի ամբողջական ամփոփումը:

Տնային աշխատանք`կարդալ մի հեքիաթ,որտեղ քաջ հերոսը հաղթում է չարին:

Այս դասի ընթացքում օգտագործել ենք Վեննի դիագրամի մեթոդը, համեմատեցինք Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի կերպարները:



Երեխաները մեծ խանդավառությամբ են մասնակցում հերոսների կերպարների նկարագրությանը, նույնիսկ նկարում հերոսներին ըստ արժանավույն:

Դասի պլանավորման ժամանակ կարևոր է նաև որոշել, թե պատմվածքի որ մասում է անհրաժեշտ կանգ առնել ու հարցեր տալ: Այդ կանգառները պետք է համապատասխանեն ուսուցանվող նյութի տրամաբանությանը: Աշակերտներին հարցեր ուղղելու ընթացքում շատ կարևոր է ժամանակի տրամադրումը, որպեսզի նրանք կարողանան մտածված, տրամաբանված պատասխաններ տալ: Ուսուցիչները սովորաբար սպասում են միջինը մեկ վարկյան կամ ավելի քիչ: Հետազոտությունները ցույց են տվել, որ այդ ժամանակի երկարացումը մինչև երեք վարկյան, ոչ միայն զգալիորեն կբարձրացնի մտածողության որակը, այլև կմեծացնի պատասխանող աշակերտների թիվը: Ահա թե ինչ չափազանց կարևոր է, որ ուսուցիչները վերանայեն իրենց հարցերի կառուցվածքը:

Ի վերջո, երբ ուսուցիչները դասարանում հարցի հիման վրա բանավեճեր են կազմակերպում, նրանց առաջնահերթ խնդիրներից մեկն է դառնում բոլոր աշակերտների մասնակցության խրախուսումը: Իրա համար երբեմն անհրաժեշտ է լինում անունով դիմել համբերատար անհարձակ աշակերտներին և անգամ շրջանցել նրանց ուլքեր պարտքն են համարում պատասխանել՝ անխտիր բոլոր հարցերին: Շատ աշակերտներ խուսափում են մեկնաբանություններից, հարցերին պատասխանելուց որովհետև մեծամասամբ դա ընկալում են որպես գնահատում/նկատի ունենք թվանշանը/, այլ ոչ քննարկման մի մաս: Եթե ուսուցիչները հրաժարվեն գնահատական

նշանակելու նպատակով տրվող հարցերից ու հաճախակի առաջարկեն քննադատական մտածողությունը խթանող հարցադրումներ, աշակերտները կսկսեն ավելի անկաշկանդ ներգրավվել բաց քննարկումների մեջ: Երբ աշակերտները վարժվում են միակ ճշմարիտ պատասխան չենթադրող իսկական քննարկումներին, որտեղ բոլոր մտքերն ընդունվում են հարգանքով և կարևորվում, նրանք հաճույքով են արտահայտում սեփական մտքերը և լսում ուրիշների կարծիքները: Երբ աշակերտները հասնում են փոխգործունեության այս մակարդակին, ուսուցիչների համար ավելի հեշտ դառնում ուղղորդված քննարկումներ վարելը: Այս դեպքում աշակերտների մտքորոն մասնակցությունն արդեն դառնում է բնական: „Ուղղորդված ընթերցանության,, դասի նպատակն է աշակերտներին ներգրավել ակտիվ ընթերցանության մեջ, նման ձևով կազմակերպված դասն աշակերտներին օգնում է տեքստի ընթերցման և նյութի ընկալման հետ միաժամանակ վերլուծել այն և համապատասխան եզրահանգումներ անել: Նախքան դասն սկսելը մասնակիցներին պետք է տեղեկացնել, որ պատմվածքն ընթերցվելու է խմբովի: Այդ իսկ պատճառով պատմվածքը բաժանման պահից պետք չէ կարդալ: Բոլորը պետք է կարդան միաժամանակ և քննարկեն համատեղ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, քննադատական մտածողության զարգացմամբ լուծվում են ն' կրթական, ն' դաստիարակչական խնդիրներ: Մենք տեսանք, որ քննադատական տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը, երեխաները իրենց ստացած գիտելիքները կարողանում են կիրառել, նրանց մոտ ձևավորվում են ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողություններ, զարգացնում է ստեղծագործական մտածողությունը: Երեխաները դառնում են ավելի վստահ, չեն կաշկանդվում, գնահատում են իրենց և դիմացինին, քննադատաբար են մոտենում յուրաքանչյուր հարցադրման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <<Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը կրտսեր դպրոցում>>
Ս. Վարդանյան, Ֆ. Երիցյան, Ռ. Պետրոյան , 1998թ.
2. <<Քննդատական մտածողության զարգացումը>> կրտսեր դպրոցում
3. Հատուկ սեմինար դասընթացի ծրագրեր և նյութեր ,Երևան 2002թ.
4. Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս, Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ Քննադատական
մտածողության համակարգ ամբողջ ուսումնական ծրագրի համատեքստում (1988 թ.)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՆՆԱ ՀԱՅԿԱԶԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թեմա

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ
ԴԱՍԵՐԻՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ. Լ. Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
ԳԼՈՒԽ 1.	
ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ -----	5
1.1. Խաղային գործունեության տեսակները, գործառույթները և սկզբունքները -----	5
ԳԼՈՒԽ 2.	
ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ -----	10
2.1. Դիդակտիկ խաղերի կիրառումը ուսուցման գործընթացում -----	10
2.2. Դիդակտիկ խաղերի կիրառումը մաթեմատիկայի դասերին-----	15
2.3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-----	19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----	25
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Դիդակտիկ խաղը երեխաների մտավոր դաստիարակության արժեքավոր միջոց է, որը խթանում է նրանց հոգեկան գործընթացները՝ հետաքրքրություն առաջացնելով ճանաչողական գործունեության նկատմամբ: Բացի ուսուցողական և դաստիարակչական նպատակներից՝ դիդակտիկ խաղերը կարող են լուծել մի շարք խնդիրներ և հաղթահարել մի շարք դժվարություններ՝ արագացնում են ուսումնական նյութի յուրացման գործընթացը, զարգացնում են հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, ձևավորում են ճանաչողական մոտիվացիա, նպաստում են առաջին դասարանցիների ադապտացիային՝ սոցիալական հարմարմանը: Դրանք նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնադրսևորմանը, ինքնահաստատմանը, ձևավորվում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, կամային որակներ:

Դիդակտիկ խաղերի կիրառման արդիականությունը մաթեմատիկայի դասերին խաղային իրավիճակներում երեխաներին մաթեմատիկական գիտելիքներին հաղորդակից դարձնելը, մաթեմատիկայի նկատմամբ ընդհանուր հետաքրքրություն առաջացնելն է:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

- ուսումնասիրել գիտատեսական և գիտամեթոդական գրականությունը՝ դիդակտիկ խաղերի, մաթեմատիկայի դասերին դրանց կիրառման վերաբերյալ: Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.
- նկարագրել խաղային գործունեության տեսակները, գործառույթները և սկզբունքները,
- բացահայտել դիդակտիկ խաղերի կիրառման արդյունավետությունը մաթեմատիկայի դասերին,
- իրականացնել հետազոտություն. հարցում ուսուցիչների շրջանում՝ կատարելով հետազոտության տվյալների մաթեմատիկական վերլուծություն:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը թեմայի վերաբերյալ տեսական գիտելիքների համակարգումն է:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղերի կիրառման արդյունավետությունը, դերն ու նշանակությունը բացահայտելն է:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխերով, հետազոտությունից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքով 26 էջ:

ԳԼՈՒԽ 1

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.1 Խաղային գործունեության տեսակները, գործառույթները և սկզբունքները

Խաղը երեխայի համար կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում: Ըստ հոգեբանների՝ այդ տարիքն է առանձնանում որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան, և զարգացման հենց այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը՝ ուսուցման հետ զուգահեռ, շարունակում է մնալ խաղը: Այդ տարիքում խաղն անձի ձևավորման կարևորագույն միջոց է և գործոն:

Խաղը հանդիսանում է հաղորդակցման ուսուցման, ինքնաճանաչման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց: Խաղը՝ որպես գործունեության ձև, իրականացնում է մի շարք գործառույթներ՝

- զարգացնող.
- դաստիարակող.
- շփման և հաղորդակցման.
- կարգավորող.
- առողջարարական (թերապևտիկ):

Դպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում: Դրա շնորհիվ նրանք դառնում են դիտունակ, սովորում են համեմատել, դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների, իսկ դա նպաստում է նրանց մտավոր զարգացմանը, զուգահեռաբար զարգացնելով ընկալունակությունը, խոսքը և ուշադրությունը:

Խաղային գործունեությունը՝ ինչպես գործունեության յուրաքանչյուր տեսակ, ունի իր կառուցվածքը, որը ներառում է՝

- նպատակ.
- դրդապատճառ.

- իրականացման միջոցներ.
- գործողության պլանավորում.
- գործողության արդյունք:

Խաղի կառուցվածքում կարևոր միավոր է խաղային դերը, որը մեծահասակի գործողությունների վերարտադրումն է: Խաղի մեջ գործում են երկու տիպի փոխհարաբերություններ՝ խաղային և իրական: Դերային կամ խաղային հարաբերությունները պարտադրվում են ըստ դերի: Իրական հարաբերությունները երեխաների առօրյա կյանքում միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների արտացոլումն են: Այս երկու փոխհարաբերությունները կապված են միմյանց հետ, և դրանով է պայմանավորված խաղային գործունեության արդյունավետությունը:

Խաղերը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

- ստեղծագործական, որոնք ընդգրկում են սյուժետադերային խաղեր և խաղ-բեմականացումներ.
- կանոնավոր խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճալիքները:

Սյուժետադերային խաղերն առաջին հերթին արտացոլում են շրջակա միջավայրը, մարդկանց վարքը և գործունեության տարբեր ոլորտները: Այս խաղերն ազատ և ինքնաբերական են: Դրանք դպրոցական տարիքի երեխաների հիմնական զբաղմունքն են: Խաղի ընթացքում մասնակիցների շփման, հաղորդակցման, համատեղ ակտիվության դրսևորման գործընթացում համագործակցության մեջ են մտնում երեխայի իրական և դերային հարաբերությունները: Դրանք փոխադարձաբար նպաստում են խաղի արդյունավետությանը և երեխայի ներուժի բացահայտմանը:

Խաղ-բեմականացումները սյուժետադերային խաղերի տարատեսակներից են: Ունեն սյուժե, բովանդակություն, դերեր, որոնց կատարումը պահանջում է մեծ ջանքեր: Երեխան այստեղ խաղում է ոչ թե իր համար, այլ՝ հանդիսատեսի: Այստեղ պետք է հարազատ մնալ տեքստին, իսկ խաղի բովանդակությունը վերցվում է հիմնականում գեղարվեստական ստեղծագործություններից:

Կանոնավոր խաղերն ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք: Դրանց թվին են պատկանում դիդակտիկ

խաղերը, որոնք ունեն ուսուցողական բնույթ: Բոլոր խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Խաղային խնդիրների լուծմամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտքի և մարմնի ճկունությունը, հնարամտությունը, սրամտությունը, համբերատարությունը, հանդուրժողականությունը և այլն[4, էջ 47-49]: Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Երեխայի ճանաչողական ինքնուրույն գործունեություն ծավալելու ունակության ձևավորման և զարգացման համար մեծ նշանակություն ունի այն միջավայրը, ուր երեխան գտնվում է և դրսևորում է իրեն որպես ինքնուրույն, ազատ անձ: Այդպիսի գործունեության ծավալման արդյունավետ միջոցը խաղն է:

Խաղային արդյունավետ միջավայրի կազմակերպման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները.

- Զգացմունքային հարմարավետության սկզբունք, որը յուրաքանչյուր երեխայի համար ապահովում է ջերմություն, բարյացկամություն է ստեղծում երեխաների հարաբերություններում, սատարում է նրանց գործունեությունը:
- Ակտիվության սկզբունք, որի առկայությամբ խաղային գործունեության տեսակների ընտրության և դրանց կազմակերպմանը մասնակցելու ճանապարհով խթանվում է երեխաների ակտիվ վարքը:
- Բացության, ընդարձակության սկզբունքի հաշվառումը երեխաների պահանջմունքներով, հետաքրքրություններով, հմտություններով, նրանց զարգացման մակարդակով պայմանավորված նոր խաղերի ընտրությունն ու անցկացումն է, որոնք խաղային գործունեությանը տալիս են գիտելիքների, զգացմունքների առավել լայն ընդգրկունություն:
- Անհատականացման սկզբունքը միջավայրը դարձնում է անձնակողմնորոշված, երեխայակենտրոն: Այդպիսի միջավայրում յուրաքանչյուր երեխա ստեղծում է իր անկյունը, ստանում է առավելագույն չափով ինքնադրսևորվելու, իր կողմից ստեղծված առարկայական-խաղային միջավայրի շնորհիվ ձեռքբերումները ցույց տալու հնարավորություն:
- Ճկունության, շարժունության սկզբունքի հաշվառումը ստեղծում է միջավայրի առարկաների ազատ ձևափոխման, բազմագործառույթ խաղային նյութերի

օգտագործման, ինչպես նաև մեծերի և երեխաների զարգացնող հարաբերությունների դիրքորոշման մեջ ճկունության հնարավորություններ:

- Տեղեկացվածության սկզբունքի պահպանումը յուրաքանչյուր երեխայի տալիս է ազատ գործողությունների առավելագույն հնարավորություն՝ միջավայրն ապահովելով այնպիսի միջոցներով, որոնք երեխաներին կտան խաղերի հիման վրա կատարելագործվելու հնարավորություն[6, էջ 42]::

Ինչպես ցանկացած գործունեություն, այնպես էլ խաղը կատարում է որոշակի գործառույթներ, որոնցով էլ պայմանավորված է նրա յուրահատկությունը:

Վ.Ս. Կուկուշինը ներկայացնում է խաղային տեխնոլոգիայի առավել կարևոր հետևյալ գործառույթները.

- Սոցիալ-մշակութային նշանակությունը: Խաղը երեխայի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է: Այն իր մեջ ներառում է սոցիալ-վերահսկող գործընթացներ: Խաղի սոցիալ-մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի յուրացման, անձի ձևավորման ու դաստիարակման միջոց և թույլ է տալիս նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ: Խաղի սոցիալ-մշակութային բնույթն այն դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:
- Խաղի ինքնիրացման գործառույթը: Սա խաղի հիմնական գործառույթներից մեկն է: Խաղը կարևոր է որպես անձի ինքնիրացման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործընթացը և ոչ թե դրա արդյունքը, մրցակցությունը կամ որևէ նպատակի հասնելը:
- Հաղորդակցական գործառույթ: Խաղը հաղորդակցական գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն մարդուն ներգրավում է իրական մարդկային բարդ հարաբերությունների համակարգի մեջ:
- Խաղի ախտորոշիչ գործառույթը: Խաղն ավելի ախտորոշիչ է, քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ ինքնարտահայտման միջոց է, որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը:
- Խաղի թերապևտիկ գործառույթը: Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Բ. Էլկոնինը գրել է, որ

խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնց մեջ երեխան մտնում է դերային խաղում:

- **Խաղի շտկողական գործառույթը:** Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնականոն ձևով, եթե բոլոր մասնակիցները յուրացրել են խաղի կանոններն ու սյուժեն, և յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր, այլև խաղընկերների դերերը, ապա խաղի ընթացքը և նպատակը նրանց համախմբում է: Շտկողական խաղերը կարող են օգնել շեղված վարքով աշակերտներին՝ հաղթահարելու այն ապրումները, որոնք խոչընդոտում են նրանց ներդաշնակ ինքնագագոթության կայացմանը և շփմանը հասակակիցների միջավայրում:
- **Խաղի զվարճացնող գործառույթը:** Ջվարճանքի ապրումը ծնվում է սովորականից տարբերվող, անկեղծ ուրախության շեշտադրումներով զանազանվող իրավիճակներում և դրան ինքնաբերաբար ձգտում են բոլորը: Խաղի զվարճացնող գործառույթն առնչվում է որոշակի հարմարավետության ու հաճելի միջավայրի ստեղծմանը: Խաղի զվարճանքը որոնումն է: Խաղը մոգական ուժ ունի: Այն ընդունակ է սնել երևակայությունը[8, էջ 293-295]:

ԳԼՈՒԽ 2

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ

ԴԱՍԵՐԻՆ

2.1 Դիդակտիկ խաղերի կիրառումը ուսուցման գործընթացում

«Դիդակտիկ խաղը, - գրել է ռուս մանկավարժ Իրինա Յակովլևան,-ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված ու փոխկապակցված գործունեությունն է՝ ստեղծելով իրական պայմաններ աշակերտի կողմից գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման համար [7, էջ2]:

Դպրոց մտնելուց հետո երեխան իր համար բացահայտում է նոր աշխարհ, որտեղ նրա գործունեությունը ուսուցումն է: Ուսումնական գործունեությունը չի ունենա անհրաժեշտ արդյունքներ, եթե այդ ընթացքում չգտնվի երեխայի ներաշխարհ թափանցելու բանալին: Այս տեսանկյունից խաղը երեխայի ներաշխարհ թափանցելու յուրատեսակ միջոց է: Այն հնարավորություն է տալիս ձևավորել որոշակի արժեքային համակարգ, լուծել դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ, զարգացնել ստեղծագործական մտածողություն: Իրեն հարազատ միջավայրում երեխան առավել ակտիվ է, որովհետև նա դառնում է դեպքերի հետագա զարգացման կարևոր շարժիչ ուժ[5, էջ 20–24]: Անհրաժեշտ է, որ սովորողները հաճույք ստանան ուսուցման գործընթացից, իսկ դա տեղի կունենա այն դեպքում, երբ անցումը խաղից ուսումնական գործընթաց կատարվի տրամաբանորեն, այսինքն՝ այնպես, որ սովորողներն այդ անցումը չնկատեն[2, էջ 61–64]:

Դիդակտիկ խաղը ուսուցման միջոց է, որը ձևավորում է ինքնուրույն սովորելու ունակություն՝ ելնելով երեխաների ինքնավերլուծության և ինքնագիտակցության կարողություններից: Դիդակտիկ խաղի նպատակը ուսումնական գործունեության ծանրաբեռնվածության թեթևացումն է:

Դասի ժամանակ խաղային գործունեություն իրականացնելիս պետք է հստակ ներկայացվեն դրա կիրառման նպատակները՝ ամրակայման, ուսուցման, համակարգման, ամփոփման, նոր ուսումնական նյութի ընկալմանը նախապատրաստելու:

Դիդակտիկ խաղն ունի որոշակի կառուցվածք, որի հիմնական բնութագրական կողմը խաղի՝ որպես ուսուցման եղանակի և երեխայի խաղային գործունեության համակցումն է: Դիդակտիկ խաղերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել նրա կառուցվածքային առանձնահատկությունները և բաղադրիչները, որոնք խաղին տալիս են ուսումնական բովանդակություն:

Դիդակտիկ խաղերի կառուցվածքի հիմնական բաղադրամասերն են.

- Ուսուցողական խնդիրների առկայությունը՝ ուսուցողական նշանակությունը, որը որոշվում է ուսուցանվող ուսումնական նյութի բովանդակության հիման վրա: Յուրաքանչյուր դիդակտիկ խաղի միջոցով սովորողները պետք է ձեռք բերեն, կրկնեն կամ ամրակայեն որոշակի գիտելիքներ, ունակություններ և հմտություններ:
- Դաստիարակչական նշանակությունը՝ խաղի դաստիարակչական նշանակությունը որոշելու համար պետք է հստակեցնել, թե ինչ անձնային որակներ և ակտիվ ուսումնական գործունեությանը նպաստող կարողություններ կձևավորվեն և կզարգանան խաղի ժամանակ:
- Զարգացնող նշանակությունը պայմանավորված է խաղի՝ երեխայի անձի զարգացմանը նպաստող գործոններով:

Խաղային գործողություններն իրականացնում են երեխաները՝ առաջնորդվելով խաղի խնդիրներով: Որքան բազմազան են երեխայի խաղային գործողությունները, այնքան հետաքրքիր է ընթանում խաղը, և այնքան արդյունավետ կերպով կարող են լուծվել խաղի՝ ուսումնական, ճանաչողական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները: Խաղի ընթացքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են դիդակտիկ նյութեր և դրանց ճիշտ օգտագործումը խաղը կազմակերպելիս: Ուսումնական գործունեությունը խաղի ժամանակ պետք է լինի «թաքնված», բայց հավասար բաշխված խաղի ընթացքում: Խաղի կանոնները պետք է բխեն երեխաների շահերց, համապատասխանեն նրանց մտավոր, ֆիզիկական կարողություններին և հոգեկան գործընթացների տեսակներին ու դրանց ձևավորվածության աստիճանին: Խաղի ընթացքը պետք է նկարագրվի ընկալելի մակարդակով: Խաղը պետք է կազմակերպվի խաղի կանոնների համաձայն, և խաղացողների կողմից թույլ տված ցանկացած խախտում պետք է արժանանա

համապատասխան արձագանքի: Խաղի արդյունքների ամփոփումը պետք է իրականացվի անմիջապես խաղի ավարտից հետո: Այն կարող է իրականացվել՝ կողմերին միավորներ տալով, մրցանակներ բաժանելով և այլն: Պետք է գնահատել նաև յուրաքանչյուր երեխայի նվաճումները:

Խաղը դառնում է սովորողների ճանաչողական ունակությունների ակտիվացման միջոցներից մեկը, ձևավորում մտավոր գործունեություն ծավալելու պահանջմունք, կատարելագործում է ուսումնական գործունեության ծավալման համար անհրաժեշտ հոգեբանական և ֆիզիոլոգիական պահանջմունքները և ապահովում ամբողջությամբ վերցրած ուսումնական հաջողությունները: Խաղի ժամանակ ձևավորվում են ինչպես անձնային որակներ՝ համառություն, աշխատասիրություն, արդարացիություն, ճարպկություն, արագ կողմնորոշվելու, կանխատեսելու ունակություններ, այնպես էլ՝ մտածողության ակնառու-գործնական, ակնառու-պատկերային, խոսքատրամաբանական, վերարտադրական, ստեղծագործական տեսակները: Վերջինս իրականանում է, երբ երեխաները կատարում են նախատեսված գործունեության ծրագրավորման, յուրաքանչյուր քայլի արդյունքի կանխատեսման, հաղթանակի հնարավորությունների կշռադատման, անհրաժեշտ գործողությունների այլընտրանքային տարբերակների որոնման, քննարկման և դրանցից արդյունավետի ընտրման մտածողական բնույթի քայլեր:

Ուսուցման գործընթացում խաղն ունի երեք գործառույթ.

- Ուսումնական գործընթացը թեթևացնելը և այն աշխուժացնելը: Այս դերը կատարում են խաղում տեղ գտած երևակայական տարրերը, հետաքրքրաշարժ նկարները և այլն, որոնք հենվում են սովորողների երևակայական թռիչքի ու ստեղծագործական մտածողության զարգացման ունակությունների վրա:
- Երևակայության զարգացում ուսումնական գործընթացի թատերականացման ճանապարհով. խաղային ձևերը դերային տարրեր են մտցնում երևակայական դերակազմի մեջ՝ նպաստելով սովորողների սոցիալականացմանն ու իրական կյանքի պատկերների արտացոլմանը:
- Մրցույթային: Խաղերը, սովորաբար մրցույթային, մրցանակաբաշխության տարրեր են պարունակում, որոնք ակտիվացնում են և ձևավորում առաջատարության ձգտում: Պարզագույն մակարդակից խաղն անցնում է

օլիմպիադաների, թեստավորումների, գրական ստեղծագործությունների, գիտելիքների որակի և խորության սահմաններում՝ մրցույթների:

Դիդակտիկական խաղի նշված երեք գործառույթներն իրենցից ներկայացնում են խաղից, զվարճանքից ուսուցում գնացող աստիճաններ՝ առաջացնելով ճանաչողական գործընթացով տարվածություն, գրավվածություն: [1, էջ 79]:

Որպեսզի ուսումնական գործընթացում խաղերը նպաստեն սովորողների մտավոր գործունեության ակտիվացմանը, անհրաժեշտ է.

- ընտրել դասի կրթադաստիարակչական խնդիրներին համապատասխան խաղեր.
- խաղի բովանդակությունը համապատասխանեցնել սովորողների պահանջմունքներին և ճանաչողական հետաքրքրություններին.
- խաղի մեջ նախատեսել հաղթահարելի այնպիսի դժվարություններ, որոնք սովորողներից կպահանջեն ուշադրության, հիշողության լարում, մտքի ակտիվացում.
- հիմնավորված ընտրել դասի այն հատվածը, որի ժամանակ պիտի իրականացվի դիդակտիկ խաղը:

Խաղի ժամանակ ուսուցիչը պետք է լինի բոլորին հավասար խաղընկեր, խորհրդատու կամ օգնական: Ուսուցիչը պետք է հետևի այն կանոններին, որոնք ներկայացվում են իրեն դիդակտիկ խաղերի կազմակերպման ժամանակ:

Դիդակտիկ խաղերի ժամանակ ուսուցչի գործունեությանը վերաբերող հիմնական կանոններն են.

1. Ուսուցիչն ինքը պետք է լրջորեն վերաբերի խաղի կանոնների պահպանմանը՝ ձևավորելով նաև երեխաների՝ խաղի կանոններին համապատասխան գործելու ունակությունները:
2. Պետք է կարևորի և բարձր գնահատի յուրաքանչյուր երեխայի մասնակցությունը խաղին՝ որքան հնարավոր է սահմանափակելով դիտողություններն ու քննադատական ակնարկները:
3. Պետք է կարևորի և բարձր գնահատի բոլոր երեխաների ցանկությունները: Դերային խաղերի ժամանակ չպետք է կատարի պարտադրողական քայլեր:

4. Խաղային թիմերը ձևավորելիս պետք է նույն խմբում ընդգրկի տարբեր խառնվածք և պատրաստակաՆություն ունեցող երեխաներ:
5. Խմբերին պետք է տա իրենց պարտության պատճառները որոշելու և այդ մասին դատողություններ անելու հնարավորություն:
6. Պետք է օգնի երեխաներին՝ որոշելու պարտվելու պատճառը:

2.2. Դիդակտիկ խաղերի կիրառումը մաթեմատիկայի դասերին

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Մակայն դեռ երեկ իր զվարթ խաղերով տարված դպրոցականը չի կարող լիովին զերծ մնալ դրանցից: Այդ պատճառով, երբ ուսուցումը խելամտորեն զուգակցվում է խաղերով, երեխաների համար բացվում է մի նոր՝ առավել հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի աշխարհ: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և, ինչու չէ, նաև աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են:

Մաթեմատիկական խաղերն ունեն իրենց պատմական անցյալը: Այս խաղերի նպատակը միայն զվարճություն պատճառելը չէ, այլ մաթեմատիկական գիտելիքներին հաղորդակից դարձնելը, տվյալ առարկայի նկատմամբ ընդհանուր հետաքրքրություն առաջացնելը և դասին նպաստավոր թարմություն հաղորդելը: Խաղերի դերն առանձնապես մեծ է պասիվ երեխաների հետաքրքրությունների առաջացման առումով: Շրջապատող միջավայրից վերցրած տվյալներով կառուցված զվարճալի խնդիրների միջոցով իրականացվում է տեսականի և գործնականի կապը, ինչպես նաև ապահովվում է կրթության ու դաստիարակության միասնությունը: Աշակերտներին գործնականորեն ցույց է տրվում մաթեմատիկայի կիրառությունը կյանքի տարբեր բնագավառներում, և դա խթանում է նրանց հետաքրքրասիրությունը տվյալ ուսումնական առարկայի հանդեպ: Նրանք զարմանքով ու սպասողաբար փնտրում են որոնվող հարցերի պատասխանները, իսկ երբ կարողանում են գտնել, ապա մեծ բավականություն են ստանում դասապրոցեսից: Մաթեմատիկական խաղերը կազմակերպվում են նոր նյութի հաղորդումը նախապատրաստելու, անցածն ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև գիտելիքներն ստուգելու նպատակով: Խաղի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնային են դրա ճիշտ ու ժամանակին կազմակերպումը և անցկացման մեթոդները:

Խաղը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ պահանջները.

- խաղը և դրա կանոնները պետք է լրիվ հասկանալի լինեն երեխաներին.

- խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի խաղացողների գիտելիքների մակարդակին.
- խաղը պետք է լինի կոնկրետ.
- հեշտ ու դժվար, աշխույժ ու լուռ խաղերը հաջորդելու են միմյանց.
- խաղերի քանակն ու տևողությունը պետք է լինի չափավոր.
- խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը:

Յուրաքանչյուր խաղ կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է այն ենթարկի վերլուծության և վերանայի՝

- խաղի նպատակը.
- խաղացողների թիվը.
- նախապատրաստական վարժությունների կատարման անհրաժեշտությունը.
- խաղի անցկացման կանոնները.
- կատարման հնարավոր տարբերակները.

Խաղի ընթացքում պահանջվում են բարձր կարգապահություն, ուշադրություն և օբյեկտիվ գնահատում:

Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներն են՝

- դիդակտիկ խաղեր.
- հաշվային զվարճալիքներ և տրամաբանական խնդիրներ.
- շարժական խնդիրներ:

Դիդակտիկ խաղերը հիմնականում համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով: Կրտսեր դպրոցականների մասնակցությունը դիդակտիկ խաղերին նպաստում է նրանց ինքնադրսևորմանը և ինքնահաստատմանը: Դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտում՝ հետևաբար նաև կամային որակներ: Զվարճալի կամ թարմացնող խաղերը կարող են լինել թեմատիկ և ոչ թեմատիկ: Դա բխում է աշակերտների գիտելիքների մակարդակից և հետաքրքրության աստիճանից:

Հանելուկ-խնդիրները նպատակահարմար է առաջադրել դասի վերջում, որպեսզի երեխաները տանը նույնպես հնարավորություն ունենան մտածելու

տվյալ առաջադրանքի ուղղությամբ: 2-րդ և 3-րդ դասարաններում նպատակահարմար է, որ աշակերտը մաթեմատիկական խաղերի և տրամաբանական խնդիրների համար ունենա առանձին տետր, որպեսզի կարողանա ինքնուրույն գրառել ինչպես դասարանում, այնպես էլ տանը կատարած մաթեմատիկական խաղերի նկարագրությունը և լուծումները: Մաթեմատիկական խաղերը կարելի է կիրառել նաև մյուս առարկաների ուսուցման ժամանակ, ինչը կապահովի մաթեմատիկայի ու տվյալ առարկայի միջառարկայական կապը:

Օրինակ՝ մաթեմատիկայի դասին հնարավոր է օգտագործել այն պարագաները, որոնք աշակերտները պատրաստել են աշխատանքի ուսուցման ժամերին: Խաղը կարևոր է նաև ուսուցվող նյութի ամրակայման համար: Նոր թեմա բացատրելուց հետո ուսուցիչը երեխաների կողմից ստուգում է նյութի յուրացումը և այն ամրապնդում տարբեր եղանակներով, այդ թվում՝ մաթեմատիկական խաղերի միջոցով.

- Համր խաղ: Կարելի է կազմակերպել գումարում և բազմապատկում ուսուցանելիս:
- Շարունակի՛ր հաշվել: Հարմար է կազմակերպել թվարկություն ուսուցանելիս, որի նպատակն է սովորեցնել հաշվել՝ սկսած ցանկացած թվից:
- Գնալով պակասեցրու: Այս խաղը կազմակերպվում է թվարկություն ուսուցանելիս և հետ հաշիվ կատարելիս:
- Լավագույն հաշվորդը: Կարելի է անցկացնել դասի տարբեր փուլերում և տարբեր եղանակներով:
- Ո՞վ կլուծի արագ և ճիշտ: Նպատակահարմար է կազմակերպել տնային աշխատանքներ ստուգելիս:
- Պատասխանի՛ր անմիջապես: Թվաբանական բոլոր գործողություններն աշակերտների մեջ ամրակայելու միջոցներից մեկն է:
- Գտնել մտքում պահած թիվը: Այս խաղի ժամանակ ուսուցիչը հաջորդաբար ասում է գործողություններ, իսկ աշակերտները կատարում են պահանջվող հաշվումները:


Կիրառելի են նաև երկրաչափական բովանդակությամբ խաղեր. օրինակ՝

- Կառուցի՛ր պատկերներ: Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է հաշվեձողիկներով կառուցել երկրաչափական պատկերներ:
- «Գուշակի՛ր` ի՞նչ ենք թաքցրել», «Հանի՛ր պահանջվող առարկան», «Գծի՛ր փակ աչքերով», «Որտե՞ղ է իմ տեղը» և այլն[3, էջ 10-17]::

2.3 Հետազոտություն


Սույն հետազոտությունը իրականացրել էմ դասվարների շրջանում:
Հարցմանը մասնակցել է 25 ուսուցիչ: Հարցման արդյունքներն են.

Լինում են դասի ժամանակ խաղային իրավիճակից անմիջապես ուսումնական գործունեության անցնելու դժվարություններ:




Հարցմանը մասնակից ուսուցիչների 80%-ը նշել է, որ դասի ժամանակ երբեմն լինում են խաղային իրավիճակից անմիջապես ուսումնական գործունեության անցնելու դժվարություններ, իսկ 20%-ը՝ միշտ:

Դասասենյակում առկա են խաղային գործունեության համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 64%-ը նշել է, որ դասասենյակում առկա են խաղային գործունեության համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր, իսկ 36%-ը՝ ոչ:

Բարենպաստ են դասարանային պայմանները դիդակտիկ խաղեր կազմակերպելու համար.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 52%-ը նշել է, որ դասարանային պայմանները դիդակտիկ խաղեր կազմակերպելու համար բարենպաստ չեն, իսկ 48%-ը՝ այո:

Առարկայական ծրագրերի բարդությունը և ծանրաբեռնվածությունը հնարավորություն տալի՞ս են մաթեմատիկայի դասերին կիրառել դիդակտիկ խաղ.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 80%-ը նշել է, մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղ հնարավոր է կիրառել որոշ թեմաների ժամանակ, 16%-ը՝ հնարավոր է կիրառել միշտ, 4%-ը՝ հնարավոր չէ կիրառել:

Նպատակահարմար էք համարում մաթեմատիկայի դասերին կազմակերպել դիդակտիկ խաղեր.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 60%-ը նշել է, նպատակահարմար է համարում մաթեմատիկայի դասերին կազմակերպել դիդակտիկ խաղեր, 40%-ը՝ երբեմն:

Կարևորում էք մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղերի կազմակերպման անհրաժեշտությունը.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 84%-ը նշել է, որ կարևորում է մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղերի կազմակերպման անհրաժեշտությունը, 12%-ը՝ երբեմն, 4%-ը՝ ոչ:

Արդյունավե՞տ է մաթեմատիկայի դասը՝ առանց դիդակտիկ խաղերի կազմակերպման.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 60%-ը նշել է, որ մաթեմատիկայի դասը առանց դիդակտիկ խաղերի կազմակերպման արդյունավետ չէ, 28%-ը՝ մասամբ արդյունավետ է, 12%-ը՝ արդյունավետ է:

Մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղերի կազմակերպման ո՞ր գործառույթն էք կարևորում.




Հարցմանը մասնակից ուսուցիչների 40%-ը նշել է, մաթեմատիկայի դասերին դիդակտիկ խաղերի կազմակերպման զարգացնող գործառույթն է կարևորում, 32%-ը՝ ուսուցանող, 24%-ը՝ ուսումնական գործընթացը թեթևացնող և աշխուժացնող, 4%-ը՝ մրցութային:

Խաղերի ո՞ր տեսակներն էք կազմակերպում մաթեմատիկայի դասերին.



Հարցմանը մասնակից ուսուցիչների 60%-ը նշել է, մաթեմատիկայի դասերին կազմակերպում է ուսուցողական խաղի տեսակը, 20%-ը՝ տրամաբանական, 16%-ը՝ հետաքրքրաշարժ, 4%-ը՝ մտավոր:

Ի՞նչ նպատակով էք մաթեմատիկայի դասերին կազմակերպում դիդակտիկ խաղեր.



Հարցմանը մասնակից ուսուցիչների 46%-ը նշել է, մաթեմատիկայի դասերին կազմակերպում է դիդակտիկ խաղեր՝ ամրապնդելու նպատակով, 25%-ը՝ թեմաների ուսուցումը նախապատրաստելու, 18%-ը՝ ամփոփելու, 11%-ը՝ անցածը խորացնելու:

Այսպիսով՝ հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ դիդակտիկ խաղերի կիրառումը մաթեմատիկայի դասերին ունի իր կարևոր դերն ու նշանակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված գիտատեսական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչպես նաև հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց տվեցին.

- Խաղը երեխայի համար կենսաբանական ներքին պահանջմունք է, և արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում:
- Դիդակտիկ խաղը ուսուցման միջոց է, որը ձևավորում է ինքնուրույն սովորելու ունակություն՝ ելնելով երեխաների ինքնավերլուծության և ինքնագիտակցության կարողություններից:
- Դիդակտիկ խաղերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել նրա կառուցվածքային առանձնահատկությունները և բաղադրիչները, որոնք խաղին տալիս են ուսումնական բովանդակություն:
- Խաղի ժամանակ ուսուցիչը պետք է լինի բոլորին հավասար խաղընկեր, խորհրդատու կամ օգնական: Ուսուցիչը պետք է հետևի այն կանոններին, որոնք ներկայացվում են իրեն դիդակտիկ խաղերի կազմակերպման ժամանակ:
- Խաղի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնային են դրա ճիշտ ու ժամանակին կազմակերպումը և անցկացման համար ընտրված մեթոդները:
- Յուրաքանչյուր խաղ կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է այն ենթարկի վերլուծության:
- Պետք է ընտրել դասի տարբեր փուլերին համապատասխանող խաղի ճիշտ տեսակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք,-Երևան, «Զանգակ» 2009:
2. Թադևոսյան Եվա, Խաղից անցում ուսումնական գործընթացին, «Ընտանիք և դպրոց», Երևան, ԿԱԻ, 2011, №1:
3. Պետրոսյան Ա., Մաթեմատիկական խաղերի կազմակերպման ու անցկացման մեթոդիկան, Նախաշավիդ, N 2, 2015:
4. Վերդյան Ա., «Նախաշավիդի գիտամեթոդական հանդես, Թիվ 3, Երևան, 2010:
5. Քարամյան Գ., «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դասարաններում», «Նախաշավիդ», Երևան, ԿԱԻ, 2012, №5:
6. Гришкова Г. Н. и др. Развитие познавательной самостоятельности школьника в игровой деятельности// Наальня школа, 2004 г, No 11.
7. Кальт Е.А., Дидактические игры на уроках математики в классах повышенного педагогического внимания, город Тар, Омский государственный педагогический университет, 2006 г.
8. Кукушин В.С., Болдырева-Вараксина А.В., Педагогика начального образования / Под общ. ред. В.С. Кукушина. – М.: ИКЦ «Март»; Ростов н/Д: Издательский центр «Март», 2005 г.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Ուսուցիչ՝ Աննա Գրիգորյան

Ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ Լ.Միրաբյան

Վանաձոր 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները.....	5
1.1.Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն ու ատանձնահատկությունները.....	11
Գլուխ 2. Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման ոչ ստանդարտ ձևերը.....	14
Գլուխ 3. Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի պլանավորումը և կազմակերպումը.....	18
3.1.Ի՞նչ կառուցվածքով և ի՞նչ մեթոդներով կարելի է վարել ինքնուրույն ընթերցանության դասաժամերը	20
Հետազոտական մաս	25
Եզրակացություն.....	26
Գրականության ցանկ	27

Ներածություն

19-րդ դարի ֆրանսիացի գրող, գիտնական, մանկավարժ Է. Լաբուլենը ասել է: «Ժողովրդի արժանիքը որոշվում է գրքերի բովանդակությամբ, որ նա կույ է տվել...»: Այսօր վեց տարեկանից սկսած երեխան տիրապետում է համակարգչային տարրական գիտելիքների: Աշխարհին նա հաղորդակցվում է նաև համացանցի միջոցով: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը և անգամ անհնար է պատկերացնել մեր առօրյան առանց դրանց: Սա կյանքի առաջընթաց է, սակայն առկա է նաև այդ երևույթի բացասական կողմը՝ պակասել է գրքի նկատմամբ հետաքրքրությունը:

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդի ժամանակներում երկրորդ պլան է մղվել գիրքը, ընթերցանությունը: Կարդացվածությունն է որոշում մարդու անհատականությունը: Կարդացող մարդը կիրթ է, ստեղծագործ, կարող է կառավարել սեփական կյանքը և օգնել մյուսներին:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի հիմնախնդիրն է ընթերցանության նկատմամբ սիրո ձևավորումը, այդ սովորության ու հմտության պահպանումը: Գիրքը երեխայի վրա դաստիարակչական ազդեցության ամենահզոր գործիքն է. Կարդալու կարողությունների ձևավորումն սկսվում է դեռևս գրաճանաչության շրջանում: Իսկ ընթերցանության փուլում այդ կարողությունները պետք է զարգանան և կատարելագործվեն ըստ ընթերցելու որակական հատկանիշների՝

1. Ճիշտ ու անսխալ,
2. Գիտակցորեն և հասկանալով,
3. Արտահայտիչ և գեղարվեստորեն,
4. Արագ կարդալ,

Կարդալ սովորեցնելը մայրենիի դասընթացի գլխավոր նպատակն է: Տարրական դասարաններում չափորոշահեն պահանջներն են սահուն, վարժ և հասկանալով կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Սա այն հիմքն է, որը

նպաստում է աշակերտի մտավոր և բարոյական որակների զարգացմանը: Որքան հաստատուն դրվի այդ հիմքը, այնքան ավելի արդյունավետ կդառնա գրքից գիտելիքներ ձեռք բերելու գործընթացը: Կրտսեր դպրոցում կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումն ունի երկու գործառույթ.

1. Կարդալը որպես ընթերցանության դասերի պահանջ, նպատակ, ուսուցման ակնկալվող արդյունք,
2. Դասավանդման բանալի՝ մյուս առարկաներն ուսումնասիրելիս (օրինակ՝ մաթեմատիկայի խնդիրը վճռելու համար պետք է կարողանալ հասկանալով կարդալ) Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Մշակելով և իրականացնելով մեթոդների և գործառույթների բազա՝ ընթերցանության ուսուցումը դառնում է առավել արդյունավետ:

Աշխատանքի նպատակն է.

1. Ուսումնասիրել ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման ընթացքում կիրառվող մեթոդներն ու հնարները:
2. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը:
3. Ուսումնասիրությունների հիման վրա կազմել եզրակացություն:

Աշխատանքի խնդիրներն են.

1. Բացահայտել ինքնուրույն ընթերցանության դասաժամերի պլանավորման և կազմակերպման առանձնահատկությունները:
2. Իրականացնել հետազոտական աշխատանք պարզելու ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման այլընտրանքային ձևերի արդյունավետության պայմանները
3. Բացահայտել այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն ուսուցչին ընթերցանության նկատմամբ ձևավորել դրական շարժառիթներ

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից՝ առաջին գլուխը բաղկացած է մեկ ենթագլխից, երրորդը՝ ևս մեկ ենթագլխից, հետազոտական մասից, եզրակացությունից և գրականությունից: Ծավալը՝ 27 էջ:

Գլուխ 1. Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը երկրորդ դասարանում անցկացվում են շաբաթական մեկ ժամ, իսկ երրորդ և չորրորդ դասարաններում նախընտրելի է անցկացնել երկու ժամ, սակայն երկու շաբաթը մեկ (որպեսզի երրորդ և չորրորդ դասարանի աշակերտներն ավելի շատ ժամանակ ունենան ընթերցելու ծավալուն նյութեր, ինչպես նաև կարողանան երկու դասաժամում քննարկել դրանք):

Ինքնուրույն ընթերցանության արդյունավետ կազմակերպումը իրականացնում է մի շարք ուսումնական նպատակներ, լուծում կրթական և դաստիարակչական խնդիրներ

1. Կձևավորվեն կարդալու կարողություններ, կապահովվի դրանց հետագա զարգացման անընդհատությունը:

2. Հայոց լեզվի գործնական ուսուցում կիրականացվի (ճիշտ ընտրված նյութը հնարավորություն կտա սովորեցնել նոր բառեր, արտահայտություններ, որոնք կյուրացվեն և նույնությամբ գործածության մեջ կդրվեն երեխաների խոսքի մեջ):

3. Կհարստանան երեխաների աշխարհաճանաչողական գիտելիքները (նյութը ճանաչողական գիտելիք կարող է պարունակել, որով ուսուցումը պահպանում է իր զարգացնող բնույթը, ընթերցումն ինքնանպատակ չի դառնում):

4. Կիրագործվի երեխաների համակողմանի դաստիարակությունը (ընկերասիրություն, աշխատասիրություն, հոգատարություն, կենսուրախություն, լավատեսություն՝ տպավորիչ օրինակների պատկերավոր ու գեղեցիկ խոսքի միջոցով):¹

Առաջին դասարանի հետալքբենական շրջանից սկսած՝ ինքնուրույն ընթերցանությունը նպատակահարմար է անցկացնել փոքր չափաբաժիններով: Այդ աշխատանքը կարելի է դարձնել համարյա ամենօրյա: Փոքր ծավալով տեղեկատվական նյութերը կարդալու համար հանձնարարվում են տանը: Վերջիններս նույնպես պետք է համապատասխան վերլուծության ենթարկվեն դասարանում. Հարցնել կարդացած նյութի հեղինակի, հերոսների, հիմնական բովանդակության մասին, կարողանալ

¹ Տես՝ Նախաշավիղ, 6.2015, էջ 4

վերարտադրել կարդացածի բովանդակությունը, պարզ գնահատումներ տալ գործող անձերին և այլն: Որոշ դեպքերում թեմատիկ առումով ինքնուրույն ընթերցանության նյութերը կարող են համապատասխանել դասագրքի ընդհանուր թեմաներին կամ թեմատիկ խմբերի հիմնական ուղղություններին, որպեսզի նպաստեն ուսումնասիրվող նյութերի ավելի խոր յուրացմանը:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս որպես հնար կարելի է օգտագործել բարձրաձայն կարդալը (երեխաների համար զվարճալի կարող է լինել, երբ նրանց առաջարկվի ձայնագրել սեփական խոսքը բարձրաձայն կարդալիս, ինչը հնարավորություն կտա լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու դրա արտահայտչականությունը): Ամենակարևոր գործոններից է հասկանալով կարդալը: Դրան հնարավոր է հասնել աստիճանաբար:

Երեխան պետք է հասկանա իր կարդացածը, ինչը պետք է հետաքրքրի նրան: Այս նպատակով հարկ է նրանց առաջարկել հետաքրքրաշարժ բնագրեր, իրենց հոգեհարազատ պատմություններ: Երեխան կարողում է բազմաբնույթ նյութեր՝ մեկը մյուսից հետաքրքիր, մեկը մեկից զարմանալի, մեկը մեկից ձգող: Կարողում է հաճույքով, առանց հարկադրանքի ուզում է իմանալ պատճառահետևանքային կապերը, ուրախանում է գտածով, ձգտում է լուծել, գտնել պատասխանը: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը պայման: Զարգացնելով կարդալու կարողությունը երեխան աստիճանաբար սովորում և վարժվում է շուրջով կարդալ և ընկալել կարդացածը: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար ուսուցիչն իր զինանոցում ունի բացատրական ընթերցանության մեթոդը: Ճիշտ կարդալու կարողությունների ձևավորմանը նպաստում են լեզվական գիտելիքները և բարձրաձայն ընթերցանությունը: Մահուն կարդալու համար անգնահատելի են բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շուրջով կարդալը: Արտահայտիչ կարդալու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը նպաստում են բարձրաձայն ընթերցանությունը, կետադրական նշանների գործածությանը տիրապետելը ոչ միայն գրելիս, այլև ընթերցելիս, դերային ընթերցումները, բեմականացումները (սեր, գովք, խրախուսանք, ուրախություն,

ափսոսանք, զարմանք, դժգոհություն): Ձևավորելով և զարգացնելով կարդալու կարողությունները՝ ինքնուրույն ընթերցանությունը կատարում է նաև այլ գործառույթներ

1. Խոսքի զարգացում: Գիրք կարդալը «բացում է երեխայի լեզուն», նա ավելի ու ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել, եզրակացություններ անել, դառնում է ինքնուրույն և ինքնավստահ (օրինակ՝ կազմակերպվում է կարդացած նյութի քննարկում աշակերտին տրվում է դերակատարման հերոսների, դեպքերի հետ համաձայնելու, չհամաձայնելու, նոր ուղիներ, ելքեր այլ ավարտ մշակելու հնարավորություն, հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ իրավիճակներից դուրս գալու հմտություն):

2. Երևակայության զարգացում: Գիրքը հուզական բարենպաստ միջավայր է ստեղծում երեխայի համար: Դրական անձանց, մարդկային կերպարով բույսերի, կենդանիների, զանազան շնչավորված առարկաների դերերը նպաստում են երեխաների երևակայության զարգացմանը, ընթերցելը դառնում հետաքրքիր և զվարթ:

3. Մտածողության, ուշադրության, հիշողության զարգացում: Ընթերցելիս երեխան համեմատում է, համադրում և մասնավորեցնում: Ինքնուրույն ընթերցանության նյութերը պետք է լինեն բովանդակությամբ մատչելի և հետաքրքիր, տարիքային առանձնահատկությունների տեսանկյունից՝ ծավալով ոչ շատ մեծ, դինամիկ սյուժեով հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների արձակ և չափածո ստեղծագործություններ և ժողովրդական նմուշներ: Ցանկալի է, որ դրանք վերաբերեն հայրենի երկրին, բնությանը, ճանապարհորդություններին, երեխաների կյանքին, հիշեցնեն սեփական կյանքի հետ կապված իրավիճակներ, լինեն հումորային պատումներ, արվեստագետների կյանքից հետաքրքրաշարժ դրվագներ:

Ուսումնական գործունեության պլանավորումը կարդացածի վերլուծության տեսանկյունից:

- Ճշտել տեքստի սեփական ընկալումը:
- Նկարելով կամ բանավոր խոսքով կազմել տեքստի պլան:
- «Դուր է գալիս, դուր չի գալիս» դատողությունների հիմնավորում:
- Երկխոսություն կարդացածի հերոսների և դեպքերի մասին:

- Երևակայության միջոցով նոր լուծումներ գտնել տեքստում պատկերված իրադրության համար:

- Վերարտադրել կարդացածը ուսուցչի հարցերի օգնությամբ:

- Պատմել ըստ հիշողության:

- Նկարել կարդացածի թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել դրանք:

- Բեմականացնել կարդացածի թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել դրանք:

- Բեմականացնել ստեղծագործություններ, մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը:

- Հիշատակել կարդացածին համապատասխան մադրանքներ, առած-ասացվածքներ:

- Կարևորել և կիրառել ոչ խոսքային միջոցներ (օրինակ՝ մնջախաղ):

- Սեփական կենսափորձից մտաբերել նման օրինակներ:

- Ստեղծել դասարանական գրադարան:

- Կազմակերպել նկարների և ստեղծած աշխատանքների ցուցահանդես:

Ինքնուրույն ընթերցանության կազմակերպումը կարող է իրականացնել հետևյալ նպատակները.

- Կարդալու կարողությունների ձևավորում և անընդհատ զարգացում:

- Արտասանական ունակությունների զարգացում:

- Հաղորդակցական կարողությունների զարգացում :

- Հերոսների զգայական վիճակը գնահատելու կարողության մշակում:

- Աշխարհաճանաչողական գիտելիքների ընդլայնում:

- Խոսքի և մտածողության զարգացում:

- Միտքը ձևակերպելու կարողության մշակում:

- Կարդացածը բնագրին հարազատ վերարտադրելու հմտությունների մշակում:

- Խոսքային ստեղծագործության հանդեպ հետաքրքրության պահպանում:

- Գրական որոշ ժանրերի մեջ կողմնորոշվելու կարողությունների մշակում:

- Ակտիվ բառապաշարի հարստացում:
- Նյութի վերաբերյալ կարծիք հայտնելու ունակություն:
- Շրջակա աշխարհի մասին գիտելիքների և տեղեկությունների համալրում, ամբողջացում:
- Մարդկանց, շրջապատող աշխարհի բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում:²

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին տեղեկություններ, պատմվածքներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ: Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով վերլուծելով և եզրահանգումներ անելով: Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից նույն թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից:

Երեխաների միջավայրում անհրաժեշտ է ստեղծել հանձնարարված առակը, հեքիաթը, պատմվածքը կարդալու դրդապատճառներ (մոտիվացիա): Եթե ուզում ենք, որ երեխան ցանկանա կարդալ ուրեմն առաջարկվող նյութը՝ պիտի լինի գրավիչ: Օրինակ «Ամենափրկիչը», «Անօրինակ սխրանք» և այլն: Խթանման փուլ նպատակահարմար է սկսել վերնագրից: Վերնագիրն է հենց առաջին ծանրությունը գրքին, հեքիաթին, պատմությանը, առակին այսինքն գրական ստեղծագործության այցետունն է: Այն օգնում է ներթափանցել գրքի մեջ ինչպես, ասենք, ակամա խանութ ես մտնում, եթե ցուցանակը հետաքրքիր է ու գրավիչ: Ուսուցիչը մտազրոհի կամ «Կանխատեսումներ հույզերով» մեթոդով քննարկում է հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է արտահայտում վերնագիրը:

Տես՝ Նախաշավիղ, 6.2015, էջ 7

-Կարո՞ղ ենք միայն վերագրի միջոցով կռահել, թե ինչի մասին է լինելու պատմությունը: Ինչո՞ւ :

-Ի՞նչ է պատմում վերնագիրը նյութի մասին:

-Փորձի՞ր կռահել, թե ինչի մասին է այս պատմությունը

Այս նախաբանից հետո, ամենայն հավանականությամբ, հանձնարարվող նյութը կարդալու ցանկությունն արդեն առկա է: Ուսուցիչն այս կերպ շարժում է աշակերտների հետաքրքրությունը:

Իմաստի ընկալման փուլում աշակերտը կարդում է նյութը (դպրոցում կամ տանը): Առաջարկվում է, օրինակ այն կարդալ «Փոխգործուն գրառումների համակարգ» մեթոդով: Կրտսեր դպրոցում գերադասելի է օգտագործել երկուսից ոչ ավելի նշան՝ «+» ես սա գիտեմ և «-»՝ ես սա չգիտեմ: Այս մեթոդի կիրառումը կարդալու ընթացքում կօգնի աշակերտներին վերահսկել սեփական ընկալումը: Արդյունավետ է՝ կարդալիս կիրառել երկակի գրառումների օրագիրը մեթոդը: Ընթերցելուց հետո էջի հատվածում նշում են այն դրվագը, որը իրենց կարծիքով, ամենակարևորն է: Իսկ մյուս մասում մեկնաբանում են, թե ինչու են այդ հատվածը կարևորում, ինչու է այն գրավել իրենց ուշադրությունը, ինչի մասին է իրենց մտածել տալիս: Կարելի է ստեղծել համագործակցային ուսումնառության խմբեր կարդացածը ներկայացնելու նպատակով:³ Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ունենալ որևէ դեր՝ գրանցող, ստուգող, ամփոփող, ընթերցող և այլն: Առաջարկում ենք օգտագործել նաև «Հետազոտության ուղենիշներ» մեթոդը: Աշակերտներին տրվում են ուղենիշներ որոնք նրանց ուշադրությունը կբևեռեն կարդացածի կարևորագույն մասերի վրա և կզարգացնեն մտածողությունը: Օրինակ՝ «Գտնել այն տողերը, որոնք արտահայտում են հերոսներից մեկի երախտագետ լինելու շնորհը»: Կշռադատման փուլում աշակերտները հետադարձ հայացք են գցում կարդացածին, տալիս են հարցեր, կատարում մեկնաբանություններ, բանավիճում են: Այս փուլում առաջարկում ենք կիրառել ընթերցողից պատասխան ակնկալող հարցերի մեթոդը:

-Ի՞նչ նկատեցիք այս առակում, ինչի՞ մասին այն ստիպեց մտածել:

³ Տես՝ Նախաշավիղ 3-4.2009, էջ 45

-Ո՞րն էր ամենակարևոր ասելիքը:

-Ո՞րն էր ձեր կարդացածի ամենակարևոր նախադասությունը:

-Ո՞րն էր, ձեր կարծիքով, ամենակարևոր բառը:

Կարելի է այս փուլում կիրառել նաև «Ընդհանուր հարցման քննարկում» մեթոդը: Աշակերտներին հանձնարարվում է մտածել և քննարկել նախապես պատրաստված մեկնաբանող հարցերը (դրանք հստակ, կոնկրետ հարցեր են, որոնք վերաբերում են տեքստում արտացոլված որևէ խնդրի, որին կարելի է տալ մի քանի լուծում):

Ամփոփում. Ուսուցիչը պետք է նախապես որոշի, թե որն է լավագույն հնարավոր ավարտը, յուրացման ինչպիսի խորություն է հնարավոր, ինչ պետք է աշակերտը վերցնի կարդացածից: Ըստ այս պահանջների բավարարման արդյունքների էլ կկատարվի ամփոփումը:

Վերջում՝ ամփոփման փուլից հետո կարելի է ծավալել մի շարք աշխատանքներ. Ստեղծագործական գրավոր աշխատանք, հարցազրույց, ցուցապաստառների ստեղծում, բեմականացումներ, հարցում-հետազոտություններ, անկախ հետազոտություններ:

1.1.Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն ու առանձնահատկությունները

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն են՝

- Ծանոթացնել սովորողներին մանկական գրականության նմուշներին, որոնք կարելի է ներառել ժամանակակից կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ:

- Հետաքրքրություն ձևավորել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն,

- Կատարելագործել սովորողների՝ գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու, կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն (կարողություն և սովորություն խորհելու գրքի շուրջ մինչև տեքստի ընթերցումը, ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո),

▪ Մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ:

Ինքնուրույն ընթերցանության դասերն ունեն որոշակի առանձնահատկություններ: Առանց այդ առանձնահատկությունների հաշվառման այդ դասերը չեն կարող իրականացնել իրենց առջև դրված խնդիրները:

Այսպես.

1. Յուրաքանչյուր դասին ցանկալի է անցկացնել յուրօրինակ հաշվետվություն այն մասին թե ինչ են երեխաներն ինքնուրույն ընթերցել: Երեխաները դասարան են բերում և ցույց տալիս այն գրքերը, որոնք նրանք, ընթերցել են արձակուրդին (ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային), անցած մեկ շաբաթվա (երկրորդ դասարանում) կամ երկու շաբաթվա ընթացքում (երրորդ և չորրորդ դասարանում) կամ ընթերցում են տվյալ պահին: Ուսուցիչը ստեղծում է այնպիսի իրավիճակ, որտեղ կատարվում է ընթերցած գրքերի վերաբերյալ տպավորությունների փոխանակում:

2. Յուրաքանչյուր դասին երաշխավորություններ են տրվում ևոր գրքերի վերաբերյալ: Այդ երաշխավորությունների ձևերը բազմազան են՝ և՛ կարծիքների փոխանակում, և՛ երաշխավորություն ուսուցչի կողմից՝ տվյալ գրքի ցուցադրումով, և՛ ոչ մեծ ցուցահանդեսի կազմակերպում դասարանում՝ թեմատիկ կամ հեղինակային, երաշխավորվող գրքից մի հատվածի ընթերցում՝ գրքի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու նպատակով նկարագարդման ցուցադրում և այլն:

3. Ցանկալի է, որ յուրաքանչյուր դասի ընթացքում՝ երեխաներն ընթերցեն տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ պատմվածքներ, հեքիաթներ, Բանաստեղծություններ: Եթե ստեղծագործությունը ծավալով մեծ չէ, այն ընթերցում են ամբողջական, իսկ եթե ծավալուն է, ընթերցում են 2-3 դասերի ընթացքում կամ ընթերցում են հատվածներ այն գրքերից, որոնք կարդում է ամբողջ դասարանը: Հաճախ ընթերցում են բարձրաձայն: Իրականացվում է նաև և՛ լուռ ընթերցանություն, և՛ դերերով ընթերցանություն, և՛ թատերականացում:

4. Յուրաքանչյուր դասին անհրաժեշտ է անպայման ժամանակ հատկացնել ընթերցած ստեղծագործության վերլուծությանը ոչ միայն զրույցի ձևով (պատասխանել

ուսուցչի տված հարցերին) այլն ազատ ինքնարտահայտման միջոցով: Ցանկալի է տալ հետևյալ բնույթի հարցեր «Ի՞նչ կարող ես ասել այս գրքի մասին» կամ «Գրքի մեջ ի՞նչն ամենից շատ քեզ դուր եկավ» և այլն:

5. Բառային աշխատանքը, ինչպես նաև լեզվական միջոցների շուրջ աշխատանքն ինքնուրույն ընթերցանության դասերին խաղում է սուկ օժանդակող դեր:

Ինքնուրույն՝ ընթերցանության դասերին հնարավոր չէ բացատրել բոլոր անձանոթ անհասկանալի բառերը: Բառային աշխատանքը նշանակալից չափով պետք է կատարել՝ ուղղորդելով դեպի բառարանները, տեղեկատու գրականությունը և այլն: Այլ խոսքով՝ այդ աշխատանքը մոտ է այն ձևերին, որոնք կիրառվում են կյանքում ցանկացած գիրք ընթերցելիս:

6. Ինքնուրույն ընթերցանության դասերին երեխաները համառոտ վերարտադրում են ընթերցած գրքի բովանդակությունը, վերարտադրում են իրենց դուր եկած հատվածները (ընտրովի վերարտադրություն), ընթերցածը ներկայացնում են դերերով և այլն, ինչպես նաև ինքնուրույն ընթերցանության դասերն ավելի շատ պայմաններ են ստեղծում բավականին մեծ ծավալով ստեղծագործական բնույթի աշխատանքներ կատարելու համար: Ընթերցածի բովանդակության նկարագարում (բառային և գրաֆիկական), ապլիկացիա, ծեփակերտում ստեղծագործության ներկայացում՝ երաժշտական ձևավորմամբ, նկարաշարի ստեղծում և այլն:⁴

⁴ Տես՝ Նախաշավիղ, 2.2001, էջ 20

Գլուխ 2. Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման ոչ ստանդարտ ձևերը

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը մեծացնելու, այդ դասաժամերն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու նպատակով կազմակերպում ենք կառուցվածքով ոչ ստանդարտ բնույթի դասեր:⁵

Որպեսզի դասերն անցնեն ստեղծագործական մթնոլորտում, և երեխաները հնարավորություն ունենան դրսևորել իրենց ունակությունները, ցանկալի է, որ առաջադրանքները լինեն անսովոր

▪ Չարգացնեն տրամաբանությունը, հնարամտությունը, կերպարային մտածողությունը,

▪ Ըստ բարդության լինեն տարբեր մակարդակների,

▪ Ունենան գործնական նշանակություն և միջառարկայական բովանդակություն,

▪ լինեն հետաքրքրաշարժ իրենց ձևով, բովանդակությամբ կամ լուծման միջոցներով,

▪ ունենան անսպասելի արդյունք:

Ինքնուրույն ընթերցանության դասերի անցկացման մի շարք ոչ ստանդարտ ձևերը

Դաս-հեքիաթն անցկացվում է անսովոր ձևով: Ամբողջ դասասենյակը՝

փոխակերպվում է հեքիաթային աշխարհի, իսկ երեխաները հեքիաթային հերոսների:

Դասը կարելի է անցկացնել մեկ կամ մի քանի հեքիաթների բովանդակության շուրջ: Դա

կարող է լինել ժողովրդական կամ հեղինակային հեքիաթ: Դաս-հեքիաթը հեքիաթային

կարող է լինել իր անցկացման ձևով, երբ դասի ընթացքում օգտագործվում են

հեքիաթային իրեր, երեխաներին օգնության են հասնում հեքիաթային հերոսները, դասի

ընթացքում օգտագործում են «հեքիաթային արտահայտություններ, բառերը»: Այսպիսի

դասն իր մեջ կարող է ներառել թատերական ներկայացման տարրեր:

⁵ Տես՝ Համացանց, <https://forum.armedu.am>

Դաս-ցերեկույթը կարելի է անցկացնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում 12 անգամ: Դաս-ցերեկույթը կարող է լինել հետևյալ թեմաների շուրջ «Հեքիաթների աշխարհում», «Մեզ հասակակից գրական հերոսները» և այլն: Այսպիսի դասերին կարելի է նաև հյուրեր հրավիրել: Դասի տևողությունը մեկ դասաժամ է, սակայն ինչպես դաս-հեքիաթի դեպքում, ենթադրում է բավականին մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք: Դաս-ցերեկույթը նախապատրաստում են հենց իրենք՝ աշակերտները, դրա բովանդակությունը կազմված է լինում այն նյութերից, որոնք ուսումնասիրել են ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում, որոնք հատկապես դուր են եկել աշակերտներին:

Երեխաները նախապես նկարագարում են ստեղծագործությունները, ընտրում են գրքեր, պատրաստում են ինքնաշեն գրքեր, կերպարվեստի և տեխնոլոգիայի դասերին կատարում են ստեղծագործական աշխատանքներ՝ դաս-ցերեկույթում ընդգրկված նյութերի բովանդակության վերաբերյալ: Նրանք վերհիշում են թեմային համապատասխան հանելուկներ, շուտասելուկներ, բանաստեղծություններ, ինչպես նաև հանդես են գալիս դերային խաղով:

Կարելի է կազմակերպել գրքերի շնորհանդես: Երեխաներն ընտրում են գիրքը, պատրաստում են հաղորդում դրա վերաբերյալ: Ինչու՞ է այդպես վերնագրված, ո՞վ է հեղինակը, ովքե՞ր են հերոսները և այլն:

Շատ հետաքրքիր է անցնում «Լավագույն ընթերցող» մրցույթը: Ուսուցիչը ցույց է տալիս որևէ գրքից նկարագարում, իսկ աշակերտները կռահում են գրքի վերնագիրը, ստեղծագործության վերնագիրը, թվարկում են հերոսներին և այլն:

Դաս-ցերեկույթի ընթացքում կարելի է անցկացնել տրված թեմայով կամ ժանրով գրքերի ճիշտ ընտրության մրցույթ: Դասարանը բաժանվում է խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվում է գրքերի հավաքածու (10-12 անուն), որոնցից խումբը պետք է առանձնացնի տրված թեմայով գրքերը: Օրինակ՝ առաջին խումբն ընտրում է պատմվածքներ երեխաների մասին, երկրորդ խումբը բանաստեղծություններ՝ բնության մասին, երրորդ խումբը՝ հեքիաթներ կենդանիների մասին:

Դաս-ճանապարհորդությունը վառ, հուզական խաղային ձև է, որը հրապուրում է երեխային հենց դասի սկզբում, և մինչև դասի վերջ երեխայի ուշադրությունը չի շեղվում: Ճանապարհորդել կարելի է մեկ գրքի էջերով, մեկ հեղինակի գրքի էջերով, այն ժամանակաշրջանով, որի ընթացքում ապրել են գրական ստեղծագործության հեղինակը կամ հերոսները, երկրներով, որոնք ապրել են նրանք և այլն: Մյուս դասերից դաս-ճանապարհորդությունը տարբերվում է քարտեզի առկայությամբ, որտեղ նշվում են կայարանները, կանգառները, որտեղ ընտրված երթուղուն համապատասխան պետք է հայտնվեն մասնակիցները: Ճանապարհորդության համար որոշվում է փոխադրամիջոցը ինքնաթիռ, ավտոբուս, հեծանիվ, ավտոմեքենա, աստղանավ, ժամանակի մեքենա, թռչող գորգ և այլն: «Ճանապարհորդության» ընթացքում կարող են լինել պարեր, երգեր, դերային խաղեր:

Դաս-խաչբառի հիմքը խաչբառի հարցերի պատասխանների որոնումն է: Հարցերը տրված են մեկ կամ մի քանի գրական ստեղծագործությունների շուրջ: Աշխատանքը կարելի է զուգակցել գրական-դերային խաղի հետ, երբ իրենք՝ հերոսներն են խաչբառի հարցերը տալիս ճանապարհորդությամբ, երբ յուրաքանչյուր կանգառում աշակերտները որոնում խաչբառի մեկ հարցի պատասխանը, դերային խաղով, երբ խաչբառի յուրաքանչյուր հարցի պատասխանը տալիս են բեմականացման միջոցով և այլն:

Դաս-հանելուկ անցկացման ընթացքում յուրաքանչյուր առաջադրանք ուղեկցվում է կամ հանելուկի պատասխանը կռահելով, կամ էլ հանելուկ կազմելով: Դասի սկզբում կարելի է հնչեցնել հանելուկը, որի պատասխանը երեխաները կարող են փնտրել ամբողջ դասի ընթացքում: Հանելուկի պատասխանը գտնելը կարող է դառնալ խմբային աշխատանքի սկիզբ՝ տարբեր ուղղություններով, ծանոթացում հեղինակի ստեղծագործություններին, ստեղծագործության վերլուծություն, առանձին հերոսների վարքագծի գնահատում, տարբեր ստեղծագործությունների՝ հերոսների վարքագծերի համեմատական վերլուծություն և այլն:

Դաս-դիմանկարի անցկացման արդյունքը պետք է լինի «դիմանկարի» ստեղծումը: Դա կարող է լինել գեղարվեստական պատկերների զուգակցումը, հերոսների պատկերները:

«Դիմանկարը» ստեղծվում է որոնողական, ստեղծագործական բնույթի անհատական և խմբային առաջադրանքների կատարման միջոցով:

Դաս-մրցույթի ընթացքում դասարանը բաժանվում է խմբերի, մշակվում են մրցութային առաջադրանքների գնահատման չափանիշները: Ընտրվում է գնահատող հանձնաժողով, որի կազմում կարող են լինել ծնողներ, բարձր դասարանների սովորողներ:

Մրցույթը կարելի է անցկացնել որևէ մարզական խաղի ձևով, օրինակ՝ ֆուտբոլի երբ դասարանը բաժանվում է խմբերի, և յուրաքանչյուր ճիշտ պատասխանը նշվում է հակառակորդի դարպասում հերթական գոլով: Այսպիսի դասի անցկացման համար անհրաժեշտ է համապատասխան կահավորանք:

Դաս-հանդիպումը կարելի է անցկացնել հարցազրույցի ձևով: Երեխաները, դառնալով լրագրողներ, հարցազրույց են վարում «հեղինակի», «հերոսների հետ», որոնց դերում կարող են հանդես գալ բարձր դասարանցիները: «Լրագրող» աշակերտները պետք է նախապես պատրաստեն հարցերը՝ հավաքելով տեղեկություն գրողի կյանքի և ստեղծագործության մասին մեկ անգամ ևս ընթերցելով ստեղծագործությունները: Այսպիսի դասի արդյունքը կարող է լինել թերթի լույսընծայումը, փոքրիկ շարադրություններով ինքնաշեն գրքերի ստեղծումը և այլն:

Գլուխ 3. Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի պլանավորումը և կազմակերպումը

Ինքնուրույն ընթերցանության դասընթացի ամբողջ ուսումնադաստիարակչական աշխատանքը ցանկալի է պլանավորել կիսամյակի կտրվածքով: Պլանավորելիս ուսուցիչն ամենից առաջ պլանում գետեղում է ինքնուրույն ընթերցանության դասերի թեմատիկան, ընտրում է և այն գրքերը կամ ստեղծագործությունները, որոնք պետք է ընթերցվեն դասարանում բարձրաձայն, և այն գրքերն ու ստեղծագործությունները, որոնք երեխաները պետք է ընթերցեն ինքնուրույն:

Թեմատիկան և գրականության ընտրությունը կատարվում է՝ ելնելով ծրագրային պահանջներից: Ուսուցչին տրվում է ստեղծագործական որոնումների իրավունք, ինքնուրույն ընթերցանության դասերի թեմատիկայի ինքնուրույն ընտրություն: Դասերի ձևերի, մեթոդների և հնարների բազմազանությունը հնարավորություն է ընձեռում ուսուցչին ստեղծել կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրությունների ձևավորման հիմքը:⁶

Կազմակերպելով ինքնուրույն ընթերցանության դասը՝ ուսուցիչը ղեկավարվում է հետևյալ կանոններով.

- Ինքնուրույն ընթերցանության դասին յուրաքանչյուր աշակերտի հանդիպումը գրքի հետ պետք է առաջացնի հետաքրքրություն, այսինքն երբեմն երեխան չպետք է նախապես իմանա, թե ինչ գիրք ինքը պետք է ընթերցի ինքնուրույն ընթերցանության դասին: Այս դեպքում նա կարող է իրականացնել ինքնուրույն ընթերցողական գործունեության առաջին պահանջը՝ մտորել գրքի շուրջ մինչ ընթերցումը, տրամադրվել դրա բովանդակության ինքնուրույն լիարժեք ընկալմանը:

- Յուրաքանչյուր երեխա պետք է իմանա, որ մանկական գրքի շուրջ ինքնուրույն աշխատանքի ընթացքում չի կարելի խանգարել ընկերոջը: Պետք է սովորեցնել

⁶ Տես՝Նախաշավիղ 3.2010 էջ 10

ինքնուրույն աշխատել գրքի շուրջ (դիտել, ընթերցել և այլն) մինչև այն պահը, երբ ուսուցիչը կառաջարկի բոլորին սկսել կոլեկտիվ աշխատանքը:

- Կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման կարգը նույնպես պետք է խթանի երեխաների մեջ մշակել այն հարցերին ինքնուրույն պատասխանելու կարողությունները, որոնք կօգնեն ընթերցողին ստուգել, թե արդյո՞ք ճիշտ է ընկալում գրքի բովանդակությունն ընթերցանության ընթացքում և ընթերցանությունն ավարտելուց հետո:

Այդպիսի հարցերից են.

-Ի՞նչ գիրք ես կարդացի:

-Ինչպե՞ս է դրա վերնագիրը: Ի՞նչ կարող եմ ասել վերնագրի մասին:

-Ինչի՞ մասին է պատմվում ստեղծագործության մեջ:

-Ե՞րբ և տարվա ո՞ր եղանակին են կատարվում դեպքերը: Որտեղի՞ց ես այն իմացա:

-Ո՞ր հերոսն է ինձ դուր գալիս: Ո՞րը դուր չի գալիս: Ի՞նչը տպավորվեց: Ի՞նչն էր անսովոր, զվարճալի, զարմանալի: Ինչու՞:

- Գրքի շուրջ տրվող վարժությունները հետապնդում են հետևյալ նպատակները Ձևավորել ընթերցման թեման որոշելու կարողություններ այն գրքերի համեմատման միջոցով, որոնք ընթերցել և ուսումնասիրել են դասերի ընթացքում, և այն գրքերի, որոնք ընթերցել են ինքնուրույն:

- Դասերի ընթացքում գրքերի համեմատման միջոցով ընթերցածի թեման որոշելու, ինչպես նաև ցանկացած անձանոթ գրքի բովանդակության կանխագուշակելու գործընթացը կազմակերպվում է անհատապես, իսկ ուսումնական գործունեության արդյունքները ստուգվում են կոլեկտիվ աշխատանքի միջոցով:

Գրքի շուրջ կոլեկտիվ աշխատանքի առավել արդյունավետ ձևերից են.

1) Տրված թեմայով գրքերի ցուցահանդեսի կոլեկտիվ ստեղծումը,

2) Ընթերցածի կոլեկտիվ բեմադրումը,

3) Ընթերցածի գրական ստեղծագործության սյուժեի հիման վրա նկարահանված

կինոֆիլմ կոլեկտիվ դիտումն ու քննարկումը

4) Հերոսների պատրաստումը տարբեր նյութերով, էքսկուրսիա դեպի գրադարան, ցերեկույթների կազմակերպումը ինքնուրույն ընթերցածի թեմատիկայով:⁷

3.1.Ի՞նչ կառուցվածքով և ի՞նչ մեթոդներով կարելի է վարել ինքնուրույն ընթերցանության դասաժամերը

Կարելի է տարբերակել ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման երկու տիպի կառուցվածքներ:

I տիպ: Հիմնական. այն կազմված է 4 կառուցվածքային բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրի իրագործման համար պահանջվում է որոշակի ժամանակ: Այդ բաղադրիչները փոխկապակցված են: Դրանց հաջորդականությունը հետևյալն է

1. Աշխատանք՝ դասի ընթացքում ընթերցած գրքերի ցուցահանդեսի ստեղծման ուղղությամբ:
2. Զրույց՝ ընթերցած գրքերի հերոսների և հեղինակների մասին:
3. Ուսուցչի կողմից երեխաների ընթերցողական փորձի լրացում, ընդլայնում, ճշգրտում:
4. Տնային հանձնարարություն:

II տիպ: Դաս-հաշվետվություն: Սա հաշվետվություն է ընթերցած գրքերի վերաբերյալ, որի թեման ընտրում են իրենք՝ երեխաներն, իրենց ցանկությամբ: Այնուհետև նրանք պատրաստում են ելույթ՝ ընթերցածի վերաբերյալ: Այսպիսի դասերը կարելի է անցկացնել յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

Դաս-հաշվետվության ընթացքում կարելի է անցկացնել զրույցներ, գրական խաղեր, վիկտորինաներ, մրցույթներ ընտրված թեմայով: Երրորդ և չորրորդ դասարաններում դաս-հաշվետվությունների կազմակերպման գործընթացը փոքր-ինչ բարդանում է, որովհետև երեխաները երկու շաբաթում (այս դասարաններում գերադասելի է

⁷ Տես՝ Նախաշավիղ 3.2010 էջ 13

ինքնուրույն ընթերցանության դասաժամերն անցկացնել երկու շաբաթը մեկ անգամ՝ երկու ժամով) ընթերցում են տրված թեմայով շատ գրքեր, կամ ծավալուն ստեղծագործություններ՝ դրանք ինքնուրույն ընտրելով, ընդ որում այդ ընտրությունը կարող է լինել ն՝ հաջող, ն՝ անհաջող, ն՝ հասկանալով իմաստավորված, ն՝ ձևական, իսկ ուսուցիչը պետք է այդ երկու դասաժամում ապահովի յուրաքանչյուր աշակերտի առավել ակտիվ մասնակցությունը դասընթացում: Եվ որպեսզի հաղթահարի դժվարությունը, նրան անհրաժեշտ է հրաշալի իմանալ դասի թեմայի հետ կապված նյութը և կարողանա քննարկման ներկայացնել այնպիսի հարցեր, որոնք կստիպեն երեխաներին պատասխանել հարցերին՝ օգտվելով «իրենց» գրքերից: Այնուհանդերձ, ամբողջ դասարանի հետ կատարվող աշխատանքը չի կարելի փոխարինել սովորողների անհատական հաշվետվությամբ, առավել ևս ընթերցածի վերարտադրությամբ: Յուրաքանչյուր զրույցի արդյունավետությունը ապահովող հնարի ընտրությունն առավելապես կախված է տվյալ դասին ուսումնասիրվող գրական նյութի առանձնահատկությունից, երեխաների ընթերցողական մտահորիզոնի մակարդակից: Ընթերցած ստեղծագործությունը ներկայացնելու ձևը երեխաները կարող են նաև ընտրել իրենց ցանկությամբ: Միայն այս դեպքում ընթերցողական կարողությունները կդառնան անձնական հաջողության ցուցանիշ: Որպես կանոն՝ երեխաները սիրում են վերարտադրել՝ ընթերցած գրքից ընտրելով որոշակի հատվածներ՝ ըստ նկարագարման, հենակետային բառերի: Ովքեր բանաստեղծություններ են սիրում, արտասանում են անգիր: Իսկ այն ստեղծագործություններում, որտեղ շատ երկխոսություններ կան, ներկայացնում են դերային խաղով:

Ներկայացնում ենք ինքնուրույն ընթերցանության դասերի արդյունավետությանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառմամբ դասերի նմուշօրինակներ:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին կարելի՝ առաջարկել ընթերցելու իրենց նախընտրած ստեղծագործությունները: Ընդ որում՝ նախօրոք կարելի է պայմանավորվել ծնողների հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր

գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին ներգրավվում է համապատասխան գործունեության մեջ:

Մեպտեմբերին, հենց ինքնուրույն ընթերցանությանը հատկացված առաջին դասաժամին, որը կարելի է անվանել խորհրդակցության ժամ, յուրաքանչյուրը ներկայանում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույնս գեղեցիկ ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի հենց իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ներկայացնողներին կարելի է ուղղել հետևյալ հարցերը.

-Ինչո՞ւ ես ընտրել այդ գիրքը:

-Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործությանը:

- Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Ներկայացնողն իր ընթերցած գիրքը փոխանցում է դասընկերներին, որպեսզի վերջիններս շոշափեն այն, թերթեն, դիտեն կազմը, նկարագարդումները և այլն: Այնուհետև անցկացվում է քվեարկություն և ըստ քվեարկության արդյունքի ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Հաշվի առնելով տվյալ գիրքն ընթերցող աշակերտի կարծիքը միասին սահմանում են այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է գիրքն ընթերցելու համար: Սա անհրաժեշտ է իմանալ, որպեսզի կարողանան պլաններ կազմել: Աշակերտներն անպայման պետք է իմանան, որ ընթերցելուց հետո համագործակցային խմբում պիտի մասնակցեն քննարկմանը, որ ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնեն բոլոր մանրամասներին: Մինչ կարդալ սկսելը մտադրոհի միջոցով կազմվում է տեքստի բովանդակության կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն

ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին: Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը:

Աշակերտները բաժանվում են 4-5 համագործակցային խմբերի: Նրանց ուղղվում են որոշակի հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են:

Այսպես.

- Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:
- Ի՞նչը դուր չեկավ:
- Ինչպե՞ս էր գիրքը սկսվում:
- Ինչպե՞ս ավարտվեց:
- Ի՞նչն էր կարևոր:
- Ի՞նչ սովորեցիք հերոսներից:
- Ո՞վ ձեզ ավելի շատ դուր եկավ:
- Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը:
- Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել:
- Ո՞րն է ձեր սիրելի հատվածը:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ կամ վահանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարվում է աշխատանքի բաժանում՝ ընտրելով հետևյալ խորագրերը:


- Պատմվածքի քարտեզ
- Հեղինակի մասին
- Պատմվածքի «մանրակերտը»
- Մեր տպավորությունը
- Գլխավոր հերոսի բնութագիրը
- Նամակ հերոսին
- Հերոսի կողմից նամակ
- Պատմվածքի տարբեր հատվածների նկարագարումը:

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները նույնպես հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկություն ունենան ընթերցելու այն: Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կարող է միավորել երեխաներին և նրանց մեջ զարգացնել համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Հետազոտական մաս


Հարց 1. Ձեր կարծիքով ինքնուրույն ընթերցանության կազմակերպումը մեծացնում է արդյոք երեխայի սերը գրքի հանդեպ

- 1.Այո
- 2.Ոչ
- 3.Մասամբ




Հարց 2.Արդյոք նպատակահարմար էք գտնում ինքնուրույն ընթերցանության ոչ ստանդարտ ձևերի ավելի հաճախակի կազմակերպումը

- 1.Այո
- 2.Ոչ
- 3.Մասամբ



Հարց 3.Ձեր կարծիքով ստեղծագործության որ տեսակն է ավելի շատ հետաքրքրում երեխաներին

- 1.Հեքիաթ կամ առակ
- 2.Պատմվածքներ
- 3.Նշանավոր մարդկանց կյանքի կամ հերոսական սխրագործությունների մասին պատմող պատմություններ



Հարցումներին մասնակցել են 18 ուսուցիչ, որոնց պատասխանները պատկերված է դիագրամների միջոցով :

Եզրակացություն

Ինքնուրույն ընթերցանությունը կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոցն է: Լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչեղություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել հնարավորինս շուտ՝ սկսած գրաճանաչության շրջանից: Որպես միջոց՝ արդյունավետ է ինքնուրույն ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Այդ աշխատանքը այնպիսի գործություն պետք է ունենա, որ երեխաներին կապի գրքին, որ դիմադրի համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դրանցով տրվող հսկայածավալ տեղեկատվության դաշտում պահպանի իրենը, անկրկնելին ու անփոխարինելին: Այդ աշխատանքը հարկավոր է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի զարմանալի հրաշալի, հեքիաթային, որպեսզի գիրքը դառնա երեխայի «լավագույն ուղեկիցն ու բարեկամը»:

Սույն հետազոտության ընթացքում կատարեցի հետևյալ եզրակացությունները, որ ինքնուրույն ընթերցանության դասաժամերի արդյունավետության նախապայմաններն են հանդիսանում, ուսուցչի կողմից ընտրված մեթոդները, հնարները, ուսուցման կազմակերպման ձևերը (անհատական ուսուցում, զույգային ուսուցում, խմբային ուսուցում) և երկրորդը, որ արդյունավետությանը նպաստում է ուսուցման կազմակերպման այլընտրանքային եղանակները:

Գրականության ցանկ

1. Ջ.Գյուլամիրյան. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2006, 328 էջ
2. Ջ.Գյուլամիրյան. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ջանգակ 2015, 316 էջ
3. Ջ.Գյուլամիրյան. Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան 1998
4. Կ.Թորոսյան, Կ.Զիրուխյան , Հ.Խաչատրյան 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար. Մաս II, Ջանգակ 2013, 136 էջ
5. Կ.Թորոսյան, Գ.Թերզյան, Հ.Խաչատրյան.Խոսք և հաղորդակցում, Ջանգակ 2016,88 էջ
6. Հայոց լեզու և գրականություն. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագիր, «Անտարես», Երևան 2006
7. Հանրակրթության պետական չափորոշիչ
8. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 1.2001
9. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 2.2001
10. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 3-4.2009
11. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 3.2010
12. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 1.2013
13. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 5.2015
14. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 6.2015
15. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 1.2017
16. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես 2.2017
17. Համացանց, <https://forum.armedu.am>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՅՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

Հետազոտական աշխատանք

Աննա Միսակի Ենգոյան

Թեմա

Գործնական աշխատանքի կազմակերպումը

մայրենիի դասերին

Ղեկավար՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1 Գործնական ախատանքի կազմակերպման ընդհանուր բնութագիրը մայրենիի ուս. գործընթացում	5
Գլուխ 2 Գործնական աշխատանքի նմուշ, օրինակ	20
Եզրակացություն	23
Օգտագործված գրականության ցանկ	24

Ներածություն

Մենք ապրում ենք այն ժամանակաշրջանում, երբ կյանքի նկատմամբ ունենք բարձր պահանջներ, որը ստիպում է մեզ փնտրել նոր, ավելի արդյունավետ միջոցներ, որի շնորհիվ կարող ենք կրթել երեխաներին իրենց պահանջներին համապատասխան: Գործնական աշխատանքն այն է, երբ աշակերտը գործնականում օգտագործում է ստացած գիտելիքները և այն երեխային սովորեցնում է լինել վստահ իր ուժերին, մտածող, փնտրող և համագործակցող:

Թեմայի արդիականությունը:

Թեման համարում եմ արդիական, որովհետև գտնում եմ, որ գործնական աշխատանքը և՛ նպատակ է, և՛ միջոց ավելի խորը և ամուր գիտելիքներ ստանալու, աշակերտների մոտ ինքնուրույնություն և ակտիվություն ձևավորելու:

Գործնական աշխատանքը կրթության կարևոր մաս է, որը ինտեգրում է ուսումնական գործընթացի երկու տեսակները՝ անհատական և կոլեկտիվ:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է՝

1. Ուսումնասիրել գիտամեթոդական և գիտատեսական գրականություն, կազմակերպել գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Նկարագրել գործնական աշխատանքի տեսակները մայրենիի դասաժամերին, որպես ճանաչողական կարողությունների զարգացման միջոց;
2. Իրականացնել և դիտարկել գործնական աշխատանքների կազմակերպումը և անցկացումը մայրենիի դասաժամերին;
3. Բացահայտել գործնական աշխատանքի կազմակերպումը ներկայացվող չափորոշային պահանջները;
4. Վերլուծել գործնական աշխատանքների արդյունավետությունը մայրենիի դասաժամերին;

Ելնելով վերը նվաճ նպատակներից և խնդիրներից իմ հետազոտական աշխատանքը ունի հետևյալ կառուցվածքը՝

Ներածություն, Գլուխ 1, Գլուխ 2, եզրակացություն և գրականության ցանկ, նաև
հավելվածներ, որոնք կազմել և կիրառել ենք տարրական դասարաններում;

Գլուխ 1 Գործնական ախատանքի կազմակերպման ընդհանուր բնութագիրը
մայրենիի ուս. գործընթացում

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ
ԳՈՐԾՆԱԿՆ ԱԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մարդուն անընդհատ սովորեցնելով յուրացնել
պատրաստի գիտելիքներ՝ հնարավոր է բթացնել
նրա ստեղծագործական ընդունակությունները,
մոռացնել տալ ինքնուրույն մտածելը;
Դիստերվեզ

Կ. Թորոսյան 2012, էջ 6

«Հանրակրթության դերը մեծ մասամբ՝ պայմանավորված է նրա գործնական –
կիրառական նանակությամբ; Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր
նպատակներից է ասկերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու
կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ
լուծելիս;

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն ախատանքները,
որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և
հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ
սարքերի կամ համակարգչի կիրառություն)»

Սկսած առաջին դասարանից պետք է խորացնել երեխաների գիտելիքները,
զարգացնել նրանց ճանաչողական ակտիվությունը; Աշակերտների գործնական
աշխատանքը ոլորտ է, որտեղ աղկապվում են գիտելիքներն ու կարողությունը,
տեսությունն ու պրակտիկան; Եվ այսպես՝

- յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները,
- գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին
- գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները կկիրառվեն ուսումնական գործընթացում
- անհրաժեշտ է ընկալել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը
- գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի
- գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների՝ ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը,
- գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործություն ծավալելու կարողությունը

Ճանապարհորդություն խաղալիքների քաղաքում

Այս թեմայի շուրջ մենք ճանապարհորդություն կկատարենք խաղալիքների քաղաքում, որտեղ կան շատ փողոցներ, որոնցով կշրջենք, կկատարենք այն հետաքրքրաշարժ առաջադրանքները, որոնք մեզ կառաջարկվեն:

Բայց մինչև այդ կազմվել էր հարցաթերթիկ ինչի արդյունքների հիման վրա էլ ստեղծվեց այս գործնական աշխատանքը: Հարցաթերթիկին պատասխանել են 1-4 դասարանի աշակերտները:

- Հիշում եք ձեր առաջին խաղալիքը:
- Խաղում եք խաղալիքներով հիմա:
- Ի՞նչ խաղալիքներ եք նախընտրում:
- Ի՞նչ եք կարծում խաղալիքները ձեզ խանգարում են, թե օգնում ուսման մեջ:
- Ինչպե՞ս եք վերաբերվում համակարգչային խաղերին:

Մենք մեր ճանապարհորդությունը կկատարենք հետևյալ փողոցներով՝
 Հետաքրքրասերների փողոցով , Հետազոտողների փողոցով, Ստեղծագործողների փողոցով, Վարպետների փողոցով:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականությանն ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը»:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

- պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով
- բառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ
- տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականությամբ տկում,
- գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- գովազդային վահանակ, դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու ախատանքներ,
- տեքստի նկարազարդում

- հեքիաթների հորինում, ինքնաեն գրքերի նկարագարում;
- զանազան տեղեկատվական աղբյուրներից(բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ) որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար(նախագծերի մեթոդ):

Գործնական աշխատանքներն I դասարանում

Դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը: Որպես կանոն՝ ուսման նկատմամբ անտարբեր երեխաները սովորում են շատ ավելի վատ, քան կարող են, և, հակառակը, հետաքրքրասեր, հարցասեր երեխաները սովորում են շատ ավելի հեշտ և արագորեն են յուրացնում գիտելիքները:

Սա է պատճառը, որ երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտու թյուններ ուսուցանելը առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է: Ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝ որպես ճանաչողական հետաքրքրության զարգացման և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց:

Այդ նպատակաուղղված աշխատանքի ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ճանաչողական գործընթացների զարգացում (երևակայություն, ընկալում, հիշողություն), մտածական գործընթացների զարգացում (համեմատում, վերլուծություն և գլխավորի առանձնացում, նյութի ամփոփում և համակարգում, հակասությունները տեսնելու կարողություն և այլն),
- հետազոտական կարողությանների ձևավորում և զարգացում, տեսնել անսովորը, ձևակերպել խնդիրը, ապացուցել գաղափարը, ձևավորել հետազոտական աշխատանքի արդյունքները,
- ինքնակրտության կատողությունների ձևավորում, այսինքն՝ ակտիվ ճանաչողական գործունեության հնարների ձևավորում,

- սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում, • անասարձակցային և հաղորդական կարողությունների զարգացում:

- համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում

I դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է:

Գործնական աշխատանքն այս դասարանում կրում է սոսկ ուսուցանող բնույթ: Այս փուլում աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության, դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարողությունների զարգացմանը: Հնարավոր չէ ձևավորել գործնական կարողություններ առանց երեխաների երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացման, որովհետև երևակայությունը կերպարի կամ գաղափարի ձևով նորի ստեղծման հոգեկան գործընթաց է: Հատկապես այդ գործընթացն է մարդուն դուրս բերում իրականության սահմաններից և հնարավորություն է ընձեռում կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում՝ կանխատեսելու արդյունքները:

Ներկայացնենք որոշ վարժություններ, որոնք նպաստում են երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Վարժությունների մի խումբ նպաստում է սեփական կարծիքը փոխելու, իրերն ու երևույթները՝ տարբեր տեսանկյուններից դիտարկելու կարողությունների զարգացմանը, ինչն էլ, իր հերթին, գործնական աշխատանքն արդյունավետ կատարելու հնարավորություն է ընձեռում: Կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքներով վարժությունները.

- շարունակի՛ր անավարտ պատմվածքը, հեքիաթը,
- հորինի՛ր պատմվածք որևէ հերոսի անունից (պատկերացրե՛ք, որ դուք մի որոշ ժամանակով դարձել եք այն ծառը, որի փչակում ձագեր է ունեցել «Չարի վերջը» բալլադի կկուն),
- նկարագրի՛ր քո երևակայական կյանքի մեկ օրը կամ օգտագործելով հետևյալ վերջաբանը՝ «և նապաստակը մուշ–մուշ քնեց արջի թաթերի մեջ, հորինի՛ր պատմվածք,

- որոշի՛ր, թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ, օրինակ՝ աղյուսի, թերթի, կավիճի մի կտորի (գտի՛ր որքան հնարավոր է շատ ոչ ստանդարտ, բայց միևնույն ժամանակ իրագործելի տարբերակներ),
- որևէ առարկայի համար անվանի՛ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ (օրինակ՝ ինքնաթիռի, գրքի և այլն) և այլն,
- եկե՛ք միասին մտածենք, թե ինչու ամռանը սարերի վրայի ձյունը չի հալվում,
- ինչու՞ են երեխաները սիրում խաղալ համակարգչային խաղեր և այլն

Կատարելով ենթադրություններ՝ երեխաները պետք է սովորաբար իրենց խոսքում կիրառեն հետևյալ բառերը. **ենթադրենք, ասենք թե, հնարավոր է, կարող է լինել** և այլն: Կարևոր կարողություն է նաև հարցեր առաջ քաշելու կարողությունը: Չէ՞ որ յուրաքանչյուր ճանաչողական գործընթաց սկսվում է հարցադրումներից: Այդ նպատակով տրվում են մարդկանց, կենդանիների պատկերներով նկարներ, և երեխաներին առաջարկվում է պատասխանել տրված հարցերին: Կամ տրվում է առաջադրանք.

- Ի՞նչ հարցեր կօգնեն քեզ նոր տեղեկություններ իմանալու տրված առարկայի մասին:

Այս գործնական վարժությունները կատարելիս պահանջվում է տարբեր վարկածների առաջքաշման նպատակով մտածողության ճկունություն և յուրօրինակություն, ինչպես նաև այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են սկզբունքայնությունը, ազատ ինքնարտահայտումը և այլն:

Գործնական վարժությունները ճանաչողական - հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են: Գործնական առաջադրանքներն իրենց մեջ ներառում են ճանաչողական գործընթացներ՝ սկսելով ընկալման, մտապահման, իմաստավորման գործողություններից և ավարտելով տրամաբանական ու ստեղծագործական գործընթացներով:

Հավելենք նաև, որ արդեն առաջին դասարանից սովորողներին անհրաժեշտ է վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին՝

- մտածել ինքնուրույն,
- հարցնել մեկ ուրիշից,
- կարդալ գրքերում,

- դիտել հեռուստացույց, •
- տեղեկություն ստանալ համացանցից,
- դիտարկումներ կատարել,
- փորձեր անցկացնել
- հարցնել համապատասխան մասնագետներից:

Գործնական աշխատանքները II–IV դասարաններում

II դասարանից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ, որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից: Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Ընդ որում՝ գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության: Այսինքն՝ *գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գրելիքների, կաղությունների և ամրությունների կիրառումն է:*

Գործնական աշխատանքը ենթադրում է նախաձեռնություն ցուցաբերելու ցանկություն, կարողություն և հնարամտություն, ոչ ստանդարտ մտածողություն, ստեղծագործական մտածողություն, ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պատրաստակամություն:

II–IV դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը, այլև դպրոցականների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են՝

- դասակարգումը,
- ամփոփումը,
- տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
- իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,
- միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը.

- տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
- ինքնաստուգումը և այլն:

Գործնական աշխատանքների արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2. Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողա նաև կիրառել իրենց՝ մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները:
4. Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
5. Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
6. Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:
7. Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:
8. Գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը: 9. Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

II-IV դասարաններում, բացի ուսուցանող նպատակով տրված գործնական աշխատանքներից, դրվում են նաև միավորային գնահատմամբ գործնական աշխատանքներ: Այդ գործնական աշխատանքների գնահատման իրականարվում - է աշակերտի հավաքած միավորների քանակն այսպեսատելով. 30-միավորային գնահատանիշերով՝ ըս տրված չափանիշների: (Կ. Չիրուխյան 2012, էջ 11)

<i>I</i>	
<i>Մտուզման տեսակները</i>	<i>Գնահատում</i>
<ul style="list-style-type: none"> ▪ պատմության, գծապատկերների կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով ▪ բառերի, վանկերի կազմության գծապատկերներ, ▪ դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ ▪ տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում ▪ գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն, ▪ գովազդային վահանակ, դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ ▪ տեքստի նկարագրում հեքիաթների հորինում, «ինքնաշեն գրքերի» նկարագրում 	<p>«10» գնահատվում է, երբ աշխատանքը լիովին բավարարում է առաջադրված պահանջներին. գետեղված են հիմնական, կարևոր տեղեկությունները, շարադրանքը սեղմ է, նպատակային և անսխալ: Աշխատանքի ընդհանուր տեսքը կոկիկ է և ընդունելի: Վահանակի կամ պաստառի ձևավորումն ու գունավորումն ակնահաճո են:</p> <p>«9» գնահատվում է, երբ աշխատանքը լիովին բավարարում է առաջադրված պահանջներին. գետեղված են հիմնական, կարևոր տեղեկությունները, շարադրանքը սեղմ է, նպատակային և անսխալ: Աշխատանքի ընդհանուր տեսքը կոկիկ է և ընդունելի: Վահանակի կամ պաստառի ձևավորումն ու գունավորումն ակնահաճո են : Աշխատանքում թույլ են տրված որ էական սխալներ, ուշադրություն հրավիրելու դեպքում ի վիճակի է անմիջապես վերացնելու:</p> <p>«8» գնահատվում է, երբ աշխատանքը հիմնականում կատարված է, լրացումների կարիք չկա: Ձետեղված տեղեկությունները ճիշտ են՝ սահմանված ձևի և ծավալի պահպանմամբ: Ձևավորումն ու</p>

	<p>գունավորումը համապատասխանում են բովանդակությանը:</p> <p>«7» գնահատվում է, երբ աշխատանքը հիմնականում կատարված է, լրացուցիչ ցուցումների կարիք չկա: Ձեռնեղված տեղեկությունները ճիշտ են՝ սահմանված ձևի և ծավալի պահպանմամբ: Ձևավորումն ու</p> <p>գունավորումն համապատասխանում են բովանդակությանը: Աշխատանքը սխալների ուղղման թեթևակի կարիք ունի:</p> <p>«6» գնահատվում է, երբ աշխատանքը կատարված է մասամբ, լրացուցիչ ցուցումների կարիք չկա: Ձեռնեղված տեղեկությունները ամբողջական չեն, պահպանված չեն շարադրանքի ձևն ու ծավալը: Ապահովված է որոշակի գույներով պաստառի ձևավորումը: Չկան քերականական և ուղղագրական էական սխալներ:</p> <p>«5» գնահատվում է, երբ աշխատանքը կատարված է մասամբ, լրացուցիչ ցուցումների կարիք չկա: Ձեռնեղված տեղեկություններն ամբողջական չեն, պահպանված չեն շարադրանքի ձևն ու ծավալը: Ապահովված է որոշակի գույներով պաստառի ձևավորումը: Կան քերականական և ուղղագրական սխալներ:</p>
--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

	<p>«4» գնահատվում է, երբ առաջադրանքին անդրադարձել է, փորձել է կատարել, սակայն չի կարողացել ամբողջովին հաղթահարել : Պաստառը ձևավորված է, սակայն գունային համապատասխանություն չկա, կան քերականական և ուղղագրական սխալներ:</p> <p>«3-1» գնահատվում է, երբ առաջադրանքը կատարելու փորձ չի արել, ոչ ճիշտ լուծում է տվել հարցին:</p>
II	
<p><i>Ջանազան տեղեկատվական աղբյուրներից (բառարաններ, մանկական հանրագիտարաններ, ուսումնական ձեռնարկներ) որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար(III-IV դասարաններ)</i></p>	<p>«10-9» գնահատվում է, երբ աշակերտը պարզում է տեղեկատվության այն տեսակները, որոնք օգտակար կարող են լինել առաջադրանքի կատարման համար և արդյունավետորեն որոնում է տեղեկատվությունը: Ճշգրիտ և հանգամանորեն մեկնաբանում է առաջադրանքի համար հավաքած տեղեկությունները և վերլուծում:</p> <p>«8-7» գնահատվում է, երբ աշակերտը կարողանում է ճշգրտորեն մեկնաբանել առաջադրանքի համար հավաքած տեղեկությունները և հակիրճ վերարտադրում է այն:</p> <p>«6-5» գնահատվում է, երբ աշակերտը չի կարողանում ճիշտ գնահատել առաջադրանքի տեղեկատվական կարիքները կամ չի կարողանում որոնել</p>

	<p>անհրաժեշտ տվյալները: Էական սխալներ է թույլն տալիս առաջադրանքի համար հավաքած տեղեկությունները մեկնաբանելիս, ոչ ճշգրիտ է համադրում տեղեկատվությունը կամ դժվարանում է որոշել տեղեկատվության հավաստի լինելու փաստը և տրված առաջադրանքի առնչությունները:</p> <p>«4» գնահատվում է, երբ աշակերտը շատ քիչ կամ ընդհանրապես ոչ մի փորձ չի անում որոշելու, թե արդյոք տեղեկատվությունը առնչություն ունի տրված առաջադրանքի հետ կամ արդյո՞ք առաջադրանքը կշահի լրացուցիչ տեղեկատվությունից: Կոպիտ սխալներ է թույլ տալիս հավաքած տեղեկությունները մեկնաբանելիս:</p> <p>«3-1» գնահատվում է, երբ աշակերտի աշխատանքը չի բավարարում «4»-ի համար նշված աշխատանքի պահանջները:</p>
--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները մեծ հաշվով կարելի է անվանել ատեղծագործական հետազոտական աշխատանքներ;

Ի վերջո, հետազոտական գործունեությունն անձի ակտիվ ստեղծագործական վերաբերմունքն է շրջապատող աշխարհի նկատմամբ, որն արտահայտվում է պատրաստակամությամբ, աշխարհի ճանաչմանը նպաստող գործնական կարողություններով, զանազան, երբեմն էլ անսպասելի, ոչ կանխատեսված հետազոտական արդյունքների ստացմամբ և հետագա ճանաչողական գործընթացում դրանց կիրառմամբ: Ըստ էության, հետազոտական գործունեությունը

ստեղծագործական գործունեություն է, իսկ հետազոտողը՝ արարիչ: Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն այն գիտելիքներն են, որոնք նա ձեռք է բերում, այլև ճանաչողական գործունեություն ծավալելու միջոցները, որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը:

Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ. թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր ավանդն է ներդնում ընդհանուր գործի մեջ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից:

Արդեն IV դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման: Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել հետևյալ հարցերի պատասխանների շուրջ.

- Ինչն է ինձ հետաքրքրում ամենից շատ:
- Ինչով եմ ես ուզում զբաղվել առաջին հերթին:
- Ինչով եմ ես զբաղվում ազատ ժամերին:
- Ինչի մասին կուզենայի իմանալ որքան հնարավոր է ավելին:
- Ինչով կարող եմ ես հպարտանալ և այլն:

Պարզելով այլ հարցերի պատասխանները՝ երեխան կարող է ստանալ ուսուցչի՝ խորհուրդը հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության վերաբերյալ:

Թեման կարող է լինել

- երևակայական (երեխան կարող է առաջ քաշել երևակայական վարկած),
- փորձարարական,
- հայտնագործական,
- տեսական:

Հետազոտության կազմակերպումն ընդգրկում է հետևյալ փուլերը.

- ❖ Ինքնուրույն մտածել,
 - Ինչ գիտեմ ես այդ մասին:

- Ինչ մտքեր կարող եմ արտահայտել այդ մասին:
- Ինչ եզրահանգումներ կարող եմ կատարել՝ ինձ հայտնի տեղեկություններից:

❖ ***Թեմայի վերաբերյալ կարդալ գրքեր, թերթեր և ամսագրեր***

Գրել այն կարևոր տեղեկատվությունը, որի մասին տեղեկացար գրքերից, թերթերից կամ ամսագրերից:

❖ ***Հարցնել մեկ ուրիշից***

Գրել այն կարևոր տեղեկատվությունը, որը ստացար ուրիշից

❖ ***Դիտել հեռուստանյութեր***

Գրել այն ամենը, ինչի մասին տեղեկացար հեռուստացույցից:

❖ ***Օգտագործել համացանց***

Գրել այն ամենը, ինչի մասին տեղեկացար համացանցից:

❖ ***Դիտարկել***

Գրել այն հետաքրքիր, զարմանալի տեղեկատվությունը, որը ստացար դիտարկումների շնորհիվ: Հնարավորության դեպքում կատարել նկարահանումներ:

❖ ***Անցկացնել փորձեր***

Գրառել փորձերի արդյունքները:

❖ ***Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝***

- ըստ աշակերտների քանակի՝ անհատական, զույգով, խմբային, •
- ըստ անցկացման վայրի՝ դասարանական և արտադասարանական,
- ըստ ժամանակի՝ երկարատև, կարճատև,
- ըստ թեմայի՝ առարկայական և ազատ
- ըստ խնդրի դասի ընթացքում ուսումնասիրված ծրագրային նյութի յուրացման խորացում և հարցեր, որոնք ծրագրային նյութ չեն:

Վերջին ժամանակներս կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով հաճախակի կիրառվում է նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը:

Նախագծային աշխատանքի էությունն այն է, որ երեխաները, իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Հիշի՛ր: Նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով, բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ: *Հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը:*

Նախագծի կամ հետազոտության խնդիրները պետք է համապատասխանեն տարիքին և գտնվեն սովորողների մերձակա զարգացման գոտում, քանի որ հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ և մատչելիությունը որոշում են աշխատանքի հաջողությունը:

Նախագծային գործունեությունը նպաստում է հետազոտական կուլտուրայի ձևավորմանը: Հաշվի առնելով տարրական դասարանների տարբեր առարկաների ծրագրային առանձնահատկությունները, այն հանգամանքը, որ նախագծային և հետազոտական գործունեությունները, բացի տարբերություններից, ունեն նաև շատ ընդհանրություններ, ինչպես նաև կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ տարրական դասարաններում նպատակահարմար է նախագծային և հետազոտական գործունեությունը միավորել և անցկացնել ***նախագծային – հետազոտական գործունեություն:***

Նախագծային-հետազոտական գործունեությունը սեփական հետազոտության նախագծման գործունեությունն է, որը ենթադրում է նպատակների և խնդիրների առկայություն, համապատասխան մեթոդների ընտրության սկզբունքներ, հետազոտության ընթացքի պլանավորում, հետազոտության իրականացման գնահատում, հետազոտության՝ արդյունքների ներկայացում:

Գլուխ 2 Գործնական աշխատանքի նախնու, օրինակ

2.1 ՏԵՔՍ

2.1.1 Թեման՝ «Տեքստ, տեքստի խառնված հերթականության շտկում»

Գործնական աշխատանքի նպատակը

Աշակերտները՝


1. Կսովորեն վերականգնել տեքստի մասերի հաջորդականությունը և կշարունակեն այն՝ հաշվի առնելով տեղի ունեցող գործողությունների ընթացքը,
2. Կդրսևորեն կապակցված բանավոր և գրավոր ճիշտ խոսք կառուցելու կարողություններ
3. Ձեռք կբերեն ճշտված տեքստի վերաբերյալ վերլուծելու, դաստողություններ կատարելու կարողություններ:

Դասի ընթացքը


Առաջին փուլ

Քայլ 1. Սովորողներին առաջադարձում է որոշել տրված հասկացությունների հաջորդականության տրամաբանական ճիշտ շղթան, գրառել այն և հիմնավորել իրենց ընտրությունը:

Գրատախտակին գրված է.



Սովորողները որոշում են ճիշտ հերթականությունը և գրում.




Քայլ 2. Սովորողները հիշում են գծակարգում տեղադրված յուրաքանչյուր հասկացության սահմանումը և առանձնապես ավելի հիմնավոր կանգ են առնում «տեքստ» հասկացության վրա: Ուսուցիչն ինքը կարդում կամ առաջարկում է երեխաներին կարդալ իրար հետ ոչ մի կապ չունեցող նախադասությունների խումբ, այնուհետև մոտավորապես նույն քանակի նախադասություններ ունեցող տեքստ,

ապա առաջարկում է ասել, թե ինչով էին տարբերվում նախադասությունների այս 2 խումբն իրարից: Ուսուցիչն օգնում է երեխաներին հասկանալու և սահմանելու, որ տեքստը *ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբն է*: Աշակերտը պետք է 1. Տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից, 2. Իմանա և տարբերակի.

- Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները (թեմատիկ միասնություն, իմաստային ամբողջականություն, կապակցվածություն, վերնագիր, Բանալի բառեր, պարբերություն),
- Տեքստի հիմնական կառուցվածքային- իմաստային մասերը(սկիզբ, ընթացք, ավարտ)
- Տեքստի հիմնական հատկանիշները. Թեմա, հիմնական իմաստ կապ նախադասությունների միջև, նախադասությունների հաջորդականություն, տեքստի մասեր. վերնագիր, պարբերություն:

Գրատախտակին փակցվում է ծաղկի պատկեր, որի թերթիկների վրա գրում են տեքստի հատկանիշները և բացատրում, թե ինչ է նշանակում յուրաքանչյուր հատկանիշ:



Երկրորդ փուլ

Քայլ 1. Աշխատանք՝ խառնված հերթականությամբ տեքստի շտկման շուրջ

Աշակերտներին տրվում են որևէ տեքստի առանձին պարբերություններ՝ խառնված հերթականությամբ: Ուսուցիչն առաջարկում է տեքստի դրվագները դասավորել ճիշտ, տրամաբանական հերթականությամբ և ստանձել աղյուսակ 1-ի համապատասխան սյունակներում

Եզրակացություն

1. Սույն հետազոտական աշխատանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ՝
 - ա. Գործնական աշխատանքի կազմակերպմանը ներկայացվող պահանջները հստակորեն արտացոլված են պետական և առարկայական չափորոշիչներում
 - բ. Գործնական աշխատանքի կազմակերպումը և անցկացումը մայրենի դասաժամերին զգալիորեն բարձրացնում է դասի արդյունավետությունը՝ երեխաներին մղելով ստեղծապատ գործունեության;
2. Այսպիսով՝ տարրական դասարաններում կիրառելով **գործնական աշխատանք** բաղադրիչը ձևավորում ենք այնպիսի կարևոր կարողություններ և հմտություններ, որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում; Մասնավորապես՝ սովորողները՝
 - զարգացնում են իրենց ախարհաճանաչողական գիտելիքները,
 - ձեռք են բերում սոցիալական հմտություններ
 - իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը
 - ինքնադրսևորվում են, ինքնակազմակերպվում են
 - ուսուցանվող առարկան դառնում է նրանց համար ավելի հետաքրքիր,
 - լինում են մոտիվացված, քանի որ ամեն ինչ անում են իրենց նախասիրությունների ըջանակում և ներգրավված են համընդհանուր ուսումնական գործունեության մեջ

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոպյան, Կ. Չիբուխյան Գործնական ախատանքներ մայրենիից, Ջանգալ 2017
2. Կ. Թորոպյան, Կ. Չիբուխյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար; Մաս 1, «Ջանգալ» հրատարակչություն, 2013
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010 Երևան
4. Гориостаева З.Я Проблема самостоятельной познавательной деятельности \\
Открыт. школа - 1998.- N2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Աննա Էդիկի Հովսեփյան

ԹԵՄԱ

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ. , դոցենտ Լ. Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	1
Գլուխ 1 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դասարաններում	
1.1 Խաղային տեխնոլոգիաների տեսակները	4
1.2 Խաղը որպես ուսուցման միջոց.....	4
Գլուխ 2 Խաղային տեխնոլոգիաների գործառույթը.....	16
Եզրակացություն.....	23
Գրականություն	24

Ներածություն

«Երեխան ապրում է խաղով՝

Խաղով է սովորում, խաղալիս է

մտածում, խաղալով է հաշվում:

Խաղն է երեխայի գրավականը»:

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հասկապես տարրական դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները:

Ըստ Էլկոնինի խաղը պատմական ծագում ունի, այն առաջ է եկել պատմական զարգացման որոշակի փուլում, , երբ դրվել է մեծերի աշխարհի և երեխայի աշխարհի բաժանման հիմքը, որի արդյունքում երեխաները դուրս են մղվել աշխատանքի պրոցեսից: Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը: Խաղը նպաստում է երեխայի շփման, հաղորդակցման ունակությունների զարգացմանը, կամային վարքի ձևավորմանը, ինքնահսկման, ստեղծագործական երևակայության, պահանջմունքադրդապատճառային ոլորտի ձևավորմանը, կամային հիշողության զարգացմանը:

Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու²:

Բոլոր խաղերը, որոնք կարող են օգտագործվել ուսումնական գործընթացում, բաժանում են խմբերի՝ դասավանդման, զարգացման, վերարտադրողական, ախտորոշիչ: Յուրաքանչյուր տեսակի ինքն իրեն որոշակի խնդիր է դնում: Ուսուցման գործընթացում երեխան սովորում է այն տեղեկությունը, որը նա նախկինում չգիտեր: Մանկական կրթական տեխնոլոգիաների զարգացումը նպատակաուղղված է երեխայի նոր կարողությունների բացահայտմանը: Նման դասերի ժամանակ ուսուցիչը երեխաներին սովորեցնում է տրամաբանորեն մտածել: Reproductive

2. Փառանձեմ Գրիգորյան

«Երեխան ապրում է խաղով»-«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիր, Արևմտյան դպրոց-պարտեզ, երկարացված օրվա կազմակերպիչ (կրթահամալիրի կայք)

Խաղերը օգնում են ամրապնդել սովորած նյութը: Բացի այդ, այդ դասերի ժամանակ ուսուցիչը կարող է պարզել, թե որտեղ կա բացեր, ինչ նյութեր են տղաները լիովին հասկանում:

Անկախ նրանից, որ յուրաքանչյուր խաղ ունի հստակ կառուցվածք եւ պետք է ներառի այն դերերը, որոնք խաղում են խաղին, խաղի գործողություններին, պյուժեին: Նախակրթական դպրոցում ուսումնական գործընթացը բարելավելու համար կարող են օգտագործվել երկու հիմնական մեթոդ, դասի դերերը, ինչպես նաև մրցույթները: Վերջին տարբերակն առավելապես նպաստում է երեխաներին սովորելու: Յուրաքանչյուր երեխան ձգտում է գիտելիքներ ձեռք բերել՝ լավագույնը դառնալու համար:

Անվիճելի է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Զարգացումը դառնում է մանկավարժական գործնթացի գլխավոր բառը, որպես "սովորել" հասկացության այլընտրանք: Շատ մանկավարժներ առաջարկում են (որոշ տեղեր նաև կիրառում) հոգեկան խթանման մի հիանալի միջոց՝ **խաղը**: Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ

տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն:

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից դպրոցի տեղեկատվության հագեցվածությունը դասը դարձնում է ծանրաբեռնված տարրական դպրոցականների համար. Օրինակ մաթեմատիկայի ժամերին մտավոր ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել այն մասին, թե ինչպես նպաստել սովորողների մեջ ուսումնասիրվող նյութի նկատմամբ հետաքրքրության առաջացմանն ու ողջ դասի ընթացքում նրանց ակտիվ գործունեության ապահովմանը: Կարևոր դերն այստեղ ստանձնում են դիդակտիկ խաղերը՝ ուսուցման ու դաստիարակության ժամանակակից ու ընդունված մեթոդները, որոնք կատարում են իրար հետ փոխկապակցված կրթական, դաստիարակչական ու զարգացնող գործառույթներ: Դիդակտիկական խաղերի միջոցով դասերը դառնում են հետաքրքիր ու հաճելի, երեխաների մեջ առաջանում է եռանդուն աշխատանքային տրամադրություն, հաղթահարվում են ուսումնական նյութի յուրացման դժվարությունները:

Դիդակտիկական խաղերի կարևոր տեսակ են մաթեմատիկական խաղերը: Դիդակտիկական (մաթեմատիկական) խաղերին նվիրված են բազմաթիվ ուսումնասիրություններ : Բայց և այնպես, կան հարցեր և դրվագներ, որոնք հետագա մշակման կարիք ունեն: Այս ամենն էլ որոշում են մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Վերլուծության ենթարկել տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դիդակտիկական խաղերի կիրառման դրվածքը, մշակել նոր խաղեր և տալ դրանց մեթոդական կիրառումները:

Հետազոտության խնդիրները

- 1.Բացահայտել դիդակտիկական խաղերի կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:
- 2.Ուսումնասիրել ուսուցիչների և աշակերտների փոխհարաբերությունները մաթեմատիկայի դասերին դիդակտիկական խաղեր կիրառելիս:
- 3.Իրականացնել դիդակտիկական խաղերի կիրառման արդյունավետ միջոցներ մաթեմատիկայի դասերն իրականացնելիս:

Հետազոտության մեթոդները: Օգտագործվել են մանկավարժական հետազոտության տեսական և փորձարարական հետևյալ մեթոդները. գրականության, նորմատիվ իրավական

ակտերի վերլուծություն, հարցում, հարցազրույց, մանկավարժական գիտափորձ, փորձարարական տվյալների մաթեմատիկական վերլուծություն:

«Մաթեմատիկա» առարկայական ծրագրին համապատասխան մշակվել է դիդակտիկական խաղերի անցկացման մեթոդիկա:

Մշակվել են մեթոդական առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավելու տարրական դպրոցում իրականացվող մաթեմատիկայի ուսուցման գործընթացը:

ԳԼՈՒԽ 1

1.1 ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բոլոր խաղերը, որոնք կարող են օգտագործվել ուսումնական գործընթացում, բաժանում են խմբերի՝ դասավանդման, զարգացման, վերարտադրողական, ախտորոշիչ: Յուրաքանչյուր տեսակի ինքն իրեն որոշակի խնդիր է դնում: Ուսուցման գործընթացում երեխան սովորում է այն տեղեկությունը, որը նա նախկինում չգիտեր: Մանկական կրթական տեխնոլոգիաների զարգացումը նպատակաուղղված է երեխայի նոր կարողությունների բացահայտմանը: Նման դասերի ժամանակ ուսուցիչը երեխաներին սովորեցնում է տրամաբանորեն մտածել: Reproductive խաղերը օգնում են ամրապնդել սովորած նյութը: Բացի այդ, այդ դասերի ժամանակ ուսուցիչը կարող է պարզել, թե որտեղ կա բացեր, ինչ նյութեր են տղաները լիովին հասկանում:

Անկախ նրանից, որ յուրաքանչյուր խաղ ունի հստակ կառուցվածք եւ պետք է ներառի այն դերերը, որոնք խաղում են խաղին, խաղի գործողություններին, պյուժին: Նախակրթական դպրոցում ուսումնական գործընթացը բարելավելու համար կարող են օգտագործվել երկու հիմնական մեթոդ, դասի դերերը, ինչպես նաև մրցույթները: Վերջին տարբերակն առավելապես նպաստում է երեխաներին սովորելու: Յուրաքանչյուր երեխան ձգտում է գիտելիքներ ձեռք բերել՝ լավագույնը դառնալու համար:

1.2 ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունից, իսկ ուսուցման մեթոդի ընտրությունն որոշակիորեն կախված է դասի դիդակտիկական խնդիրներից, որ լուծում է ուսուցիչը և ծրագրային նյութի բովանդակության յուրահատկություններից:

Մեթոդների և միջոցների ընտրությունը պայմանավորված է նաև սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններով, դպրոցի պայմաններով: Ուսուցման մեթոդների ընտրության մեջ երևում է նաև ուսուցչի ինքնուրույնությունը, մեթոդական վարպետությունը, անհատականությունը, աշխատանքի ոճը:

Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը, քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր:

Բազմազան խաղերի մեջ դիդակտիկ խաղերի դերն առանձնապես մեծ է: Դիդակտիկ խաղերի նպատակն է սովորողին խաղալով սովորեցնել համեմատելու, համադրելու, դասակարգելու, ընդհանրացնելու, այսինքն՝ մտավոր գործողություններ կատարելու: Ընդ որում ուսուցողական խնդիրը սովորողից գաղտնի է մնում և իրեն թվում է, թե ինքն ուղղակի խաղում է, կատարում է որևէ դեր՝ անկախ ընդունակություններից:

Դասին նախապատրաստվելիս ուսուցիչը պետք է ճիշտ ընտրի խաղը, որոշի խաղի մեջ յուրաքանչյուր սովորողի դերը՝ հաշվի առնելով նրա անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ներուժը և դրական կողմերը: Խաղի օգնությամբ ուսուցիչը կարող է հեշտությամբ ակտիվացնել անհամարձակ, անվստահ երեխային: Երեխաները լավ են կատարում հատկապես ակտիվ, շարժողական գործողություններ ենթադրող խաղերը, որոնց ընթացքում սովորողները շարժում են և միաժամանակ կատարում մտավոր խնդիրը: Շարժումն աշխուժացնում է դասը, որի արդյունքում նկատելիորեն բարձրանում է սովորողների տրամադրությունը և ստեղծվում է բարձր կարգապահություն, կամքի ուժ, իսկ ուսուցչին իր առջև դրված խնդիրների հաջողությամբ կատարելու բարենպաստ պայմաններ⁶:

6.Ա. Վերոյան

«Խաղ՝ որպես երեխաների առաջատար գործունեություն»-----Նախաշավիղ 3.2010թվ, 47էջ

Խաղի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ խնդիրներին ու առաջադրանքներին, որոնց հիմնական նպատակը սովորածը կրկնելու, ամրապնդելու և

կիրառելու կարողությունների ձևավորումն է: Բազմազան մանկավարժական, տրամաբանական, հետաքրքրաշարժ վարժությունները երեխաները կատարում են սիրով ու հափշտակությամբ: Նրանք ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ լուծում են, վճռում, գտնում, կազմում, հորինում, առանձնացնում և այլն: Իսկ այդ ընթացքում երեխաները կամաակամա սովորում են այն ամենը, ինչը ծրագրված և թաքնված է այդ առաջադրանքների հետևում:

Խաղերը դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջին հերթին ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը:

Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունը, անհատականությունը առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղը երեխայի համար ներքին, կենսաբանական պահանջմունք է: Խաղով է երեխան ճանաչում երևույթի շատ կողմեր, որոնք ի հայտ են գալիս միայն խաղային իրավիճակում: Այս իրողությունն է ընկած մանկավարժության մեթոդաբանության այն ելակետի հիմքում, որով կարևորվում է խաղի դերը ուսուցման մակարդակում: Ըստ այդ ըմբռնման, խաղը մեծացնում է գիտելիքի նկատմամբ եղած գրավչության դաշտը, ընկալման, կլանվածության և սևեռման գործակիցները: Խթանելով իմացական հետաքրքրությունները՝ խաղը հետադարձ կերպով նպաստում է լեզվամտածողության նախադրյալների ձևավորմանը և զարգացմանը: Գիտելիքը երեխային հաճույք պատճառելու չափ վարպետորեն մատուցելու կերպը միշտ էլ զբաղեցրել է մանկավարժության մեթոդաբաններին:

Մանկան խաղի բնութագրիչ գծերից մեկը հուզականությունն է: Գիտելիքը խաղով մատուցելու ընթացքում անհրաժեշտաբար պետք է մատուցվելիքը կապել երեխայի էության հուզական ոլորտների հետ:

Ուսուցման միօրինակությունը հոգնեցուցիչ է : Այն հաղթահարվում է խաղի օգնությամբ: Երեխան կրավորական լսողից դառնում է ակտիվ մասնակից: Խաղերով ուսուցումը նպաստում է գիտելիքի և տեղեկությունների մեծ ծավալի յուրացմանը, հմտությունների մշակմանը, կարողությունների ու անհատականության զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց, ունի նաև դաստիարակչական, ուսուցողական նշանակություն: Այս դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար:

Խաղը լայն տարածում ունի ժողովրդական դաստիարակության և դպրոցական շրջանում: Խաղային դաստիարակչության հասկացությունը ներառում է մեթոդների բավականին մեծ խումբ տարբեր ժամանցային դաստիարակչական խաղերի տեսքով: Մյուս խաղերի հետ համեմատ դաստիարակչական խաղը ունի նպատակ՝ խնդրի ուղիղ կետին հասնելու և իրեն համապատասխանող դաստիարակչական արդյունք, որոնք կարող են լինել կողմնակի ընդգծված դրական ձևով և բնութագրվում է դասաձանաչողական ուղղությամբ⁵:

5.Ս.Սարուխանյան և ուրիշներ

«Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ»-----Վանաձոր 2008թվ.81էջ

Խաղային գործունեությունը օգտագործվում է հետևյալ դեպքերում.

- 1.Որպես ինքնահաստատված ձև հասկանալու համար թեմայի կամ որևէ առարկայի բաժին:
- 2.Որպես մասնիկ որևէ մեխանիզմի:
- 3.Որպես դաս կամ նրա մի մաս:
- 4.Որպես արտադասարանական աշխատանքի մեթոդ:

Խաղային տեսքը ստացվում է դասի ժամանակ խաղային գործողությունների և իրավիճակների օգնությամբ, որոնք գործում են որպես առաջացնող միջոց, որպես սովորեցնող գործողություն: Իրականացումը խաղային գործողության և պարապմունքի անցկացման ձև է:

Առաջին հերթին պետք է առանձնացնել խաղի գործողության ձևերը՝ **շարժողական, ինտելեկտուալ, աշխատանքային, սոցալական և հոգեբանական**: Եվ վերջապես խաղային գործողության մեջ զգալի չափով մտնում է խաղային շերտը:

Խաղային տեխնալոգիաները մեծ դերակատարում ունեն դպրոցական կրտսեր տարիքում.

Դպրոցական կրտսեր տարիքի համար բնավորության վառ և դաստիարակության հետևանքով հեշտ է մտնել կերպարի մեջ: Երեխաները հեշտ են մտնում ցանկացած գործունեության մեջ՝ հատկապես խաղային, հաճախակի մտնում են խմբային խաղի մեջ, շարունակում են խաղալ ծրագրերի, խաղալիքների հետ, առաջանում են ոչ պլանավորված խաղեր:

Երեխայի կամային վարքի զարգացման համար կա հրաշալի միջոց: Դա կանոններով խաղն է: Շարժուն երեխաները, ուսուցչի պահանջները <<չցանկանալ կատարող>> երեխաները խաղում են ցանկացած խաղ և ձգտում են կատարել այդ խաղի կանոնները: Այս խաղերը կազմակերպում են, կանոնավորում երեխայի գործողությունները, սահմանափակում են նրանց ակամա ակտիվությունը: Գիտակցելով խաղի կանոնները՝ երեխաները սկսում են իրենց գործողությունները ենթարկել դրանց, արդյունքում ձևավորվում է կամային և զգացմունքային ինքնակարգավորում:

Խաղը սովորելու մեջ, խնդրի ստեղծման ժամանակ կատարվում է ներմուծված իրավիճակի միջոցով, խնդրի իրավիճակում այն առաջանում է խաղացողի խաղը ընկալման շրջանակներում, գործունեությունը կայանում է խաղի կերպարների ձևավորման շրջանում, մի մասն էլ տեղի է ունենում պայմանական խաղի ժամանակ:

Երեխաները գործում են խաղի կանոններով (ինչպես դերային խաղի ժամանակ, տրամաբանությամբ խաղացվող դերը, երևակայական կերպարի արտաքին ձևավորման իրական պատկերացման մեջ): Խաղային գործունեությունը կարգավորում է նաև ուսուցչի դերը, որը մարմնավորում է մասնակցի օգնականի և խորհրդատուի դերը:

Խաղերը երկու ձևով են դեր խաղում սովորեցնող և ճանաչողական: Խաղի ցուցադրական ֆունկցիան կայանում է խաղի քննարկման ժամանակ, խաղի անալիզը, ինչպես մոդելավորող, նրա հարաբերությունը իրականության հետ: Հետագայում գլխավոր դերը կատարողը կատարում է վերջնական եզրակացություն, որտեղ մասնակիցները քննարկում և վերլուծում են խաղի արդյունքները, խաղային մոդելից և իրականության համադրությամբ, ինչպես նաև քայլը՝ խաղային-սովորեցնող փոխգործողությունը: Սկսնակ դպրոցի դաստիարակության մեջ ներարված են խաղեր, ունակ հարստացնելու ու երեխաների մոտ առաջացնելու արագ բառապաշար, կապակցված խոսք: Խաղերը ուղղորդված են նաև թվային զարգացմանը, հաշվել սովորելու, տրամաբանության զարգացման, հիշողության և ընդունակությունների ամրապնդման:

Ցուցադրական՝ նպատակը դրվում է սովորողի առջև խաղային խնդիր: Սովորելու գործողությունը ենթարկվում է խաղի կանոններին, սովորելու նյութը օգտագործվում է որպես միջոց, սովորելու գործողության մեջ մտնում է մրցակցության մասնիկ, որը մտցնում է ցուցադրական առաջադրանքը խաղի մեջ, հաջող կատարումը ցուցադրական առաջադրանքը կապվում է խաղի արդյունքի հետ:

Յուցադրական խաղի էությունը կայանում է նրանց հաճախակի օգտագործման, նպատակային խաղի ծրագրից սովորական ցուցադրական վարժություններով:

Խաղային տեխնոլոգիաները կառուցվում են նպատակային դասընթացի՝ մեծամասնությունը ներառող, ընդհանուր միավորումը սցենարի գաղափարի հետ: Նրա մեջ ներառվում է խաղի անմիջական հետևանքները և վարժությունները, խաղացողի ընդունակությունները ցուցադրող, բնավորության դրսևորումները, համեմատությունը, խաղային խմբերը ընդհանուր ճանաչողության, որտեղ դպրոցականները կարողանում են տարբերել իրականը անիրականից, ինքդ քեզ տիրապետելու, հասկանալու, արագ կողմնորոշվելու խոսքի մեջ և այլն:

Այս ամենում խաղային սցենարը զարգացնում է սովորելու յուրահատուկ առանձնահատկությունը, օգնում է ակտիվացնել սովորելու գործընթացը, համալրել առարկաների թիվը: Խաղային գործունեությունը կազմված է խաղային էլեմենտներից և մասնիկներից:

Երեխաներին **երաժշտության տեսության** ուսուցման միջոցով հասանելի դարձնել՝ (Կիրյուշինայի մեթոդ): Այս մեթոդը հասու է բոլոր նրանց ովքեր ընկալում են երաժշտությունը հոգեպես, բոլոր հերոսները տարբեր ձևով են իրենց դրսևորում արկածների ժամանակ, որտեղ բացահայտվում է նրանց ունակություններն ու որակը: Հերոսի հետ միասին երեխաները սովորում են երաժշտության ընկալումն ու ունակությունը, ռիթմի, տոնի և չափի զգացողությունը:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսումնական գործունեությունը փոխարինելու է գալիս նրանց համար սովորական դարձած խաղային ակտիվությունը: Խաղի նշանակության մասին հայ մեծ բանաստեղծ Թումանյանը գրել է. «Խաղը մանուկ մարդու բնական օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»:

Առաջին դասարանցին երեկվա հինգ տարեկանն է: Նա ուզում է միշտ խաղալ և միայն ժամանակի ընթացքում կարողանում է իր գործունեության մեջ տեղ տալ դասերին: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ ուսուցիչը պետք է մտածված ձևով ղեկավարի երեխայի խաղը: Ուսուցիչները հաճախ ասում են, որ խաղն իրապես ակտիվացնում է երեխաներին, բայց իրենք խաղալու ժամանակ չունեն դասարանում: Նման մոտեցումը, մեղմ ասած,

անրնդունելի է: Ոչ ոք չի առաջարկում մոռանալ ուսումնական աշխատանքը և սկսել աննպատակ խաղալ երեխայի հետ: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Խաղալիքները և խաղը վեց տարեկան երեխաների հետ աշխատանք տանելու հիմնական միջոցներ են, և յուրաքանչյուր դպրոց ու ուսուցիչ պետք է այդ ուղղությամբ հետևողական աշխատանք տանեն՝ համապատասխան պայմաններ ստեղծելու, ուսումնական աշխատանքը մատչելի ու հնարավորինս հաճելի դարձնելու համար: Չեն կարող արդարացվել խաղի ու խաղալիքների մասին որևէ արհամարհական վերաբերմունք ու մակերեսային մոտեցում: Դրանով հսկայական ու անուղղելի վնաս կհասցվի ուսումնաստիարակչական աշխատանքներին:

Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Խաղի ուսուցողական խնդիրը նրանից գաղտնի է մնում, և երեխային թվում է, թե ինքն ուղղակի խաղում է՝ կատարելով որևէ դեր: Խիստ կարևոր են խաղի ուսուցողական և կրթադաստիարակչական նշանակությունն ու արժեքը: Այն նպատակային ու ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է շատ բարձր ուսումնական արդյունքների հասնել: Խաղն ակտիվացնում է ուսումնական ամբողջ գործընթացը: Այլ կերպ՝ ակտիվ ուսուցումը ենթադրում է ոչ միայն ուսուցչի ակտիվ դեր, այլև աշակերտի ակտիվություն, ուսումնական գործունե փոխհարաբերություններ և աշխույժ մթնոլորտ: Գրեթե անհնար է իրականացնել ակտիվ ուսուցում-ուսումնասություն՝ առանց խաղի, իսկ առանց ակտիվ ուսուցման՝ անհնար է հասնել արդի կրթական նպատակներին: Ներկայացնենք ասվածը հաստատող դասի օրինակ:

«Մ» հնչյուն - տառի ուսուցումը

Նպատակը

.երեխաները կյուրացնեն մ հնչյուն-տառի արտասանությունն ու գրությունը.

.կտվորեն սահուն կարդալ բնագիրը.

.կզարգացնեն բանավոր խոսք կառուցելու, բառակազմական և բառի հնչյունային ու տառային.

.վերլուծություններ կատարելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ -մեծադիր, փոքրադիր, նկարագարդ, ձեռագիր, տպագիր տառեր, -մատիտ, մում, մումակալ, Մասիս սարի պատկերր, մետաղալար:
Դասի ընթացքը

«Փոփկորն» մեթոդով ամփոփում են անցած տառերը: Դրանից հետո ուսուցիչը անակնկալների տուփից հանում է մի հանելուկ և կարդում` .

Փափուկ, փոքրիկ մի կենդանի,
Վախը սրտում ման է գալիս,
Ու փախչում է Մլավոցից չար մոռանի:

Երեխաները հեշտությամբ գուշակում են, որ դա մուկն է: Ուսուցիչը ցուցադրում է նախապես պատրաստված մկնիկ-խաղալիքը և խոսում նրա լեզվով.

-Բարև՛, բարև՛ սիրելի՛ երեխաներ, ես շատ ուրախ եմ, որ ձեր հյուրն եմ: Այստեղ կատուներ չկա՞ն, ես նրանցից շատ եմ վախենում: Երեխաները խմբով պատասխանում են.

-Ո՛չ, չկա՛ն:

-Լա՛վ, իսկ ի՞նչ գիտեք իմ մասին:

Երեխաները պատմում են այն ամենը, ինչ գիտեն մկան մասին: Իսկ այն, ինչ չի ասվում երեխաների կողմից, մուկը լրացնում է և ապա հարցնում.

-Հավանեցի՞ք ինձ: Ձեզնից ո՞վ կցանկանար նմանվել ինձ: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչու եմ ես եկել ձեզ հյուր: Այբբենարանն ինձ նամակ է գրել այն մասին, թե դուք շատ տառեր եք անցել: Գիտե՞ք գրել, կարդալ, բայց դեռևս չգիտեք մ հնչյուն -տառը: Ցանկանու՞մ եք սովորել նաև մ տառը:

Երեխաները մկնիկի օգնությամբ արտասանում են մ տառով սկսվող բառեր: Այնուհետև ուսուցիչը օդում ցույց է տալիս, թե ինչպես է գրվում մ -ն, իսկ երեխաները մետաղալարով պատրաստում են այն:

Խաղ-ուսուցում **Չայնավորիկ, բաղաձայնիկ, որտե՞ղ ուղարկենք Մ հնչյուն-տառին...**

Աշխատանք դասագրքով`

Իսկ այժմ տեսնենք, թե ինչ անակնկալներ են մեզ սպասում դասագրքում: Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է թեմատիկ նկարին: Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտները հորինում են փոքրիկ պատմություն` «Մատենադարան» նկարի վերաբերյալ: Այնուհետև հանձնարարվում է կարդալ բառաշարերը և կազմել

բառակապակցություններ: Դասագրքով աշխատելուց հետո կատարվում է աշխատանք գրատետրում:

Մատիկների վարժանք

Հինգ եղբայրներ մեծ ու պուճուր

Ոչ մի գործից չեն երկնչում,

Թե նրանցից մեկն ալարի,

Մյուս չորսն էլ չեն դալարի:

Մատիկների վարժանքից հետո երեխաները «Մ» տառով սկսվող մի քանի բառեր ենթարկում են հնչյունային վերլուծության, հետո նորից աշխատում են գրքով:

Խմբային աշխատանք՝

Ուսուցիչը երեխաներին բաժանում է խմբերի (գույնագույն աստղիկների միջոցով)՝ նրանց պատմելով մի փոքրիկ հեքիաթ: Այդ ընթացքում երեխաները խմբավորվում են:

Երկնքում ապրում է մի հրաշագործ պապիկ, որն ունի բազմաթիվ թռռնիկներ՝ հրեշտակներ: Նրանց համար ամպերն անկողին են, իսկ աստղերը խաղալիքներ: Ամեն օր պապիկն իր թռռնիկներին տալիս է որևէ հանձնարարություն: Այս անգամ թռռնիկները աստղերի վրա գրված տառերով պետք է կազմեն բառեր:


I խումբ



II խումբ



III խումբ



Ուսուցիչը երեխաներին խրախուսելու համար բառը շուտ կազմող խմբին նվիրում է աստղիկ:

Մուկը այս ամենը տեսնելով՝ ուրախ հրաժեշտ է տալիս երեխաներին և իր հետ տանում նրանց աշխատանքները:

«Ուրախացիր երեխայի գոյությամբ, սովորեցրու, լսիր նրան և խաղա նրա հետ» Սա ճշմարտացի, դարերով փորձված և ապացուցված իմաստություն է;

Խաղը երեխայի համար առաջնային գործունեությունն է: Այն զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է:

Երեխան լրջորեն է վերաբերվում խաղին և նույնպիսի մոտեցում էլ պահանջում է շրջապատից:

Մեծահասակն իր զգացմունքները, գայրույթն ու անհանգստությունն արտահայտում է խոսքային մակարդակում, իսկ երեխան՝ խաղային գործունեությամբ: Խաղը փոքրիկի համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է: Հատկապես կարևոր են այն խաղերը, որոնք հորինում է հենց ինքը՝ երեխան:

Խաղի ժամանակ մասնակիցները պետք է ցուցաբերեն կամքի ուժ, համարձակություն, իրավիճակին ստեղծագործաբար մոտենալու կարողություն, այսինքն՝ բոլոր անհրաժեշտ որակները, որոնք ձևավորում են լավատեսություն:

Խաղի ընթացքում հնարավոր են նաև հիասթափության, երբեմն վիրավորանքի, վախի և այլ զգացումների դրսևորումներ: Կարևոր է նաև հասակակիցների հետ շփումը, նրանք սովորում են իրարից և ընդօրինակում միմյանց(ցանկալի և անցանկալի վարք):

Խաղը որպես գործունեության ձև իրականացնում է մի շարք գործառույթներ.

1. զարգացնող
2. դաստիարակող
3. շփման և հաղորդակցման
4. կարգավորող
5. առողջարարական /թերապևտիկ

Թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում: Դրա շնորհիվ նրանք դառնում են դիտունակ, սովորում են համեմատել, դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների: Իսկ դա նպաստում է նրանց մտավոր զարգացմանը, գուգահեռաբար զարգացնում ընկալունակությունը, խոսքը և ուշադրությունը:

Խաղային գործունեությունը, ինչպես գործունեության յուրաքանչյուր տեսակ, ունի իր կառուցվածքը, որը ներառում է նպատակ, դրդապատճառ, իրականացման միջոցներ, գործողության պլանավորում և գործողության արդյունք: Խաղի կառուցվածքում որպես կարևոր միավոր դիտվում է խաղային դերը, որը մեծահասակի գործողությունների

վերարտադրումն է: Խաղի մեջ գործում են երկու տիպի փոխհարաբերություններ՝ **խաղային** և **իրական**:

Դերային կամ խաղային հարաբերությունները պարտադրվում են ըստ դերի.

Իրական հարաբերությունները երեխաների առօրյա կյանքում միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների արտացոլումն է, այս երկու փոխհարաբերությունները կապված են միմյանց հետ, և դրանով է պայմանավորված խաղային գործունեության արդյունավետությունը:

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝

1. **Ստեղծագործական**, որոնք ընդգրկում են սյուժետադերային խաղեր և խաղ-բեմականացումներ.

2. **Կանոնավոր** խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճալիքները.

Սյուժետադերային խաղերն առաջին հերթին արտացոլում են շրջակա միջավայրը, մարդկանց վարքը և գործունեության տարբեր ոլորտները: Այս խաղերն ազատ և ինքնաբուխ են: Դրանք նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական զբաղմունքն են: Խաղի ընթացքում մասնակիցների շփման, հաղորդակցման, համատեղ ակտիվության դրսևորման պրոցեսում համագործակցության մեջ են մտնում երեխայի իրական և դերային հարաբերությունները: Սրանք փոխադարձաբար նպաստում են խաղի արդյունավետությանը և երեխայի ներուժի բացահայտմանը:

Խաղ-բեմականացումները սյուժետադերային խաղերի տարատեսակներից են: Ունեն սյուժե, բովանդակություն, դերեր, որոնց կատարումը պահանջում է մեծ ջանքեր: Երեխան այստեղ խաղում է ոչ թե իր համար, այլ հանդիսատեսի:

Գրականության մեջ դրանք անվանում են նաև խաղ-բեմականացումներ: Այստեղ պետք է հարազատ մնալ տեքստին, իսկ խաղի բովանդակությունը վերցվում է հիմնականում գեղարվեստական ստեղծագործություններից:

Կանոնավոր խաղերն ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք: Դրանց թվին են պատկանում **դիդակտիկ խաղերը**, որոնք ունեն ուսուցողական բնույթ:

Թերևս բոլոր խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Խաղային խնդիրների լուծմամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտքի և մարմնի ճկունությունը, հնարամտությունը, սրամտությունը, համբերատարությունը, հանդուրժողա-

կանությունը և այլն:Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մեծ դերակատարում ունի կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում նորույթ չէ: Խաղի մեթոդաբանական հիմքերի, սոցիալական բնույթի և սովորողի զարգացման գործում դրա ունեցած դերի ու այլ հարցերի մշակմամբ ժամանակակից մանկավարժության մեջ զբաղվել են Լ. Վիգոտսկին, Ա.Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկոնինը և այլք:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունն առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղը երեխայի համար կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում: Ըստ հոգեբանների՝ այդ տարիքն է առանձնանում որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան, և զարգացման հենց այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը, ուսուցման հետ զուգահեռ, շարունակում է մնալ խաղը: Այդ տարիքում խաղն անձի ձևավորման կարևորագույն միջոց և գործոն է: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտների ակտիվացմանը՝ և՛ մարմնաշարժողական, և՛ իմացական առումներով: Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Խաղի մուտքը կենդանի մանկավարժական գործընթացներ դասարանում ստեղծում է նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա խաղի շնորհիվ դրանք աստիճանաբար անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը՝ աննկատելիորեն ընդգրկվելով ակտիվ ուսուցման մեջ: Խաղը հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց, գործառույթները³:

3 Արաքսյա Հովհաննիսյան

«Երեխան ապրում է խաղով»-«Միտիթար Սեբաստացի» կրթահամալիր, Հարավային դպրոց-պարտեզ-դասվար (կրթահամալիրի կայք)

Գլուխ 2 ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Սոցիալ - մշակութային նշանակությունը՝. Սա երեխայի խաղի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է; Այն իր մեջ ներառում է սոցիալ - վերահսկող գործընթացներ: Խաղի սոցիալ-մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի յուրացման, անձի ձևավորման ու դաստիարակման միջոց և թույլ տալիս նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ: Խաղի սոցիալ - մշակութային բնույթն այն դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:

Խաղի ինքնիրացման գործառույթը՝. Սա խաղի հիմնական գործառույթներից մեկն է: Խաղը կարևոր է որպես անձի ինքնիրացման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործընթացը և ոչ թե դրա արդյունքը, մրցակցությունը կամ որևէ նպատակի հասնելը:

Հաղորդակցական գործառույթը՝. Սա խաղի հաղորդակցական գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն մարդուն ներգրավում է իրական մարդկային բարդ հարաբերությունների համակարգի մեջ:

Խաղի ախտորոշիչ գործառույթը՝. Խաղն ավելի ախտորոշիչ է, քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ «ինքնարտահայտման միջոց է», որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը:

Խաղի թերապևտիկ գործառույթը՝. Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Բ. Էլկոնինը գրել է, որ խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնց մեջ երեխան մտնում է դերային խաղում:

Խաղի շտկողական գործառույթը՝. Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնականոն ձևով. եթե բոլոր մասնակիցները յուրացրել են խաղի կանոններն ու սյուժեն, և յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր, այլև խաղընկերների դերերը, ապա խաղի ընթացքը և նպատակը նրանց համախմբում է: Շտկողական խաղերը կարող են օգնել շեղված

վարքով աշակերտներին՝ հաղթահարելու այն ապրումները, որոնք խոչընդոտում են նրանց ներդաշնակ ինքնազգացողության կայացմանը և շփմանը հասակակիցների միջավայրում:

Խաղի զվարճացնող գործառույթը՝ Զվարճանքի ապրումը ծնվում է սովորականից տարբերվող, անկեղծ ուրախության շեշտադրումներով զանազանվող իրավիճակներում: Եվ դրան ինքնաբերաբար ձգտում են բոլորը: Խաղի զվարճացնող գործառույթն առնչվում է որոշակի հարմարավետության ու հաճելի միջավայրի ստեղծմանը: Խաղի զվարճանքը որոնումն է: Խաղը մոզական ուժ ունի: Այն բնորոշակ է սնել երևակայությունը:

Այսպիսով, խաղը հսկայական դերակատարում ունի մանկավարժական գործընթացում: Այն նպատակային և ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է հասնել բարձր արդյունքների: Խաղային տեխնոլոգիաները հիմք են թատերական մանկավարժության համար: Դերերով խաղերը թատերական մանկավարժության նախատարրերն են, իսկ սոցիալ-խաղային տեխնոլոգիայի համար խաղային տեխնոլոգիան անփոխարինելի է: Սկզբնական կրթության մանկավարժական գործընթացը խաղային տեխնոլոգիաներով կազմակերպելու դեպքում նախադրյալներ են ստեղծվում անցնելու թատերական մանկավարժության տեխնոլոգիան և սոցիալ-խաղային ոճի ուսուցման իրականացմանը: Երեխան ուսուցման սկզբնական փուլից ի վեր պետք է պատրաստ լինի ակտիվ գործունեության ու շարժման: Նա վարժվելու է նպատակային խաղի կազմակերպմանը, խաղի միջոցով սովորելու հնարներին, որպեսզի նույն հաջողությամբ մասնակցի թատերական մանկավարժության տեխնոլոգիաներով կազմակերպված դասերին: Ըստ էության, առավել նպատակահարմար և արդյունավետ է ուսուցման խնդիրների իրականացումը խաղի միջոցով: Խաղը մասնագիտական, բնտանեկան կյանքի և մարդկային ներդաշնակ հարաբերությունների ձևավորման դպրոց է: Մական սովորական դպրոցից դրա հիմնական տարբերությունն այն է, որ խաղի բնթացքում և խաղի միջոցով սովորելով՝ աշակերտը չի էլ կարծում, թե ինչ- որ բան է սովորում:

Խաղի կիրառումն ուսուցման գործընթացում հնարավորություն է բնձեռում ուսուցչի աշխատանքն առավել բազմազան ու ճկուն դարձնել:

«Խաղային մանկավարժական տեխնոլոգիաներ» հասկացությունը ներառում է բավականին բնորոշակ մեթոդների և հնարների խումբ: Մանկավարժական խաղը, ի տարբերություն այլ տեսակների, ունի էական հատկանիշներ: Դրանցից են նպատակը և ակնկալվող մանկավարժական արդյունքը:

«Խաղային տեխնոլոգիա» ասելով պետք է հասկանալ խաղի իրականացման ընթացքը: Խաղային տեխնոլոգիայի կառուցվածքի մեջ են մտնում նպատակադրումը, պլանավորումը, նպատակների իրականացումը, արդյունքների վերլուծությունը: Խաղի ընթացքում անձն իրեն իրացնում է լիարժեքորեն: Խաղային տեխնոլոգիան ներառում է դերեր, որոնք պետք է կատարեն խաղացողները, խաղային գործողություններ, որպես դերերի կատարման միջոցներ,

առարկաների խաղային, պայմանական օգտագործումը, խաղացողների միջև իրական հարաբերությունների ստեղծումը, այուժե, բովանդակություն՝ այն իրականությունը, որը պայմանականորեն վերարտադրվում է խաղի մեջ:

Խաղային տեխնոլոգիաների նշանակությունը դժվար է թերագնահատել: Այն համարվում է զվարճանքի, հանգստի, ուսուցման, ստեղծագործության, թերապիայի հզոր միջոց: Ժամանակակից կրտսեր դպրոցում խաղը կիրառվում է որպես ինքնուրույն տեխնոլոգիա՝ թեման, բաժինը ուսումնասիրելու և յուրացնելու նպատակով, որպես դասի առանձին տարր, արտաուսումնական պարապմունքի ձև և այլն: Պարապմունքների խաղային ձևն ստեղծվում է խաղային եղանակների և իրավիճակների օգնությամբ: Այն ուսումնական գործունեությունը խթանող միջոց է:

Այսպիսով, խաղը ժամանակակից կրտսեր դպրոցի ուսուցման և դաստիարակության գործընթացը կատարելագործելու և բարելավելու հզոր գործիք է: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը կրթության սկզբնական հատվածում առավել արժևորվել է հատկապես վերջին շրջանում, երբ դպրոց մուտք գործեցին 5,8 - 6 տարեկան երեխաները, որոնք իրենց մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով կարիք են զգում նման տեխնոլոգիաների ներդրման: Այն համապատասխանում է նրանց հետաքրքրություններին: Այդ կերպ ստեղծվում են ուսման դրական դրդապատճառներ և նպաստավոր մթնոլորտ: Խաղային տեխնոլոգիաները լայն տարածում են գտել ժամանակակից դպրոցում, և դրանք տալիս են գոհացուցիչ արդյունքներ¹:

1. Ն. Աթանյան

***«Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական զարգացման գործում»-----
-----Նախաշավիղ 3.2010 թվ, էջ 67***

Բազմաթիվ խաղերից կարելի է առանձնացնել մաթեմատիկական **դիդակտիկ խաղերը**, որոնք նպաստում են երեխաների մտավոր կարողությունների զարգացմանը: Երեխան այս

դեպքում ավելի ազատ ու անկաշկանդ է զգում, իրեն թվում է, թե խաղում է, բայց խաղալով ավելի հեշտությամբ է յուրացնում դասանյութը: Նախքան խաղը կազմակերպելը պետք է մանրամասն բացատրվեն խաղի նպատակը, ընթացքը և կանոնները: Խաղի ընթացքում խաղավարը պետք է հետևի խաղի կանոնների պահպանմանը:

Ներկայացնենք մի քանի դիդակտիկ խաղեր, որոնք կարող են անցկացվել առաջին դասարանում:

Ուսուցիչը անհրաժեշտության դեպքում կարող է խաղի կանոնների և բովանդակության մեջ փոփոխություն մտցնել՝ հանդես բերելով ստեղծագործական մոտեցում:

1. Խաղի նպատակները՝ . - Ամրապնդել աշակերտների պատկերացումները նախորդ և հաջորդ թվերի մասին, կենտրոնացնել ուշադրությունը, ձևավորել արագ մտածելու կարողություն:


Անհրաժեշտ պարագաները՝ . - Գնդակ.

Ընթացքը՝ . - Աշակերտները շրջան են կազմում: Խաղավարը կանգնում է կենտրոնում, ասում է որևէ թիվ և գնդակը նետում աշակերտներից մեկին: Գնդակը բռնող աշակերտը պետք է ասի այդ թվի հաջորդ կամ նախորդ թիվը, ինչպես պահանջվում է և գնդակը վերադարձնի խաղավարին: Այսպես խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև մեկը ճանաչվում է հաղթող:

2. Խաղի նպատակները՝ . - Ամրապնդել երկրաչափական պատկերների ճանաչումը, զարգացնել տեսողական հիշողությունը, դիտողականությունը:

Անհրաժեշտ պարագաները՝ . - Երկրաչափական պատկերների հավաքածու, հավաքապաստառ կամ մագնիսական գրատախտակ:

Ընթացքը՝ . - Խաղավարը ցուցադրական հավաքապաստառին կամ մագնիսական գրատախտակին ամրացնում է տարբեր երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, և առաջարկում 1-2 բույն ուշադիր դիտել: Մի քանի աշակերտի դուրս է հրավիրում դասասենյակից և այդ ընթացքում պատկերներից մեկը թաքցնում: Աշակերտները վերադառնալով պետք է որոշեն, թե որ պատկերն է պահված: Շահում է ճիշտ պատասխանողը:




3.Խաղի նպատակները`. - Ամրապնդել սովորած երկրաչափական պատկերների ճանաչողությունը, զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, գեղագիտական ճաշակը:

Անհրաժեշտ պարագաները`. - Տարբեր չափի և գույնի երկրաչափական պատկերներ, ապլիկացիոն աշխատանքներ:

Ընթացքը`. - Խաղավարը ցույց է տալիս մի քանի ապլիկացիոն աշխատանքներ, որոնք կազմված են տարբեր երկրաչափական պատկերներից: Աշակերտների միջոցով պարզաբանվում է, թե դրանցից յուրաքանչյուրը ինչ երկրաչափական պատկերներից է կազմված:

Աշակերտներին բաժանվում են տարբեր գույնի, չափի, քանակի երկրաչափական պատկերներ, և պահանջվում է նրանցով ստանալ նոր պատկերներ` կենդանիներ, թռչուններ, ձնեմարդ, նավակ և այլն:

Ավարտված աշխատանքները ցուցադրվում են հավաքապաստառի վրա, քննարկվում, թե յուրաքանչյուր աշխատանքում ինչ երկրաչափական պատկերներ են օգտագործված, քանի հատ, ինչ գույնի և ինչ չափի, որ աշխատանքն է ավելի գեղեցիկ:



4.Խաղի նպատակները`. - Ով ճիշտ կանցնի փողոցը, ծանոթացնել երթևեկության կանոններին, զարգացնել տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելու ունակությունը, ուշադրությունը, էքսպրեսիվ խոսքի զարգացումը: Խաղավարներ` ուսուցիչ, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, դաստիարակ:

Նկարագիրը` պաստառի վրա պատկերված է փողոց, լուսակիր, շարժական ավտոմեքենաներ և հետիոտներ: Երեխան ինքն է ընտրում իր դերը:

Ընթացքը` խաղավարը լուսակրի գույները փոփոխելով`տալիս է հրահանգներ .



-Ուշադրություն`ն վառվում է դեղին լույսը. /հետիոտներն ու ավտոմեքենաները զգուշանում են/

-Ուշադրություն`ն վառվում է կարմիր լույսը. /հետիոտներն անցնում են փողոցը/

-Ուշադրություն`ն վառվում է կանաչ լույսը. /ավտոմեքենաները շարժվում են/

Խաղավար կարող է հանդիսանալ նաև երեխաներից որևէ մեկը:

Խրախուսվում է այն երեխան, ով ճիշտ է օգտվում երթևեկության կանոններից:



5.Խաղի նպատակները`. Գտիր համապատասխան բառը, նախադասություն կազմելու կարողության զարգացում:

Ընթացքը` Ուսուցիչը երեխաներին ցույց է տալիս նկարներ: Նկարների տակ տպագրված են կարճ նախադասություններ, որոնցում բացակայում են մեկ կամ երկու բառ:



Երեխաները նայելով նկարին պետք է գտնեն բաց թողնված բառը կամ բառերը: Օրինակ` նկար, որտեղ աղջիկը գնդակ է խաղում: Նկարի տակ գրված է`----- խաղում է:

Խաղը զարգացնում է նաև ակնառու-պատկերավոր մտածողությունը, տեսողական ընկալումը:

6. Խաղի նպատակները- Փորձիր մեկնաբանել, նախադասություն կազմելու կարողության զարգացում, կապակցված խոսքի ձևավորում:

Ընթացքը` Ուսուցիչը երեխաներին ցուցադրում է պարզ սյուժետային նկարներ և այդ նկարների հիման վրա տալիս է հարցադրումներ, ըստ որոնց երեխաները կազմում են

նախադասություններ: Օրինակ՝ նկար, որտեղ պատկերված է մուկ և կատու: Ուսուցիչը երեխաներին տալիս է հետևյալ հարցերը:

- Ի՞նչ է սա: (մուկ)
- Ի՞նչ է սա: (կատու)
- Ի՞նչ է անում կատուն:



- Ի՞նչ է անում մուկը :
- Ի՞նչ կլինի:

Փոքրիկ պատմություններ կազմելու համար կարելի է օգտագործել սյուժետային նկարների շարք, որոնք իրար հետ միանում են պատճառահետևանքային կապով և ընդհանուր կազմում են մեկ սյուժե: Երեխաները պետք է նայեն նկարներին և հաջորդաբար դասավորեն դրանք այնպես որ, պահպանվի սյուժեի պատճառահետևանքային հաջորդականությունը: Որից հետո երեխաները մեկնաբանում են նկարները՝ ստանալով փոքրիկ պատմվածք: Եթե երեխաները դժվարանում են, ուսուցիչը օգնում է հարցերի միջոցով: Խաղը զարգացնում է նաև ակնառու-պատկերավոր մտածողությունը, տեսողական ընկալումը:

Խաղը կարող է կիրառվել դասի տարբեր փուլերում, տնային աշխատանքի ստուգման, դասի ամփոփման ժամանակ: Դասի որոշակի փուլում իրագործվող խաղային իրավիճակը խթանում է յուրաքանչյուր երեխայի ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը, տալիս է հնարավորություն քննարկումների մասնակցության, որը թույլ է տալիս նույնիսկ ամենաթույլ աշակերտին հասկանալ և յուրացնել նոր նյութը, սովորեցնել այն գործնականում կիրառել: Տարբեր խաղեր կիրառելով կարելի է բազմակի անգամ կրկնել նույն ուսումնական նյութն առանց միօրինակության և ձանձրույթի:

Որպեսզի գրաճանաչության ուսուցման ընթացքում խաղն իսկապես դառնա ուսուցման մեթոդ, այն պետք է անցկացնել հաճախակի և նպատակամետ: Չպետք է մոռանալ այն մասին, որ ուսումնական գործունեության կարևոր չափանիշ է ուսումնա- ճանաչողական դրդապատճառը⁴:

4.Ս.Սարգսյան ԿԲԿ մասնագետ «Մաթեմատիկական դիդակտիկ խաղ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԼՈՂՈՒ ՄԱՄԼԱՃՅՈՒՂ

ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄԵՆՐՈՎ... (Մեթոդական օգնություն դասվարին)

2005թվ.էջ115

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով և ուսումնասիրելով, թե ինչ է մանկավարժական և առարկայական գիտելիքները, ես հանգեցի այն եզրակացությանը, որ խաղը որպես ուսուցման հիմնական միջոց ուսումնադաստիարակչական պրոցեսում հանդիսանում է այն հզոր զենքը, որին հստակ տիրապետող մանկավարժը կարողանում է ցանկացած ժամանակ, ցանկացած իրավիճակում իր խոսքը կառուցել այնպիսին, որ լսողի մոտ հստակ տպավորվի նրա ասելիքը:

Մանկավարժությունը, լինելով գիտություն երեխաների ու մեծահասակների դաստիարակության, ուսուցման և կրթության մասին, կարող է հաջողությամբ զարգանալ, եթե կա փոխադարձ հարգանք, վստահություն և հոգատարություն: Այդ ամենի համար անհրաժեշտ է, որ հաղորդակցումը կառուցված լինի բարի դրացիական հարաբերությունների հիման վրա: Իսկ որպեսզի մանկավարժի հաղորդակցման կարողությունները զարգանան լավ, մանկավարժները և հոգեբանները խորհուրդ են տալիս հետևյալը.

.Մանկավարժի անկեղծությունն ու բնականությունը հաջող փոխհարաբերությունների կառուցման գրավականն են:

.Մանկավարժի հարաբերությունները պետք է կառուցվեն սուբյեկտների փոխադարձ հարգանքի վրա:

.Նպաստի աշակերտի խոսքային գործունեության ավելացմանը:

.Նույնիսկ աշակերտի չնչին հաջողությունների ժամանակ խրախուսի նրանց: Խրախուսել պետք է այլոց ներկայությամբ, իսկ խրատել՝ առանձին:

.Դրսևորի զարգացած դիտողականություն, երևակայություն, հուզական վիճակները հասկանալու և վարքագիծը վերլուծելու կարողություններ:

.Մանկավարժը պետք գիտակցի, որ դպրոցը հասարակության մի մասն է, իսկ մանկավարժի վերաբերմունքը երեխաների նկատմամբ՝ հասարակական պահանջը: Ուսուցիչը չպետք է բացահայտ մանկավարժական դիրք ընդունի և կատարի միայն մասնագիտական պարտականություններ: Երեխաները պետք զգան և տեսնեն նրա խոսքի և գործի մեջ համապատասխանությունը, որոնցում պետք է արտացոլվեն ուսուցչի անձնական համոզմունքները:

Եթե դասարանը համեմատենք նավի հետ, նավապետը այս դեպքում ուսուցիչն է, որի խոսքը ինչպես ասել է Միշել դե Մոնտեն, եթե կառուցվում է աղմուկով, ցույց է տրվում, թե ինչքան թույլ է իր արտահայտած միտքը: Ուստի և ուսուցիչը պետք է ամեն բոլոր, ամեն վայրկյան գիտակցի, որ իր արտահայտած յուրաքանչյուր միտք պետք է լավ կշռադատված լինի, քանի որ այստեղ երեխաներն են՝ իրենց հատուկ բնորոշ հոգեբանությամբ:

Գրականություն

1.Ն. Աթանյան

«Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական զարգացման գործում»-----Նախաշավիղ 3.2010 թվ, էջ 67

2. Փառանձեմ Գրիգորյան

«Երեխան ապրում է խաղով»-«Մխիթար Սեբաստացի»կրթահամալիր, Արևմտյան դպրոց-պարտեզ, երկարացված օրվա կազմակերպիչ (կրթահամալիրի կայք)

3. Արաքսյա Հովհաննիսյան

«Երեխան ապրում է խաղով»-«Մխիթար Սեբաստացի»կրթահամալիր, Հարավային դպրոց-պարտեզ-դասվար (կրթահամալիրի կայք)

4.Ս.Սարգսյան ԿԲԿ մասնագետ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԼՈՌՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՆՈՐ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐՈՎ... (Մեթոդական օգնություն դասվարին) -----2005թվ. 115էջ

«Մաթեմատիկական դիդակտիկ խաղեր»

5.Ս.Սարուխանյան և ուրիշներ

«Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ»-----Վանաձոր 2008թվ.81էջ

6.Ա.Վերդյան

«Խաղը՝ որպես երեխաների առաջատար գործունեություն»-----Նախաշավիղ 3.2010 թվ, 47էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՆՆԱ ՍԵՐՅՈՒՄՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Թեմա

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Ս.Գ.Թ. ՄԻՐԱԲՅԱՆ Լ.

ՎԱՆԱԶՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1	5
<i>1.1/Քննադատական մտածողության տեխնոլոգիան</i>	<i>5</i>
1.2/Քննադատական մտածողության բնութագրիչները	6
1.3/ Քննադատական մտածողության ձևավորման փուլերը	7
1.4/Քննադատական մտածողության մեթոդների կիրառումը մայրենիի դասերին	9
Գլուխ 2	11
Փորձարարական մաս	11
Հետազոտական աշխատանք	14
Եզրակացություն	18
Գրականության ցանկ	19
Հավելված	

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է կրթել և դաստիարակել այնպիսի անհատներ, որոնք լինեն քննադատաբար մտածող, կարողանան կողմնորոշվել ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնեն սեփական կարծիքը, վստահաբար ստանձնեն որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:

Քննադատորեն մտածող մարդն ազատ ու անկաշկանդ արտահայտում է իր տեսակետը, մտքերը: Նա մտածում է ինքնուրույն ու ազատ: Ժամանակակից աշխարհում տեղեկատվության սրընթաց ներհոսքի պայմաններում գլխավոր առանցքային հարց է ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև այն արժեևորելը և կյանքում կիրառելը: Այսօրվա դպրոցի առաքելությունն է ինքնուրույն, քննադատաբար մտածող սերնդի ձևավորումը:

Երբ մարդն առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, տալիս է միակողմանի գնահատական, չի վերլուծում, կրկնում է ուրիշի տեսակետը, սա դառնում է գերխնդիր հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ուստի ուսուցչի առաքելությունը դեռևս կրտսեր դպրոցական տարիքից երեխաներին սովորեցնելն է ինֆորմացիան վերախմաստավորել, գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրել: Ուսուցիչը պիտի ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստի աշակերտի մտածողության զարգացմանը: Սովորողը պիտի չխուսափի սեփական տեսակետն արտահայտելուց: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտներն աստիճանաբար սովորում են գնահատել իրենց իսկ գործունեությունը: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Արդի փուլում գործող մասնագետների համար կարևոր է ակտիվացնել ուսումնական գործընթացը, առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար՝ ապահովելով աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը:

Հետազոտության նպատակն է՝

1. Ուսումնասիրել՝ ուսուցիչները տիրապետում են արդյոք քննադատական մտածողության հմտություններին, կարողություններին, կարողանում են զուգակցել քննադատական մտածողության տեխնոլոգիան ու մեթոդները:

2. Ուսումնասիրել թեմային վերաբերող առկա գիտական, գիտամեթոդական աղբյուրները՝ պարզելու հետազոտվող նյութի դրվածքը:

Աշխատանքի խնդիրներն են.

ա/բացահայտել գիտելիքը վերլուծելու, սինթեզելու, համադրելու, գնահատելու և արժևորելու կարողությունների ձևավորումը կրտսեր դպրոցում

բ/նկարագրել մայրենիի դասերին քննադատական մտածողության զարգացման ,ձևավորման փուլերը

գ/հրականացնել և վերլուծել քննադատական մտածողության մեթոդների կիրառման փորձարարական դասեր:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 2 գլխից՝ առաջին գլուխը բաղկացած է 4 ենթագլխից, երկրորդ գլուխը՝ 2 ենթագլխից, հետազոտական մասից և եզրակացությունից:

Գլուխ 1

1.1/Քննադատական մտածողության տեխնոլոգիան

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող ինֆորմացիայի ճշմարտացիությունը, սեփական հայացքներն ու համոզմունքները: Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, եզրակացություն անելու կարողություններ և հմտություններ, ինչպես նաև դիտողականություն: Քննադատական մտածողությունը չպետք է նույնացնել քննադատության հետ, որի արդյունքում քննադատական մտածողությունը կարող ենք դիտել որպես բացասական երևույթ: Քննադատական մտածողության դրսևորումներ են պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները:

Քննադատական մտածողությունը նոր մանկավարժական մոտեցում է: Հին ժամանակներում ուսուցիչը մատուցում էր պատրաստի գիտելիք, իսկ այժմ նա հաղորդողից վերածվել է սովորդի ուսումնական աշխատանքը կազմակերպողի: Քննադատական մտածողության շնորհիվ աշակերտը ձևավորվում է որպես հասարակության գործող անդամ, ով ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, ինքնուրույն դիրքորոշում մշակելու, իր որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այսպիսով եկանք այն եզրահանգման, որ քննադատական մտածողության արմատները գցվել են դեռ վաղ անցյալում, այն զարգացում է ապրել և ստացել իր այսօրվա կերպարանքը: Քննադատական մտածողությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է մի շարք կարողություններ, հմտություններ, և որի շնորհիվ մարդը ձեռք է բերում ինքնուրույնություն, զարգանում է տրամաբանությունը, ձևավորվում է անհատի տարբերվող աշխարհայացքը:

1.2/Քննադատական մտածողության բնութագրիչները

1. Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Սա նշանակում է, որ այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուր սովորողի ձևավորել իր սեփական գաղափարները: Դասարանում պիտի ստեղծել ազատ մթնոլորտ, որպեսզի երեխաները կարողանան մտածել ու ինքնուրույն գտնել հարցերի լուծումները:
2. Գիտելիքը քննադատական մտածողության խթանն է: Քննադատական մտածողությունն օգնում է աշակերտներին ընկալելու ամենաբարդ հասկացություններ և մտապահելու շատ ու շատ տեղեկություններ:
3. Քննադատական մտածողությունն սկսվում է հարցադրումներից: Կարևոր են տարամետ հարցերը, որոնք նպաստում են քննարկումների ծավալմանը և դրանով իսկ նպաստում քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը:
4. Կրտսեր դպրոցականները շատ հետաքրքրասեր են, նրանք ուզում են իմանալ ամեն ինչ: Ուսուցչի խնդիրը աշակերտներին օգնելն է, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ձևակերպումներ անել, որից հետո միանգամից հարցի պատասխանը չտալ, այլ երեխան ինքը գա դրան: Այսինքն նյութն այնքան պիտի մանրացնել, որ սովորողը, հենվելով իր ունեցած գիտելիքների վրա, կարողանա կատարել եզրահանգումներ ու գտնել լուծումը:
5. Քննադատական մտածողությունն ունի հասարակական ուղղվածություն:

1. 3/ Քննադատական մտածողության ձևավորման փուլերը

Ուսուցիչը որպեսզի կարողանա զարգացնել երեխաների մոտ քննադատական մտածողություն նախ պիտի՝

- խմբում աշխատելու կարողություն զարգացնել
- զարգացնել համագործակցելու հմտություններ
- զարգացնել անձնական նախաձեռնություն ցուցաբերելու ունակություններ
- զարգացնել միջառարկայական կապերի ձևավորման կարողություններ
- ձևավորել գիտելիքը ստեղծագործաբար իմաստավորելու, ըստ կարևորության ինֆորմացիան համակարգելու հմտություններ

Սովորողը պետք է ունենա նաև ազնվություն, այսինքն չպիտի հուզականորեն կողմնորոշվի որևէ իրավիճակի նկատմամբ: Հակառակ դեպքում նա զբաղվում է ինքնախաբեությամբ: Իհարկե սա բարդ աշխատանք է, քանի որ մենք գործ ունենք կրտսեր դպրոցականի հետ /կրտսեր դպրոցականը չի կարող երևույթին տալ օբյեկտիվ գնահատական, կարճ ասած նա ամեն իրավիճակ սրտին մոտ է ընդունում/:

Աշակերտի քննադատական մտքի ձևավորումը կախված է նրա ընդունակություններից, հետաքրքրություններից, կարևոր են նաև ուսումնական նյութի բովանդակությունը, կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները:

Եկանք այն եզրակացության ,որ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը: Մրա հիմքերը դրվում են կրտսեր դպրոցական տարիքում: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում գրական ունկնդրման ժամերին աշակերտները սովորում են ինքնուրույն կարդալ տեքստը, դիտել նկարազարդումները՝ կանխագուշակելով թեմայի բովանդակությունը: Ընթեցանության թեմաների ընտրությունը պիտի ներառի հետևյալ պայմանները:

1. Բնագիրը լինի կարճ, հետաքրքիր

2. Գիրքը լինի նկարազարդումով

Ընթերցանությունից հետո ուսուցիչը պիտի օգնի աշակերտին խորհել կարդացածի մասին:

Խորհելիս մենք դիմում ենք հետևյալ բայերի օգնությանը՝

տարբերակել, պարզաբանել, դասակարգել, միավորել, ստեղծել, ենթադրել, գնահատել, առաջարկել, կանխատեսել: Ճիշտ է կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները դեռ թույլ չի տալիս այս բարդ գործընթացը կազմակերպել, դրա համար ուսուցիչը պիտի աշխատի ավելի պարզ սխեմայով.

նկարագրել- ի՞նչ, ո՞վ, որտե՞ղ
վերլուծել- ինչի՞, ինչպե՞ս, ի՞նչ կլինի
գնահատել-ինչի՞ համար

Առաջին փուլում ցուցաբերում ենք գիտելիքահեն մոտեցում, երկրորդում կատարվում է համեմատում, վերլուծում, իսկ վերջին փուլում կայացվում են որոշումներ:

1.4/Քննադատական մտածողության մեթոդների կիրառումը մայրենիի դասերին

Քննադատական մտածողությունը զարգացման երեք փուլերից բաղկացած համակարգ է, այն կներկայացնենք ԽԻԿ հապավումով:

Խթանման փուլի նպատակն է խթանել երեխաների հետաքրքրությունը, առաջացնել ցանկություն նորը ուսումնասիրելու: Կարող ենք կիրառել «Մտազրոհ», «Բանալի եզրույթներ» մեթոդները: Այս փուլում ուսուցիչը հանդես է գալիս ուղղորդողի դերում: Այս փուլում սովորողները լրացնում են իրենց իմացածը մյուսների գիտելիքներով, գիտելիքը դառնում է հաստատուն: Այս փուլի նպատակն է նաև աշակերտին ակտիվացնել: Ակտիվացնելով աշակերտներին նրա մոտ առաջանում է հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ, որից էլ կախված է այս փուլի արդյունավետությունը:

Իմաստի ընկալման փուլ- Ուսուցչի ազդեցությունը նվազագույնն է սովորողի նկատմամբ: Սովորողները շփման մեջ են մտնում նոր ինֆորմացիայի, մտքերի հետ: Կարելի է կիրառել «Փոխգործուն գրառումներ» մեթոդը տեքստի ընթերցանության ժամանակ: Եթե առաջնորդվենք միայն ավանդական ուսուցման մեթոդներով, աշակերտը քիչ քան կհիշի անցածից: Այս փուլում սովորողները նորը կապում են հնի հետ և ստեղծում նոր իմաստավորում:

Կշռադատման փուլ- գիտելիքների ամրապնդման փուլն է: Այս փուլի նպատակն է՝

- կազմավորել նոր պատկերացումներ
- ձևավորել անձնական իմաստավորում (սովորողը յուրացրածն արտահայտում է սեփական բառերով)
- մտքերի փոխանակման հարթակ ստեղծել:

Կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝

գույգերով ընթերցում

հնգյակների մեթոդ

5 բոլանոց շարադրանք

Վեննի դիագրամ

Եզրակացություն- ԽԻԿ համակարգը հնարավորություն է տալիս՝

- ակտիվացնել երեխաների մտածողությունը
- հետաքրքիր քննարկումներ ծավալել
- բարձրացնել ուսման շարժառիթները
- խթանել կշռադատված մտածողությունը
- նպաստել երեխաների ինքնաարտահայտմանը
- ապահովել տեղեկատվության հայտնման մշակումը
- նպաստել քննադատական մտածողության ձևավորմանը:

Աշակերտները նոր գիտելիքները նոր բառապաշարի միջոցով ըմբռնելու, յուրացնելու, իմաստավորելու և կշռադատելու շնորհիվ է, որ սովորում են սովորել և այն վերածել ամբողջ կյանքում շարունակվող գործընթացի:

Գլուխ 2

Փորձարարական մաս

Փորձարարական մասում ներկայացնում ենք դասապլան, որտեղ արտացոլել ենք մեր փորձից մեկ օրինակ: Կներկայացնենք քննադատական մտածողության զարգացմանը միտված դաս:

Մի դասի օրինակով կուսումնասիրենք քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան: Դասը վարում ենք III դասարանում:

Դասապլան

Թեմա-Հարստություն (Ս. Կապուտիկյան)

Դասի տիպը- Նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը

I մակարդակ

1) Կհասկանան տեքստի բովանդակության վերաբերյալ տրվող հարցերը՝ ձևակերպելով տեքստից բխող պատասխանները:

2) Սեփական բառերով կվերարտադրեն բանաստեղծության բովանդակությունը:

II մակարդակ

1) Զույգերով ընթերցանության ժամանակ տեքստը կընթերցեն սահուն, զրական շեշտի և առոգանության պահպանմամբ:

2) Համապատասխան մեկնաբանությունով կվերարտադրեն տեքստի յուրաքանչյուր քառատողի բովանդակությունը:

III մակարդակ

1) Կմասնակցեն տեքստի բովանդակության վերլուծությանը:

2) Տեքստից կառանձնացնեն գրքի հզոր ուժը պատկերող բառերն ու արտահայտությունները:

3) Պատմվածք, բանաստեղծություն հորինելու փորձեր կկատարեն

Դասի ընթացքը- Խթանում -կիրառում ենք «Նախնական կազմակերպիչ» մեթոդական հնարը:


Հարց- Ի՞նչ գիտենք Ս. Կապուտիկյանի մասին, ո՞ր ստեղծագործություններին ենք ծանոթ (աշակերտները վեր են հիշում ստեղծագործությունը, հերոսներին):

Ուսուցիչն այս ամենը ի մի է բերում և ընդգծում, որ ընթերցելու են մի բանաստեղծություն, որի միջոցով կբացահայտեն Կապուտիկյան մարդուն:

Իմաստի ընկալում

Բանաստեղծության բովանդակության կանխագուշակում:

Կիրառում են «Մտագրոհ» մեթոդական հնարը:



Աշակերտների արտահայտած մտքերից հետո, ուսուցիչը նշում է, որ բանաստեղծությունը կարդալուց հետո կտեսնեն, թե ինչ է հարստությունը՝ ըստ հեղինակի:

Տեքստի լուր ընթերցում:

Առաջադրվում են հարցեր

- Ի՞նչ հասկացանք
- Ինչո՞վ համընկան ձեր ենթադրությունները

Կիրառում ենք «Զրույց հեղինակի հետ» հնարը:

- Ի՞նչ է ուզում հեղինակն ասել թեև անտես արտահայտությամբ:
- Ինչու՞ է նա գրքին հույս, ընկեր, կյանք համարում:

Կատարում ենք բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ:

Զրույց

- Ինչի՞ց իմացաք, որ բանաստեղծություն է:
- Ո՞ր քառատողը ձեզ դուր եկավ, ինչու՞ :
- Ինչու՞ է հեղինակը գիրքը համարում հարստություն:

Կատարում ենք ստեղծագործական աշխատանք:

- Բանաստեղծության մեջ ի՞նչը ձեզ հատկապես հետաքրքիր թվաց:

- Ի՞նչ կարծիքի եք, ինչո՞վ է մյուսներից տարբերվում շատ գրքեր կարդացած մարդը:
- Համաձայն եք, որ գիրքն այնպիսի հզոր ուժ ունի, ինչպիսին ներկայացնում է հեղինակը:
- Բացատրել «Ինչքան էլ գիտուն լինես, չիմացածդ անգետից մի՛ հարցրու» առածի իմաստը:

Կշռադատում

Կատարում ենք անդրադարձ տեքստի բովանդակությանը և նկարագարումանը:

- Ստեղծում են հնգյակ կամ արժույթիկոս գիրք բառով :
- Հորինում են հանելուկ:
- Հորինում են պատմություն «Եթե ճամփորդության մեկնեմ աստղանավով, ի՞նչ գիրք կվեցնեմ ինձ հետ» թեմայով:

Հետազոտական աշխատանք

Հետազոտական աշխատանքը իրականացրել ենք եկու տարբերակով՝ առկա և առցանց: Հարցմանը մասնակցել են 30 ուսուցչուհի (դասվար): Առցանց տարբերակն իրականացրել ենք կիրառելով *suizizz* գործիքը, իսկ առկայի ժամանակ կազմել ենք հարցաթերթիկ, որը բաղկացած էր 9 հարցից:

Որպեսզի ուսուցիչը սովորեցնի աշակերտին քննադատաբար մտածել, այդ կարողությանն առաջին հերթին ինքը պիտի տիրապետի: Ուսուցիչների քննադատաբար մտածելու կարողությունը չափվել է հետևյալ հարցերով.

1) Գիտենք, որ մայրիկը նստած է հայրիկի կողքին, կարո՞ղ ենք ասել, որ հայրիկն էլ է նստած մայրիկի կողքին :

ա) այո բ) ոչ գ) հնարավոր է

2) Գիտենք, որ տիեզերքի մասին բոլոր նկարները Նարեկն է նկարել, գիտենք նաև, որ բոլոր վրձինով արված նկարները Նարեկին են պատկանում:

Կարո՞ղ ենք ասել, որ վրձինով արված նկարների գոնե մի մասը տիեզերքի մասին է:

ա) այո, բ) ոչ, գ) հնարավոր է

3) Գիտենք, որ հաստ կազմով բոլոր գրքերը պատկանում են Սոնային, կարո՞ղ ենք ասել, որ Սոնայի բոլոր գրքերը հաստ կազմ ունեն:

ա) այո բ) ոչ գ) հնարավոր է

Ուսուցիչների 70%-ը ճիշտ է պատասխանել բոլոր հարցերին, իսկ 30%-ը սխալվել է վերջին հարցում:

Քննադատական մտածողության հմտությունները չափվել են հետևյալ առաջադրանքներով:

1/Դասավորել քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման քայլերը.

ա) տեսակետների ձևավորում

բ) եզրակացություն

գ) վերամշակում

դ) որոշումների կայացում


2/Ընդգծել այն բայը, որը չի օգտագործվում քննադատական մտածողության մեջ:

- ա) տարբերակել
- բ) դասակարգել
- գ) միավորել
- դ) ոգևորել
- ե) առաջարկել
- զ) կանխատեսել

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսուցիչների 80%-ը տիրապետում է քննադատական մտածողության հմտություններին, իսկ 20%-ի մոտ դրանք ձևավորված չեն:


Ուսուցիչների 65%-ը գտնում է, որ քննադատական մտածողության նպատակը սովորողի երևակայությունը զարգացնելն է, 20%-ը՝ ուսումնական գործընթացի ակտիվացումը, իսկ 15%-ը՝ երևույթի քննադատումը:

Ո՞րն է Բ. Մ. -ն նպատակը:



Ուսուցիչների 40% քննադատական մտածողությունը նույնացնում է ստեղծագործական մտածողության հետ ,35%-ը՝ կրիտիկական, 25%-ը՝


Ո՞ր հասկացությունն է նույնացվում քննադատական մտածողության հետ:



քննադատության հետ:


Դասավարների 95%-ը գտնում է, որ հնարավոր է դասապրոցեսի ընթացքում զուգակցել քննադատական մտածողության տեխնոլոգիաները, իսկ 5%-ը դժվարացել է պատասխանել:

Հնարավոր է զուգակցել դասապրոցեսի ընթացքում Ք. Մ. -ն տեխնոլոգիաները այլ մեթոդների հետ:




Դասավարների 94%-ը գտնում է, որ քննադատական մտածողության հնարների ընտրությունը կախված է ուսումնասիրման նպատակից, իսկ 5 %-ը այդպես չի մտածում:

Ք. Մ. -ն հնարների ընտրությունը կախված է արդյոք ուսումնասիրման նպատակից:




Դասավարները միահամուռ եկան այն եզրակացության, որ քննադատական մտածողության հնարների իրականացման ընթացքում պիտի հաշվի առնել սովորողների զարգացման մակարդակը:

Ք. Մ. -ն հնարների իրականացման ընթացքում ինչը պիտի հաշվի առնել:



Դասվարների 80%-ը գտնում է, որ պատմելու մեթոդը չի նպաստում քննադատական մտածողության զարգացմանը, իսկ 20%-ը մտազրոհն է համարում աննպաստ, 10%-ը՝ հնգյակը, 10%-ը՝ ուղղորդված ընթերցանությունը:

Ո՞ր մեթոդը չի նպաստում Ք. Մ. -ն զարգացմանը:



Մեր ամբողջ հետազոտության տեսանկյունից ամենակարևոր խնդիրներից մեկն այն էր, պարզել, թե ուսուցիչներն ունեն արդյոք քննադատական

մտածողության կարողություն, թե ոչ: Մեզ համար մտահոգիչ է, որ հարցվածների 30%-ը չունի այդ կարողությունը: Դրա համար ուսուցիչներին կոչ ենք անում աշխատել սեփական անձի վրա, ինքնակատարելագործվել, դուրս գալ կադապարային մտածողությունից:

Ամփոփելով աշխատության արդյունքները՝ եկանք այն եզրակացության. որ հետազոտության ընդհանուր արդյունքները գոհացուցիչ էին. ուսուցիչները կարևորում են աշակերտներին քննադատաբար մտածել սովորեցնելը, կարևորում են նաև այն, որ առաջին հերթին սովորեցնողն ինքը պիտի ունենա այդ կարողությունը, հմտությունը, որպեսզի բարելավվի ուսման որակը:

Եզրակացություն

Ուսումնասիրման ժամանակ եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ, հմտություններ ու դիտողականություն:

Չնայած այն հանգամանքին, որ ուսուցիչները կարևորում են քննադատական մտածողությունն իրենց և աշակերտների կյանքում, նրանք հիմնականում չունեն համապատասխան մասնագիտական սեմինար-դասընթացների մասնակցության փորձ և հնարավոր է, որ լավատեղյակ չեն, թե ինչպես պիտի դասավանդել և աշակերտին մատուցել, սովորեցնել քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտություններ: Վերհանելով քննադատական մտածողության վրա ազդեցություն ունեցող դասավանդման տեխնիկաները՝ կարող ենք բարեփոխել ուսումնական պլանները և առարկայական ծրագրերն այնպես, որ կրթությունը ծառայի մեր հիմնական նպատակներից մեկին՝ կրթել քննադատաբար մտածող անձնավորության:

Աշակերտի քննադատական մտածողությունը զարգացնելու լավագույն մեթոդը կլինի այն, որ մշակվեն ծրագրեր՝ հիմքում ունենալով քննադատական մտածողություն ձևավորելու տեսլականը: Այսինքն, գիտելիքի ձեռքբերմանը զուգահեռ աշակերտները պիտի կարողանան մտածել, տրամաբանել և հիմնավորել: Այս առումով անգնահատելի է դասվարի դերը: Մայրենիի դասավանդման ընթացքում կարևորվում է այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցականը մտածի ուսումնասիրվող ստեղծագործությունների բովանդակության ու նշանակության մասին, իսկ սրան ուսուցիչը կարող է հասնել բաց հարցերի կիրառումով: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի, առարկայի նկատմամբ և կարող են ունենալ մոտիվացնող նշանակություն: Բաց հարցերը դրդում են աշակերտին վերլուծել նյութը, նրա մոտ ձևավորում են փոխանցելի հմտություններ, որոնց շնորհիվ նրանք ցանկացած իրավիճակում կարողանում են հիմնավորված եզրակացություններ անել, լինել շրջահայաց:

Գրականության ցանկ

1. Ս. Վարդանյան, Ս. Սարգսյան և ուրիշներ «Ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար», ԱՅՌԵՔՍ, Երևան, 2004:
2. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» 2001/2:
3. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխյան, Աստղիկ Բալայան «Ինչպես պլանավորել մայրենիի դասը» Երևան 2017

Հարց 1

Ո՞ր հասկացության հետ է նույնացվում քննադատական մտածողությունը:

Ա. ստեղծագործական մտածողություն

Բ. կրիտիկական մտածողություն

Գ. քննադատություն

Հարց 2

Ո՞րն է Ք. Մ. -ն նպատակը:

Ա. ակտիվացնել ուսումնական գործընթացը

Բ. քննադատել երևույթը

Գ. զարկ տալ սովորողի երևակայությանը

Հարց 3

Դասապրոցեսի ընթացքում հնարավո՞ր է զուգակցել Ք. Մ. -ն տեխնոլոգիաները այլ մեթոդների հետ:

Ա. այո

Բ. ոչ

Գ. չգիտեմ

Հարց 4

Ք. Մ. -ն հնարների իրականացման ընթացքում ինչը՞ պիտի հաշվի առնել:

Ա. սովորողի առողջական վիճակը

Բ. սովորողի զգացմունքայնությունը

Գ. սովորողի զարգացման մակարդակը

Հարց 5

Ք. Մ. -ն հնարների ընտրությունը կախվա՞ծ է արդյոք ուսումնասիրման նպատակից:

Ա. այո

Բ. ոչ

Գ. չգիտեմ

Հարց 6

Դասավորեք Ք. Մ. -ն տեխնոլոգիայի կիրառման քայլերը:

Ա. տեսակետի ձևավորում

Բ. եզրակացություն
Գ. տեղեկատվության ստուգում
Դ. վերամշակում
Ե. որոշումների կայացում

Հարց 7

Ընդգծել այն բայը, որը չի օգտագործվում Ք.Մ.-ն մեջ:

- | | |
|---------------|---------------|
| Ա. տարբերակել | Դ. ոգևորել |
| Բ. դասակարգել | Ե. առաջարկել |
| Գ. միավորել | Զ. կանխատեսել |

Հարց 8

Ո՞ր մեթոդը չի նպաստում Ք.Մ.-ն զարգացմանը:

- Ա. հնգյակ
- Բ. մտազրոհ
- Գ. պատմելու մեթոդ
- Դ. ուղղորդված ընթերցանություն

Հարց 9

Գիտենք, որ մայրիկը նստած է հայրիկի կողքին:

Կարո՞ղ ենք ասել, որ հայրիկն էլ է նստած մայրիկի կողքին:

- Ա. այո
- Բ. ոչ
- Գ. հնարավոր է

Գիտենք, որ տիեզերքի մասին բոլոր նկարները Նարեկն է նկարել, գիտենք նաև, որ բոլոր վրձինով արված նկարները Նարեկին են պատկանում:

Կարո՞ղ ենք ասել, որ վրձինով արված նկարների գոնե մի մասը տիեզերքի մասին է:

- Ա. այո
- Բ. ոչ
- Գ. հնարավոր է

Գիտենք, որ հաստ կազմով բոլոր գրքերը պատկանում են Սոնային;

Կարո՞ղ ենք ասել, որ Սոնայի բոլոր գրքերը հաստ կազմ ունեն:

Ա. այո

Բ. ոչ

Գ. հնարավոր է

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՄԱԼՅԱ ՀՐԱՆԹԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐՆ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Թեմա

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ. Լ. Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Ներածություն.....	3
Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում.....	5
Հետազոտական աշխատանք.....	11
Եզրակացություն.....	15
Գրականության ցանկ.....	17

Ներածություն

Կյանքի արագ տեմպից բխող փոփոխություններն առաջ են բերում նոր գաղափարներ և մոտեցումներ ժամանակակից կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման և իրագործման համար: Ժամանակների պահանջներից ելնելով ուսուցիչների առջև դրվում են նոր նպատակներ և դրանցից բխող խնդիրներ, սակայն, անկախ ժամանակների փոփոխությունից, կրթադաստիարակչական գործընթացի նպատակը միշտ եղել և կմնա անձի զարգացումը: Իսկ անձի զարգացում ասելով մշտապես պետք է դիտարկել նրա համակողմանի և ներդաշնակ զարգացումը, բարոյական որակների ձեռքբերումը, գիտելիքներով զինվելը: Այս առումով, կյանքի նոր փուլ թևակոխող առաջին դասարանցիների ուսուցման և դաստիարակության գործընթացում կարևորագույններից է գրական ունկնդրման ուսուցման հարցը: Այն իրենից ներկայացնում է բազմանպատակ գործընթաց, որի հիմքում ընկած է սովորողների անձնային բարոյական որակների ձևավորումը, դաստիարակչական միջարք հարցերի լուծումը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու ամրակայումը:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի կազմակերպումն ու իրագործումը առաջնային և կարոր գործընթաց է, որը ժամանակներին համահունչ համալրվում է նոր մոտեցումներով, սվյալ ժամանակներից բխող պահանջմունքներիվ առաջ քաշվող նպատակներով: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթադաստիարակչական գործընթացը չի դրվում տեղում, այլ ժամ առ ժամ կատարելագործվում, զարգանում և համալրվում է նոր մոտեցումներով, մեթոդներով, եղանակներով, հարկ համարեցինք քննել և հետազոտել այս կարևորագույն գործընթացի իրականացման նրբությունները, առավել բացահայտելու և կարևորություն տալու դրա իրական նշանակությանը և գործառութներին:

Հետազոտական շխատանքի իրականացման համար մեր առջև դրել ենք հետևյալ նպատակը՝

- Հետազոտել և բացահայտել առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի առանձնահատկությունները, դրանց դերն ու նշանակությունը, ինչպես

նաև պահանջվածությունը՝ ժամանակակից կրթադաստիարակչական գործընթացում:

Նպատակից ելնելով առաջ ենք քաշել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի բնույթը, դրանց դերը, նշանակությունը:
- Բացահայտել առաջին դասարանցիների նախասիրությունները, կարողությունները գրական-ստեղծագործական աշխատանքների շրջանում:
- Ծանոթանալ այլ մանկավարժների փորձին:
- Գաղափար կազմել առաջին դասարանցիների ընտանիքներում իրականացվող գրական ունկնդրման աշխատանքներին:

Հետազոտությունն իրականացրել ենք Լոռու մարզի գ. Կաթնաջրի Ս. Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հետազոտությունն իրականացրել ենք հարցաթերթիկի մեթոդով:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, որում շարադրված է տեսական նյութը, հետազոտական աշխատանքից, որում ներկայացված են մեր կատարած հետազոտական աշխատանքների արդյունքները, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում

Առաջին դասարանն անձի ձևավորման, կրթադաստիարակչական գործընթացի իրագործման հիմնաքարային ժամանակաշրջանն է, որի արդյունավետությունը բխում է ուսուցման և դաստիարակության գործընթացի ճիշտ կազմակերպումից և ղեկավարումից: Այդ գործընթացի առանցքային և կարևոր օղակը մայրենի լեզվի ուսուցումն է, դրա շրջանում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը և դրանից բխող առաջին դասարանցիների զարգացման հարցը: Այս առումով խիստ կարևոր է պատշաճորեն մոտենալ առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի կազմակերպմանը: Քանզի այս դասերի միջոցով կարելի է սովորողների մեջ զարգացնել ինչպես լեզվական գիտելիքներ, այնպես էլ բարոյական վեհ արժեքներ և բարձր գաղափարախոսություն:

Գրական ունկնդրման ժամերին ուսուցիչն օգնում է վեցամյա փոքրիկին՝ ձևավորելու նոր արժեհամակարգ, ինչը հենվում է սիրո, բարության, ընկերասիրության, միմյանց հանդեպ դրսևորվող հոգատարության վրա: Անձնային որակների զարգացման հետ մեկտեղ արթնանում է կարդալու հանդեպ հետաքրքրությունը: Մշակվում է կարդալու տեխնիկա, ձևավորվում է խոսքի մշակույթ, հարստանում է բառապաշարը: Ձևավորվում և զարգանում են երևակայությունը, տրամաբանական մտածողությունը և կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Գրքի և ընթերցանության նկատմամբ սովորողների մշտական հետաքրքրության կայացմանը նպաստում է նաև գրական ունկնդրման ժամերի ճիշտ և նպատակային կազմակերպումը [8]: Այսինքն, կարող ենք վստահորեն ասել, որ գրական ունկնդրման դասն առաջին դասարանում իրենից ներկայացնում է բազմաթիվ և տարաբնույթ նպատակների իրականացման համալիր գործընթաց:

Անդրադառնանք առաջին դասարանում գրական ունկնդրման որոշ գործառույթների.

Գրական ունկնդրման դասերն ապահովում են աշակերտների սերը գրքի և ընթերցանության նկատմամբ: Այս առումով տարրական դասարանների ուսուցչուհի Հ. Տոնոյանը գրում է. «Այսօր վեց տարեկան երեխան էլ է տիրապետում համակարգչային տարրական գիտելիքների: Աշխարհին նա հաղորդակցվում է նաև համացանցի միջոցով: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան

մասը, և անհնար է այլևս մեր առօրյան պատկերացնել առանց դրանց: Սա կյանքի առաջընթացն է: Սակայն առկա է նաև տվյալ երևույթի բացասական կողմը. երկրորդ պլան է մղվել գիրքը, նվազել է գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Պետք է նկատել, որ վեց տարեկան և դրանից ցածր տարիք ունեցողները գրականությանը հաղորդակցվելու առավել շատ փորձ ունեն (հեքիաթ, ոտանավոր), քանի որ մեծահասակները նախադպրոցական տարիքից երեխաների համար շատ են կարդում հեքիաթներ և սովորեցնում ոտանավորներ: Երեխայի հետաքրքրությունը չի թուլանում նաև դպրոց հաճախելու առաջին տարիներին» [7, էջ16]: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ դպրոցի գերխնդիրը պետք լինի աշակերտների հետաքրքրությունների պահպանումը և զարգացումը: Սակայն չենք կարող ժխտել, որ ժամանակներն առաջ են շարժվում: Թե՛ տանը, թե՛ դպրոցում փոխվում է ամեն բան. փոփոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության խնդիրները: Ժամանակակից երեխաների մտածողությունը, ցանկություններն ու հետաքրքրությունները չեն համապատասխանում անցյալ ժամանակով ապրող մանկավարժին: Հետևաբար, նրա կողմից գործադրվող ուսուցման մեթոդներն արգասաբեր չեն լինի: Այսօր մենք խնդիր ունենք, որ ուսուցիչը զիտակցաբար քայլի արդիականության հետ, առաջնորդվի ժամանակի պահանջներով [8]: Երեխաներին պետք է ուսուցանել և դաստիարակել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ բռնությունն առաջ է բերում հիասթափություն, անտարբերություն և ատելություն: Հարկավոր է դպրոցը դարձնել մանուկների աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական բարձր արժանիքներ: Նա պետք է տիրապետի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդներին, զբաղվի ինքնակրթությամբ [7, էջ17]:

Գրական ունկնդրման դասերի միջոցով հարստանում է աշակերտների բառապաշարը: Ա. Տեր-Գրիգորյանը գրում է. «Երեխաները դպրոց են գալիս արդեն որոշակիորեն ձևավորված լեզվական հմտություններով՝ ունեն բավականաչափ հարուստ բառապաշար, տեսածի, լսածի, մտածածի մասին խոսելու և պատմելու զգալի փորձ» [2, էջ93]: Ըստ Ուշինսկու՝ «Այն երեխան, որի զարգացումը բռնի կերպով չի աղճատվել, մեծ մասամբ հինգ կամ վեց տարեկան հասակում արդեն իր մայրենի

լեզվով խոսում է աշխույժ ու ճիշտ»[4, էջ12]: Այսինքն, ուսուցչի նպատակը գրական ունկնդրման դասերին պետք է լինի նաև սովորողների եղած գիտելիքների և բառապաշարի հարստացումը: Այս և այլ առումներով կարևոր է դասերը վարել այնպես, որ սովորողները չլինեն պասիվ ունկնդրողի դերում, այլ համագործակցային ուղիներով նրանց պետք է դարձնել դասի ակտիվ մասնակիցները:

Գրական ունկնդրումն ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ: Ուսումնական նշված միջավայրը նպաստում է, որ երեխան, առանց սխալվելու վախի, արտահայտի իր մտքերը, կարծիքներն ու հույզերը [10, էջ6]: Այսինքն, անհրաժեշտ է գրական ունկնդրման դասերին ապահովել աշակերտակենտրոն սկզբունքի իրագործումը:

Ունկնդրման համար ընտրվող գեղարվեստական գրականությունը պետք է լինի.

- մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, պատմողական, դինամիկ զարգացող սյուժեով,
- բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին,
- երեխաների կյանքը արտացոլող, որպեսզի հիշեցնի սեփական անձի հետ կապված իրավիճակներ,
- հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների ստեղծագործությունների ընտրանի (արձակ և չափածո),
- ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ,
- համապատասխան ճանապարհորդություններ [10, էջ6]:

Գրական ունկնդրման դասերը զարգացնում են երեխաների մտածողությունը և երևակայությունը, նրանց մեջ դաստիարակում են բարոյական նորմեր: Այս դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը; Այլ խոսքով՝ նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի «նկարած» կյանք, ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին, այդ ամենը համեմատել իրենց կյանքի հետ և հասկանալ հեղինակի

գաղափարները [6, էջ 34]: Գյուլամիրյանը գրում է. «Գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով անհրաժեշտ է ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը» [1, էջ 99]: Ինչպես գրում է Ա. Տեր-Գրիգորյանը. «Գեղարվեստական նյութերի հիմնական նպատակը երեխաների դաստիարակությունն է, գեղագիտական ճաշակի զարգացումը, գրական հայերենի ուսուցումը, որոշ գիտելիքների ու ճանաչողական տեղեկությունների հաղորդումը» [3, էջ 189]:

Հաշվի առնելով առաջին դասարանցիների տարիքային և անհատական առանձնահատկություններից բխող պահանջմունքները, խիստ կարևորում ենք գրական ունկնդրման դասերին աշակերտներին՝ դրական և բացասական որոշ երևույթների հետ ծանոթացելու հարցը, քանզի վստահ ենք, որ այս տարիքը պետք է հող հանդիսանա կյանքի փուլերի հետագա ճիշտ և բարոյական մարդուն բնորոշ զարգացման համար: Այս առումով կարևորում ենք գրական ունկնդրման նպատակի բացահայտության հարցը: Համոզված ենք, որ երեխաները պետք է հստակ իմանան, թե ինչու են կազմակերպվում գրական ունկնդրումների դասեր, որն է դրանց դերն իրենց կյանքում և ինչ կարող են քաղել այդ դասերից:

Առաջին դասարանում գրական ունկնդրման նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը և այլն: Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթերցումն ու այն դարձնում ցանկալի [9, էջ 5]:


Հեքիաթները, բանաստեղծությունները, փոքրիկ պատումները հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում մայրենիի ժամերը: Երեխաները հաճույքով են ընդգրկվում բեմականացումների նախապատրաստման գործընթացի մեջ, արտասանում են, երգում և նկարում [8]:

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու մշակույթի ձևավորումը: Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում

է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր ու դիպուկ արտահայտվել, այլև լսել խոսակցին, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն, ինչ ասվում է, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ: Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել նաև լսելիս ուշադիր և ակտիվ լինել, այսինքն՝ իրապես լսել գրուցակցին և պատասխան խոսքը կառուցել նրա ասածի հիմքով [7, էջ17-18]:

Խիստ կարևորում ենք նաև գրական ունկնդրման ժամերին արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման, մշակման և զարգացման հարցերը: Ա. Բահթեյանը խոսելով արտահայտիչ ընթերցանության մասին, նշել է. «Բացի աչքից ու բերանից՝ ընթերցանության ժամանակ հոգին յունպես պիտի գործողության մղվի: Մարդն ընթերցելիս պիտի մտածի, ընթերցածը պիտի իր մտքի ու հոգու սեփականությունը դարձնի, պիտի հասկանա և, եթե հասկանում է, նա այդ պիտի ապացուցե յուր ընթերցանության գեղեցկությամբ» [5, էջ36]:

Գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է նկատառել աշխատանքի հետևյալ տեսակները՝



[7, էջ19-20]:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը, կարող ենք արձանագրել, որ գրական ունկնդրման ժամերի հիմնական խնդիրներն ու նպատակները 1-ին դասարանում հետևյալն են.

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի շմշակույթ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարը ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ:

[2, էջ 13]:

Եվս մեկ կարևոր հանգամանք. գրական ունկնդրման միջոցով առաջին դասարանում, կրթադաստիարակչական գործընթացում դրական արդյունք ապահովելու համար անհրաժեշտ է առաջին դասարանցիների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, կոնկրետ նպատակներից բխող քայլերի մշակում, համապատասխան մեթոդների ընտրություն և կիրառություն:


Հետազոտական աշխատանք

Առաջին դասարանում գրական ունկնդրման առանձնահատկություններին առավել նպատակային և բովանդակալից ծանոթանալու համար, անկացրինք հետազոտություն Կաթնաջրի միջնակարգ դպրոցում, առաջին դասարանցիների, նրանց ծնողների, ինչպես նաև դասվարների շրջանում: Հետազոտության համար կիրառեցինք հարցման մեթոդ՝ հարցաթերթիկի մեթոդը:

Պարզելու համար, թե առաջին դասարանցիների ընտանիքներում ինչպիսի իրավիճակ է տիրում գրական ունկնդրման հետ կապված, արդյոք ծնողները խթանում են իրենց երեխաների զագացման գործընթացը՝ գրական ունկնդրման միջոցով, իրականացրինք հարցում առաջին դասարանցիների ծնողների շրջանում: Հարցմանը մասնակցեց 11 ծնող: Հարցման արդյունքները կներկայացնենք ստորև՝

Տանը կազմակերպում եք գրական երեկոներ:


11 ОТВЕТОВ



- Երբեմն, երբ ժամանակ եմ ունենում:
- Ոչ:
- Այո, հաճախ:

Ընթերցում եք Ձեր երեխայի համար:


11 ОТВЕТОВ



- Այո, հաճախ:
- Հազվադեպ:
- Ոչ, կարիքը չեմ տեսնում:
- Ժամանակ չեմ ունենում:

Ձեր երեխան առավել շատ ի՞նչ բնույթի ստեղծագործություններ է սիրում:

11 ответов




Խթանու՞մ եք Ձեր երեխաների ստեղծագործական կարողությունները (գրական առումով):

11 ответов



Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում կնպաստե՞ն Ձեր երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

11 ответов




Ամփոփելով արդյունքները, կարող ենք ասել, որ ընտանիքում կարևորվում է ոչ միայն առաջին դասարանցիների գրական ունկնդրման դերը, այլև դրանից բխող հետևանքները, որոնք միտված են երեխաների անձի ձևավորմանն ու զարգացմանը:

Առաջին դասարանցիների նախասիրություններին ծանոթանալու համար, հետազոտությանը մասնակից դարձրինք նաև նրանց: Հետազոտությանը մասնակցեց 11 աշակերտ: Արրդյունքները ներկայացված են ստորև.


Սիրում եք ընթերցանության ժամերը դպրոցում:

11 ОТВЕТОВ




Առավել շատ սիրում եք՝

10 ОТВЕТОВ




Ինքների ստեղծագործում եք:

11 ОТВЕТОВ



Սիրում եք, երբ Ձեզ համար որևէ ստեղծագործություն են կարդում:

11 ОТВЕТОВ



Գրական ունկնդրման դասերի անցկացման հետ կապված այլ դասավարների փորձին, նրանց պատկերացումներին և մոտեցումներին ծանոթանալու համար, հարցման մեթոդը կիրառեցինք նաև դասավարների շրջանում: Հարցմանը մասնակցեց 4 դասավար: Հարցման արդյունքներն ամփոփված են <<Եզրակացություն>> բաժնում:

Հարց 1. Ինչո՞վ է պայմանավորվում առաջին դասարանում գրական ունկնդրման դասերի անցկացման կարևորությունը:

- Երեխաների աշխուժությամբ:
- Չարգացնում է գրական խոսքը, հարստացնում է բառապաշարը:
- Զարգանում է կարդալու տեխնիկան և գեղարվեստական ճաշակը:
- Հետաքրքրությունով, սիրով՝ դեպի հերոսները, ուշադրությամբ լսելու և վերարտադրելու կարողությամբ, հերոսների դերի բացահայտմամբ:

Հարց 2. Գրական ունկնդրման դասի անցկացման ի՞նչ այլընտրանքային միջոց կամ ձև եք ընտրել:

- Դաս՝ բացատրում կամ թանգարանում:
- Համագործակցային ձև:
- Մուլտֆիլմերի դիտում՝ ընթերցած նյութին համապատասխան:
- ՏՀՏ-ի կիրառումը:

Հարց 3. Գրական ունկնդրման դասերի անցկացման համար ի՞նչ նորարարական լուծումներ կառաջարկեք:

- Սահիկահանդեսներ:
- Տեսադասեր:
- Թատերական ներկայացումների հաճախակի կազմակերպում:

- **Դերերով ներկայացնել դասը:**

Եզրակացություն

Կարևորելով գրական ունկնդրման դասերի առանցքային դերն առաջին դասարանցիների անձի ձևավորման, լեզվական կարողությունների ձեռքբերման, գիտելիքների և կարողությունների ամրապնդման, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և այլ բնույթի դաստիարակչական աշխատանքների իրագործման գործում, իրականացնելով մի շարք հետազոտություններ, ինչպես նաև հաշվի առնելով մեր աշխատանքային փորձը, առավել համոզվեցինք գրական ունկնդրման դասերի իրագործման արդյունավետության հարցում:

Այսպիսով, հիմք ընդունելով Կաթնաջրի միջնակարգ դպրոցում սովորող առաջին դասարանցիների ծնողների շրջանում իրականացված հարցման արդյունքները, եկանք այն եզրահանգման, որ.

- Ընտանիքներում կարևորվում է առաջին դասարանցիների անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հարցում գրական ունկնդրման դասերի անցկացումը դպրոցում. այդ առումով, ծնողների մեծամասնությունը տանը կազմակերպում է գրական երեկոներ, երեխաների համար ընթերցում է ստեղծագործություններ:
- Ծնաղները խթանում են իրենց երեխաների ստեղծագործական կարողությունները, ծանոթ են նրանց գրական նախասիրություններին:

Հիմք ընդունելով Կաթնաջրի միջնակարգ դպրոցում սովորող առաջին դասարանցիների շրջանում անցկացված հարցման արդյունքները, կարող ենք եզրակացնել.

- Սովորողները սիրում են դպրոցում կազմակերպվող ընթերցանության ժամերը, իսկ եթե մի բանի սիրով են մասնակցում, հետևաբար կգրանցեն դրական և գոհացնող արդյունք:
- Ստեղծագործությունների տեսակի առումով երեխաների հետտաքրքրությունները տարբեր են, սակայն մեծամասնությունն առավել սիրում է հեքիաթներ:

- Երեխաների մեծամասնությունը սիրում է ընթերցել, ինչպես նաև՝ ստեղծագործել:

Հիմք ընդունելով դասվարների շրջանում իրականացրած հարցման արդյունքները, կարող ենք արձանագրել.

- Առաջին դասարանում գրական դասերի անցկացման կարևորությունը պայմանավորվում է երեխաների աշխուժությամբ, նրանց լեզվական և դաստիարակչական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորմամբ և ամրապնդմամբ:
- Գրական ունկնդրման դասերը կարելի է իրականացնել մի շարք այլընտրանքային միջոցներով և ձևերով, օրինակ կարելի է դասերը վարել համագործակցային ձևով, դասարանից դուրս՝ օրինակ թանգարանում, բնության գրկում, կարելի է կիրառել ՏՀՏ-ներ, մուլտֆիլմերի, տեսաֆիլմերի դիտումներ:
- Ուսուցիչներն առաջարկում են կիրառել սահիկաշարեր, տեսադասեր, դասի բեմականացումներ:

Ունենք հետևյալ առաջարկները՝

- Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում համալրել հետաքրքրությամբ, դասի արդյունավետությունը բարձրացնող միջոցներով, դասի անցկացման համար ընտրել այլընտրանքային ձևեր, նորարարական միջոցներ՝ ելնելով առաջին դասարանցիների առանձնահատկություններից, դասի նպատակից:
- Հաճախակի կազմակերպել քննարկումներ գրական ունկնդրումից հետո, ապահովել բոլոր աշակերտների ներգրավվածությունը, կարծիքների արդարացիությունը:

Գրականության ցանկ

- 1 Գյուլամիրյան Ջ.-<<Մայրենիի ուսուցման մեթոդիկա>>, Չանգակ հրատ., Երևան-2018
- 2 Տեր-Գրիգորյան Ա.- <<Գրաճանաչության մեթոդիկա>>, Լույս հրատ., Երևան, 1968
- 3 Տեր- Գրիգորյան Ա.-<<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Լույս հրատ., Երևան-1980
- 4 Ուշինսկի Կ. Դ.-<<Մանկավարժական ընտիր երկեր>>, Հայպետհրատ, Երևան, 1949
- 5 Բահաթրյան Ա.- <<Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ>>, Մանկավարժական թերթ, 1878, թիվ 3
- 6 Թորոսյան Կ., Չիրուխյան Կ.- <<Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում>>, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան, 2010.6
- 7 Տոնոյան Հ.- <<Գրական ունկնդրումն առաջին դասարանում>>, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան,2017.1
- 8 Գաբրիելյան Թ.- <<Գրական ունկնդրում առաջին դասարանում>>, ինտերնետային հղումը՝ <http://194school.org/2021/12/grakan-unkndrum/>
- 9 Թադևոսյան Մ.- <<Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում>>, ինտերնետային հղումը՝ <https://editprint.am/students-data/Մարիաննա%20Թադևոսյան.pdf>
- 10 Հովսեփյան Կ. -<<Գրադարանավարը դպրոցում>>, ինտերնետային հղումը՝ <https://karinehovsepyan.files.wordpress.com/2019/06/d4b3d680d5a1d5a4d5a1d680d5a1d5b6d5a1d5bed5a1d680d5a8-d5a4d5bad680d5b8d681d5b8d682d5b4-3.pdf>

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ**

ԱՍՅԱ ԽՈՐԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԹԵՄԱ՝

**Սովորողների քննադատական մտածողության զարգացումը
մաթեմատիկայի ուսուցման գործընթացում**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ. Միրաբյան Լ.

ՎԱՆԱԶՈՐ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կյանքը մանկավարժների առջև խնդիր է դնում աշակերտներին խորքային գիտելիքներ տալուց զատ փոխանցել նաև այնպիսի «փափուկ հմտություններ», որոնց շնորհիվ հնարավոր կլինի նպաստել երեխայի ստեղծարարությանը, արագ փոփոխվող միջավայրում արագ ու ճիշտ հարմարվելուն և ճկունությանը: Մեր օրերում, երբ յուրաքանչյուր պահի բոլորն ստանում են ահռելի քանակությամբ տեղեկատվություն, կարևոր է, որ աշակերտը ոչ միայն գիտելիքներ ձեռք բերի, այլև կարողանա համադրել, համեմատել ինֆորմացիան, դիտարկել և սեփական փորձը կապել նորին, կռահել, խորհել իմաստի ու բովանդակության մասին, զարգացնել քննադատական մտածողությունը: Քննադատական մտածողությունը աշակերտի հետաքրքրասիրության դրսևորումն է, սեփական մտքերն արտահայտելու, ապացուցելու համար հետազոտական և ստեղծագործական աշխատանք կատարելու կարողության զարգացումն է:

Աշակերտը, ով գիտի, թե ինչպես պետք է մտածել քննադատաբար, կկարողանա ինքնուրույն հարցեր առաջ քաշել և մտածված որոշումներ կայացնել: Նա կարող է ոչ միայն հակասություններ տեսնելով, հայտնել տեսակետ, այլև՝ դիտարկի խնդիրը ուրիշի տեսակետից, գտնի խնդրի լուծման մի քանի տարբերակ, կարողունակ լինի ընտրելու արդյունավետն ու լավագույնը: Օբյեկտիվ եզրակացություններ անելու կարողության հատկանիշի ձևավորում տարրական դասարաններում հատկապես կարևոր է, քանի որ այն տարիքում է, որ նրանց մոտ հաճախ դրսևորվում է սուր և կտրուկ արձագանք իրենցինից տարբեր մոտեցումների նկատմամբ: Չարգացնելով երեխաների քննադատական մտածողությունը, աշակերտի հաջողությունը կորոշվի ոչ թե գիտելիքների, նրա հիշողության մեջ պահվող տեղեկատվության անընդհատ աճող ծավալով, այլ քննադատական վերլուծության միջոցով անհրաժեշտ գիտելիքներն ընտրելու նրա ունակությամբ, տեղեկատվության ընկալմամբ և որոշումներ կայացնելու կարողությամբ: Հենց սրանով է պայմանավորված այս թեմայի *արդիականությունը*: Հետազոտական աշխատանքի *նպատակն* է ուսումնասիրել քննադատական մտածողության զարգացման հիմնախնդրին վերաբերող գիտատեսական և գիտամեթոդական գրականություն: *Խնդիրներն* են. 1) Նկարագրել քննադատական մտածողության ձևավորման գործընթացը: 2) Վերլուծել քննադատական մտածողության զարգացմանը միտված մեթոդների կիրառման կարևորությունը, 3) Մաթեմատիկայի դասերին սեփական փորձի ներկայացումը:

1. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսուցիչներից մեկն ինձ հարց տվեց, թե ինչու՞ իր աշակերտներից շատերը մաթեմատիկայի դասաժամերին բանավոր պատասխանների համար միշտ լավ գնահատականներ են ստանում, բայց խնդիրներ լուծելիս դժվարանում են, չեն կարողանում մտածել, կռահել, թե ինչ քայլեր են կատարելու, որ ստանան խնդրի պատասխանը: Ակամա հիշեցի Լև Նաումովիչ Լանդայի «Մտածելու կարողությունը» աշխատությունը: Մեր խնդիրն էլ հենց այն է, որ մենք աշակերտի մեջ պետք է մշակենք քննելու, դատողություն անելու կարողություն, ընկալողականություն, կռահունակություն, մտավոր գործողություններ կատարելու ունակություն: Երբ խոսում են գործողության մասին, ապա պատկերացնում են, ամենից առաջ, առարկաների և պրոցեսների վրա ներգործող և դրանք վերափոխող ինչ-որ բան: Մարդու գործողությունները բազմաթիվ փոփոխություններ կարող են մտցնել այն առարկաների վիճակի մեջ, որոնց վրա ազդում են. մասերի բաժանել, մասերն ամբողջացնել, տեղափոխել և այլն, որոնք ֆիզիկական գործողություններ են:[4] Մտավոր գործողություններն առարկաների և պրոցեսների մեջ վերափոխություն չեն առաջացնում: Խնդրի պայմանը մտքով բաժանելով բաղադրամասերի՝ մենք խնդրի տեքստը ոչ մի փոփոխության չենք ենթարկում: Մտավոր գործողությունը, ինչպես և պրակտիկ գործողությունը, նույնպես վերափոխում է, բայց ոչ իրական առարկաները, այլ գլխում եղած դրանց պատկերները և հասկացությունները, վերափոխել դրանք, ավելացնել հատկանիշներ, վերածել բաղադրիչների, վերացարկել, համակցել և այլն: Վերափոխել կարելի է նաև դատողությունները:[1] Կարողանալ մտածել՝ նշանակում է կարողանալ գործել գիտելիքներով: Հաճախ մարդը գիտելիքների պաշար ունի, բայց վատ է ըմբռնում, թեև ունի պատկերացումներ, բայց չգիտի այն մտավոր գործողությունները, որոնք պետք է կատարվեն դրանցով, կամ չի տիրապետում այդ գործողություններին: Նրան տրվել են գիտելիքներ, իսկ թե ինչպես գործել այդ գիտելիքներով, նրան բավարար չափով չեն սովորեցրել: Օրինակ՝ տեսնելով ծխնելույզից դուրս եկող ծուխը, մենք կարող ենք ասել, որ տան վառարանը գործում է, թեև այն չենք տեսնում: Տեսնելով ծոռոված մեքենան, մենք կարող ենք հետևություն անել, որ այն վթարի է ենթարկվել, թեև այդ վթարին ականատես չենք եղել: Եթե վարորդին հարցնենք, թե նա ինչ է անում մեքենան շարժման մեջ դնելու համար, ապա նա այդ մասին կպատմի առանց մտածելու, ճշգրտորեն կնկարագրի բոլոր անհրաժեշտ գործողությունները քայլ առ քայլ:

Գիտենալով ու գիտակցելով համապատասխան գործողությունները՝ նա դրանք կարող է սովորեցնել ուրիշներին: Սակայն փորձենք հարց տալ մարդուն՝ ինչպես է նա կարողացել հանգել այս կամ այն մտավոր խնդրի լուծմանը, ինչպիսի մտավոր գործողություններ է կատարել: Այս հարցին շատերը չեն կարող պատասխանել: Սովորաբար, ասում են՝ «հանկարծ մտքովս անցավ», «գլխի ընկա»: Դրա պատճառը մտավոր գործողությունների թույլ գիտակցման մեջ է՝ ի տարբերություն ֆիզիկական գործողությունների (թեև դրանք նույնպես երբեմն չեն գիտակցվում կամ ոչ լիովին):[2]

Գիտելիքների ստացման երկու աղբյուր կարող է լինել այն գործողությունների մասին, որոնք պետք է կատարվեն այս կամ այն խնդրի լուծման համար. գործողությունների մասին ստացվող ինֆորմացիա (ցուցումներից, հրահանգներից, դիտումներից, թե ինչպես պետք է գործել) և սեփական գործողությունների գիտակցում: Կարևոր է նաև գործողություններին տիրապետումը: Ուսման մեջ գլխավորը աշակերտներին գործողություններին տիրապետել սովորեցնելն է, բայց նպատակին հասնելու կարևորագույն միջոցը դրանց իմացությունն է ու գիտակցումը: Իսկ մենք գիտե՞նք, թե ինչպես ենք դատողություններ անում խնդիրներ լուծելիս: Ուսուցիչների մի խմբի այսպիսի հարց տրվեց. «Կյանքում մեզ հարկ է լինում որևէ բան ապացուցել: Ի՞նչ պետք է անենք, որպեսզի ապացուցենք, որ մի որևէ X առարկա պատկանում է Y դասին կամ ընդհակառակը, այն չի՛ պատկանում Y-ին (X-ը կարող է լինել ոչ թե մաթեմատիկական որևէ մեծություն, այլ օրինակ մի որևէ առարկա):

ՀԱՐՑՈՒՄ ԱՌԱՋԻՆ՝

Երկխոսություն առաջին ուսուցչի հետ.

-Այս հարցին չեմ կարող պատասխանել, մինչև չիմանամ թե ի՞նչ պետք է ապացուցել:

-Նշանակում է, ձեր կարծիքով, ապացուցման այնքան եղանակներ կան, որքան առարկանե՛ր կան:

-Երևի այդպես էլ չի կարող լինել:

-Ճիշտ է: Գոյություն ունեն գործառնությունների որոշակի ընդհանուր համակարգեր, որոնք մենք կիրառում ենք պնդումների ապացուցման ժամանակ՝ անկախ այն բանից, թե ինչպիսի օբյեկտների վերաբերյալ ենք մենք ինչ-որ բան ապացուցում:

-Եթե դուք ասեիք, թե հատկապես ի՞նչ և ինչի վերաբերմամբ պետք ասպացուցել, ապա հեշտ կլիներ պատասխանել:

-Բայց չե՞ որ, ուսուցանելով, դուք աշակերտների մեջ պետք է մշակեք հատկապես ասպացուցման ընդհանուր մեթոդներ, որոնք պետք է կիրառվեն անկախ այն բանից, թե ի՞նչ և ինչի՞ վերաբերմամբ պետք է ասպացուցվի:

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ՝

Երկխոսություն երկրորդ ուսուցչի հետ.

-Հարկավոր է վերլուծել X-ը, ապա Y-ը, համադրել դրանք և ասպացուցել:

-Ինձ էլ հենց այդ է հետաքրքրում, թե ինչ պետք է անենք, որպեսզի վերլուծենք X-ը և Y-ը: Ինչպիսի՞ գործառնություններից է կազմված վերլուծությունը:

-Վերլուծությունը ոչ մի բանից էլ կախված չէ: Այն հենց ինքը գործառնությունն է:

-Սակայն այդ գործառնությունը կազմված է մի շարք քայլաշարերից: Պատկերացնենք, որ ես աշակերտ եմ, իսկ դուք, որպես ուսուցիչ, պետք է ինձ սովորեցնեք ասպացուցել: Դուք ինչպե՞ս պետք է ինձ սովորեցնեք, ի՞նչ քայլաշարով:

-Ես կասեմ. 1) վերլուծենք X-ը, 2) վերլուծենք Y-ը, 3) համադրենք դրանք, 4) ասպացուցենք, որ X-ը նույն Y-ն է:

-Բայց ես այնքան էլ մտավոր մեծ ունակություններ ունեցող աշակերտ չեմ և չեմ հասկանում, թե ի՞նչ է նշանակում վերլուծել: Ինչպիսի՞ գործողություններ պետք է ես կատարեմ: Աշակերտներից շատերը չգիտեն հարցին ինչպես մոտենան, մի մասը կլուծի խնդիրը, բայց՝ սխալ: Ես ուզում եմ, որ պարզ բացատրվի:

-Դրված հարցին ընդհանուր ձևով պատասխանել ես չեմ կարող, ինձ կոնկրետ օրինակ է պետք:

ՀԱՐՑՈՒՄ ԵՐՐՈՐԴ ՈՒՍՈՒՑՉԻՆ.

-Շատ հեշտ. 1) պարզել X-ի բոլոր հատկանիշները, 2) պարզել Y-ի բոլոր հատկանիշները, 3) դրանք համադրել միմյանց հետ և հետևություն անել:

-Իսկ ինչպիսի՞ հետևություն անել: Ո՞ր կանոնի համաձայն:

-Դա ակնհայտ է:

-Դա Ձեզ համար պարզ է, իսկ ինձ համար պարզ չէ: Դուք ինչպե՞ս պետք է ինձ սովորեցնեք: Եկեք ստուգենք այս մեթոդը: Ենթադրենք, թե X-ը այս առարկան է՝ լուսամուտը: Մենք պետք է ապացուցենք, որ այն հենց պատուհան է: Ես կգործեմ Ձեր ցուցումներով՝ 1) պարզեմ X-ի բոլոր հատկանիշները, այս դեպքում՝ սա պատի մեջ բացված անցք է՝ ապակիներով պատված, ունի գոգ, ապակեկալը նրա մակերևույթը բաժանում է 4 մասի, օդանցքը գտնվում է վերևի մասում, շրջանակը ներկված է սպիտակ գույնի, չափսն է՝ 2*2 մ, շրջանակի աջ կողմի վրա քերծվածք կա, ձախ կողմը ողորկ չէ, վերևի աջ անկյունում՝ ապակու վրա՝ ներկից մնացած բիծ և այլն: Ինչպես ցանկացած առարկա, սա էլ ունի բազմաթիվ հատկանիշներ, ես չեմ կարող բոլորը թվարկել:

-Բոլորը թվարկել անհնարին է, թվարկել միայն Էական հատկանիշները:

-Նշանակում է. ձեր առաջին ցուցումը սխալ է եղել:

-Այո՛, սխալ է եղել:

-Հիմա դուք այն ուղղել եք և ասում եք, որ պետք է թվարկել միայն Էական հատկանիշները: Իսկ ի՞նչ է նշանակում «Էական, կարևոր հատկանիշներ»: Դա Ձեզ համար ակներև է, իսկ ինձ՝ աշակերտիս՝ ո՛չ:

-Դա յուրաքանչյուրին է պարզ:

-Օրինակ Էական հատկանիշ է այն, որ ապակեկալն այն բաժանում է անպայման չորս մասնաբաժնի և ոչ թե երեքի:

-Ոչ, դա Էական հատկանիշ չէ: Երեքի դեպքում էլ այն պատուհան կմնա:

-Այստեղ հրավիրենք ճարտարապետին և ասացեք, որ դուք ուզում եք վերափոխել՝ չորս փեղկի փոխարեն եռափեղկ դարձնեք: Նա թույլ չի տա, ասելով, որ բոլորը քառափեղկ լուսամուտներ են, այդ մեկը կփչացնի շինության տեսքը: Նրա տեսակետից այդ հատկանիշը բավականին էական է: Կամ դուք ասացիք, որ շրջանակի վրայի քերծվածքը նույնպես էական հատկանիշ չէ: Սակայն տնային տնտեսուհու տեսակետից այդ բավականին էական է. նա պատրաստվում է վճարել ներկարարին, որ ծածկի քերծվածքը, սենյակի տեսքը գեղեցկացնելու համար: Ինչպե՞ս աշակերտը որոշի ո՞րն է էականը:

ՀԱՐՑՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ ՈՒՍՈՒՑՉԻՆ.


-1) Թվարկենք X-ի հատկանիշները, 2) թվարկենք Y-ի հատկանիշները, 3) համադրենք, 4) եթե բոլոր հատկանիշները համընկնեն, ապա հետևություն անել, որ X-ը նույն Y-ն է:

-Ապացուցենք, որ սա պատուհան է:

Վենի դիագրամ

X-ի հատկանիշները

Y-ի հատկանիշները



Վերջին ցուցումով ասված է՝ եթե X-ի և Y-ի բոլոր հատկանիշները համընկնում են, ապա X-ը նույն Y-ն է, եթե բոլոր հատկանիշները չեն համընկնում, ապա X-ը նույն Y-ը չէ: Համադրումը ցույց տվեց, որ համընկնում է երկու հատկանիշ միայն: Դուրս է գալիս, որ այդ

առարկան պատուհան չէ: Ո՞րն է նշված գործողությունների սխալը: Գնանք հակառակ ճանապարհով: Եթե X-ն ունի Y-ի բոլոր հատկանիշները, ուրեմն այն պատկանում է Y-ին: X-ի մեջ ստուգենք միայն այն հատկանիշների առկայությունը, որոնք կան Y-ի մեջ: Թվում է, թե ճիշտ է ստացվում, բայց քանի որ այս մոտեցումը ենթադրական է, նրա ստուգումը մի օրինակով քիչ է (Y-ը՝ անցք շենքի պատի մեջ, ծառայում է լույսի և օդի ներթափանցման համար, ունի փեղկ (եր), շրջանակ (ներ), գույն (եր)): Պարզվում է, որ այս մոտեցումն էլ կատարյալ չէ, երբ ուրիշ օրինակների, խնդիրների համար ենք փորձում:

Երկար մտորեցի, թե մտածողության ինչ քայլաշար է գծագրվում մարդու գլխում, երբ նա որոշակի խնդիր է լուծում: Դա կարող է լինել պրոցեսների նկարագրության ձևով և հանձնարարականների ձևով, թե ինչպե՛ս պետք է դրանք իրականացնել: Երբ մենք բացահայտում ենք և նկարագրում, թե որքան ռեալ է մտածում խնդիր լուծողը, մենք կառուցում ենք մոդել-նկարագրություն: Իսկ երբ մենք բացահայտում և ձևակերպում ենք, թե ինչպես պետք է մտածել՝ որոշակի խնդիրներ լուծելու համար, ապա մենք կառուցում ենք մոդել հանձնարարականներ, որոնք սովորաբար կառուցվում են մոդել-նկարագրությունների հիման վրա, քանի որ նախքան որոշելը, թե ինչպես պետք է ճիշտ մտածել որոշակի խնդիրներ լուծելիս, անհրաժեշտ է բացահայտել և նկարագրել, թե, փաստորեն, ինչպես են մտածում նրանք, ովքեր հաջողությամբ լուծում են այդ խնդիրները:[2]

2. ԲՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խնդիրների լուծման իմ փորձից.

Հենց առաջին դասարանից, երբ աշակերտներն արդեն տառաճանաչ են, մեկին հանձնարարվում է կարդալ խնդիրը (ծանոթացում բովանդակությանը): Ուրիշ աշակերտի հանձնարարվում է կարդալ խնդրի 2 բաղադրիչներից՝ խնդրի պահանջը՝ հարցը (այն, ինչ պետք է գտնենք): Մյուս աշակերտի հանձնարարվում է կարդալ՝ ի՞նչ է հայտնի պայմանում (այն, ինչ գիտենք, որ կօգնի գտնելու հարցի պատասխանը): Առաջին դասարանում

աշակերտները խնդիրները նմանեցրել են հանելուկի, որտեղ հուշող բառերով գտնում են նրա պատասխանը: Եթե կարիքը կա՝ պատմում ենք խնդրի բովանդակությունը՝ օգնելով թույլ աշակերտներին:


Համառոտագրում ենք խնդիրը: Մինչ այդ մենք նմանատիպ աշխատանքներ ենք կատարել պատկերագարողումների տեսքով: Երեխաներն արդեն գիտեն, որ ամրագրելու են հենակետային բառերը, տվյալներն ու որոնելին, խնդրի լուծման հարցում կողմնորոշող մեծությունների միջև տրված կապերը:


Կարդացածը վերլուծելու գործընթացը սկզբնական փուլում կարող է իրականացվել ուսուցչի ղեկավարությամբ, իսկ հետո այն պետք է հանձն առնի աշակերտը, բարձրաձայն մտածել փորձելով:

Կարելի է կազմել գծագիր կամ աղյուսակ, գրաֆիկ և այդ ձևով տալ խնդրի բովանդակության մեկնաբանումը:

Օրինակ՝ մեր խնդիրն է.

2. Մեր տնից մինչև դպրոց 50 մ է: Ես գնում էի դպրոց, բայց երբ անցել էի 20 մ, հիշեցի, որ մոռացել եմ գիրքս: Ես վերադարձա, վերցրի գիրքը և գնացի դպրոց: Ի՞նչ հեռավորություն ես անցա (Ի դեպ, այս խնդիրն էլ մեկ անգամ ևս օգնում է, որ աշակերտները վարժվեն երրորդ դեմքով պատմելուն):





Անցած ամբողջ ճանապարհը՝ ? մ

Ծանոթ են միավորող փակագծին և ?՝ հարցական նշանին (ինչը չգիտեն, որ պետք է իմանան):

3. -Ի՞նչ է պահանջվում խնդրում ?

-Թե ի՞նչ հեռավորություն անցավ աշակերտը (որքան ճանապարհ անցավ)?

4. Վերլուծություն.

-Դրա համար ի՞նչ է անհրաժեշտ ունենալ:

-Անցած ճանապարհի մասերի երկարությունները:

-Գիտե՞նք դրանք:

-Այո. 20 մ, նորից՝ 20 մ, 50 մ:


Եզրակացություն.

Պետք է գումարել անցած ճանապարհի բոլոր 3 մասերը:

5. Գործողությունների գրառում.

$$20 \text{ մ} + 20 \text{ մ} + 50 \text{ մ} = 90 \text{ մ}$$

Պատ.՝ 90 մ:



6. Ստուգում՝ $90 - 50 - 20 - 20 = 0$

7. Լուծման հետազոտում. Լուծման արտահայտությունը. $? = 20 + 20 + 50$

Խնդրի լուծման այլ տարբերակ չկա (Առաջին դասարանում դեռ բազմապատկման գործողություն չեն սովորել ($2 * 20 + 50$)):

Եթե աշակերտը հասկանում է խնդիրը, հետագայում նա ինքնուրույն կարող է լուծել նմանատիպ խնդիրներ: Հաճախ առավել օգտակար է միևնույն խնդիրը լուծել մի քանի տարբեր եղանակով, քան լուծել նմանատիպ շատ խնդիրներ: Համեմատելով լուծման տարբերակները, նրանք կպարզեն արդյունավետը:

Խնդիր.[5]

2 տուփում կա 22 կոնֆետ: Առաջինում 2 կոնֆետ ավելի է, քան երկրորդում: Քանի՞ կոնֆետ կա յուրաքանչյուր տուփում:

Լուծման առաջին տարբերակ (եղանակ)

- 1) $22 - 2 = 20$ (երկրորդ տուփի կոնֆետները՝ վերցրած 2 անգամ)
 - 2) $20 : 2 = 10$ (երկրորդ տուփի կոնֆետները)
 - 3) $10 + 2 = 12$ (առաջին տուփի կոնֆետները)
- (Ժամանակ խնայելու նպատակով ընդգծում ենք խնդրի պատասխանները)

Լուծման երկրորդ տարբերակ (եղանակ)

- 1) $22 - 2 = 20$
- 2) $20 : 2 = 10$ (երկրորդ տուփի կոնֆետները)
- 3) $22 - 10 = 12$ (առաջին տուփի կոնֆետները)

Լուծման երրորդ տարբերակ (եղանակ)

1) $22+2=24$ (2 տուփում միասին՝ 2-ով շատ, այսինքն՝ առաջինի կոնֆետները՝ վերցրած 2+)

2) $24 : 2=12$ (առաջին տուփի կոնֆետները, շատը)

3) $12-2=10$ (երկրորդ տուփի կոնֆետները)

Լուծման չորրորդ տարբերակ (եղանակ)

1) $22+2=24$

2) $24 : 2=12$ (առաջին տուփի կոնֆետները)

3) $22-12=10$ (երկրորդ տուփի կոնֆետները)

Լուծման հինգերորդ տարբերակ (եղանակ)

1) $22:2=11$ (կոնֆետ՝ 2 տուփում հավասար)

2) $2 : 2=1$ (յուրաքանչյուր մասում ավելի կամ պակաս)

3) $11+1=12$ (կոնֆետ՝ առաջինում)

4) $11-1=10$ (կոնֆետ՝ երկրորդում)

Լուծման վեցերորդ տարբերակ (եղանակ)

1) $22:2=11$

2) $2 : 2=1$

3) $11+1=12$ (երկրորդում)

4) $12-2=10$ (առաջինում)

Լուծման յոթերորդ տարբերակ (եղանակ)

1) $22:2=11$

2) $2 : 2=1$

3) $11+1=12$ (առաջինում)

4) $22-12=10$ (երկրորդում)

Լուծման ութերորդ տարբերակ (եղանակ)

1) $22:2=11$

- 2) $2 : 2 = 1$
- 3) $11 - 1 = 10$ (երկրորդում)
- 4) $22 - 10 = 12$ (առաջինում)

Լուծման իններորդ տարբերակ (եղանակ)

- 1) $22 : 2 = 11$
- 2) $2 : 2 = 1$
- 3) $11 - 1 = 10$ (երկրորդում)
- 4) $10 + 2 = 12$ (առաջինում)

Քննադատորեն մտածող աշակերտը գտնում է խնդրի սեփական լուծումը և այն ամրագրում ողջամիտ ու համոզիչ փաստարկներով: Նա հասկանում է, որ հնարավոր են միևնույն խնդրի այլ լուծումներ և փորձում է ապացուցել իր ընտրած լուծման ամենատրամաբանական ու արդյունավետ լինելը:

Բնական է, որ երեխաները տարբեր են իրենց ընդունակություններով, ուստի հարկավոր է կիրառել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում՝ միաժամանակ նրանց մոտ զարգացնելով ինքնուրույն աշխատելու կարողություն: Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սատարելով հանդերձ, պետք է աշակերտին մղի ինքնուրույն հարթելու ու արդյունքի հասնելու իր ճանապարհը, կարողանա տեղեկատվական աղբյուրներից գտնի իրեն անհրաժեշտը, կողմնորոշվի այդ նյութի սահմաններում և ինքնուրույն ուսումնասիրի այն: [4] Սակայն այդ աշխատանքը նրա համար պետք է լինի հաղթահարելի: Որպեսզի ուժեղ աշակերտը չձանձրանա, իսկ թույլ սովորողը ժամանակ ունենա յուրացնելու նյութը, կարելի է կիրառել քարտ-հուշաթերթեր, առաջարկել ուժեղ աշակերտին աշխատել նույն առաջադրանքի հետ, բայց փոխված պայմաններով, օրինակ՝ կազմել տրված խնդրի հակադարձը, խնդրի պայմանի ավելացում (ընտրել տվյալներ, որոնցով կարելի է լրացնել խնդրի պայմանը առաջադրված հարցին պատասխանելու համար, խնդրի համար մտածել հարցեր, որպեսզի դրանք լուծվեն օրինակ 2 գործողությամբ, 3,4 և այլն): Օրինակ՝ մեր այս խնդրի համար կարելի է առաջարկել, որ յուրաքանչյուր տարբերակի համար կազմի արտահայտություններ.

Տարբերակ	Երկրորդ տուփում	Առաջին տուփում
I	$(22-2):2$	$(22-2):2+2$
II	$(22-2):2$	22-10
III	$(22+2):2-2$	$(22+2):2$
IV	22-12	$(22+2):2$
V	22:2-2:2	22:2+2:2
VI	22:2+2:2	12-(22:2+2:2)
VII	22-(22:2+2:2)	22:2+2:2
VIII	22:2-2:2	22-(22:2-2:2)
IX	22:2-2:2	22:2-2:2+2

1. Նախ լուծում ենք տիպային խնդիրներ, որոնց լուծման ավգորիթմը՝ քայլաշարը հայտնի է աշակերտներին:

2. Լուծվում է տիպային խնդիր, որի ավգորիթմը դեռևս հայտնի չէ նրանց:

3. Լուծվում է ոչ տիպային խնդիր, որն ստեղծում է պրոբլեմային իրավիճակ: Դրանք մեծ մասամբ մաթեմատիկական խաղեր, տրամաբանական կատակ-խնդիրներ (օրինակ՝ ո՞րն է ավելի ծանր՝ 1 կգ երկաթը, թե՛ 1 կգ բմբուլը) և հանելուկներ են, որոնք մեծամասամբ համապատասխանում են չափորոշի երրորդ մակարդակին: Այդպիսի խնդիրները չեն լուծվում պարզապես թվաբանական գործողություններ կատարելով: Այստեղ պետք է կատարել տարբեր դատողություններ, փնտրել երևույթների պատճառները: Չէ՞ որ հասկանալ որևէ երևույթ՝ նշանակում է բացահայտել էականը, գիտակցել դրա առաջացման պատճառները և փոխադարձ կապերն այլ երևույթների հետ: Տրամաբանական (ոչ ստանդարտ) լուծումն էլ է մեզ օգնում այդ հարցում: Աստիճանաբար այդօրինակ

խնդիրներ լուծելով՝ դրանք կդառնան ստանդարտ: Այն հաճույքը, որ երեխան ստանում է հետաքրքրաշարժ խնդիրներ լուծելիս, խթան է դառնում կյանքի այլ ոլորտներում ևս ձգտելու հասնել հաջողության՝ չվախենալով դժվարություններից, և անգամ կենցաղային մեծ ու փոքր խնդիրները դիտարկել բազմակողմանիորեն:

Օրինակ՝ «Բազմապատկում» թեման սովորելիս, երբ աշակերտը հաշվում է 2-ական կամ գումարման եղանակով՝ $2+2+2+2=4(\text{հատ}) * 2$ (երբ 2-ը վերցնում ենք 4 անգամ, բայց չենք նստի 100 հատ այդպես 2-ները գումարել, պետք է այդ ձևով ստեղծված աղյուսակն ուղղակի անգիր սովորել: Հետո աշակերտն օգտվում է բազմապատկման հատկությունից. $100 * 2 = 2 * 100$ ($100 + 100$), հետո սկսում է եզրակացություններ կատարել, որ 2-ով բազմապատկումը միշտ զույգ թիվ է ստանում(կրկնապատկվում է թիվը, երբ բազմապատկում ենք 2-ով)):

5-ի աղյուսակում թվերը վերջանում են կամ 0-ով (երթե 5-ը զույգ թվով ենք բազմապատկում), կամ 5-ով (երթե 5-ը կենտ թվով ենք բազմապատկում):

Իսկ 6-ով բազմապատկվող յուրաքանչյուր զույգ թիվ կհսվում է, ապա նույն թիվը աջից գրվում է ամբողջությամբ:

$$6 * 2 = 12$$

$$2 : 2 = 1$$

$$6 * 4 = 24, \quad 6 * 6 = 36$$

$$4 : 2 \quad 6 : 2$$

$$6 * 8 = 48$$

$$8 : 2$$

Եթե 9-ը բազմապատկենք 10-ով, կլինի 90 (10-ի և 1-ի բազմապատկման աղյուսակը սովորելը հեշտ է, թիվը 1-ով բազմապատկած՝ հենց ինքն է, իսկ 10-ով՝ աջից 0 ենք կցագրում):

Իսկ 9-ը 9-ով բազմապատկած կլինի՝ 90-9-ը՝ 81-ը:

$$9 * 8\text{-ը կլինի՝ } 80\text{-1 հատ } 8 \quad 80 - 8 = 72, \quad 9 * 8 = 72$$

$$9 * 7 = 63 \quad (9 * 7 = 70 - 1 * 7 = 63, \quad 9 * 7 = 63)$$

Աշակերտները օգտվելով հատկությունից՝ $7 * 9$ գիտեն, որ $9 * 7$ -ն է և հեշտությամբ հաշվում են:

Ես նկատել էի, որ երբ բազմապատկման աղյուսակը հերթականությամբ էի հարցնում, կային աշակերտներ, որ մտքով ոչ թե բազմապատկում, այլ գումարելով էին պատասխանում, օրինակ՝

$$7*1=7$$

$$7*2=7+7=14$$

$$7*3=14+7$$

Աշակերտների հնարամտությունը ժպիտ էր առաջացնում, բայց միևնույնն է, ստիպված էին լինում աղյուսակը անգիր սովորել, ավելին՝ երաժշտական մտածողության զարգացման նպատակով սովորում էին ԿԱԻ Վայոց Ձորի մասնագետ՝ Աիդա Խալաթյանի «7-ի աղյուսակի երգը»[6]

Եկեք արագ միասին երգենք

Յոթի աղյուսակը, որ այն լավ հիշենք:

Ի՞նչ է անում զրո անգամ յոթ:

Ջրոն միշտ զրո է, չե՞ք հիշում՝ ամոթ:

Մեկ անգամ յոթը յոթ է պարզապես,

Չէ՛ որ մեկ յոթը յոթ է իսկապես:

Երկու անգամ յոթ. չգիտե՞ք՝ աստու,

Կրկնակի յոթն անում է տասնչորս:

Երեք անգամ յոթ անում է քսանմեկ,

Ուտքերով դոփե՛ք, որ դա լավ հիշեք:

(առաջին շարք՝ 7 դոփյուն + II շարք՝ 7 դոփյուն + III շարք՝ 7 դոփյուն)

Ե՛ս էլ կդոփեմ, կհաշվենք մենք շուտ,

Չորս անգամ յոթ անում է քսանութ:

Հինգ անգամ յոթ կտա երեսունհինգ,

Երեսունհինգ է նաև յոթ հատ հինգ:

Վեց անգամ յոթ քառասուներկու կանի,

Երեք անգամ յոթն է դա կրկնակի:

Յոթ անգամ յոթ քառասունինն արեց,

Ութ անգամ յոթ կտա հիսունվեց:

Սեսեք, թե ինչ լավ է ամեն ինչ ստացվում:

Տասն անգամ յոթ՝ եղավ յոթանասուն,

Յոթանասունից էլ որ մեկ հատ հանենք,

Կլինի ինն անգամ յոթ՝ վաթսուներեք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաները մտածում են տարբեր ձևերով, իրենց մտավոր կարողությունների առանձնահատուկ համադրությամբ:

Բազմաբնույթ մտածողությունը օգնում է մտածելու ռազմավարություններ մշակելու, ինչպես նաև՝ մաթեմատիկայի մեջ գործնական և ստեղծագործական մոտեցումներ դրսևորելու համար: Այս ամենի շնորհիվ աշակերտները հնարավորություն են ստանում բացահայտելու ինչպես սեփական, այնպես էլ՝ ընկերների եզակի կարողությունները և վայելելու այդ բավականությունը: Ապացուցված է, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ի վիճակի են, իրենց զարգացման մակարդակին համապատասխան, կատարելու բարդ մտածական գործողություններ, ինչի շնորհիվ մտածողության քննադատականությունը սովորողի հաջող ուսման պայման է դառնում: Դրա բացակայության պայմաններում սովորողը ամբողջությամբ կախված է լինում արտաքին հասանգամանքներից, մշտապես ունենում է ղեկավարվելու, վերահսկվելու կարիք, ինչն էլ նրան դարձնում է «ուրիշի կամքի կամակատար», մինչդեռ ցանկացած հասարակության կայուն զարգացման համար պետք են վերլուծող, խելացի որոշումներ կայացնող սերունդ, որի ձևավորման գործում է առանցքային է կրթության և այդ գործընթացում ներգրավված անհատների դերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավերին Վ.Ա., Երեխաների և դեռահասաների հոգեբանություն / V.A. Averin - SPb .: Mikhailova, 1998 .-- 379 p.
2. Բուստրոմ Ռ., Ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացում/ R. Bustrom - Moscow: Open Society, 2000. - 215p.
3. Դուբրավինա Ի.Վ., Տարիքը և կրթական հոգեբանությունը, Ակադեմիա, 2002.
4. Вопросы алгоритмизации и программирования обучения, сб. под ред. Л. Н. Ланды, вып. 1, м. "Просвещение", 1969, вып. 2, м. "Педагогика" 1973
5. Ланда Л.Н., Алгоритмизация в обучении, м. "Просвещение", 1966
6. «Նախաշավիղ»-4, 2010թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Դասվար՝ Մկրտչյան Արևիկ Աղվանի
Ղեկավար՝ մ.գ.թ. Լուսինե Միրաբյան

Թեմա

**ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Վանաձոր 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. Հասկանալով կարդալու կարողությունների ձևավորումը կրտսեր դպրոցում.....6

ԳԼՈՒԽ 2. Հասկանալով կարդալու կարողության ձևավորումը մաթեմատիկա առարկայի դասավանդման գորընթացում.....8

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ.....11

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԼԱԶՐԻ ԴԱԶԱՐՅԱՆ

Թեմա

ԹԵՄԱ: ԹԵՄՏԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ.գ.թ. , դոցենտ Լ. Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1 Թեստ , թեստի կառուցման սկզբունքներն ու ձևերը:.....	4
1.1 Թեստ.....	4
1.2 Թեստի հատկորոշիչները.....	7
1.3 Թեստի կառուցման սկզբունքները.....	8
1.4 Թեստի տեսակները.....	10
Գլուխ 2 Հայտորոշիչ թեստ.....	13
Եզրակացություն.....	16
Գրականություն.....	18

Ներածություն

Թեման արդիական եմ համարում , որովհետև հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել են սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգ: Ըստ դրա՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվելու են միավորային և ձևավորող գնահատում, իսկ տարրական դպրոցում՝ միայն ձևավորող գնահատում: Թեստը կիրառվում է որպես գնահատման արագ, արդյունավետ, անաչառ մի ձև, որը հարմար է կարճ ժամանակահատվածում շատ մարդկանց ստուգելու և գնահատելու համար: Դրա դերը հատկապես մեծանում է համակարգչով ինքնաստուգում և ինքնավերահսկողություն իրականացնելու ժամանակ:

Հետազոտական աշխատանքիս հիմնական նպատակը թեստերի, թեստերի կազմման խորացված ուսումնասիրությունն է և կիրառումը ուսումնական գործընթացում:

Դրա համար խնդիր եմ դրել ուսումնասիրել և նկարագրել թեստերի տեսակները, բացահայտել կառուցման սկզբունքները, վերլուծել կիրառման ոլորտները, թեստեր կազմելու սկզբունքները:

Թեստ բառը անգլերենում նշանակում է փորձարկում կամ ստուգում: Այն ի հայտ է եկել 20 – րդ դարասկզբին և կիրառվել է հոգեբանության, սոցիոլոգիայի և մանկավարժության ոլորտներում: Այն որոշակի հոգեբանական կամ սոցիոլոգիական հետազոտություններ կատարելուն է ծառայել: Ավելի ուշ ամերիկացի մանկավարժներն սկսեցին թեստը կիրառել որպես սովորողների ձեռք բերած գիտելիքների, դրանց ընկալման և կիրառության ստուգման ձև:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը՝

Գլուխ 1՝ Թեստ , թեստի կառուցման սկզբունքներն ու ձևերը:

1.5՝ Թեստ

1.6՝ Թեստի հատկորոշիչները

1.7՝ Թեստի կառուցման սկզբունքները

1.8՝ Թեստի տեսակները

Գլուխ 2՝ Հայտորոշիչ թեստ

ԳԼՈՒԽ 1. ԹԵՍՏ, ԹԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1 ԹԵՍՏ

Ուսումնառության ընթացքում իրականացվող գնահատումը գործընթաց է, որով բացահայտվում և վերլուծությունների միջոցով վերահսկվում են ուսուցման արդյունքները և դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշչի պահանջներին: «Գնահատումը շարունակական, անընդհատ գործընթաց է: Այն կազմված է քանակական և որակական գնահատումներից: Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսի մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումները, գրավոր թեստերը, տնային աշխատանքներ, հետազոտական բնույթի աշխատանքներ, նախագծեր, բանավոր հարցումներ, սովորողի մասին կատարած գրառումների վերլուծությունը: Դրանց մեջ իր ուրույն տեղն ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են»: [1, էջ 3]

Թեստը աշակերտի կարողությունների չափման ընթացքում աշխատում է որպես նույնպիսի գործիք, ինչպիսին է քանոնը՝ հեռավորությունը չափելիս, կամ ժամացույցը՝ ժամանակը հաշվելիս:

Թեստը որոշակի նպատակով առաջադրանք է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Ուսումնական գործընթացում թեստերի կիրառումը ունի մի շարք առավելություններ՝

- հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր մասերով ստուգել ուսումնական նյութի յուրացումը,
- կարողանում է արագ գնահատել մեծ թվով սովորողների,
- նվազեցնում է սուբյեկտիվ գործոնը,

- հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի դժվարությունները՝ շնորհիվ առաջադրանքի փուլային կատարման,
- պարզելու սովորողի « ցավոտ կետը » , շտկելու նկատված թերությունները, նպաստելու սովորողի առաջընթացին:

Թեստը բաղկացած է առաջադրանքներից: Կարևոր է, որ առաջադրանքը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ: Թեստը կազմելիս պետք է իմանալ, թե ինչ ենք չափում / սովորողի գիտելիքը, կարողություն, հմտությունը/, և ինչ նպատակով ենք չափում: Առաջադրանքների տեսակներն ընտրվում են նշված պահանջներին համապատասխան:

- 1 Հիշել ինֆորմացիա և վերարտադրել
- 2 Հասկանալ ինֆորմացիան, մեկնաբանել, դասակարգել, ցուցադրել ինչ-որ օրինակ, ամփոփել, բացատրել պարզ երևույթներ:
- 3 Կիրառել ինֆորմացիան, կատարել որոշակի գործողություններ:
- 4 Վերլուծել ինֆորմացիան, առանձնացնել կարևոր և ոչ կարևոր տեղեկությունը:
- 5 Գնահատել տեղեկատվությունը, գիտելիքը, կատարել դատողություններ, քննադատել:
- 6 Ստեղծագործել, օգտագործել գիտելիքները կամ ինֆորմացիան ոչ ստանդարտ պայմաններում:

Թեստում ընդգրկված յուրաքանչյուր առաջադրանք պետք է օգնի չափման գործընթացին՝ տարբերակելով սովորողների ունակությունները:

Թեստում կարող են ներառվել առաջադրանքների տարբեր տեսակներ՝

1. կարճ պատասխան պահանջող
2. ճիշտ պատասխանի ընտրությամբ
3. պատասխանի ընդարձակ շարադրմամբ
4. ապացուցում պահանջող
5. գործնական, կիրառական նշանակություն ունեցող
6. կառուցվածքի փոփոխություն պահանջող
7. գծապատկերի կազմման պահանջով
8. համապատասխանեցման պահանջով

9. Բաց թողածը լրացնելու պահանջով

10. ստեղծագործական մոտեցում պահանջող կամ դրանց համադրմամբ

Առաջադրանքների մի մասը հիմնականում ստուգում են գիտելիքի կամ տեղեկատվության մտապահումը, դրանց ընկալումը և կիրառումը: Սրանք իրենց բնույթով ապահովում են գնահատման անաչառությունը, հետևաբար՝ առավել հուսալի են: Այսօրինակ առաջադրանքները կազմելը դժվար է, բայց արդյունքները ստուգելը և ամփոփելն է հեշտ:

Ստեղծագործական բնույթի ծավալուն պատասխան պահանջող առաջադրանքները մտածողության բարձր մակարդակ են նշում, հետևաբար՝ գնահատման անաչառությունը աստճանաբար նվազում է, քանի որ ստեղծագործական աշխատանքն ու երևակայության դրսևորումը գնահատելը հեշտ գործ չէ:

Եթե բնորոշելու լինենք թեստը, ապա նրան հատուկ են՝

1. Համակարգվածությունը. ընդգրկված առաջադրանքները միայն միևնույն առարկայի շուրջ են, նույնիսկ միևնույն թեմայի շրջանակն են ընդգրկում և կազմված են պարզից դեպի բարդ աստճանական զարգացումով:
2. Հատուկ ձև. թեստը հարցերի կամ խնդիրների հավաքածու չէ, առաջադրանքը հիմնականում ձևակերպվում է որպես ճիշտ կամ սխալ արտահայտություն, որը պատասխանով է պայմանավորված:
3. Առաջադրանքի տրամաբանական որոշակիություն. սա նշանակում է, որ թեստային առաջադրանքը երկվության կամ կասկածի առիթ չպետք է տա, այն ունի որոշակի դրական կամ բացասական պատասխան:
4. Թեստի առաջադրանքի պատասխանը հակիրճ դատողություն է, ընդ որում այդ ճիշտ պատասխանը նա ընտրում է արդեն տրվածներից: Սա թեստի կարևոր հատկանիշներից մեկն է. պատասխանն արդեն կա, հարցվողը պիտի ընտրի տրվածներից:
5. Ունի հստակ կառուցվածք. թեստային առաջադրանքների միջև գոյություն ունի հաջորդական կապ. ամեն առաջադրանք բխում է նախորդից և մի տեսակ առավել զարգացում է արձաձվող թեման:

6. Հաջողությունը պայմանավորված է փորձարկումով. թեստային առաջադրանքի մյուս շատ կարևոր առանձնահատկությունն այն է, որ միայն որոշակի փորձարկումից հետո թեստը կարելի է վստահորեն հաջողված համարել:

Թեստի արդյունքները կարող են օգտագործվել.

- առարկայի ծրագրով և չափորոշիչներով սահմանված գիտելիքների, հմտությունների և կարողությունների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու,
- ըստ առաջադիմության աշակերտների դերը դասարանում սահմանելու,
- ընտրության (մասնակցություն օլիմպիադաների, խրախուսում, բուհի ընդունելության և այլն),
- հայտորոշման,
- կրթության խթանման և բարելավման նպատակով:

Վերը նշված նպատակներին ավելի արդյունավետ ծառայելու համար հարկավոր է օգտագործել տարբեր բնույթի թեստեր, որոնք միմյանցից կտարբերվեն ոչ այնքան առաջադրանքների ու հարցերի ընտրությամբ, որքան գնահատման առանձնահատկություններով և իրենց հատուկ բնութագրերով, այսպես կոչված հատկորոշիչներով:

1.2 ԹԵՍՏԻ ՀԱՏԿՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Թեստի նպատակային կիրառության համար բավարար չէ միայն , որ այն ճիշտ և լավ ընտրված առաջադրանքներ ու հարցեր պարունակի: Ամբողջական լինելու համար յուրաքանչյուր թեստ պետք է բնութագրվի հատկորոշիչներով: Դրանք հանդես են գալիս որպես ուղեցույց թեստի անցկացման, գնահատման ու արդյունքների արժևորման համար:

Հատկորոշիչները կազմում են յուրաքանչյուր թեստի տեսական հենքը և տեղեկություններ են տալիս այն մասին, թե

- ո՞ր դասարանի համար է նախատեսված,
- ի՞նչ նպատակ է հետապնդում. այն է՝ որ թեմայի կամ թեմաների վերաբերյալ է ստուգվելու սովորողների գիտելիքներն ու հմտությունները,

- ո՞ր հմտությունների վրա է դրվում շեշտը:

Ինչպիսի՞ն է.

- առաջադրանքի տիպը,
- տեքստի տիպը և ծավալը (բառերի կամ նիշերի քանակը)
- առաջադրանքների քանակը,
- բարդության աստիճանը,
- յուրաքանչյուր հարցին տրվող միավորների չափաբաժինը
- միավորների սանդղակավորումը (գնահատականի վերածելը)
- յուրաքանչյուր առաջադրանքի կատարմանը հատկացվող ժամանակը:

Ինչպե՞ս ապահովել թեստի հաջողվածությունը.

- անհրաժեշտության դեպքում կարողալ թեստի առանձին առաջադրանքների պահանջները բարձրաձայն և բացատրել թեստի պահանջները հասկանալի ձևով,
- օժանդակել աշակերտներին միայն ոչ բովանդակային հարցերում,
- ապահովել ժամացույցի առկայությունը դասարանում,
- գրատախտակին նշել թեստի կատարման սկիզբը և ավարտը
- թեստի կատարման ընթացքում աշակերտներին հիշեցնել մնացած ժամանակի մասին, վերջին 10 րոպեի ընթացքում հիշեցնել ամեն 3 րոպեից հետո
- զգուշացնել, ավարտելուց հետո ստուգել և ներկայացնել ուսուցչին,
- հարցարանում բավականաչափ տեղ թողնել հարցերից հետո՝ աշխատելու համար:

1.3 ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Թեստ կազմելու հիմնական սկզբունքներն են՝ հավաստիությունը կամ վավերականությունը, հուսալիությունը և արդյունավետությունը:

Թեստի հուսալիությունը ստուգման և գնահատման հաստատուն և համարժեք լինելն է, այսինքն՝ արդյունքները գրեթե նույնն են ստացվում, եթե միևնույն խմբին տարբեր օրերի հանձնարարվում են նմանօրինակ թեստեր: Բացի դրանից՝ թեստը հուսալի է, եթե գնահատման միևնույն չափանիշները կիրառելու դեպքում աշակերտներից յուրաքանչյուրը նույն մակարդակի

առաջադրանքի կատարման արդյունքում կունենա համարժեք կամ գրեթե նույն միավորները: Հուսալիությունը ստուգման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է:

Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Այստեղ բացահայտ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող սովորողը: Կատարված աշխատանքներն ստուգվում են գնահատման կամ հետազոտման և ուսուցման նպատակով: Թեստի արդյունքներն ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ կամ ձեռքբերումներ ստուգելու համար:

Թեստի հավաստիությունը կամ վավերականությունը ընտրված առաջադրանքների բովանդակության և հարցվողի անհատական որակների համապատասխանությունն է: Այսինքն՝ առաջադրանքները համապատասխանում են սովորողի տարիքային առանձնահատկություններին, նրա իմացական մակարդակին, ընդունակություններին: Եթե ուսուցիչը որոշել է ստուգել տվյալ քերականական կանոնի ընկալումը, ապա նա միայն դա պիտի ստուգի և դրան համապատասխան առաջադրանք կազմի: Առաջադրանքների և հարցադրումների տեսակները և դրանց բովանդակությունը աշակերտին անդեն ծանոթ պիտի լինեն: Նա դրանց նմանները կատարել է դասարանում անհատական կամ խմբային աշխատանքի կամ ուսուցանող /ձևավորող/ առաջադրանքներ կատարելիս: Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է: Թեստի արժևորման և կատարելագործման համար հիմնարար բնութագրիչ է հավաստիությունը, քանի որ իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով արժևորվում և որակապես բարելավվում է թեստը:

Թեստի արդյունքում ստացված թվանշաններն այնքան հետաքրքրական չեն, որքան դրանց ինչ – որ բնութագրիչներով օժտված լինելը և այն, թե դրանց մեկնաբանություններից ինչ հետևություններ են արվում սովորողների, սովորելու, դասավանդման, կրթակարգի, չափորոշչի և ծրագրերի մասին:

Թեստի չափորոշչային հավասարությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են չափորոշչային պահանջներն արտահայտված գնահատման մեջ՝ առաջադրանքների միջոցով:

Թեստը պետք է լինի իրագործելի թե՛ մարդկային, թե՛ տեխնիկական և թե՛ ժամանակի առումներով:

Թեստը պետք է լինի արդյունավետ : Արդյունավետ թեստը ենթադրում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունքի ապահովում: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն տեքստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստն արդյունավետ է , եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ դժվար լինի: Այն պետք է լինի միջին բարդության:

Հարցը առաջադրանքը կատարելու հանձնարարականն է համապատասխան ցուցումներով, որն ակնկալում է պատասխան: Այն ամեննին էլ պարտադիր չէ, որ ուղեկցվի հարցական նշանով: Առաջադրանքի հանձնարարականը որպես կանոն համարվում է տարբեր հանձնարարականները: Կարևոր է, որ պահանջը ձևակերպվի պարզ, հստակ, միանշանակ:

Թեստը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի առաջադրանքներից, որոնք էլ իրենց հերթին տարբեր հարցերից ու կետերից: Յուրաքանչյուր կետ ըստ էության բացահայտում է տվյալ առաջադրանքը կատարողի ունակություններն ու հմտությունները և տարբերակում աշակերտներին ըստ գիտելիքների ու հմտությունների:

1.4 ԹԵՍՏԻ ՏԵՍՍԿՆԵՐԸ

Ըստ նպատակադրման թեստերը կարող են լինել.

1. Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստ, որը ներառում է մի քանի տարվա ընթացքում ուսուցանված նյութ: Այդպիսին են կրթարանների ավարտական և բուհերի ընդունելության համար կազմված թեստերը:

2. Ամփոփիչ (առաջադիմության ստուգման) թեստ, որը տրվում է կիսամյակի կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար:
3. Հայտորոշիչ կամ ախտորոշիչ թեստ, որը տրվում է պարբերաբար՝ հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով:
4. Տեղակայման թեստ, որը տրվում է սովորողի ուսումնառության տեղը որոշելու նպատակով, դասընթացի սկզբում սովորողներին տեղակայելու ըստ իրենց գիտելիքի և կարողությունների, բացահայտում է տվյալ առարկայից սովորողի ունեցած պաշարը: Այդպիսի թեստերը սովորաբար կիրառվում են սովորողներին խմբերի բաժանելու ուսուցման համապատասխան ծրագիրը ճշտելու համար:

Առաջին տեսակի թեստերը ստեղծվում են դպրոցից կամ կրթարանից դուրս նախապես ստեղծված բնութագրիչների հիման վրա, նախարարության կազմած հատուկ հանձնաժողովի կողմից: Նպատակն է կատարել ընտրություն բուհ կամ այլ հաստատություն ընդունվելու, կամ վկայական տալու նպատակով:

Ամփոփիչ թեստը, ի տարբերություն հայտորոշիչ թեստերի, հիմնականում ստուգողական բնույթի է: Ցանկացած թեստ ի վերջո ունի ստուգման, բացահայտման, դասակարգման գործառույթ: Հանրակրթական դպրոցում թեստավորումն ուսուցման, ուսումնառության ու դրանց արդյունքների գնահատման և արժևորման միջոց է: Ստուգումը կարող է իրականացվել ամենատարբեր նպատակներով: Ամփոփիչ թեստի նպատակը, տվյալ դեպքում ոչ թե անմիջականորեն ուսուցումը կամ հետադարձ կապի ապահովումն է, այլ դրանց արդյունքների ստուգումն ու ամփոփումը՝ հաշվետվության նպատակով: Ուսուցման արդյունքների ստուգումը կատարվում է հանրակրթական դպրոցի ծրագրային նյութի և չափորոշիչների սահմաններում: Հանրակրթական դպրոցում ամփոփիչ թեստերն անցկացվում են.

- որևէ կոնկրետ թեմա, ենթաթեմա կամ մի քանի թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով,
- կիսամյակ ամփոփելու նպատակով,

- հանրակրթական մի աստիճանից մյուսին անցման ընտրության նպատակով
- ընտրության (գտման) նպատակով (օլիմպիադա, միասնական քննություն, բուհի ընդունելություն և այլն),
- տնօրինության կամ այլ գերատեսչությունների կողմից վերահսկողություն սահմանելու նպատակով,
- վկայականի շնորհման նպատակով:

Ուստի ամփոփիչ թեստերը ենթադրում են.

- ավելի լայն ու խորը գիտելիքների և հմտությունների ստուգում,
- առաջադրանքների տեսակների բազմազանություն,
- թեստի անցկացման համեմատաբար երկար ժամանակով (ամբողջ դասաժամ կամ ավելի),
- պարզից դեպի բարդ սկզբունքի ապահովում:

Քանի որ ամփոփիչ թեստերի հիմնական նպատակը տվյալ առարկայից սովորողի ծրագրային նյութին տիրապետելու մակարդակի ճշտումն ու գնահատումն է, ինչին հաճախ նաև փաստաթղթային ձևակերպում է տրվում, դրանց առաջադրանքներն ու հարցերը պետք է կազմվեն առանձանակի ուշադրությամբ և խնամքով: Դա նշանակում է, որ թեստն ամբողջությամբ , դրա յուրաքանչյուր առաջադրանք և հարց կազմելիս պետք է մտածել.

- թեստում դրանց ունեցած կշռի մասին,
- հարցերն բավականին օբյեկտիվ լինելու մասին,
- հարցերը հստակ ձևակերպելու մասին,
- հարցերը միանշանակ պատասխաններ ունենալու մասին,
- թեստի հուսալիությունը, արդյունավետությունն ու հավաստիությունն առավելագույնս ապահովելու մասին:

Թեստի արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարելի է որոշել աշակերտների հետ հետագա անելիքները, ինչպես նաև ուսուցանվող նյութի առավել ընկալելի մեթոդի ընտրությունը:

Թեստերն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Այդպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Եթե այն ընդգրկում է և արտացոլում է իրապես

ուսուցանված և սովորողների կողմից ընկալած նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է: Բոլորիս հայտնի է ընդունելության թեստերի բացասական ազդեցությունը դպրոցի և ուսուցման վրա, որի հիմնական նպատակն է ընդգրկել այնպիսի նյութեր, որոնք ուսուցման ընթացքում չի ամրապնդվում, որը հանգեցնում է մասնավոր պարապմունքների և հետևաբար դասերին չներկայանալու:

Գլուխ 2. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

Որևէ ուսումնական փուլ սկսելուց առաջ պետք է իրականացվի նախնական հայտորոշում, որի նպատակն է սովորողների նախնական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վերհանումը, բացահայտումը, որն անհրաժեշտ է լինելու ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար:

Ուսուցման և ուսումնառության կազմակերպման ամբողջ ընթացքում սովորողների ուսումնական ձեռքբերումները դիտարկելու համար պարբերաբար անց է կացվում ընթացիկ հայտորոշում, որպեսզի հստակեցվեն, թե ուսումնառության կարճ ժամանակահատվածում սովորողներն ինչ առաջընթաց, դժվարություններ կամ խնդիրներ ունեն: Ընթացիկ հայտորոշումը կարելի է անցկացնել տարբեր միջոցներով՝ բանավոր հարցման, գործնական աշխատանքի, զրույցի, թեստի և այլն: Բնականաբար, ուսուցման կազմակերպման ամբողջ ընթացքում իրականացվում է հետադարձ կապ և՛ ուսուցչի, և՛ սովորողի կողմից, որի ընթացքում ստացված արդյունքների հիման վրա բարելավվում են սովորողի գիտելիքներն ու կարողությունները, ուսուցման և ուսումնառության գործընթացը:

Հայտորոշիչ թեստը ունի հետևյալ առանձնահատկությունները.

- կիրառվում է ուսումնառության ընթացքում,
- կարճ ժամանակի համար է նախատեսված՝ 15-20րոպե,

- ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- հարցերը ձևակերպված են կարճ, պարզ և մասշտաբային,
- առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1-ին և 2-րդ մակարդակ), այնպիսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի կողմից,
- արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,
- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,
- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակություն ըստ անհրաժեշտության:

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել բազմաթիվ թեստեր, որոնց համար կարևոր է մշակել նաև ստուգման հարմար արագ և արդյունավետ տարբերակներ: Գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի խնայել և՛ ժամանակ, և՛ ջանքեր:

Օրինակ՝ ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ թեստի կատարման ավարտից հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկել բացթողումները:

Ստուգման տարբերակ է նաև դասընկերոջ հետ աշխատանքների փոխանակումը՝ փոխադարձ ստուգումը և քննարկումը:

Կամ՝ ուսուցիչը կարող է թեստում ներառված բովանդակությունը ներկայացնել մի փոքր այլ տարբերակով, և սովորողները ոչ թե մեխանիկորեն, այլ մտավոր աշխատանք կատարելով հասկանան՝ ճիշտ են կատարել առաջադրանքները, թե ոչ:

Գնահատման գործընթացի այս ձևերն ունեն մի շարք առավելություններ.

Մակայն ընթացիկ գնահատման թեստերի տարբեր ձևերի կիրառումը տարբերակված և կշիռ ունեցող գնահատումներով կնպաստի ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորող-ուսուցիչ-ծնող-դպրոց փոխհամագործակցության ապահովմանը:

Գրականություն

1.«Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր 2, 2013թ.

2.Օնիկ Միքայելյան, Սոնա Միքայելյան

<< Թեստ. Կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքներ >> ձեռնարկ

Երևան 2015 << Ջանգակ>> հրատարակչություն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԱՐՄԻԿ ՎԵԼԻԽԱՆԻ ԽԱՆՁԱԴՅԱՆ

Թեմա

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑՈՒՄ

Ղեկավար՝ մ. գ. թ. Լ.Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
-------------------	---

ԳԼՈՒԽ 1

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ-----	5
----------------------------------------------------------------------------------	---

1.1. Խաղային տեխնոլոգիաները, դրանց տեսակները, բնութագիրը-----	5
---------------------------------------------------------------	---

1.2. Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում-----	14
-----------------------------------------------------------------------------------	----

1.3. Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն, արդյունքների ամփոփում-----	23
----------------------------------------------------------------------------------------------------	----

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----	28
---------------------	----

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	29
------------------------------------	----

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումներն ընդգրկել են իրականության բոլոր ոլորտները, բուն փոփոխությունների է ենթարկվում հատկապես կրթության համակարգը: Կրթահամակարգի բարեփոխումները նպատակ ունեն կրթությունը կազմակերպել ժամանակակից պահանջներին համապատասխան: Կրթական համակարգում մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա շոշափելի ազդեցություն է թողնում խաղային տեխնոլոգիաների կիրառումը, որոնք ուսումնական գործընթացը դարձնում են ավելի հետաքրքիր ու մատչելի: Խաղային տեխնոլոգիաների ուսուցման պայմանները սերտորեն կապված են նոր տեղեկատվական և մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման հետ: Խաղն ունի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխան իր համար աննկատելիորեն ընդգրկվում է ակտիվ ուսուցման մեջ: Այն նպաստում է երեխաների համակողմանի զարգացմանը, ինքնագնահատմանը, բացահայտում է երեխաների բնավորության բոլոր կողմերը, ապահովում է համագործակցելու լավագույն պայմաններ: Խաղի միջոցով երեխան աննկատ հաղթահարում է բարդ ուսումնական խնդիրները: Դրա համար հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում խաղային տեխնոլոգիաների արդյունավետ և նպատակային կիրառումը կարող է ծառայել ուսումնական բազմաբնույթ խնդիրների լուծմանը: Այս ամենով թեման համարվում է արդիական:

Հետազոտական աշխատանքի նպատակն է: Ուսումնասիրել և վերլուծել խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- Ուսումնասիրել և վերլուծել խաղային տեխնոլոգիաները դրանց տեսակները, բնութագիրը:
- Վերլուծել խաղային տեխնոլոգիաների կիրառման դերը տարրական դպրոցում:

- Իրականացնել սոցիոլոգիական հարցումներ, վերլուծել արդյունքները և ներկայացնել խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ դասի օրինակելի պլան:

Հետազոտական աշխատանքի (հետազոտության) մեթոդները: Աշխատանքում օգտագործվել են գիտամանկավարժական հետևյալ մեթոդները. Գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն, համադրման, վերլուծության, դիտման, զրույցի մեթոդներ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքը պարունակում է 5 գծապատկեր և կազմում է համակարգչային շարվածքով 35էջ:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Խաղային տեխնոլոգիաները, դրանց տեսակները, բնութագիրը

Խաղային գործունեությունը աշխատանքի և ուսման պրոցեսի կողքին է: Խաղը համարվում է մարդու հիմնական գործունեություններից մեկը, մեր գոյության զարմանալի մի երևույթ: Մարդն ունի խաղի կարիք, որը հատկապես ուժեղ է արտահայտվում մանուկ հասակում:[7 էջ 65]

Խաղը դա գործունեության տեսակ է այն իրադրություններում, որոնք ուղղված են հանրային փորձի վերստեղծմանն ու տիրապետմանը, որտեղ ձևավորվում ու կատարելագործվում է ինքնակառավարման վարքագիծը:

Մարդկության պրակտիկայում խաղային գործունեությունը իրականացնում է այնպիսի ֆունկցիաներ, ինչպիսիք են՝

- **զվարճանք** /դա խաղի հիմնական ֆունկցիան է՝ զվարճացնել, հաճույք պարգևել, ոգևորել, առաջացնել հետաքրքրություն/,
- **շփում**՝ շփման խոսքի տիրապետում,
- **ինքնադրսևորում** խաղում,
- **խաղաթերապևտիկ**՝ բազմաթիվ դժվարությունների հաղթահարում, որոնք առաջանում են կյանքի այլ գործունեության տեսակներում,
- **դիագնոստիկ**՝ նորմատիվ վարքից շեղումների հայտնաբերում, խաղի ընթացքում ինքնաճանաչում,
- **ուղղիչ գործառույթ**՝ դրական փոփոխությունների մտցնում անհատականության ցուցանիշներում,
- **միջազգային շփում**՝ բոլոր ազգերի համար միասնական հասարակական և մշակութային արժեքների տիրապետում,
- **սոցիալականացում**՝ ներառումներ հանրային կապերի համակարգում, մարդկանց համընդհանուր բնակության նորմերի տիրապետում:

Մեծամասամբ խաղերին յուրահատուկ են **4 գլխավոր հատկանիշներ**.

1. **Ազատ զարգացնող գործունեություն**, նախաձեռնվող միայն երեխայի ցանկությամբ, հանուն այդ գործունեությունից հաճույք ստանալու, և ոչ միայն դրա արդյունքից:
2. **Ստեղծագործական**, որոշ չափով իմպրովիզացիոն:
3. **Գործունեության էմոցիոնալություն**, մրցակցություն, հակառակորդին հաղթելու մեծ ցանկություն /էմոցիոնալ լարվածություն/:
4. **Ուղղակի և անուղղակի կանոնների առկայություն**, պարունակող խաղի բովանդակությունը, նրա զարգացման ժամանակավոր և տրամաբանական հաջորդականությունը:

Խաղի, որպես գործունեության կառուցվածքի մեջ մտնում է նպատակ դնելը, պլանավորումը, նպատակի իրականացումը, ինչպես նաև արդյունքների վերլուծությունը, որտեղ անձը ամբողջապես ընկալվում է որպես առարկա: Խաղային գործունեության մոտիվացիան ապահովվում է նրա կամավորականությամբ, մրցակցության տարրերի և ընտրության հնարավորություններով, ինքնահաստատման, ինքնադրսևորման անհրաժեշտության բավարարմամբ:

Խաղի, որպես պրոցեսի կառուցվածքի մեջ մտնում են՝

- դերերը, որոնք իրենց վրա են վերցրել խաղացողները,
- խաղային գործողությունները, որպես այդ դերերի իրականացման միջոցներ,
- առարկաների խաղային օգտագործում, այսինքն՝ իրական առարկաների փոփոխումը խաղայինի, պայմանականի,
- խաղացողների միջև ռեալ հարաբերություններ,
- գործունեության ոլորտը կամ բովանդակությունը, պայմանականորեն վերարտադրվում է խաղի մեջ:

Խաղի նշանակությունը անհնար է բացատրել և գնահատել միայն նրա զվարճալի ու հանգստություն պատճառող հնարավորությունները: Հենց դրանում է նրա իմաստը, որ լինելով զվարճանք կամ հանգստություն, նա տանում է դեպի ուսուցման, դեպի ստեղծագործական գործունեության, իսկ մարդկային հարաբերությունների մեջ՝ դեպի աշխատասիրության, զիջման, շփման նորմալ եզրերի:

Խաղը, որպես ուսուցման և դաստիարակության մեթոդ, մեծ սերնդի փորձի փոխանցումն է կրտսեր սերնդին: Մեծ կիրառում է գտել խաղը ժողովրդական մանկավարժության և նախադպրոցական ու արտադպրոցական հաստատություններում: Ժամանակակից դպրոցներում, որոնք հենքը դնում են կրթական գործընթացի ինտենսիվացման և վերածննդի վրա, խաղային գործունեությունը օգտագործվում է հետևյալ դեպքերում՝

- Ինքնուրույն տեխնոլոգիաների կիրառման տեսքով, նյութի ընկալման, նույնիսկ ուսումնական առարկայի դյուրին յուրացման համար:
- Որպես ավելի լայն տեխնոլոգիայի տարրեր /երբեմն բավականին էական/:
- Որպես դասի կամ պարապմունքի տեխնոլոգիա /բացատրություն, ամրապնդում, վարժություններ, վերահսկում/:
- Որպես արտադասարանային աշխատանքի տեխնոլոգիա /տարբեր խաղեր/:

Մանկավարժական գործընթացում ուսուցիչը օգտագործում է տարբեր մանկավարժական խաղեր:

Ի տարբերություն սովորական խաղերի, մանկավարժական խաղը ունի էական հատկանիշ, հստակ սահմանված ուսումնական նպատակով և նրան համապատասխանող մանկավարժական արդյունքներով, որոնք հիմնավորված են, արտահայտված ակնհայտ տեսքով և բնութագրվում են ուսումնաճանաչողական ուղղվածությամբ:

Պարապմունքների խաղային ձևը ստեղծվում է դասերին խաղային հնարների և իրադրությունների միջոցով, որոնք հանդիսանում են ուսուցման գործունեությանը խթանող սովորողների մոտիվացիայի միջոցներ:

Խաղային հնարների և իրադրությունների իրականացումը դասընթացում կատարվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- սովորողների առաջ դրվում է դիդակտիկ նպատակ խաղային խնդրի ձևով,
 - ուսուցման գործունեությունը ենթարկվում է խաղի կանոններին,
 - ուսումնական նյութը օգտագործվում է որպես դրա միջոց,
 - ուսումնական գործունեության մեջ մտցվում է մրցակցության տարրը, որը փոխանցում է դիդակտիկ առաջադրանքը խաղայինի,

- դիդակտիկ առաջադրանքի հաջողված կատարումը կապվում է խաղային արդյունքի հետ:

Ուսուցման պրոցեսում խաղային տեխնոլոգիաների տեղն ու դերը, խաղային տարրերի և ուսման համադրությունը շատ դեպքերում կախված է նրանից, թե որքանով է ուսուցիչը ընկալում մանկավարժական խաղերի գործառույթներն ու դասակարգումը:

Մանկավարժական խաղերի տեսակները.

Ըստ գործունեության տեսակների խաղերը լինում են ֆիզիկական /շարժողական/, ինտելեկտուալ /մտավոր/, աշխատանքային, սոցիալական և հոգեբանական:

Խաղերն ըստ մանկավարժական բնույթի կարող են բաժանվել հետևյալ խմբերի՝

- Ուսուցանող, վերապատրաստող, վերահսկող և ամփոփող:
- Ճանաչողական, դաստիարակող, զարգացնող, սոցիալիզացնող:
- Արդյունավետ, ստեղծագործական:
- Ախտորոշիչ, ուղեկցող, հոգեբանական՝:

Խաղային մեթոդիկայի բնույթով շատ են մանկավարժական խաղերի տեսակները: Գոյություն ունեն *խաղային 3 մեծ խմբեր*՝ խիստ կանոններով խաղեր, ազատ խաղեր, որոնց կանոնները սահմանվում են խաղի ընթացքում, և խաղեր, որտեղ և առկան է ազատությունը և կան կանոններ, որպես խաղի պայման և ընթացքում առաջացող:

Շատ կարևոր են առարկայական, սյուժետային, դերային, գործնական և դրամատիզացման խաղեր:

Ըստ խաղի բովանդակության պատրաստի կանոններով տարբերակում են առարկայական, սպորտային, շարժական, ինտելեկտուալ, կառուցողական և տեխնիկական, երաժշտական, բուժի, հոգեբանական, կատակ խաղեր և այլն:

Ըստ բովանդակության ազատ խաղերը արտահայտում են կյանքի որոշակի ոլորտ՝ ռազմական, ամուսնական, թատերական, գեղարվեստական, կենցաղային և այլն: Կան խաղեր առարկաներով և առանց դրանց, սեղանի խաղեր, սենյակային,

փողոցային, տվյալ տարածքում, համակարգչային, ինչպես նաև տեղաշարժման տարեր միջոցներով:

Կան նաև խաղեր, ներառված հետևյալ տեսակային խմբերում՝ խաղեր-հանդեսներ, խաղային միջոցառումներ, խաղային բանահյուսություն, թատերական խաղային գործողություններ, խաղային թրեյնինգներ և վարժություններ, խաղային անկետաներ, հարցաշարեր, թեստեր, էստրադային խաղային իմպրովիզներ, մրցույթներ, էստաֆետներ, հարսանեկան արարողություններ, խաղային սովորույթներ, անակնկալներ, կարնավալներ, դիմակահանդեսներ, խաղային աճուրդներ և այլն:

Խաղային նպատակներ են՝

- ***Ռիդակտիկ՝*** աշխարհայացքի ընդլայնում, ճանաչողական գործունեություն, որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորում, անհրաժեշտ պրակտիկ գործունեության մեջ, համընդհանուր կարողությունների և հմտությունների զարգացում, աշխատանքային կարողությունների զարգացում:
- ***Պաստիարակող՝*** ինքնուրույնության, կամքի դաստիարակում, որոշակի մոտեցումների, դիրքորոշումների, բարոյական, էսթետիկ կարգավորումների ձևավորում, համագործակցության, կոլեկտիվիզմի, շփվողականության դաստիարակում:
- ***Զարգացնող՝*** ուշադրության, հիշողության, խոսքի, մտածողության, համեմատելու համադրելու, նմանացնելու ունակությունների ձևավորում, երևակայության, ստեղծագործելու ունակությունների, էմպատիայի, բնագրի, օպտիմալ որոշումներ կայացնելու ունակության և ուսումնական գործընթացի հանդեպ մոտիվացիայի զարգացում:
- ***Սոցիալիզացնող՝*** կցում հասարակության նորմերին և արժեքներին, հարմարվողականություն շրջակա միջավայրին, սթրեսային վերահսկում, ինքնակառավարում, սովորեցնել հաղորդակցմանը, հոգեբուժություն:

Խաղային տեխնոլոգիաների հայեցակարգային հիմքերը.

- Խաղային գործունեության հոգեբանական հիմքերը հենվում են անձի հիմնարար կարիքների վրա, որպեսզի նա ինքնարտահայտվի, ինքնահաստատվի, ինքնակառավարվի:

- Խաղը դա հոգեբանական վարքի ձև է:
- Խաղը դա երեխայի ներքին սոցիալիզացիայի տարածքն, հասարակական վերաբերմունքին ընտելացման միջոց:
- Խաղը դա անձի ազատությունն է իր երևակայության մեջ:
- Խաղը դա երեխաների զարգացման պրակտիկան է և կյանքի դպրոցը:
- Խաղի մեջ ներառվելու ընդունակությունը կապ չունի մարդու տարիքի հետ, բայց բոլոր տարիքներում խաղն ունի իր առանձնահատկությունները:
- Մանկական խաղերի բովանդակությունը զարգանում է այն խաղերից, որտեղ հիմնական բովանդակությունը համարվում է առարկայական գործունեությունը, խաղեր, որոնք արտացոլում են հարաբերություններ մարդկանց միջև և խաղեր, որտեղից երեխան հասկանում է, որ պետք է ենթարկվել հասարակական վարքագծի կանոններին և ճիշտ շփվել միմյանց հետ:
- Տարիքի հետ կապված հիմնական դերը հատկացվում է առաջատար գործունեությանը, որը յուրաքանչյուր տարիքի համար ունի իր բովանդակությունը: Յուրաքանչյուր առաջատար գործունեության մեջ առաջանում և ձևավորվում են համապատասխան հոգեբանական նոր առաջացումներ: Խաղը համարվում է գործունեության առաջատար տեսակ նախադպրոցական տարիքում:

Խաղային տեխնոլոգիաների առանձնահատկությունները

Հաջորդ բոլոր տարիքային խմբերը իրենց առաջատար գործունեություններով հանդերձ խաղը դուրս չեն մղում, այլ շարունակում են ներառել այն երեխայի զարգացման պրոցեսում:

Խաղի օպտիմալ համադրությունը ուսումնադաստիարակչական պրոցեսի այլ ձևերին համարվում է ուսուցչի ամենաբարդ գործողություններից մեկը:

Խաղի զարգացող պոտենցիալը դրված է մարդու բնության հիմքում: Խաղի մեջ պմիաժամանակ առկա են ինքնակամությունն ու պարտավորվածությունը, զվարճանքն ու լարվածությունը, երևակայությունն ու իրականությունը, տարանջատում սովորականից և մշտական կապը դրա հետ, հուզականությունն ու ռազիոնալիզմը, անձնական շահագրգռվածությունն ու կոլլեկտիվ

պատասխանատվությունը: Խաղի մանկավարժական արժեքը կայանում է նրանում, որ այն համարվում է ուժեղ մոտիվացիոն գործոն, երեխան առաջնորդվում է անձնական պարամետրերով և պատճառաբանություններով:

Խաղի միջոցով է արտահայտվում հարաբերությունների պարտությունը, որ գոյություն ունի մարդու կյանքում: Հենց խաղային իրադրությունը իր երկպալան վարքով, որն ունի հնարավորություն մտնել պայմանական դերի մեջ, ինչը հնարավոր չէ իրական կյանքում, հնարավորություն է տալիս մարդուն դառնալ մի գլուխ Բարձր իր սովորական վարքագծից, խոսել ինքն իր հետ տարբեր լեզուներով, տարբեր կերպ արտացոլելով իր սեփական եսը:

Խաղային տեխնոլոգիաները նախադպրոցական տարիքում

Դերային խաղին երեխան սկսում է տիրապետել 3 տարեկանից, ծանոթանում է մարդկային հարաբերություններին, սկսում է տարբերակել երևույթների արտաքին և ներքին կողմերը, բացահայտում է ինքն իր համար, թե ինչ է մտահոգությունը և սկսում է կողմնորոշվել:

Երեխայի մոտ ձևավորվում է երևակայություն և գիտակցության խորդրդանշական գործառույթ, որը թույլ է տալիս իրեն տեղափոխել որոշ իրերի հատկությունները մեկ այլի, սեփական զգացողություններում առաջանում է կողմնորոշում և ձևավորվում են ճիշտ արտահայտվելու հմտություններ, ինչն էլ թույլ է տալիս երեխային ներառվել կոլեկտիվ գործունեության մեջ: Խաղային գործունեության տիրապետման արդյունքում արդեն նախադպրոցական շրջանում ձևավորվում է պատրաստվածությունը ուսուցման նշանակալի և գնահատելի գործունեությանը:

Բ. Պ. Նիկիտինի մեթոդական խորհուրդները

Երեխային չի պարտադրվում ուսուցման ոչ մի որոշակի ծրագիր: Նա խորանում է խաղային աշխարհ, որտեղ ազատ կարող է ընտրել գործունեության ոլորտը²:

- Երեխային չի բացատրվում նոր խաղը, նա մտնում է դրա մեջ հեքիաթի միջոցով, նմանակելով մեծերին, մասնակցելով կոլեկտիվ խաղերին:
- Նոր խաղի յուրացումը, որպես կանոն, պահանջում է մեծերի ակտիվ մասնակցություն, հետագայում երեխան կարող է ինքնուրույն զբաղվել դրանով:

- Երեխայի առջև դրվում են մի շարք խնդիրներ, որոնք գնալով բարդանում են:
- Երեխային չի կարելի հուշել, նա պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն մտածելու:
- Եթե երեխան չի կարողանում առաջադրանքը կատարել, պետք է դեպի հեշտը, արդեն արված առաջադրանքներին կամ ժամանակավոր թողնել այդ խաղը:
- Եթե երեխան արդեն հասել է իր ընդունակությունների գագաթնակետին և կորցրել է հետաքրքրությունը դեպի խաղը, պետք է էլ չխաղալ, գոնե ժամանակավոր:

Խնդրի լուծումը երեխայի համար չի դառնում արստրակտ լուծում մաթեմատիկական խնդրի տեսքով, այլ նկարի, նախշի տեսքով է կամ հավաքված կուբիկներից, աղյուսիկներից, կոնստրուկտորի դետալներից, այսինքն՝ տեսանելի և շոշափելի իրերի տեսքով: Դա թույլ է տալիս տեսանելի համադրել առաջադրանքը լուծման հետ և ինքնուրույն ստուգել կատարված առաջադրանքի ստույգ լինելը:

Զարգացնող խաղերում հաջողվել է միաձուլել ուսուցման հիմնական սկզբունքներից մեկը՝ պարզից բարդը, ստեղծագործական գործունեության շատ կարևոր սկզբունքով՝ ինքնուրույն և իր ընդունակություններով, երբ երեխան ինքնուրույն կարող է հասնել իր ընդունակությունների գագաթնակետին: Այդ միացությունը հնարավորություն է տվել խաղում լուծել միանգամից մի քանի խնդիր, կապված ստեղծագործական ընդունակությունների հետ:

- Զարգացնող խաղերը կարող են սնունդ դառնալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար շատ վաղ տարիքից:
- Առաջադրանք-աստիճանները միշտ պայմաններ են ստեղծում ընդունակությունների զարգացման համար:
- Ամեն անգամ ինքնուրույն բարձրանալով իր գագաթնակետին, երեխան զարգանում է ավելի հաջողված:
- Զարգացնող խաղերը ըստ իրենց բովանդակության կարող են լինել շատ բազմազան և բացի այդ, ինչպես յուրաքանչյուր խաղ, նրանք տանել չեն կարողանում պարտադրանք և ստեղծում են ազատ և ուրախ ստեղծագործելու մթնոլորտ:

Խաղային տեխնոլոգիաները ցածր դպրոցական տարիքում

Ցածր դպրոցական տարիքի համար բնորոշ են ընկալման անմիջականությունն ու պայծառությունը, դերերի մեջ մտնելու հեշտությունը: Երեխաները հեշտությամբ մտնում են յուրաքանչյուր ոլորտ, հատկապես խաղային, ինքնուրույն կազմակերպում են խմբային խաղեր, խաղեր առարկաներով, խաղալիքներով³: Ուսուցման պրոցեսի խաղային մոդելում պրոբլեմային իրադրության ստեղծումը կատարվում է խաղային իրադրության մտցման միջոցով: Պրոբլեմային իրավիճակը ապրումակցվում է մասնակիցների կողմից նրանց խաղային ընկալման մեջ, գործունեության հիմքը կազմում է խաղային մոդելավորումը, մասնակիցների գործունեության մի մասը անցնում է խաղային պայմանական պլանով:

Երեխաները գործում են խաղային օբեկտներով, սակայն երբեմն դերային դիրքորոշման կողքին գործում է անհատական էմոցիանալ երևակայական իրականությունը: Խաղային իրավիճակը կարող է վերափոխել և ուսուցչի դիրքորոշումը, ով պահում է հավասարակշռությունը ղեկավարի դերի, օգնականի և մասնակիցների միջև:

Խաղի արդյունքները արտահայտվում են երկակի պալնով՝ որպես խաղային և որպես ուսումնա-ճանաչողական արդյունք: Խաղի դիդակտիկ գործառույթը իրականանում է խաղային գործողությունների քննարկման, խաղային իրադրության վերլուծության միջոցով և նրա՝ իրականությանը համադրելու միջոցով:

Տվյալ մոդելի կարևոր խնդիրը վերարտադրողական քննարկումն է, որտեղ մասնակիցները համատեղ վերլուծում են խաղի ընթացքն ու արդյունքը, խաղային մոդելի համադրումը իրականությանը, ինչպես նաև ուսումնախաղային փոխհամագործակցության ընթացքը:

Տարրական դպրոցի զինանոցում պարունակվում են խաղեր, նպաստող կենցաղային բառապաշարի, կապացված խոսքի ամրապնդմանն ու հարստացմանը, խաղեր, ուղղված թվային պատկերացումների զարգացմանը, հաշվելուն, և զարգացնող հիշողությունը, ուշադրությունը, դիտողականությունը: Դիդակտիկ խաղերի արդյունավետությունը կախված է առաջին հերթին դրանց

սիստեմատիկորեն օգտագործումից, երկրորդ՝ խաղերի ծրագրային նպատակաուղղվածությունից:

Խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցումը նպաստում է, որ կրտսեր դպրոցականները կարողանան ինքնուրույն ուսումնական խնդիրներ առաջադրել, տեղեկույթ հայթհայթել, խմբում ինքնուրույն աշխատել, ցուցաբերել իրենց ստեղծագործական կարողությունները, վերահսկել ու գնահատել իրենց գործունեությունը, կարողանան ազատորեն շփվել և ներկայացնել սեփական տեսակետները:

1. 2. Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում

Խաղի ծագման «գաղտնիքը» լուծելու համար կատարվել են բազմապիսի փորձեր տարբեր գիտական ոլորտների գիտնականների կողմից հարյուրամյակներ շարունակ: Խաղը կյանքի հիանալի գործունեություններից մեկն է, որը շատ անհրաժեշտ է: Ակամայից գրավելով մարդկանց որպես կյանքի երևույթ խաղը դարձել է շատ լուրջ և դժվարին խնդիր գիտական մտքի համար: Համաշխարհային մանկավարժության մեջ խաղը համարվում է մրցակացություն կամ մրցույթ այն խաղացողների միջև որոնց գործողությունները սահմանափակված են որոշակի պայմաններով և ուղղված են հատուկ նպատակին (շահին, հաղթանակին, մրցանակին): Խաղը որպես հաղորդակցման մարզման և կյանքի փորձի կուտակման միջոց բարդ սոցիալ-մշակութայինի երևույթ է: Խաղի սոցիալ-մշակութային բնույթը խաղը դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:

Խաղը չի կարելի գնահատել միայն, որպես զվարճացնող միջոց: Խաղի էությունը կայանում է նրանում, որ այն լինելով զվարճանք, հանգիստ կարող է վերաճել ուսման, ստեղծագործական աշխատանքի, թերապիայի մարդկային այնպիսի հարաբերությունների, որոնք դրսևորվում են աշխատանքում: Խաղը՝ որպես դասավանդման մեթոդ հին սերունդներից փոխանցվել է երիտասարդներին: Խաղն իր լայն կիրառումն է հանրային կրթության, նախադպրոցական և բուհական հաստատություններում:[4էջ 50-51-53] Ժամանակակից դպրոցում, որն ապավինում է կրթական գործընթացի ակտիվացմանն ու կիրառմանը, խաղի գործունեությունը օգտագործվում է հետևյալ դեպքերում՝

- որպես ինքնուրույն տեխնոլոգիա, թեմայի ընկալման համար,
- որպես ավելի ընդհանուր տեխնոլոգիայի տարր,
- որպես դաս կամ նրա մաս /ներածություն/,
- որպես արտադրողական գործունեության տեխնոլոգիա:

«Խաղային մանկավարժական տեխնոլոգիաների» հայեցակարգը ներառում է բազմապիսի խաղային մեթոդների կիրառում մանկավարժական խաղերի տեսքով: Ի տարբերություն խաղերի, մանկավարժական խաղը ունի էական առանձնահատկություններ՝ հստակ սահմանված ուսումնական նպատակ և համապատասխան մանկավարժական արդյունք, որը կարելի է հիմնավորել, ընդգծել հստակորեն և բնութագրել կրթական և ճանաչողական կողմնորոշմամբ⁴:

Պարապմունքների խաղային ձևը ստեղծվում է դասերի ընթացքում, որոնք հանդես են գալիս որպես ուսումնական գործունեության հրահրող խթանող միջոց: Դասերի ընթացքում խաղային տեխնոլոգիաների կիրառում իրականացվում է հետևյալ կերպ՝

- սովորողների համար դիդակտիկական նպատակը սահմանվում է առաջադրանքի տեսքով,
- կրթական գործունեությունը ենթարկվում է խաղի կանոններին,
- ուսումնական նյութն օգտագործվում է իր, միջոց,
- կրթական գործունեության մեջ մտցվում է մրցակցության տարրը, որը դիդակտիկական առաջադրանքը վերածում է խաղի,
- դիդակտիկական առաջադրանքի հաջող ավարտը կապված է խաղի արդյունքի հետ:

Ուսուցման գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Անհրաժեշտ է խաղն ընտրել այնպես որ համապատասխանի ուսումնասիրվող թեմային և աշակերտների տարիքային առանձնահատկություններին, օգնի ճիշտ ըմբռնելու անցածն ու անցնելիքը:[2 էջ 149]

Խաղը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Այն հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց: Խաղային տեխնոլոգիայի տեղն ու դերը կրթական գործընթացում խաղային տարրերի

համադրությունը և սովորելը մեծապես կախված են ուսուցչի կողմից կրթական խաղերի գործառույթների ընկալումից: Խաղի գործառույթը նրա բազմակողմանի օգտակարությունն է: Խաղի յուրաքանչյուր տեսակ ունի իր օգտակար ծրագիրը: Կարող ենք առանձնացնել խաղի կարևորագույն գործառույթները ըստ Վ. Ա. Կուկուշկինի՝ [1 էջ 54-55]

- **Սոցիալ-մշակութային նշանակությունը:** Խաղը երեխայի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է: Իր մեջ ներառում է սոցիալ-վերահսկող գործընթացներ: Խաղի սոցիալ-մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի յուրացման անձի ձևավորման ու դաստիարակման միջոց և թույլ է տալիս նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ: Խաղի սոցիալ-մշակութային բնույթը այն դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:
- **Խաղի ինքնագարգացման գործառույթը:** Սա խաղի հիմնական հատկություններից մեկն է: Անձի համար խաղը կարևոր է որպես ինքնադրսևորման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործնթաց և ոչ թե դրա արդյունքը, մրցակցությունը կամ որևէ նպատակի հասնելը:
- **Հաղորդակցական գործառույթը:** Խաղը հաղորդակցական գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն սովորողներին ներառում է մարդկային հարաբերությունների իրական համատեքստում: Եթե խաղը մարդկանց հաղորդակցման ձև է, ապա հաղորդակցությունից դուրս, առանց փոխըմբռնման ու շփումների խաղն անհնար է դառնում:
- **Խաղի ախտորոշիչ գործառույթը:** Խաղն ավելի ախտորոշիչ է քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ «ինքնաարտահայտման միջոց է», որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը: [8 592]
- **Խաղի թերապևտիկ գործառույթը:** Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային տեխնոլոգիայի գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Բ. Էլկոնինը գրել է, որ խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր

սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնց մեջ երեխան մտնում է դերային խաղում:

- **Խաղի շտկողական գործառույթը:** Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնականոն ձևով, եթե բոլոր մասնակիցները յուրացրել են խաղի կանոններն ու սյուժեն, յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր, այլև՝ խաղընկերների դերերը ապա խաղի ընթացքը և նպատակը նրանց համախմբում է: Շտկողական խաղերը կարող են օգնել շեղված վարքով աշակերտներին՝ հաղթահարելու այն ապրումները, որոնք խոչնդոտում են նրանց ներդաշնակ ինքնագզացողության զարգացմանը և շփմանը հասակակիցների միջավայրում:
- **Խաղի զվարճացնող գործառույթը:** Սա զվարճանքի գրավչությունն է: Խաղի զվարճալի գործառույթը կապված է որոշակի հարմարավետության, բարենպաստ մթնոլորտի հոգևոր ուրախության ստեղծման հետ: Խաղն ունի այնպիսի մոգական ուժ, որը կարող է սնունդ տալ երևակայությանը:

Խաղը հսկայական դերակատարում ունի մանկավարժական գործընթացում: [2 էջ 149] Այն նպատակային և ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է հասնել բարձր արդյունքների: Այդ պատճառով էլ, երբ ուսուցումը համեմվում է խաղերով դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ դասարանում ստեղծվում է մի նոր միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ, և ինչու չէ աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա դրանք անհետանում են աննկատելիորեն: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտները անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Խաղի միջոցով ոչ միայն ուսուցանվում և ամրապնդվում է դասանյութը այլև այն օգնում է, որ աշակերտը աննկատ ձևով կարողանա հաղթահարել բարդ ուսումնական խնդիրներ: Առաջին դասարանցին տառուսուցման կամ թվերի ուսուցման ժամանակ

ծանոթանում է մի այնպիսի նոր տառի կամ թվի, որն ունի բերան, աչիկներ ու թաթիկներ, խոսում է երեխաների հետ պատմում իր մասին: Երեխաները սեխմում են նրա թաթիկը, բարևում և խոստանում չնեղացնել ու չմոռանալ նրան: Երեխաները հաղորդակցվում են տվյալ տառի կամ էլ թվի հետ որից հետո, երբ տարբեր նյութերից պատրաստում են իրենց «նոր բարեկամին», ապա հեշտությամբ ու հաճույքով մտապահում են այդ նոր տառը կամ թիվը այդ դեպքում յուրացումն իրականանում է գրեթե ինքնըստինքնյան: Դպրոցում՝ մանկավարժական գործընթացում խաղերը չեն կարող ինքնանպատակ լինել: Շատ ուսուցիչներից կարելի է լսել, որ դասի ընթացքում նրանք ժամանակ չունեն խաղալու: Կարող ենք ասել, որ խաղը պետք է հանդես գա ոչ թե առանձին հնար, այլ համաձույլ լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին: Պետք է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրներ լուծմանը: Խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Այն ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կաղապարի, այլ աստիճանական զարգացման մեջ որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը թե՛ դրա և թե՛ ուսուցման նկատմամբ: Խաղ առավել արդյունավետ է լինում, եթե մինչև կիրառումը քննարկվում է աշակերտների հետ: Երբ հաշվի են առնվում երեխաների առաջարկությունները, խաղը դառնում է ավելի հետաքրքիր: Խաղը մեծ դեր ունի նաև մանկական համերաշխ կոլեկտիվ, ինքնուրույնություն աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու առումներով նաև:[1 էջ 147] Խաղը շատ կարևոր է որոշ երեխաների վարքի մեջ նկատվող թերությունները և արատները շտկելու առումով: Դաստիարակչական բոլոր արգասիքները հենվում են խաղի բարերար ազդեցության վրա, որի հիման վրա էլ զարգանում են անձի հոգեբանական յուրահատկությունները, ձևավորվում և կայանում է նրա անհատականությունը: Խաղի ազդեցությամբ երեխայի հոգեկան ոլորտի ձևավորում և զարգացումը կարևոր դեր են խաղում զարգացման՝ ավելի բարձր փուլ անցում կատարելու համար: Աշակերտները մեծ հաճույքով են մասնակցում և հեշտությամբ ու առանց պարտադրանքի ներգրավվում են ուսումնական գործունեության մեջ:

Գոյություն ունեն բազմաթիվ ու բազմատեսակ խաղեր, սակայն կրտսեր դպրոցական տարիքում առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում և սոցիալականացման տեսանկյունից մեծ նշանակություն և կարևորություն ունեն

դերային, դիդակտիկ, գործնական, համակարգչային, բնաճանաչողական, լեզվական և մաթեմատիկական խաղերը:

Հաղորդակցության՝ երկխոսության կարողությունների ձևավորման կարևոր գործոններից են խաղերը և հատկապես դրերով խաղերը: Խաղի միջոցով երեխաները ստանձնում են հասարակական դերեր և յուրացնում վարքի կանոններ: Խաղը սովորեցնում է, փոխում, դաստիարակում և, ինչպես Վիգոտսկին է նշում «իր հետևից տանում է անհատի զարգացումը»: Խաղի կարևոր գործառույթներից մեկն էլ խնդրահարույց իրադրության լուծումն է: Խթանում է սովորողների հաղորդակցական ակտիվությունը, քննադատական և վերլուծական մտածողությունը, փաստարկելու խոսակցին համոզելու կարողությունները: Դերային խաղերը՝ [2 էջ 55-60]

- բարձրացնում են ուսման որակը և արդյունավետությունը,
- խթանում են սովորողների հետաքրքրությունները,
- օժանդակում են սովորողներին՝ հուշելով, թե տվյալ իրադրության մեջ ինչ խոսքային նմանություններ կարելի է գործածել այս կամ այն միտքն արտահայտելու համար,
- որոշակի հույզեր ու զգացումներ են արթնացնում, որոնք դրականորեն են ազդում ուսման որակի և արդյունավետության վրա:

Դերային խաղերի միջոցով սովորողները ձեռք են բերում համագործակցային կարողություններ ու հմտություններ: Դերային խաղերին բնորոշ են՝

- հաղորդակցությունը /շփում, համագործակցություն/,
- հուզականություն /դերային խաղերը զվարճացնում են երեխաներին/,
- սոցիալական համագործակցությունը,
- ուսումնական գործընթացը ենթարկվում է խաղի կանոններին,
- ուսումնական նյութը դիտվում է որպես խաղի միջոց,
- խաղի կանոնները կարող են մշակվել նաև աշխատանքային խմբերում:

Դերային խաղերի հաճախակի և հետևողական կազմակերպումը աշխուժացնում է դասավանդման գործընթացը և մեծացնում դրա արդյունավետությունը:

Դիդակտիկ խաղը երեխաների մտավոր դաստիարակության արժեքավոր միջոց է, որը խթանում է նրանց հոգեկան գործընթացները՝ հետաքրքրություն

առաջացնելով ճանաչողական գործունեության նկատմամբ: Բացի ուսուցողական և դաստիարակչական նպատակներից՝ դիդակտիկ խաղերը կարող են լուծել մի շարք խնդիրներ և հաղթահարել մի շարք դժվարություններ: Արագացնում են ուսումնական նյութի գործընթացը, զարգացնում են հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, ձևավորում են ճանաչողական մոտիվացիա, նպաստում են առաջին դասարանցիների ադապտացիային՝ սոցիալական հարմարմանը: Դրանք նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնադրսևորմանը, ինքնահաստատմանը, ձևավորվում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, ուրեմն նաև կամային որակներ: Դիդակտիկ խաղերը ևս միջոց են կրտսեր դպրոցականի արդյունավետ սոցիալականացման համար:[3 էջ 298-303] Դասապրոցեսում կիրառվում են նաև **գործնական** խաղեր, որոնք ուղղված են գիտելիքների ամրապնդմանը և համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:[4 էջ 56-59]

Խաղային տեխնոլոգիայի կիրառումը ժամանակակից ուսուցման գործընթացում անչափ կարևոր է բնության երևույթների և շրջապատում կատարվող գործընթացների ընկալման համար: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացումը ավելի արդյունավետ կընթանա, եթե այն զուգակցվի էկոլոգիական թեմաներով խաղերի կիրառմամբ: Երեխայի բնաճանաչողական ընդունակություններին հատուկ են այնպիսի որոկներ, ինչպիսիք են բնության օբյեկտները, երևույթները, ընկալելու, ճանաչելու, շնչավորելու, հարաբերակցվելու ընդունակությունը: Այդ ընդունակությունները զարգացնելու նպատակով պետք է օգտագործել տարբեր միջոցներ. խաղեր, հանելուկներ, հեքիաթներ: Այն բոլոր տեխնոլոգիական միջոցները, որոնք համապատասխանում են կրտսեր դպրոցականների բնաճանաչողական կարողություններին նպաստում է նրան, որ փոխում է աշակերտների սպառողական վերաբերմունքը բնության հանդեպ: Կենդանի բնության և շրջակա միջավայրի հանդեպ սերը էկոլոգիական դաստիարակության հիմքում է: Եթե երեխան սիրի բնությունը, շրջապատող աշխարհը բնականաբար ուշադիր և հոգատար կլինի նրա նկատմամբ: Էկոլոգիական բովանդակությամբ խաղերի ուսուցողական խնդիրը երեխայից գաղտնի է մնում, երեխային թվում է, թե ինքն ուղղակի խաղում է մինչ դեռ ձեռք է բերում բնաճանաչողական գիտելիքներ:[13 էջ 54-57]

Մեր օրերում դպրոց են հաճախում հիմնականում վեց տարին նոր բուրած երեխաները:[2 էջ 149] Այս տարիքում հաճախակի են նկատվում ուշադրության անկայունություն, ցրվածություն, հիշողությունը ոչ կամածին է, մտածողությունը՝ ակնառու-պատկերավոր: Չարգացած չէ կենտրոնանալու կարողությունը, և, ամենակարևորը, այս տարիքի երեխաների մեջ հիմնական, առաջատար գործունեությունը դեռևս խաղայինն է: Դպրոց նոր ոտք դրած երեխաներին դեռևս հոգեհարազատ են խաղն ու խաղային գործընթացները: Տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի ընթացքում և դասի միջոցով երեխաները տեղեկություններ են ստանում լեզվական այս կամ այն երևույթի մասին և այդ առանձին տեղեկությունները համադրում, դարձնում որոշակի գիտելիքներ: Ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու համար իրականացվում են գրավոր ու բանավոր վարժությունների միջոցով: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել ոչ միայն այդ առաջադրանքների նշանակությունն ու կիրառման նպատակը այլ այն հանգամանքը, թե ինչ տարիքի երեխաների են առաջարկվում, և տարիքային ինչպիսի առանձնահատկություններ ունեն նրանք: Սուխոմլինսկին գտնում էր, որ երեխաները պետք է ապրեն գեղեցիկի, խաղի, հեքիաթի, երևակայության ստեղծագործության աշխարհում: Այդ աշխարհը երեխային պետք է շրջապատի նաև այն ժամանակ, երբ մենք ուզում ենք գրել կարդալ սովորեցնել: Երեխան միայն այն ժամանակ անկեղծ կսիրի դպրոցը, դասարանը, երբ ուսուցիչը կպահպանի նրա համար այն ուրախությունները, որ երեխան ուներ մինչ այդ: Այդ ուրախության պահպանման միջոցներից է խաղը:[6 էջ 317]

Տարրական դասարաններում /հատկապես առաջինում/ հարկավոր է կազմակերպել շատ դիդակտիկ խաղեր: Լեզվական դիդակտիկ խաղերը ընդունվում են որպես նոր գիտելիքների ընկալման, նոր փորձի ու տեղեկությունների հայթհայթման, գիտելիքների ամրապնդման և ճշգրտման միջոց: Լեզվական խաղերը լրացնում են լեզվական վարժությունների համակարգը: Որպես խաղային միջոց՝ դրանք ունեն սրամիտ ու զվարճալի բնույթ գրավում են երեխաների ուշադրությունը: Այս խաղերը նպաստում են լեզվական գիտելիքների ձեռքբերման դժվարությունների հաղթահարմանը: Որպեսզի այս խաղերը ծառայեն իրենց նպատակին պետք է կապված լինեն հաղորդվող նյութի հետ: Լեզվական խաղերը կազմակերպելիս պետք


Է ուշադրություն դարձնել խաղի ընթացքում թույլ տրված սխալների ուղղմանն ու մեկնաբանմանը: Մխալներ ուղղումը հնարավորություն է տալիս խաղն ավելի գիտակցական ու մտածված դարձնել, գտնել սխալներ ծնող պատճառները: Տարրական տասարաններում մայրենի լեզվի դասերին լեզվական խաղերի կիրառումը կարևոր նախապայման է դասի արդյունավետության բարձրացման համար, քանի որ աշակերտը, առանց կամային մեծ ջանքեր գործադրելու, յուրացնում է խաղի ընթացքում մատուցվող դասանյութը վերհիշում անցած կանոնները, ամրապնդում ու համակարգում իր գիտելիքները:

Մաթեմատիկական խաղերն ունեն իրենց պատմական անցյալը: [11էջ 10-17]Այս խաղերի նպատակը միայն զվարճություն պատճառելը չէ, այլ մաթեմատիկական գիտելիքներին հաղորդակից դարձնելը և դասին նպաստավոր թարմություն հաղորդելը: Խաղերի դերն առանձնապես մեծ է պասիվ երեխաների հետաքրքրությունների առաջացման առումով: Շրջապատող միջավայրից վերցրած տվյալներով կառուցված զվարճալի խնդիրների միջոցով իրականացվում է տեսականի և գործնականի կապը, ինչպես նաև ապահովվում է կրթության ու դաստիարակության միասնությունը: Աշակերտների գործնականորեն ցույց է տրվում մաթեմատիկայի կիրառությունը կյանքի տարբեր բնագավառներում, և դա խթանում է նրանց հետաքրքրասիրությունը տվյալ ուսումնական առարկայի հանդեպ: Մաթեմատիկական խաղերն կազմակերպվում են նոր նյութի հաղորդումը նախապատրաստելու, անցածն ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև գիտելիքներն ստուգելու նպատակով: Որպեսզի խաղն արդյունավետ լինի պետք է այն կազմակերպել ճիշտ ու ժամանակին և ճիշտ մեթոդներով:

1.3. Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն և արդյունքների ամփոփում


Հիմնախնդրի առավել ամբողջական ուսումնասիրության նպատակով իրականացվել են հարցումներ ուսուցիչների շրջանում: Հարցումն անցկացվել է Լոռու մարզի Լուսաղբյուրի, Հարթագյուղի միջնակարգ դպրոցներում և Շիրակի մարզի գյուղ Ջաջուռի միջնակարգ դպրոցում: Հարցմանը մասնակցել են թվով 22 ուսուցիչներ: Մեր նպատակին հասնելու համար կազմեցինք 6 հարցից բաղկացած հարցաթերթիկ: Ներկայացնենք արդյունքները: *(Տե՛ս Հավելված 1)*

1.	Հաճախ եք կիրառում խաղային տեխնոլոգիաները ուսուցման ընթացքում:	ա/շատ հաճախ	բ/հաճախ	գ/ոչ հաճախ
		70%	20%	10%




Հարցմանը մասնակից ուսուցիչների 70%-ը դասապրոցեսում շատ հաճախ են կիրառում խաղային տեխնոլոգիաները: Նշելով, որ խաղային տեխնոլոգիաների կիրառումը օգնում է ուսուցչին դասն առավել հետաքրքիր, բովանդակալից դարձնել: Իսկ ուսուցիչների 20%-ը՝ հաճախ, 10%-ը՝ ոչ հաճախ:

2.	Ըստ Ձեզ՝ արդյունավետ է խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերին:	ա/արդյունավետ	բ/մասամբ արդյունավետ
		70%	30%



Հարցմանը մասնակից ուսուցիչների 70%-ը գտնում են, որ խաղային տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետ է: Նշելով, որ կրթական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է տալիս բարելավելու ուսուցման որակը դպրոցում: Իսկ 30%-ը կարծում են, որ այն մասամբ է արդյունավետ:


3.	Որքա՞ն հաճախ եք կիրառում դերային խաղեր ուսուցման գործընթացում:	ա/ հաճախ 85%	բ/ ոչ հաճախ 15%
----	----------------------------------------------------------------	-----------------	--------------------



Հարցմանը մասնակից ուսուցիչների 85%-ը հաճախ են կիրառում: Գտնում են, որ դերային խաղերը բարձրացնում են ուսուցման որակը և արդյունավետությունը, որոշակի հույզեր և զգացումներ են արթնացնում: Դերային խաղերի միջոցով


սովորողները ձեռք են բերում համագործակցային կարողություններ, հմտություններ: Իսկ ուսուցիչների 15%-ը ոչ հաճախ են կիրառում: Նշելով, որ դժվարանում են հաճախ կիրառել դերային խաղեր:

4.	Արդյո՞ք խաղային տեխնոլոգիաները հանդիսանում են երեխաների իմացական գործընթացների զարգացման խթան:	ա/այո	բ/ոչ
		90%	10%



Հարցմանը մասնակից ուսուցիչների 90%-ը պատասխանել են այո՝ դրական: Իսկ 10%-ը պատասխանել են ոչ:

5.	Երեխաները հաճույքով են մասնակցում խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ դասերին:	ա/այո	բ/ոչ
		85%	15%



Ուսուցիչների 15%-ը նշում են, որ ոչ բոլորն են մասնակցում, քանի որ կան երեխաներ, ովքեր ունեն հաղորդակցվելու հետ որոշակի խնդիրներ և նրանց համար առավել հետաքրքիր է լսել ուսուցչի խոսքը: Իսկ ուսուցիչների 85%-ը պատասխանել են այո, քանի որ աշակերտների մոտ առաջացնում է շահագրգռվածություն, հետաքրքրություն դասի, թեմայի շուրջ:

6.	Որո՞նք են խաղային տեխնոլոգիաների առավելությունները տարրական դպրոցում:
----	-----------------------------------------------------------------------

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում ունի մի շարք առավելություններ՝

- Սովորողների մոտ խաղային տեխնոլոգիաները առաջացնում են հետաքրքրություն թեմայի, դասի շուրջ:
- Սովորողների մոտ ձևավորվում են ճանաչողական մտածողություն:
- Դասարանում խաղային տեխնոլոգիաների միջոցով սովորողները ձեռք են բերում համագործակցային կարողություններ և հմտություններ, որոնք նպաստում են առողջ փոխհարաբերությունների և դրական հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը:

Այսպիսով, հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ տարրական դպրոցում խաղային տեխնոլոգիաների կիրառումը նպաստում են սովորողների

ճանաչողական կարողությունների խթանմանը, անկաշկանդ ինքնաարտահայտվելու, ինքնադրսևորման կարողությունների ձևավորմանը, բարձրացնում է ուսման որակը և արդյունավետությունը:

Աշխատանքի հավելվածում (*Տե՛ս Հավելված 2*) ներկայացված է խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ դասի օրինակելի պլան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված գիտամանկավարժական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց տվեցին, որ՝

- Խաղը երեխայի բարոյականային ունակությունների և կարողությունների ձևավորման արդյունավետ միջոց է համարվում, որի ընթացքում իրականացվում է շրջապատող իրականության հետ երեխայի և աշխարհի փոխազդեցության և փոխներգործության կենսական պահանջմունքի բավարարումը:
- Տարրական դպրոցում ՏՏ-ների կիրառումը զարգացնում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, նպաստում է ուսուցման գործընթացի կատարելագործմանը ու արդյունավետության բարձրացմանը:
- Խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ ուղեկցվող դասերը նպաստում են ուսումնական նյութի ավելի հանգամանալի ընկալմանը, պայմանավորում են

կրտսեր դպրոցականների տրամաբանական, ստեղծագործական մտածողության զարգացումը: Այսպիսի դասերի շնորհիվ կրտսեր դպրոցականները հաճույքով են կատարում առաջադրանքները, մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսումնական նյութի նկատմամբ:

- Տարրական դասարաններում սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով մշակվել են դասի նմուշ-օրինակներ, որոնք կիրառվել են ուսուցման գործընթացում: Փորձը ցույց է տվել, որ այն դասերը, որոնք ուղեկցվում են խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ, ավելի հետաքրքիր են, զվարճալի և ամենակարևորը՝ արդյունավետ կրթական արդյունքների տեսանկյունից:
- Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դասարաններում նպաստում է արդյունքի հասնելու աշակերտի մոտիվացիային, պատասխանատվությանը, թիմում աշխատելու ունակությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Ալեքսանյան Թ., Հակոբյան Գ., Հերթական ատեստավորման ենթակա դասվարների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացի ուղեցույց, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2013, 147 էջ:
2. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Ս., Սարգսյան Ռ., Տարրական դասարանների Հայոց լեզու և Մաթեմատիկա, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութերի, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2007, 149 էջ:
3. Ղույումյան Գ. Ե., Մանկավարժություն, Գիրք 1, Երևան, 2005, 464 էջ:
4. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Ա. հ., Երևան, 2012, 564 էջ:
5. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010:
6. Սուխոմլինսկի Վ., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Լույս հրատ., Երևան, 1977, 317 էջ:

7. Селевко Г., Энциклопедия образовательных технологий, Том 1, Москва, 2006, 816 с.
8. Кукушкин В., Болдырева-Вараксина А., Педагогика начального образования, Ростов, 2005, 592 с.

Ուսումնասիրություններ

1. Աթանյան Ն., Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում, Նախաշավիղ, N3, 2010, էջ 53-58:
2. Արշակյան Ա., Դերային խաղերը երկխոսական կարողությունների ձևավորման գործընթացում, Նախաշավիղ N 3-4., 2009, էջ 55-60:
3. Բաբայան Ի., Պողոսյան Ն., Կրտսեր դպրոցականի սոցիալական զարգացման գործընթացի առանձնահատկությունները, Մանկավարժական միտք, Երևան, N 4, 2015, էջ 298-303:
4. Գևորգյան Ա., Ուսուցում և խաղ, Նախաշավիղ, N 2, 2013, էջ 56-59:
5. «Հանրակրթության մասին», ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2/3,4 թիվ:
6. Հակոբյան Գ., Հակոբյան Ջ. Ուսուցման գործընթացում տեխնիկական միջոցների կիրառման հարցեր, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, Հատոր 3, 2017, էջ 38-42:
7. Հարությունյան Գ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրտսեր դպրոցականների երաժշտության դասերին, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, Հատոր 6, 2016, էջ 48-49:
8. Մելիքսեթյան Թ., Ուսուցման մանկավարժական տեխնոլոգիաների ու մեթոդների օգտագործումը ուսուցչի կողմից, «ՄԽԻԹԱԸ ԳՈՇ» գիտամեթոդական հանդես, N 10-12, 2012, էջ 118-121:
9. Միկիչյան Ա., Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում, «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, Երևան, Հատոր 1, 2016, էջ 50-55:

10. Մնացականյան Հ., Ուսուցման արդյունավետության բարձրացման նոր հնարավորություններ, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, Հատոր 5, 2016, էջ 46-50:
11. Պետրոսյան Ա., Մաթեմատիկական խաղերի կազմակերպման ու անցկացման մեթոդիկական, Նախաշավիղ, N 2, 2015, էջ 10-17:
12. Սարգսյան Տ., Համակարգչային խաղերը ինտեգրացված ուսուցման գործընթացում, Մանկավարժություն, N 7, 2011, էջ 47-53:
13. Սարգսյան Փ., Խաղը որպես կրտսեր դպրոցականների բնաճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց, Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր, N 6, 2012, էջ 54-57:
14. Багдасарян А., Саргсян М., Роль и значение ИК технологий в учебном процессе основной школы, Наука и образование сегодня, № 6 (29), Москва, 2018, с. 107-109.

Հավելված 1

Հարցաթերթիկ՝ ուղղված ուսուցիչներին

Դասարան՝ I, II, III, IV

1. Հաճա՞խ եք կիրառում խաղային տեխնոլոգիաները ուսուցման ընթացքում:
ա/ շատ հաճախ բ/ հաճախ գ/ ոչ հաճախ
2. Ըստ Ձեզ՝ արդյունավե՞տ է խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերին:
ա/ արդյունավետ բ/ մասամբ արդյունավետ
3. Որքա՞ն հաճախ եք կիրառում դերային խաղեր ուսուցման գործընթացում:
ա/ հաճախ բ/ ոչ հաճախ
4. Արդյո՞ք խաղային տեխնոլոգիաները հանդիսանում են երեխաների իմացական գործընթացների զարգացման խթան:
ա/ այո բ/ ոչ

5. Երեխաները հաճույքով են մասնակցում խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ դասերին:

ա/ այո բ/ ոչ

6. Որո՞նք են խաղային տեխնոլոգիաների առավելությունները տարրական դպրոցում:

Հավելված 2

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1-ից 10-ը թվերը

Դասարան՝ առաջին

Առարկան՝ մաթեմատիկա

Դասի թեման՝ անցածի ամրապնդում: 1-ից 10-ը թվերը

Դասի կառուցվածքը՝ ԽԻԿ համակարգ

Կահավորում՝ թվաքարտեր, քարտեր առաջադրանքներով, ձկնարան՝ մագնիսե ձկներով, պաստառներ՝ մաթեմատիկական աֆորիզմներով, և այլ զննական պարագաներ՝ կապված ուսուցանվող նյութի հետ:

ԿՐԹԱԿԱՆ՝

- Կիմանան թվերը, կկարողանան տարբերել բնական թվերը, զույգն ու կենտը, նախորդն ու հաջորդը, մեծն ու փոքրը:

- Կլարոդանան գումարել, հանել, համեմատել, կտարբերեն արտահայտությունները, հավասարությունն ու անհավասարությունը:
- Բանավոր համրանքի յուրացում ուղիղ և հետ կարգով 1-10 թվերի սահմաններում:
- Միանիշ-երկնիշ, նախորդ-հաջորդ, զույգ-կենտ թվերի մասին ունեցած գիտելիքների համակարգում:
- Կլարոդանան լսել, հասկանալ և ճիշտ վերարտադրել:

ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ՝ ձեռքերի, մատների վարժանք, ֆիզկուլտ դադար,

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ

- Անցածի ամփոփում, ամրապնդում
- Ամրապնդել 1-ից 10-ը թվերի շուրջ անցած գիտելիքները
- Հարստացնել մաթեմատիկական գիտելիքները առաջադրանքի միջոցով
- Ամրակայել բնական թվերը

ԴԱՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Սովորել նոր վարժություններ
- Կազմել հավասարություններ, անհավասարություններ
- Ամրակայել 1-ից 10-ը թվերի կազմությունը

ԴԱՄԻՑ ՀԵՏՈ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԻՄԱՆԱՆ

- Կարդալ ու գրել 1-ից 10-ը թվերը
- Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը
- Գործնականում լուծել վարժություններ ու խնդիրներ
- Նկարագրել, բնութագրել նկարները

ԴԱՄԻՑ ՀԵՏՈ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ

- կազմել հավասարություններ, անհավասարություններ
- կազմել արտահայտություններ, խնդիրներ
- երգել թվերի մասին
- մեկնաբանել 1-ից 10-ը թվերի կազմությունը

Դասի ընթացքը

1. Խթանման փուլ

Բանավոր հաշիվ

Համրանք 1-10 թվերի սահմաններում՝ ուղիղ և հակառակ կարգով համրանք, խոսել միանիշ և երկնիշ թվերի մասին, որոշել տրված թվերի նախորդն ու հաջորդը, կատարել բանավոր գումարում և հանում 10-ի սահմաններում՝ տալով տարբեր հարցադրումներ՝ նպաստելով երեխաների մաթեմատիկական խոսքի զարգացմանը:

Ուսուցիչ – ինչպիսի՞ թվեր գիտեք

Աշակերտներ- միանիշ, կենս, գույգ

Ուսուցիչ – եկեք ծանոթանանք թվերի պատմությանը:

Ուսուցիչ - Երեխաներ մենք թվերը ինչպե՞ս հաշվեցինք

Աշակերտներ - աճման և նվազման կարգով.

Աճման կարգով մենք կատարում ենք գումարման գործողությունը, իսկ նվազման կարգով հանման գործողությունը:

Ուսուցիչ – վերհիշել գումարման և հանման բաղադրիչները:

Աշակերտներ - **Գումարելի** + **Գումարելի** = **Գումար**

Նվազելի - **Հանելի** = **Տարբերություն**


-Երեխան՝եր, այժմ միասին կլուծենք խնդիրներ թվերի վերաբերյալ, որի միջոցով կպարզեն, թե որքանով եք յուրացրել նյութը:

Իմաստի ընկալման փուլ.

Դիդակտիկական խաղ՝ «Ձկնորսություն»

Խաղի նպատակը՝-10-ի սահմաններում հաշվելու կարողությունների ամրապնդում:

Խաղի ընթացքը- Երեխաները մազնիսե կարթի օգնությամբ պետք է բռնեն մազնիսե ձկներին, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված է արտահայտություն: Այնուհետև պետք է մաթեմատիկական լեզվով կարդան արտահայտությունը և գտնեն արտահայտության թվային արժեքը (օր.՝ 7-5 տրված է երկու թվերի տարբերություն, որտեղ նվազելին 7 է, իսկ հանելին՝ 5, տարբերությունը կլինի 2):



Ֆիզկուլտ դադար.

Երեխաներին ծանոթացնել 0-10 թվերի ստացմանը, գրատախտակին փակցնել պաստառ, որի վրա հորիզոնական դիրքով ամրացրած է 3 կանաչ սրտիկ, իսկ ներքևի շարքում ավելացնենք 5 կարմիր սրտիկ՝ նշելով դրանց քանակը և կազմել հավասարություններ:

Օրինակ՝

$$3 + 5 = 8$$

$$7 - 3 = 4$$

Հիմա կխաղանք մի հետաքրքիր խաղ.

Հանիր ասված երկրաչափական պատկերը: Այս խաղը իր տեսակով տարբերվում է մյուսներից:

Աշակերտը երկրաչափական պատկերները պետք է ճանաչի փակ աչքերով:

Ուսուցիչը պարկի մեջ լցնում է երկրաչափական պատկերներ: Խաղացող երեխան պետք է շոշափելով հանի ուսուցչի ասած երկրաչափական ձևերը:

2. Կշռադաստման փուլ

Խմբային աշխատանք

Դադար – երգ - << >>

Անդրադարձ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ԳԻՏՈՒԹՅԱՆ ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԱԶԴԴԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թեմա

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Լ. Միրաբյան

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ1 Գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին	4
Գլուխ2 Մաթեմատիկայի դասաժամին կիրառվող գործնական աշխատանքներ.....	8
Եզրակացություն.....	25
Օգտագործված գրականության ցանկ.....	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը.

Ժամանակակից դպրոցի խնդիրը ոչ միայն աշակերտների միտքն ու իմացական կարողությունները զարգացնելն է, այլև աշխատանքի նկատմամբ սեր ու հարգանք, ձգտում սերմանելը: Այս նպատակին է ուղղված տարրական դասարաններում գործնական աշխատանքների կազմակերպումը:

Բարեփոխումների, կարողությունների զարգացման, կոմպետենցիաների վրա հիմնված տեսական գիտելիքների կիրառումը գործնական՝ կարևոր պահանջ է, որը սահմանված է պետական չափորոշիչով :

Անմիջական կապ գոյություն ունի կրթության բովանդակային երեք բաղադրիչների(գիտելիք, կարողություն-հմտություն, արժեքային համակարգ) միջև: Որպեսզի գիտելիքը կարողություն, իսկ հետո նաև հմտություն դառնա, հարկավոր է գործնականում կիրառել այն, քննել, համադրել, վերլուծել, այսինքն հմտանալ, դառնալ տվյալ գիտելիքը կրողը:

Հետազոտություն նպատակն է.

Ուսումնասիրել գիտական, գիտամեթոդական գրականություն, ինչպես նաև՝ գործող նորմատիվային փաստաթղթերն:

Ելնելով հետազոտության նպատակից առաջ ենք քաշել մի շարք խնդիրներ.

1)Նկարագրել գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը մաթեմատիկայի դասերին:

2)Վերլուծել ներկայացվող չափորոշչային ու ծրագրային պահանջներին համաձայն՝մաթեմատիկայի դասերին կազմակերպող գործնական աշխատանքներն:

3) Բացահայտել գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացը մաթեմատիկայի դասերին:

Գլուխ1 . Գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին

Ասա ինձ, ես կմոռանամ,

Ցույց տու ինձ, ես կհասկանամ,

Մասնակից դարձրու,

Եվ ես կսովորեմ:

Չինական առած

Կարևոր է գործնական աշխատանքն ուսումնական գործընթացում անպայման կիրառելու պահանջը:

Գործնական աշխատանքների ժամանակ է, որ աշակերտը կարողանում է գործնականում կիրառել իր տեսական գիտելիքները: Գիտելիքը դառնում է առավել հիմնավոր և օգտակար, աշակերտը տեսնում է ուսումնասիրվող առարկայի և իրական կյանքի կապը: Մա էլ հետաքրքրություն է առաջացնում ուսման նկատմամբ: Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները , որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ :

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ , ինչպիսիք են՝ գիտելիքների որոնում , կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացում :

Գործնական աշխատանքների միջոցով զարգանում է ուշադրությունը , տարածական պատկերացումները , մտածողությունը , կարողանում է կազմել քայլաշարեր , լուծել իր առջև դրված խնդիրները :

Գործնական աշխատանքները սովորողները հաճույքով են կատարում , քանի որ խաղի նման են , ուստի երեխան չի գիտակցում հաճախ , որ մաթեմատիկայի դասն է անում :

Գործնական աշխատանքը աշակերտի ինքնուրույն գործնության տեսակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողությունը: Աշակերտը պետք է կարողանա կատարել իրեն տրված առաջադրանքը, դնի կոնկրետ նպատակ , գտնի դրանք լուծելու ճանապարհ, պլանավորի իր անելիքը, ստանա արդյունք և կատարի եզրահանգում: Գործնական աշխատանքների ժամանակ աշակերտը պետք է ընտրության հնարավորություն ունենա, կարողանա ինքնուրույն առաջադրանքներ կատարի ,որը խթանում է աշակերտի ստողծագործական մտածողությունը, հմտությունը, երեւակայությունը, իմացական հետաքրքրությունը:

Գործնական աշխատանքներ կատարելիս ստեղծվում են այնպիսի իրավիճակներ , որոնք աշակերտներին մղում են ինքնուրույն եզրահանգումներ անելու , վերլուծելու , համադրելու , ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու , լուծումներ որոնելու և գտնելու :[2էջ5]

Հատկապես երբ աշխատանքը փոքր խմբով է կազմակերպվում, նա հաճույքով ու հետաքրքրությամբ է աշխատում:

Գործնական աշխատանքների կատարումը մաթեմատիկայի դասերին սովորողների համար ավելի գրավիչ ու հետաքրքիր կլինի , քանի որ դրանք կկապվեն առօրյա կյանքի և սովորողների կենսափորձի հետ : Նպատակահարմար է գործնական աշխատանքների ժամանակ սկզբում կատարել պարզ գործնական առաջադրանքները , այնուհետև ` բարդ :

Գործնական աշխատանքներ կարող են կատարվել , ինչպես դպրոցում , դասագրքից ` ծրագրային նյութի սահմաններում, այնպես էլ դպրոցից դուրս ` տանը, որպես տնային հանձնարարականների (չափել օրինակ ձեր սառնարանի երկարությունն ու լայնությունը, մուտքի աստիճանավանդակի մակերեսը, քո ննջարանի մակերեսը, տեղեկատվություն քաղել օրվա եղանակի մասին և այլն):

Օրինակ` իմանալ մոտակա խանութում վաճառվող որևէ ապրանքի (հացամթերք,կաթնամթերք) գները, դրանք ներկայացնելով աղյուսակի տեսքով: Եթե նկատվում է գների աճ կամ իջեցում ապա դա ներկայացնել դիագրամների տեսքով: Աշակերտը կարող է որոշել, թե որքան^օ ժամանակ է նա ծախսում դպրոցի ճանապարհին, քանի^օ րոպե են տևում դասամիջոցները, որքան ժամանակ է պահանջում դասապատրաստումը և այլն:

Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը: Մաթեմատիկական կրթության դերը պայմանավորված է նրա գործնական կիրառական նշանակությամբ: Այն անհրաժեշտ

է մյուս ուսումնական առարկաների դասավանդման համար: Մաթեմատիկայի ուսուցման նպատակներից մեկն է սովորեցնել աշակերտներին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել գործնական տարբեր խնդիրներ լուծելիս: Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտարկվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները
- մատուցել գործնականում կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, գոյատևմանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը: [1էջ176]

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ : Գործնական աշխատանքի նպատակն է՝ աշակերտներին հնավորություն տալ ցուցադրել յուրացրածը: Դա հնարավոր է ինքնուրույն որևէ հանձնարարության կատարմամբ, որը վկայում է, որ դպրոցում սովորածը կարելի է կիրառել կյանքում: Գործնական աշխատանքներ կատարելու հնարավորություններ է ընձեռնում հատկապես երկրաչափական բնույթի ուսումնական նյութը: Հարկավոր է ընտրել նաև ոչ աստանդարտ, գրավիչ առաջադրանքներ, որոնք աշակերտին կմղեն գործունե աշխատանքի: [4էջ44]

Նախապատվությունը տալով գործնական աշխատանքներին կարող ենք
ակտիվացնել ուղեղի աշխատանքը, կխթանենք տեսողական շփման և այլ
զգայարանների զարգացմանը:

Գլուխ2. Մաթեմատիկայի դասաժամին կիրառվող գործնական աշխատանքներ

Սովորողներին ներկայացվող չափորոշչային ու ծրագրային պահանջներին համաձայն՝ մաթեմատիկայից կարելի է կազմակերպել հետևյալ գործնական աշխատանքները .

1. Մեծությունների չափում (երկարություն, զանգված, տարողություն, ժամանակ, արժողություն)
2. Պատկերի բաժանում մասերի և տրված պատկերներից նոր պատկերների ստացում
3. Հարցումների, դիտարկումների միջոցով հավաքված տվյալների գրանցում՝ աղյուսակների և դիագրամների միջոցով
4. Չափման արդյունքում ստացած տվյալների օգնությամբ սենյակի, Երկրաչափական պատկերների կառուցում(ուղիղ, հատված, ճառագայթ, անկյուն , ուղղանկյուն , քառակուսի , շրջան և այլն)
5. բնակարանի մոտավոր հատակագծի պատկերում
6. Տարրական դասարանների մաթեմատիկայի ծրագրային նյութին համապատասխան անհրաժեշտ մոդելների ստեղծում (ժամացույցի թվատախտակ, անկյան մոդել, խորանարդ, բուրգ, կոն և այլն)
7. <<Մաթեմատիկա>> առարկայից պատի թերթի համար նյութերի հավաքում և պատի թերթի ստեղծում

Գործնական աշխատանքի տևողությունը կարող է լինել 15–20 րոպե: [3էջ57]

Այժմ ներկայացնենք մի քանի գործնական աշխատանքներ:

1.Չափումներ

Գործնական աշխատանք – Հասակների համեմատում

Խնդիրները- ձևավորել բարձրություն չափելու հմտություններ

-ձևավորել համագործակցելու հմտություններ

-համեմատել անվանական թվերը

Նախապատրաստում

Անհրաժեշտ նյութեր-Մոտ 1,5 մ երկարությամբ չափաժապավեն, նշագրիչներ, մատիտներ

Դասասենյակի նախապատրաստում-Պատին ամրացնել չափաժապավեն-սանդղակը այնպես տեղադրել որ երկու աշակերտ կարողանան ազատ մոտենալ

Ընթացքը

1. Աշակերտները գույգ-գույգ կմոտենան միմիանց օգնելով կչափեն հասկները և համապատասխան նշագրիծի մոտ կգրեն իրենց անունը
2. Չափումների ընթացքում մյուս աշակերտները արդյունքները գրանցում են
3. Հետո կհամեմատեն դրանք

Անդրադարձ

- Ոքեր^օ են նույն հասակի

-Ով^օ է ամենաբարձրահասակը, ով^օ է ամենացածրահասակը

- Ով^օ է ամենաբարձրահասակ աղջիկը, ով^օ է ամենացածրահասակ տղան

Որքան^օ է նրանց հասակների տարբերությունը

Ապա կառելի է տալ նաև այլ տեղեկություններ:

-Ընձուղտի հասակը 6մ է: Ձեզմից քանիսն^օ իրար ուսի կանգնեն, որ հավասարվեն ընձուղտին:

Ուրիշ ինչ^օ գիտեք ընձուղտի մասին

-Իսկ գիտեք, որ նրա պարանոցը իրանի կեսն է

-Իսկ գիտեք^օ, էե ինչպես են կովում ընձուղտները(նրանք կովում են վզերով):

* * *

Գործնական աշխատանք – Լծակավոր կշեռքի պատրաստում

Խնդիրները- Ջարգացնել հատվածի միջնակետը որոշելու հմտությունները

- Ջարգացնել կշռումներ կատարելու հմտությունները

- Ջարգացնել աչկաչափը

Անհրաժեշտ նյութեր-Քանոններ, մկրատներ, հյուրի ձողիկներ, ամուր թել , լարեր, գնդասեղներ, մեկագամյա օգտագործման ավսեններ, մանր առարկաներ (կոճակներ, ուլունքներ, ռետիններ)

Ընթացքը

1. Բաժանվել զույգերի
2. Յուրաքանչյուր զույգի տալ անհրաժեշտ նյութերից ը բացատրել նժարավոր կշեռք պատրաստելը
3. Աչքաչափով ձողիկը բաժանել 2 հավասար մասերի, ապա նույնը քանոնի օգնությամբ
4. Այդ կետում ծակել ձողիկը և մեջով լար անցկացնել
5. Հորիզոնական ձողիկի ծայրերից թելով կախել ավսենները
6. Կատարել մանր առարկաների կշռում

Անդրադարձ

- Որ՞ առարկաներն են հավասար կշռում
- Ինչպես՞ իմացաք:
- Որ զույգի կշեռքն է ամենալավը ստացվել:Ի

2. Հաշվարկներ

Գործնական աշխատանք – Ուղղանկյունների հաշվում


Խնդիրները- Ջարգացնել դիտողականությունը

- Ջարգացնել համակարգված հաշվելու հմտություն

Անհրաժեշտ նյութեր-Պաստառ, թղթեր, մատիտներ

Ընթացքը

1. Պաստառը փակցնել բոլորի համար տեսանելի վայրում
2. Հաշվել ուղղանկյունների թիվը



Անդրադարձ

- Ինչպես՝ հաշվեցիք
- Կարող եք միայն շրջաններով կամ միայն եռանկյուններով նման պատկեր գծել

Գործնական աշխատանք – Աթոռների հավասարաչափ բաշխում

Խնդիրները


- Ձարգացնել տվյալ իրադարձության մեջ հնարամիտ լուծումներ գտնելու հմտություններ

- Ձարգացնել առարկաների դասավորությունը թղթի վրա պատկերելու հմտություններ

Անհրաժեշտ նյութեր- Առնվազն 10 աթոռ

Ընթացքը

1. Աթոռներն առանձնացնել և առաջարկել դրանք սենյակի 4 պատերի տակ այնպես դասավորել, որ ամեն պատի մոտ նույնքան աթոռ լինի



Անդրադարձ

- Ինչն՞ էր ձեր համար դժվար

3. Տարբերակների

(Չուզադրություններ, տեղափոխություններ, կարգավորություններ) որոշում

Գործնական աշխատանք –Թվերի կազմում

Խնդիրները

- Ջարգացնել հնարավոր տարբերակները որոշելու հմտությունները

Անհրաժեշտ նյութեր-Գունավոր և սպիտակ թղթեր, մատիտներ, նշագրիչներ

Ընթացքը

1. Բաժանվել գույգերի կամ քառյակների
2. Յուրաքնչյուր խմբի երեք տարբեր թվանշաններով 2-ական քարտ է պատրաստում

Պարզել ` 2:5:9 թվանշաններով քանի՞ երկնիշ թիվ կարելի է կազմել, եթե թվի մեջ թվանշանները կարող են կրկնվել:



Անդրադարձ

- Քանի՞ թիվ ստացվեց:
- Որ ՞ խմբում է այդ թիվ ստացվել :
- Խումբն ինչպես՞ աշխատեց
- Եթե երեք ուրիշ թվանշաններով նույնն անենք, արդյունքը կփոխվեր՞ :

Գործնական աշխատանք –Դրոշների պատրաստման խնդիր

Խնդիրները- Ջարգացնել հնարավոր տարբերակները որոշելու հմտությունը


Անհրաժեշտ նյութեր- Գունավոր թղթեր, մատիտներ, մկրատներ

Ընթացքը

1. Սովորողներին բաժանվել գույգերի կամ քառյակների
2. Յուրաքանչյուր խմբի տալ 3 տարբեր գույնի թղթեր, մատիտներ, մկրատ
3. Նախ պատրաստել դրոշների շերտերը
4. Ստանալ տարբեր եռագույն դրոշներ (հորիզոնական շերտերով պատրաստեն ապա ուղահայաց)

Անդրադարձ

- Հորիզոնական երիզներով քանի՞ դրոշ ստացվեց
- Ուղահայաց եզրերով քանի դրոշ ստացվեց
- Ետե ուրիշ գույնի , օրինակ ` կարմիր կանաչ և կապույտ գույնի թղթերով երեք քանի դրոշ կստացվեր :



4.Տվյալների հավաքում, մշակում , վերլուծում

Գործնական աշխատանք – Դասարանի վերլուծություն

Խնդիրները


- Կրկնել տարվա եղանակներն ու ամիսները
- Տվյալներ հավաքել
- Սովորեցնել տվյալները համեմատելու ձև

Անհրաժեշտ նյութեր- Դասարանի աշակերտների անուններով պաստառ, աշակերտների քանակով խորանարդիկներ, տարվա 4 եղանակների անուններով 4 ցուցանակ

Ընթացքը

1. Բաժանվել զույգերի կամ քառյակների
2. Գրատախտակին փակցնել պաստառը
3. Պարզել խմբի անդամներից ով տարվա որ եղանակին է ծնվել:
4. Պաստառի վրա որևէ գրանցում է տվյալը
5. Չորս խմբերին հանձնարարել հաշվել տարբեր եղանակներին շնվաշների թիվը:

Խմբերի ստացած թվերին համապատասխան խորանարդներով աշտարակներ կառուցել, ամեն աշտարակի մոտ դնել եղանակի ցուցակը:



Անդրադարձ

- Հետաքրքիր էր
- Տարվա որ եղանակին ծնված ավելի քիչ ընկերներ ունեք
- Քանիսով են քիչ
- Դա աշակերտներից է ավելի շատ երևում, թե պաստառից:

5. Խաղ-առաջադրանքներ

Գործնական աշխատանք – Պատկերը լրացնել

Խնդիրները– Ձարգացնել դիտողականությունը, ուշադրությունը

Անհրաժեշտ նյութեր– Քարտեր ինչ-որ նկարներով(մի կտորը հանված), այդ նկարների առանձին կտորներ(մեկ բացիկից երկ հատ,մեկից մի կտոր հանենք, իսկ միյուսից՝ մի քանի տարրեր և ճիշտ պակասող կտոր)

Ընթացքը

1. Բաժանվել զույգերի
2. Չույգերին բաժանենք քարտեր և 3 տարրեր կտորները
3. Պակասող կտորը գտնել և տեղադրել

Գործնական աշխատանք –քայլ առ քայլ

Խնդիրները

- Ձևավորել գործողությունների ծրագիր կազմելու պատկերացումներ
- Փորձերի դիտարկումների հարցումների քայլաշատ կազմելու հմտություններ զարգացնել
- Ջարգացնել սովորողների ակտիվիստական մտաշողությունը

Ընթացքը

1. Բաժանվել քառյակների
2. Կարդալ առաջադրանքը հասկանալ և կատարել
3. Ներկայացնել աշխատանքը

Օրինակ՝ ձվածեղ պատրաստելու քայլերը որևէ բակային խաղի քայլաշար:

Ճերկրաչափական պատկերների կիրառումը

Գործնական աշխատանք –Երկրաչափական պատկերների կառուցում

Խնդիրները

- Ջարգացնել դիտողականությունը
- Ջարգացնել ուշադրությունը

Անհրաժեշտ նյութեր- հաշվեձողիկներ ամեն գույգին 16 հատ

Ընթացքը



1. Բաժանվել գույգերի


Հաշվաձողիկներով ստանալ հետևյալ պատկեր



3.Կատարել հետևյալ առաջադրանքը

- 1 ձողիկ այնպես հանեք, որ մնա 3 քառակուսի
- 2 ձողիկ այնպես հանեք, որ պատկերի մեծ 4 քառակուսի մնա
- 2 ձողիկ այնպես հանեք, որ պատկերի մեջ մնա 2 քառակուսի մնա
- 4 ձողիկ այնպես հանեք, որ մնա 3 քառակուսի





7. Մասնատում , մաս

Գործնական աշխատանք – Ուղղանկյունը (քառակուսին) հավասար մասերի բաժանում

Խնդիրներ

- Ուղղանկյունը (քառակուսին) գործնականում հավասար մասերի բաժանելու հմտություններ մշակել
- Նախապատրաստել երկրաչափական պատկերների հավասարության գաղափարի յուրացումը

Անհրաժեշտ նյութեր- Աշակերտների քանակով գունավոր թղթերից ուղղանկյուններ

Ընթացքը

– Ուղղանկյունները բաժանել աշակերտներին և առաջարկել բաժանել 2,4, ապա 3,6 հավասար մասերի

Աշխատանքն ավարտաելուց հետո կատարել :

Անդրադարձ

1. Ինչու՞ էք կարծում, որ դրանք հավասար կտորներ են
2. Ինչն՞ էր ավելի հեշտ
3. Իսկ ինչն էր դժվար:

Գործնական աշխատանքի տարատեսակներից են նաև արտադասարանական աշխատանքները (ցերեկույթ, պատի թերթի ստեղծում, անկյուն-ցուցահանդես, մրցույթներ, վիկտորինաներ):

Մրանք կրտսեր դպրոցականների հետաքրքրությունը շարժվող, նրանց լրացուցիչ տեղեկություններ տվող արդյունավետ միջոց են: Գործնական աշխատանքի այս

տեսակի կազմակերպումը աշակերտից պահանջում է հավաքել անհրաժեշտ նյութեր, հետաքրքրական տեղեկություններ մաթեմատիկայի բնագավառից:

Ներկայացնում եմ 2-րդ դասարանում մաթեմատիկայի դասաժամին կատարած գործնական աշխատանքը :

Գործնական աշխատանք

Ամսաթիվ _____

Դասարան 2-րդ

Անուն, ազգանուն _____

1. Գտի՛ր և նշի՛ր <<ավելորդ>> պատկերը: (1 մ.)



2. Հեռացատկի մրցույթում գրանցվեցին հետևյալ արդյունքները. (5 մ.)


Անի- 1 մ 75սմ, Գայանե- 1մ 24 սմ , Սոնա – 1մ 54սմ , Անուշ – 1 մ 36սմ , Մեդա - 1 մ 62սմ :

Մրցույթի արդյունքները ներկայացրու՝ աղյուսակով՝ ըստ գրաված տեղերի:

	Անուն	Արդյունք
1.		
2.		
3.		
4.		
5.		

3. Լրացրու՝ դատարկ վանդակները:

(2 մ.)



4.Գրի՛ր այնպիսի եռանիշ թիվ , որի թվանշանների գումարը 13 է: (2մ.)

Գործնական աշխատանքներով ապահովվում է նաև միջառարկայական կապը:«Տեխնոլոգիա», առարկայից աշակերտները ծանոթացել են ճապոնական «Օրիգամի» արվեստի պարզագույն նշումներին: Կարող ենք անդրադառնալ այդ նյութերին նաև մաթեմատիկայի դասերի գործնական աշխատանքների կազմակերպման ժամանակ(Երկրաչափական պատկերից քառակուսու համապատասխան ծալումների արդյունքում, աշակետորը ստանում է տարբեր պատկերներ):

Հետազոտողները պարեզել են , որ աշխատում են երեխաների երկու ձեռքերը հավասարաչափ, ապա ակտիվանում է նաև գլուխի երկու կիսագնդերի աշխատանքը: Աջ և ձախ կիսագնդերի համաչափ աճն օգնում է ակտիվացնել մտածողությունը, աշակերտները մտածում են ավելի արագ ու ճկուն ձևով: Զարգանում է աչքաչափը ևս:


ՍՈՑՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ,ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
ՎԵՐԼՈՒԾՈՒՆՆԵՐ

Սոցոլոգիական հարցումներն անցկացվել են գործնական աշխատանքների վերաբերյալ,որի նպատակն է պարզել գործնական աշխատանքների կատարման գործընթացը :Չարցվողների թիվն է 24,հարցումներն անցկացվել է ՎՊՀ -ում վերապատրաստվող ուսուցիչների շրջանակում:

Հարցաթերթիկ

Հարց 1. Մաթեմատիկայի դասաժամին կատարվող գործնական աշխատանքների առաջադրանքները կազմում եք.


1. Ինքնուրույն
2. Օգտվում եք պատրաստի տետրերից



Հարցվողների կեսից ավելին գործնական աշխատանքները կազմում են օգտվելով պատրաստի նյութերից:

Հարց 2. Մաթեմատիկայի դասաժամին գործնական աշխատանքները նախընտրում եք իրականացնել.

1. խմբային
2. անհատական
3. զույգերով




Հարցվողների կեսից ավելին գործնական աշխատանքները նախընտրում են իրականացնել խմբային :

Հարց 3. Մաթեմատիկայի դասաժամին իրականացվող գործնական աշխատանքները նախընտրում եք գնահատել .

1.միավորային գնահատմամբ

2.ռուբրիկներով

3.այլընտրանքային եղանակով




Հարցվողների կեսից ավելին գործնական աշխատանքները նախընտրում են գնահատել միավորային :

Հարց 4.Մաթեմատիկայի դասաժամին կիրառվող գործնական աշխատանքները նախընտրում եք հանձնարարել.

1.տանը


2.դասաժամին



Այս արդյունքներն խոսում են այն մասին, որ հարցվողների մեծամասնությունը նախընտրում է գործնական աշխատանքները կազմակերպել դասաժամին:

Հարց 5.Ի՞նչ հաճախականությամբ եք իրականացնում գործնական աշխատանքները մաթեմատիկայի դասաժամին.

1. պարտադիր պահանջ՝ ծրագրայինը պահպանելով
2. սեփական նախաձեռնությամբ



Հարցվողների կեսից ավելին գործնական աշխատանքները կազմակերպում է սեփական նախաձեռնությամբ:

Ըստ մեր հարցումների և վերլուծությունների մեծ նշանակություն է տրվում գործնական աշխատանքներին: Ըստ, այդմ գործնական աշխատանքներն իրականացվում են դասաժամին, գնահատվում է միավորային սանդղակով, տրվում է գործնական աշխատանքներ սեփական նախաձեռնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ.

1. Գործնական աշխատանքների կազմակերպման ներկայացվող պահանջները հստակորեն ներկայացված են պետական և առարկայական չափորոշիչներում
2. Գործնական աշխատանքների կազմակերպումն և անցկացումը մաթեմատիկայի դասաժամին զարգացնում է երեխաների երևակայությունը, տրամաբանական մտածողությունը, զարգացնում է համեմատելու, վերլուծելու ունակությունը:

3. Գործնական աշխատանքը ուսուցումը կյանքին կապող լավագույն միջոց է:

Գործնական աշխատանքների կատարման ժամանակ գնահատում են աշակերտների մասնակցությունը (չի ընդգրկվում, պասիվ է, ակտիվ է, նախաձեռնող է...) գործնական և չափողական գործիքների ճիշտ օգտվելու կարողությունները, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալը, կիրառական կարողությունների դրսևորումը:

Այսպիսով, գործնական աշխատանքները շատ կարևոր դեր են խաղում ցանկացած ուսումնական գործընթացում, և հատկապես մաթեմատիկայի դասընթացում, բացի այն, որ դասը չի ընթանում միօրինակ, այլև նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

Գործնական, հետազոտական աշխատանքները պետք է հաճախակի կազմակերպել: Նման աշխատանքներն ավելի հետաքրքրական են դարձնում ուսումնական գործընթացը և նպաստում սովորողների կարողությունների, հմտությունների զարգացմանը, ինչպես նաև՝ արագ սոցիալականացմանը:

Օգտագործված գրականությունը

1. Է. Ի. Այվազյան <<Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա>> Եր., ԵՊՀ հրատ., 2016, 202 էջ:
2. Գ. Բեդիրյան- << Գործնական աշխատանքներ մաթեմատիկայից>> Երևան 2012, 107 էջ:
3. Ս. Մկրտչյան I–IV դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ/.– Եր.: «Զանգակ» հրատ., 2016, 114 էջ:
4. Նախաշավիղ-5-6.2002

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒԹՅՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Հերթական ատեստավորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ**

**ԱՐՄԻՆԵ ՄԱՅԻՍԻ
ԱՖԻՑԵՐՅԱՆ**

Թեմա

Բնագիտության ուսուցումը, և բնապահպանական վերաբերմունքի
ծնավորումը << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի միջոցով

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Մ.Գ.Թ. Լ.Միրաբյան

Բովանդակություն

1.Ներածություն (էջ 2):

1.1.Բնագիտության ուսուցման և բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով (էջ 3):

1.2.Բնապահպանական դաստիարակության հիմնական խնդիրները կրթսեր դպրոցականների մոտ (էջ 4):

2.<< Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դաստիարակչական հնարավորությունները (էջ 10):

3.Փորձարարական դասի ներկայացում <<Աջակցում եմ համայնքիս>>: Բնապահպանակ խնդիրների նախագիծ (էջ 18):

4.Եզրակացություն (էջ 19):

5.Գրականություն (էջ 20):

1. Ներածություն

Բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը, կրթությունը դպրոցականների ուսուցման գործընթացում, կարևորագույն և առանցքային պահանջ է: Այն արտացոլված է << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի չափորոշչում, ծրագրում, դասագրքերում: Մերօրյա իրականության մեջ թեման ամենաարդիականն է: Բոլորս գիտենք և արդեն զգում ենք գլոբալ տաքացման, ծառահատման, կենդանիների և բույսերի շարունակվող ոչնչացման հետևանքների մասին: Ամեն տարի սարսափում ենք Սևանի կապտականաչ տեսքից, օձերի ակտիվացումից, անձյուն ձմեռներից և քաղցկեղի շատանալուց: Երեխան պետք է իմանա այս ամենի պատճառահետևանքային կապերը և փոքր հասակից արդեն հոգ տանի երկրագնդի մասին, հասկանալով, որ հակառակ դեպքում ինքն է պատճառը այն ամենի ինչ կատարվում է իր շուրջը: Միշտ հիշի՝ <<բնությունը վերադարձնում է այն ամենը ինչ մենք տալիս ենք իրեն՝ լինի դա լավ, թե վատ>>: Գտնում եմ, որ սույն թեմայի պատշաճ ուսուցումը կձևավորի բնապահպանական վերաբերմունք և համապատասխան վարքագիծ: << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի ուսումնասիրության ընթացքում երեխաները ընկալում են շրջակա միջավայրի ներդաշնակությունը որպես իրենց գոյության նախապայման և հետագայում անում են հնարավորը, որպեսզի պահպանեն բնության կայությունը և հետևաբար ապահովագրեն իրենց կյանքը: Այս ենթատեքստում կարևորում եմ առարկայի հնարավորինս հետևողական դասավանդումը և գիտակից քաղաքացու ձևավորումը: Կարծում եմ՝ թեման ճիշտ դասարաններում են ուսումնասիրում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ կրթությունը հասակից ձևավորված բնապահպանական վերաբերմունքը ոչ մի կերպ հնարավոր չէ ձևավորել: Իսկ մեծ հասակում դժվար է այս գործընթացը, քանի որ ձևավորված վարքագիծը փոխելը անհամեմատ ավելի դժվար է: Հետագոտական աշխատանքների նպատակներից է ուսումնասիրել բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը միտված գոյություն ունեցող տեսական մոտեցումները և դրանց գործնական դրսևորումները: Նպատակներից բխող խնդիրներից են՝

1. Գտնել բնապահպանական խնդիրների, դրանց լուծումների և <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջև եղած կապը:

2. Ի՞նչ մեթոդներով կարելի է իրականացնել բնապահպանական դաստիարակությունը կրթությունը դպրոցական դասարաններում:

3. Ի՞նչ խնդիրների ենք բախվում կրթությունը դպրոցական տարիքի երեխաների շրջանում, բնապահպանական դաստիարակության կազմակերպման ընթացքում:

1.1. Բնագիտության ուսուցման և բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի միջոցով:

Եթե նախկինում շրջակա միջավայրի պահպանությունը դիտվում էր միայն որպես բնագիտական խնդիր, ապա այժմ այն վերածվել է հիմնախնդրի իր մեջ ներառելով թե տնտեսական, թե սոցիալական, թե հումանիտար խնդիրների ամբողջություն: Փոխվել են ժամանակները, մարդկային հարաբերությունները, որոնք չեն կարող անհետևանք մնալ մեր հետզհետե քաղաքատիպ դարձող շրջակա միջավայրի վրա: մենք հեռացել ենք բնությունից, անտառներ ենք ոչնչացնում, աղտոտում ենք շրջակա միջավայրը, թունավոր թափոններ ենք նետում, բույսեր ու կենդանիներ ենք ոչնչացնում չմտածելով հետևանքների, գալիք սերնդի գոյատևմանը սպառնացող վտանգերի մասին: Դրա պատճառը մարդկային անտարբերության, թերի մտածելակերպի, անբարեկիրթ վերաբերմունքի հիմքում կարելի է փնտրել: Տարրական դասարաններում դասավանդվող <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան իր մեջ բացի բնությունից ներառում է աշխարհաճանաչողության տարբեր բնագավառների տարրական գիտելիքներ: Առարկան հիմք է հանդիսանում հանրակրթական դպրոցի հետագա աստիճաններում սովորողների բնագիտական, հումանիտար առարկաների համար: Առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները: Այն նպաստում է միմյանց հետ հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատում մարդկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Առարկայի միջոցով աշակերտները իմանում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Համարյա թե բոլոր դպրոցներում էլ կան անմշակ հողակտորներ, որոնք կարելի է օգտագործել աշակերտների հետ գործնական, բուսաբանական, բնապահպանական, բնօգտագործման աշխատանքներ իրականացնելու համար: Այն կօգնի աշակերտներին սիրել և ճանաչել բնությունը, նրանց մոտ կձևավորվի հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Առարկայի դասավանդման հենց առաջին դասերից կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև: Մա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել այնպիսի անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ թե դրական, թե բացասական իմաստներով:

Եվ վերջապես բնության, կենդանիների հանդեպ սեր ունեցող մարդը հոգեպես հարուստ է ազնիվ, բարի, որը այսօր այնքան պակասում է մեզանում: Այդ ամենի կարևորությունը գիտակցելով տարրական դասարաններում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ձգտի հնարավորինս մատչելի և դյուրին դարձնել առարկայի մատուցումը, այն ինտեգրելով մյուս առարկաների հետ: [8, էջ 2]

1.2. Բնապահպանական դաստիարակության հիմնական խնդիրները կրթսեր դպրոցականների մոտ:

Բնապահպանական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար:

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականանում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդելը արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր, գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ: Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ :

Նպատակը բնապահպանական կրթությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

1. Կրթական

Գտնել համակարգի բնապահպանական խնդիրների մասին և առաջադրել արդի լուծման ճանապարհներ,

ձևավորել էկոլոգիապես ձայնային վարքի ու գործունեությամբ և առողջ ապրելակերպով անհատ,

2. Զարգացող

զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի

պաշտպանության զարգացման համար: Խելացի (կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունքը բնության հանդեպ՝ որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու հաստատակամությունը, պատասխանատվությունը): [6]

Կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով: Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին: Ուսումնասիրելով «Էկոլոգիա» առարկան իր խորությամբ՝ անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական աղետների մասին: [6, էջ 5]

Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ

սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ): Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:[8, էջ 1]

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները: Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի մեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը, սովորողների խնդիրների, տեղական ծանոթ, իրական միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու, գտնելու: Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները: «Բնապահպանական դաստիարակություն» հասկացության էությունը բնութագրվում է որպես աճող սերնդի ուսուցման, դաստիարակության, զարգացման անընդհատ գործընթաց՝ ուղղված ընդհանուր էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական պատասխանատվության ձևավորմանը՝ իրեն հարազատ մարդկանց, իր երկրի և մոլորակի ճակատագրի նկատմամբ:

Բնապահպանական դաստիարակության միջոցով պետք է անհատի աշխարհաճանաչողությունը զարգացնել և հասցնել այնպիսի մակարդակի, որի շնորհիվ նա ընդունակ կլինի իր խմբի համար կենսական անհրաժեշտություն ունեցող հարցերի լուծման առումով պատասխանատվություն կրելու (գիտակցական մոտեցման ցուցաբերում): Այս տեսակետներից էլնելով՝ մանկավարժները առանձնացնում են էկոլոգիական դաստիարակության հետևյալ խնդիրները, որոնցից կրթսեր դպրոցականների համար կարևորում են հետևյալները՝

1. շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,

2. էկոլոգիական վարքագիծ ունեցող քաղաքացու դաստիարակում,

3. հասարակության՝ մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:[5]

Կրթսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության նպատակի և խնդիրների շուրջ տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր մոտեցումներ՝

- էկոլոգիական մշակույթի ձևավորում, երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում,
- բնության, մարդկանց, իր կյանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում,
- բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում,
- երեխայի մեջ բնության պահպանման, բարելավման, զարգացման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում,
- երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորում, որը պետք է հիմնվի նրա խոր հուզազգացմունքային փորձի վրա,
- էկոլոգիական գիտակցության դրդապատճառային հիմքերի ձևավորում,
- երեխայի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում,
- կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյալ տարրական գիտելիքների, նրանց վերաձևավորման հարցում մտավոր և ֆիզիկական աշխատանքի դերի մասին պատկերացումների ձևավորում,
- արժեքային դիրքորոշման ձևավորում:

Սրանք մեթոդաբանական հիմք են հանդիսանում երեխաների էկոլոգիական դաստիարակության, բնապահպանական կարողությունների զարգացման համար:

Տարբեր հեղինակների կողմից առանձնացված են էկոլոգիական դաստիարակության նպատակները, բնութագրված են «էկոլոգիական մշակույթ», «էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական վարք», «հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ» հասկացությունները:

Այնուամենայնիվ էկոլոգիական դաստիարակության առաջատար խնդիրներն են մնում՝ «մարդ-բնություն-հասարակություն» փոխադարձ կապի իմացության անհրաժեշտությունը, էկոլոգիական խնդիրների լուծման գործնական ունակությունների

ձևավորումը, Էկոլոգիական արժեքային կողմնորոշումների դիրքորոշումների, Էկոլոգիական աշխատանքի հմտությունների ձևավորումը:

Էկոլոգիական դաստիարակությունը Էկոլոգիական մշակույթի, շրջակա միջավայրի նկատմամբ Էկոբարոյական վարքագծի ձևավորմանն ուղղված գործընթաց է:

Այսինքն՝ Էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված հասարակությանը Էկոլոգիական գիտելիքներով, Էկոլոգիական դաստիարակության խնդիրների իրականացմանը, Էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական Էկոլոգիական գիտելիքներով և նոր Էկոլոգիական մտածողությամբ:

Կրթսեր դպրոցականների Էկոլոգիական դաստիարակության խնդիրների թվում սովորաբար ընդգրկվում է բույսերի և կենդանիների խնամքի կարողությունների ձևավորումը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները ներկայացվում են երեխայի անձի զարգացման, ուսուցման և դաստիարակության գործընթացի միասնության մեջ, որտեղ վարքի և գործունեության պահանջմունքների ձևավորումն ուղղված է շրջակա միջավայրի բարելավմանն ու առողջ կենսակերպին :

Կրթսեր դպրոցականների Էկոլոգիական դաստիարակության խնդիրները հուզել են հայ մանկավարժության դասականներին, Ա. Շիրակացուն, Խ.Աբովյանին, Րաֆֆուն և այլոց:

Խաչատուր Աբովյանը գտնում էր, որ կրթության բովանդակության մեջ մեծ տեղ պետք է հատկացնել բնագիտական, աշխարհագրական գիտելիքներին, իսկ ուսուցման ձևերից կարևոր էր համարում բնաճանաչողական, երկրագիտական էքսկուրսիաները, իսկ հայ ուսուցիչների ուսուցչապետ Ղ. Աղայանը նշում էր. «Բնությունը համաչափություն և կանոնադրություն է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մեջ այդ հրաշալի ներդաշնակությանը այնքան համանմանելու պահանջ չունի, ինչքան մարդու կրթության արվեստը»:[6, էջ 6-8]

Այսպիսով՝ ելնելով վեր քննարկված մոտեցումներից կարելի է առանձնացնել կրթսեր դպրոցականների Էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները

- բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների ձևավորում,
- բնության երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի փոխկապակցվածության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորում,
- բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների սովորույթների ու հմտությունների ձևավորում,
- կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացման ձևավորում,

- **միմյանց նկատմամբ հանդուրժողականության, հարգանքի ունակության ձևավորումը:**

Էկոլոգիական կրթությունն ասելով պետք է հասկանալ էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների այն համակարգը, որի յուրացումը նպաստում է էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացմանը և խնդիրների լուծմանը: Էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որը միտված է երեխաների մեջ շրջապատող բնական աշխարհի, երևույթների, նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների իմացական հետաքրքրությունների, էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Երեխաների իմացական հետաքրքրությունների ակտիվացմանը զուգընթաց լուծվում է նրանց բնաճանաչողական ընդունակությունների և բնապահպանական կարողությունների զարգացման հարցը:[7, էջ 1]

2.<< Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դաստիարակչական հնարավորությունները:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի հիմնական խնդիրներն են վերհանել իր և մյուսների նմանություններն ու տարբերությունները:

Կարողանա տարբերակել իր հույզերը:

Կարողանա տարբերակել զգայարաններով ստացած տեղեկությունները՝ որպես աշխարհն ընկալելու միջոց:

Կարողանա որպես առավելություն ընկալել իր և ընկերների տարբերություններն ու առանձնահատկությունները:

Կարողանա նկարագրել տարբեր իրավիճակներում ունեցած իր հույզերը: Կարողանա իր և ընկերների տարբերություններն ու առանձնահատկությունները հիմնավորել որպես առավելություն:

Գիտակցի, որ տարբեր զգայարաններով ստացած տեղեկություններն օգնում են լիարժեք ընկալել աշխարհը:[2, էջ 30

Հասկանա «տուն», «ընտանիք», «գերդաստան» հասկացությունները, իմանա, որ ընտանիքները կարող են կազմով տարբեր լինել: Գիտակցի ընտանիքում դերերը, պարտականությունները և իրավունքները:

Հասկանա փոխօգնության, փոխադարձ վստահության և հոգատար վերաբերմունքի կարևորությունը:

Կարողանա պահպանել իր շրջապատում ընդունված համակեցության կանոնները, հարգի և աջակցի ընտանիքի անդամներին: Հասկանա ընտանիքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածությունը:

Կարողանա հիմնավորել համակեցության կանոնների անհրաժեշտությունն ընտանիքում:

Կարողանա հիմնավորել ընտանիքում փոխօգնության և պարտականությունների ստանձնման կարևորությունը:

Գիտակցի ընտանիքում պարտավորությունների իր բաժինը:

Կիրառի դասարանական կանոնները:

Իմանա հասակակիցների հետ արդյունավետ հաղորդակցվելու կանոնները, համագործակցության առավելությունը, պատրաստ լինի աջակցելու ընկերներին:

Իմանա դպրոցում համակեցության և բարեկիրթ հաղորդակցման կանոնները, գիտակցի աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություն-ներում դերերի առանձնահատկությունները:

Կարողանա արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել համադասարանցիների և ուսուցիչների հետ:

Կարողանա խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, պատասխանատու վարքագիծ դրսևորի շրջապատի հանդեպ:[3, էջ 5]

Գիտակցի սեփական վարքագծի հնարավոր հետևանքները: Կարողանա տարբերակել այն իրավիճակները, որոնք կարող են հանգեցնել կոնֆլիկտի, նման իրավիճակներից խուսափելու համար համապատասխան վարք դրսևորել:

Գիտակցելով արարքի և հետևանքների կապը՝ դրսևորի պատասխանատու վարքագիծ:Իմանա իր հասցեն, կարողանա նկարագրել իր բնակության վայրը, շրջակայքի հիմնական կառույցները և դրանց նշանակությունը:

Իմանա իր անմիջական հարևաններին: Հասկանա, որ ինքն այդ համայնքի մասնիկն է, իմանա և կարողանա կիրառել հասարակական վարքի կանոնները, պատրաստ լինի օգնել համայնքի անդամներին, տարիքով մեծերին: Կարողանա իր բնակավայրում կողմնորոշվելու նպատակով հարցեր տալ և ուղղորդվել դրանցով: Կարողանա պարզ գծապատկերների միջոցով ներկայացնել իր բնակավայրը:

Իմանա իր բնակավայրին բնորոշ գծերը, տեսարժան վայրերը:

Կարողանա հոգատար վարքագիծ ցուցաբերել շրջապատի մարդկանց, բնաշխարհի, նյութական արժեքների նկատմամբ: Կարողանա գործուն մասնակցություն ունենալ իր բնակավայրի բարեկարգմանը, ցուցաբերել շրջապատը մաքուր պահելու կարողություններ: Կարողանա ներկայացնել իր բնակավայրի նյութական արժեքները, առանձնահատկությունները:[3, էջ 15]

Կարողանա իր բնակավայրի բարելավմանն ուղղված առաջարկներ անել:

Նախնական գիտելիք ունենա կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների առանձնահատկությունների և դրանց փոխազդեցության մասին: Կարողանա տարբերել բնական և մարդու կողմից ստեղծված իրերը և շինությունները, անկենդան բնության տարրերը և կենդանի օրգանիզմները:

Ճանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերը:

Նախնական գիտելիք ունենա բույսերի կենսական ձևերի և կենդանիների հիմնական խմբերի մասին: Կարողանա ճանաչել վայրի և մշակովի բույսերը, վայրի և ընտանի կենդանիները:

Իմանա բնության մեջ պահելու վարքի հիմնական կանոնները:[2, էջ 32]

Նախնական գիտելիք ունենա մարդու կյանքում բույսերի և կենդանիների դերի մասին: Իմանա բույսերի նշանակությունը օդի մաքրության պահպանման համար: Կարողանա թվարկել բույսերից և կենդանիներից ստացվող սննդամթերքները:

Հոգատար վերաբերմունք դրսևորի կենդանական և բուսական աշխարհի հանդեպ,

գնահատի բնության գեղեցկությունը: Կարողանա թվարկել կենդանի օրգանիզմներին

առավել բնորոշ հատկությունները:

Կարողանա տարբերակել բույսերի կենսական ձևերը (ծառեր, թփեր, խոտաբույսեր) և կենդանիների որոշ խմբերի (միջատներ, ձկներ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ, կաթնասուններ) ներկայացուցիչներին, բերի օրինակներ: Կարողանա ճանաչել նրանց իր շրջապատում կամ նկարների վրա:

Իմանա բույսերի աճի համար անհրաժեշտ պայմանները (լույս, խոնավություն, ջերմություն, հող):

Իմանա բուսական և կենդանական սննդի կարևորությունը իր օրգանիզմի աճի և զարգացման համար: Կարողանա ինքնուրույն դիտարկումներ անել բնության մեջ կենդանի օրգանիզմների և անկենդան բնության տարրերի միջև գոյություն ունեցող որոշ կապերի վերաբերյալ և բացատրել դրանք:

Կարողանա բացատրել կենդանի օրգանիզմների միջև գոյություն ունեցող կապերը նրանց բնակեցման վայրերում:

Իմանա բույսերի բազմացման որոշ ձևեր, ճանաչի իր շրջապատում հանդիպող, պահպանության կարիք ունեցող որոշ բույսեր և կենդանիներ:

Նախնական գիտելիք ունենա սննդի և անձնական հիգիենայի նշանա-կության, սննդամթերքի ոչ ճիշտ օգտագործման վտանգների և դրանցից խուսափելու միջոցների մասին:

Գիտակցի սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, մարմնամարզությամբ զբաղվելու կարևորությունը, տարբերակի առողջու-թյան համար վնասակար սովորությունները, գիտակցի մաքրակենցաղ ապրելակերպի դերը վարակներից խուսափելու համար: Իմանա տանը և այլուր հնարավոր վտանգավոր իրավիճակների և դրանց հետևանքների մասին, իմանա երթևեկության կանոնները, երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու տարրական կանոնները: Անվտանգ վարքագիծ դրսևորի Հասկանա սեփական վարքագծի և առողջության կապը, դրսևորի պատասխանատու վարքագիծ:

Կարողանա կողմնորոշվել տանը և դրսում ստեղծված վտանգավոր և արտակարգ իրավիճակներում:[5, էջ 17]

Կարողանա օգտվել կենցաղային անվտանգ կառավարվող սարքերից: Կիրառի անձնական հիգիենայի կանոնները, դրսևորի կամային հատկանիշներ առողջության

համար վնասակար սովորություններից զերծ մնալու համար:

Հասկանա, որ մարդը բնության և հասարակության մասնիկ է, զանազանի մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային տարբերությունները:

Հասկանա, որ անձնային որակ-ները պայմանավորված չեն սեռով:

Կարողանա գնահատել իր և մյուսների հաջողությունները, համագործակցել, ընդունի համակեցության կանոնները:

Կարողանա պաշտպանել սեփական իրավունքներն ու շահերը և գիտակցի իր պարտականությունները:

Կարողանա տարբերակել արարքներն ըստ հնարավոր հետևանքների, ունենա պատասխանատու վարք: Կարողանա բացատրել մարդու՝ բնության և հասարակության հետ փոխկախվածությունը և օրինակներ բերի:

Հասկանա սեռային որոշ կարծրատիպերի պայմանական լինելը, օրինակներ բերի:

Կարևորի ընկերական հարաբերությունների դերն իր կյանքում, կարողանա ուսումնական գործընթացում և խաղերի ժամանակ ստեղծել փոխօգնության և վստահության հարաբերություններ դասընկերների հետ: Գիտակցի իրեն շրջապատող մարդկանց տարբեր դերերի փոխկախվածությունը, հասկանա դրանց կարևորությունը, կարողանա օրինակներով հիմնավորել:[2, էջ 21]

Հասկանա, որ փոխօգնությունը, համագործակցությունը և վստահության վրա հիմնված հարաբերությունները փոխշահեկան են, կարողանա բացատրել դա:

Կարողանա կազմակերպել իր առօրյան. օրվա ռեժիմ կազմել, պլանավորել իր ժամանակը և գործունեությունը, տարբերակել աշխատանքը ժամանցից, իմանա՝ ինչպես կազմակերպել հանգիստը:

Պատկերացում ունենա կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու և որոշում կայացնելու վերաբերյալ:

Կարողանա նկարագրել իր նախա-սիրությունները, հետաքրքրությունները, նպատակներ ուրվագծել և դրանց հասնելու ճանապարհներ փնտրել: Հասկանա կազմակերպված առօրյայի կարևորությունը հաջողության հասնելու համար:

Առօրյա կյանքի՝ իրեն վերաբերող տարբեր իրավիճակներում կարողանա կատարել տրամաբանական եզրահանգումներ, որոշումներ կայացնել, խնդիրներ լուծել:

Կարողանա բացատրել կազմակերպված առօրյայի և նպատակների իրակա-նացման կապը, օրինակներ բերի:

Հասկանա իր առջև ծառայած դժվարությունները և փորձի ինքնուրույն հաղթահարել դրանք:

Նախնական գիտելիքներ ունենա աստղերի, Արեգակի, Լուսնի, Երկիր մոլորակի՝ որպես տիեզերական մարմինների, մասին:[5, էջ 30]

Իմանա բնության մեջ կատարվող պարբերական երևույթների մասին (գիշեր-ցերեկ, տարվա եղանակներ): Իմանա տիեզերական մարմինների՝ Արեգակի, Լուսնի, Երկրի հիմնական բնութագրիչները: Կարողանա բացատրել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները (տարվա եղանակներ, գիշեր-ցերեկ):

Իմանա մարմնի մասերը, պատկերացում ունենա մարդու օրգանների, զգայարանների, նրանց հիգիենայի մասին:

Պատկերացում ունենա օրգանիզմի համար մաշկի ամբողջականության և մարմնի հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտության մասին: Կարողանա խուսափել մաշկի ամբողջականության խախտման պատճառ հանդիսացող իրավիճակներից:

Իմանա վերքերի, կոտրվածքների, այրվածքների, ցրտահարության, արևահարության մասին:

Նախնական գիտելիքներ ունենա որոշ վարակիչ հիվանդությունների և դրանց կանխարգելման միջոցների մասին: Կարողանա ցույց տալ մարդու օրգանները, թվարկել որոշ օրգանների համակարգերը:

Իմանա զգայարանների անհրաժեշտությունը մարդու համար:

Իմանա լայն տարածում ունեցող վարակիչ հիվանդությունների ախտանիշները և դրանցից խուսափելու ուղիները: Իմանա որոշ օրգանների համակարգերի ֆունկցիաները:

Կարողանա կողմնորոշվել և առաջին օգնություն ցուցաբերել վերքերի, արևահարության, ցրտահարության, այրվածքների դեպքում:

Կարողանա բացատրել հիվանդությունների կանխարգելման նշանակությունը:

Իմանա տարբեր վտանգավոր իրավիճակների մասին, իրազեկ լինի բնական աղետների (երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ) մասին, իմանա դրանցից պաշտպանվելու կանոնները, կարողանա կիրառել դրանք:

Նախնական գիտելիքներ ունենա ծայրահեղ իրավիճակներում, աղետներ-րի ժամանակ կողմնորոշվելու և վտանգից խուսափելու համար: Հասկանա արտակարգ իրավիճակներում խուճապի վտանգավորությունը, գիտակցի ինքնատիրապետման կարևորությունը և փոխօգնության անհրաժեշտությունը: Կարողանա բացատրել վտանգ պարունակող իրավիճակները, մեկնաբանել դրանց հնարավոր հետևանքները և կարողանա համապատասխան վարքագիծ դրսևորել:

Իմանա Երկրի մակերևույթի հիմնական ձևերը:

Քարտեզի վրա կարողանա ցույց տալ օվկիանոսները և մայրցամաքները:

Իմանա, որ Երկիրը պատված է մթնոլորտով, ինչ են մթնոլորտային տեղումները:

Իմանա ջրի երեք ագրեգատային վիճակների մասին: Կարողանա կատարել ջրի

գոլորշիացման, սառեցման, հեղուկ վիճակի վերածելու պարզագույն փորձեր:

Իմանա, թե ինչ է աղբյուրը, գետը, լիճը, ծովը, օվկիանոսը ինչով են հարուստ ծովերն ու օվկիանոսները:[5, էջ 12]

Գաղափար ունենա մարդկանց, բույսերի ու կենդանիների համար ջրի նշանակության, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակության մասին:

Կարողանա օրինակներ բերել կենցաղում ջրի խնայողական օգտագործման վերաբերյալ, տանը հետևել ջրաչափի ցուցմունքներին:

Գաղափար ունենա հողի, նրա կազմի մասին: Իմանա հողի նշանակությունը բույսերի և այլ կենդանի օրգանիզմների համար: Իմանա՝ ինչ ծառատեսակներ և խոտաբույսեր են աճում իր շրջապատում: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ երկրագնդի խոշոր հարթավայրեր և լեռներ:

Իմանա, թե ինչ է հողերի քայքայման երևույթը: Կարողանա իր շրջակայքում դիտարկել նման երևույթներ և ներկայացնել:

Իմանա, թե ինչպես է մարդն օգտագործում գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների հարստությունները:

Կարողանա բացատրել, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար մարդու և կենդանիների համար:

Ծանոթ լինի կյանքի տարբեր պայմաններին հարմարված բույսերի և կենդանիների օրինակներին:

Կարողանա ինքնուրույն դիտարկումներ կատարել իր շրջապատում տարածված բույսերի ու կենդանիների վերաբերյալ և դրանց արդյունքում պարզագույն խմբավորումներ կատարել:

Կարողանա դիտարկումներ անել մթնոլորտային երևույթների (տեղումների և քամու) վերաբերյալ:

Կարողանա մեկնաբանություններ անել հողի գլխավոր հատկանիշի՝ բերրիության (բերքատվության) վերաբերյալ, մասնակցի հողի քայքայման դեմ պայքարի փոքրիկ միջոցառումների:

Իմանա, թե ինչ է պետք է անել գետերի, լճերի, մաքրության պահպանության համար:

Կարողանա Սևանա լճի օրինակով ներկայացնել լճի առանձնահատկությունները:

Կարողանա բացատրել իր շրջապատում եղած աղբյուրների առաջացումը:

Գիտակցի մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնության վրա:

Մարմիններ, նյութեր, մասնիկներ

Իմանա՝ ինչ են մարմիններն ու նյութերը, որ դրանք կազմված են մասնիկներից:

Պարզագույն գիտելիքներ ունենա պինդ, հեղուկ, գազային նյութերի մասին:

Նախնական գիտելիքներ ունենա մասնիկների շարժման և փոխազդեցության, մարմինների չափերի, ջերմաստիճանի մասին:

Կարողանա օգտվել պարզագույն չափիչ սարքերից և կատարել չափումներ, (երկարություն, կշիռ, ջերմաստիճան):

Կարողանա պարզագույն փորձերի միջոցով հիմնավորել նյութերի փոխազդեցությունը և փոխակերպումը, դրանց վերաբերյալ կենցաղում հանդիպող օրի-նակներ բերի:

Կարողանա իր շրջապատում եղած նյութերը դասակարգել, դիտարկել նյութի մի տեսակից մյուսի փոխակերպումը և եզրահանգումներ անել:

Կարողանա կատարել օդի, ջրի ջերմաստիճանի չափումներ և գրանցել:[2]

Իմանա, թե ինչպես է մարդը վերափոխել շրջակա աշխարհը, նախնական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության և իր կյանքում բնության դերի մասին:

Իմանա տնտեսության գլխավոր ճյուղերի մասին:Իմանա ապրանքափոխանակության և փողի նշանակության մասին:Իմանա, թե ինչ են օգտակար հանածոները, դրանց ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը:Նախնական գիտելիքներ ունենա բնության աղտոտվածության, աղբի կուտակումների հետևանքների մասին:Օանոթ լինի բնությանը նվիրված ստեղծագործությունների:Կարողանա ուսումնական իրավիճակում իրականացնել ապրանքափոխանակություն և առևտուր:Կարողանա օրինակներով հիմնավորել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից:Կարողանա ներկայացնել տնտեսության և բնության միջև գոյություն ունեցող կապը:Կարողանա հիմնավորել բնական պաշարների ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը:Իմանա կենցաղային թափոնների երկրորդային մշակման մասին: Կարողանա մեկնաբանել, թե ինչպես բնահամակարգերում որևէ օղակին հասցրած վնասը կարող է խաթարել ողջ համակարգը:Մեկնաբանի, թե ինչպես է մարդու գործունեությունն ազդում բնության վրա:Կարողանա մեկնաբանել բնության հանդեպ իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, հասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության հասցրած վնասը բնությանը:

Ճանաչի իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, իմանա պետական օրհներգը:Կարողանա թվարկել Հայաստանի մեծ քաղաքները, լճերը, գետերը, լեռները, հարևան պետությունները, կարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա:

Ծանոթ լինի հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նշանակալի որոշ իրադարձությունների գործիչների, նախնական գիտելիքներ ունենա իր հայրենիքի պատմության ու մշակութային հուշարձանների մասին:

Իմանա ազգայինպետական տոների մասին: Կարողանա տարբերակել ժամանակագրական միավորները (տարի, հարուրամյակ և այլն): Կարողանա բացատրել հայրենիքի նշանակությունը իր կյանքում:

Իմանա Հայաստանի մարզերը, մարզկենտրոնները, կարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա:Նախնական գիտելիքներ ունենա մարդկանց լեզվական, մշակութային,ռասայական, տարիքային, սեռային և այլ տարբերությունների և դրանցով պայմանավորված ընկալումների բազմազանության մասին:

Իմանա հասարակական վարքի կանոնները, իր իրավունքներն ու պարտականությունները:

Հասկանա կարծրատիպերի և նախապաշարումների վտանգը և կարողանա օրինակներ բերել: Բացատրի մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, բարեկամության և խաղաղության կարևորությունը, կարողանա պահպանել համակեցության կանոնները:

Կարողանա հիմնավորել ընկալումների բազմազանությունը հարգելու անհրաժեշտությունը:

Կարողանա օգտվել մարդու, հասարակության և շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

Սկսաց << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի 2-րդ դասարանի 1-ին դասից, պետք է աշխատել վերը նշված խնդիրների կատարման վրա, որի արդյունքում կձևավորվի նշված արժեքներին տիրապետող պատասխանատու, հարգալից, հայրենասեր, ծնողասեր, հասարակության մեջ իր և յուրաքանչյուրի դերը գիտակցող, շրջակա միջավայրի հանդեպ ուշադիր աշակերտ և ապագա պիտանի քաղաքացի:[2, էջ 25]

3. Փորձարարական դասի ներկայացում <<Աջակցում եմ համայնքիս>>: Բնապահպանական խնդիրների նախագիծ:

Բոլոր համայնքներում էլ ավելացել է թափառական կենդանիների քանակը և մեծացել է այդ կենդանիներին, հնարավոր ձևով կացարանով, ապահովելու պահանջը: Տարրական դասարաններում, ստացած բնապահպանական գիտելիքները և պատասխանատու վերաբերմունքը ֆաունայի և ֆլորայի հանդեպ, օգտագործելով, կարելի է այս հարցին մասնակի լուծում տալ: Գտնում ենք համայնքի որևէ ազատ տարածք, որտեղ հարմար կլինի կենդանիների համար կացարաններ կառուցել, թույլտվություն ենք ստանում համայնքապետարանի կողմից: Ծնողների և այլ բարեխիղճ քաղաքացիների օգնությամբ կառուցում ենք հնարավորինս հարմարավետ կացարաններ և երեխաների միջոցով հայտնաբերելով անտուն կենդանիներին, մեծերի օգնությամբ տեղափոխում ենք նրանց այդ կացարանները: Սովորողների աշխատանքը այստեղ միայն կենդանիներին հայտնաբերելը և նրանց կերակրելը կլինի: Այնուհետև համացանցի միջոցով տարածում ենք տեղեկատվություն այդ կենդանիների մասին և ցանկացողներին՝ ովքեր ունեն պատասխանատու և բարեխիղճ վերաբերմունք կենդանիների հանդեպ:

Այս ձևով մենք համայնքում, երեխաների միջոցով, լուծում ենք միանգամից երկու խնդիր՝

1. Լուծում ենք անօթևան կենդանիների քանակի հարցը
2. Լուծում ենք սննդային աղբի քանակը՝ դեն նետելու փոխարեն ազատ ժամերին երեխաները դրանով կերակրում են կենդանիներին:

4. Եզրակացություն

Սույն հետազոտության շրջանակներում կատարենք ենք հետևյալ եզրակացությունը:

1. Բնապահպանական խնդիրներին Ես և շրջակա աշխարհը առարկայի շրջանակներում անդրադարձ կատարվում է, սկսած 2-րդ դասարանից: Առարկայի միջոցով երեխաների մոտ ձևավորվում է սեր դեպի իրեն շրջապատող աշխարհը, որի անբաժանելի մասն են բույսերը և կենդանիները: Երեխան հասկանում է բնապահպանական խնդիրների կարևորությունը: Գիտակցում է խմելու ջրի խնայողաբար օգտագործելու, բույսերին և կենդանիների չվնասելու դրական հետևանքները:
2. Կրթսեր դպրոցականների մոտ բնապահպանական դաստիարակությունը, ավելի արդյունավետ է, երբ այն իրականացվում է էքսկուրսիաների, խաղերի և փորձերի համադրությամբ: Երեխաների մոտ գիտելիքները ավելի լիարժեք և կայուն են լինում, երբ իրենց ձեռքով բնության համար որևէ բան են անում, այս դեպքում բնություն – երեխա կապը հաստատուն է:
3. Կրթսեր դպրոցականների մոտ բնապահպանական դաստիարակությունը կատարվում է դժվարությամբ: Քանի որ, նրանք աշխարհը ընկալում են այլ ձևաչափով և նրանց մինչ այդ ձևավորված աշխարհահայացքը փոխելը խնդիրներ են ստեղծում:

5.Գրականություն

- 1.Ա.Մ.Սարաֆյան.Հոդված 3.2017
- 2.<< Ես և շրջակա աշխարհը >> առարկայի տարրական դպրոցի չափորոշիչ և ծրագիր նախագիծ 2020թ:
- 3.<< Ես և շրջակա աշխարհը >> դասագիրք 2-րդ դասարան
- 4.<< Ես և շրջա աշխարհը >> դասագիրք 3-րդ դասարան
- 5.<< Ես և շրջակա աշխարհը >> դասագիրք 4-րդ դասարան
- 6.anahit75.wordpress.com
- 7.lusinepetrosyan77.wordpress.com
8. <https://forum.armedu.am/forum>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ԱՆԱՀԻՏ ՍՅԱՍՆԻԿԻ ԲԱԲԵԼՅԱՆ

Թեմա

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՁԵՎԵՐԸ: ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՄԿՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ մ. գ. թ. Լ. Միրաբյան

Վանաձոր 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1	4
1.1 Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը	6
1.2 Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշները	8
1.3 Սոցիոլոգիական հարցումներ, արդյունքների ամփոփում, վերլուծություններ. ..	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	15

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ: ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ
ԻՆՔՆԱՎԵՐԱՀՄԿՈՒՄ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, ինքնաստուգումն ու ինքնավերահսկումը արդիական է և ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի, քանի որ ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտի ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ինքնուրույն սովորել սովորեցնելը այսօր նաև պետության կողմից իջեցված կրթական չափորոշչային պահանջ է:

Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է: Ժամանակակից աշխարհի պայմաններում այն ավելի քան երբևէ ակտուալ է, քանի որ ներառում է դպրոցականների ոչ միայն անձնային զարգացման և նրանց անկախության ձևավորման, այլև մատաղ սերնդի ստեղծագործական դաստիարակության խնդիրները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խնդիրը նոր չէ: Տարբեր ժամանակներում այդ խնդիրներով զբաղվել են մանկավարժության պրակտիկայի երախտավորները: Այսպես, օրինակ, գիտական մանկավարժության հիմնադիր Յ. Ա. Կոմենսկին գրել է. «Մեր դիդակտիկայի ալֆան և օմեգան կդառնա այն եղանակի որոնումն ու հայտնագործումը, որի ժամանակ ուսուցանողը քիչ սովորեցնի, իսկ ուսուցանվողը շատ սովորի»¹: Այդ կապակցությամբ էլ ուշագրավ մտքեր է հայտնել նաև ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին: Նա պահանջում էր ուսուցումը այնպես կազմակերպել, որպեսզի «Սովորողները հնարավորին չափ սովորեն ինքնուրույնաբար, իսկ

¹ (5) Յ. Ա. Կոմենսկի, «Լույս» հր., 1957, էջ 18 :

սովորեցնողը ղեկավարի այդ ինքնուրույն աշխատանքը»²: Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությունը ընդգծել են նաև հայ մանկավարժները՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Առ. Բահաթրյանը և ուրիշներ:

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ է ուսումնասիրել սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը, ինքնաստուգումը և վերահսկումը, ծանոթանալ տեսական գրականությանը կարևորելով այն արժեքավոր մտքերը, գաղափարները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

1. Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակը տարրական դպրոցում:

2. Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:

3. Բացորոշել աշակերտների ինքնուրույն աշխատանքների դասակարգման հատկանիշները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործած գրականությունից:

ԳԼՈՒԽ 1

**Ինչ է նշանակում ինքնուրույնություն և ինքնուրույն աշխատանք,
ինքնաստուգում և ինքնավերահսկում:**

Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և

² (7) Կ .Դ. Ուշինսկի Մանկավարժական ընտիր երկեր, Լույս հր., Երևան, 1997, էջ 45 :

կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի և այդ աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Իսկ ինչ են իրենցից ներկայացնում «ինքնուրույնություն» և «ինքնուրույն աշխատանք», «ինքնաստուգում», «ինքնավերահսկում» արտահայտությունները:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնավերահսկումը դա սեփական վարքը, հույզերը մտքերը կանոնավորելու ունակություն է՝ ի պատասխան գայթակղությունների և ազդակների: Այն ճանաչողական գործընթաց է, որն անհրաժեշտ է կարգավորելու սեփական վարքագիծը՝ կոնկրետ նպատակներին հասնելու համար:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Սովորողների ինքնուրույնության և գործունեության զարգացման հարցը կարևորել է Կ.Դ. Ուշինսկին, ով գրել է, որ երեխաները պետք է «եթե հնարավոր է ինքնուրույն աշխատեն, իսկ ուսուցիչը պետք է ղեկավարի այս անկախ աշխատանքը և նյութ տրամադրի նրան»³: Նա հիմնավորեց դասարանում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման որոշ ուղիներ ու միջոցներ՝ հաշվի առնելով ուսուցման տարիքային շրջանները:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման

³ (6) Յան Ամոս Կոմենսկի «Մեծ դիդակտիկա», Երևան, 1962, (էջ 126)

միջոց, այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

1.1 Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ

- ❖ Ճիշտ և պարբերաբար կազմակերպված ինքնուրույն աշխատանքի արդյունքում սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում, երբ ուսուցիչն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:

- ❖ Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

- ❖ Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների գործնական կարողությունների և

հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

❖ Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. Կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. Բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. Նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. Կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական

աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. Հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. Անփոփոխ փուլ. Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում, վերլուծում է ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնուլ ևս մեկ կառուցվածքային փուլ՝

7. Ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

✓ *Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,*

✓ *Ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:*

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

1.2 Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշները

Ինքնուրույն աշխատանքի տեսակները

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից:

I ըստ ուսումնական նպատակների

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող

2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող

3. Գիտելիքները համակարգող

4. Որոշակի կարողություններ զարգացնող

5. Ստուգող, վերահսկող

II Ըստ ճանաչողական գործունեության բնույթի

1. **Ըստ տրված նմուշի** օրինակ՝ գրել տառեր, թվեր, սուսնձել տուփ և այլն, այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա: Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրման միջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:

2. **Կառուցողական**, որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին ներկայացվում է նշանակալի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարները և մեթոդները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար:

3. Ստեղծագործական հետազոտական, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների, ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական

բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

III Ըստ կազմակերպման ձևի

1. Ընդհանուր (ճակատային), երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը:

2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա:

3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

IV Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարաններ և այլն: Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին: Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում: Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:

2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն:

3. Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները: Սովորողները հաշվում են , չափում, ստեղծում: Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ:

Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշականություն, քանի որ նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4. Գրաֆիկական աշխատանքներ

5. Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր «ես և շրջակա աշխարհը» առարկայի ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

V Հստ կատարման տեղի

1. Դասարանում,
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ,
3. Տանը:

1.3 Սոցիոլոգիական հարցումներ, արդյունքների ամփոփում, վերլուծություններ


Սոցիոլոգիական հարցումները անցկացվել են վերապատրաստման դասընթացին մասնակցող դասվարների շրջանում՝ բացահայտելու համար թե ինքնուրույն աշխատանքի կատարման որ ձևը և կատարման որ տեղն են ավելի շատ օգտագործում:

Հարցվողների թիվը քսանվեցն են

Վերապատրաստվող դասվարների շրջանում կատարված հարցումների արդյունքում պարզ է դառնում


Ա. ինքնուրույն աշխատանքի կատարման ձևի հետևյալ հարաբերակցությունը՝

1. ընդհանուր՝ 40%
2. խմբային՝ 25%
3. գույգով՝ 10%
4. անհատական՝ 25 %



Բ. ինքնուրույն աշխատանքի կատարման տեղի հետևյալ հարաբերակցությունը՝

1. դասարանում՝ 60%
2. տանը՝ 30%
3. արտադասարանային միջոցառումների ժամանակ՝ 10%



Այսպիսով՝ հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը առավելությունը տալիս է ինքնուրույն աշխատանքի ըստ տեղի՝ դասարանում և ըստ ձևի՝ ընդհանուրին:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան բոլոր է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքների բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:

3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտե՞լիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր

Ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, օրինակ՝ բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը: Սակայն պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում. Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8. Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միննույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել:

Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացությանը՝

Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է: Վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից: Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ինքնաստուգման, ինքնավերահսկման կամային հասկանիշների, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Բալյան, Առաջին կուրսեցու ուղեցույց , Երևան, «Լույս» հր. ,1973;
2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
3. Կ. Թորոսյան, Ա. Բալյան, Կ. Չիբուխյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, 2016թ.
4. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.
5. Յ. Ա. Կոմենսկի, «Լույս» հր., 1957, նաև Յու. Ամիրջանյան, Ժամանակակից դիդակտիկա, «Լույս», հր., Երևան, 1947:
6. Յան Ամոս Կոմենսկի «Մեծ դիդակտիկա», Երևան, 1962, (էջ 126)
7. Կ .Դ. Ուշինսկի Մանկավարժական ընտիր երկեր, Լույս հր., Երևան, 1997:
8. <https://znanio.ru>
9. <https://lib.armedu.am>
10. <https://multiurok.ru>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ,ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման
դասընթացներ

ԳՈՀԱՐ ՍԱՄՎԵԼԻ ԱՂՎԱՆՅԱՆ

Թեմա

«Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և
դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Մ.Գ.Թ. ՄԻՐԱԲՅԱՆ Լ,

ՎԱՆԱԶՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ.....	4
1.1 ՏՀՏ-ի արդյունավետ կիրառումը դպրոցում.....	5
2.1 ՏՀՏ-ն ուսումնական գործընթացում	5
3. ՏՀՏ-ի կիրառումը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում.....	8
Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը	11
Համակարգիչ, համացանց	12
Մեդիագրագիտություն	16
Հետազոտական մաս	17
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ	21

Ներածություն

Արդի ժամանակաշրջանում ահռելի դեր և նշանակություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ, բնականաբար, անմասն չեն մնացել երեխաները, ովքեր ենթարկվում են վերջինիս կանոններին: Այստեղ մեծանում է ուսուցչի դերի կարևորությունը երեխայի բազմակողմանի զարգացման հարցում: Կրթական բարեփոխումների արդյունքում ուսուցիչը պետք է կարողանա ձևավորել գիտակից քաղաքացի, ով կկարողանա դիմակայել ժամանակակից աշխարհի մարտահրավերներին: Չարգացած երկրներում անհնար է ապահովել հանրամատչելի և արդյունավետ կրթություն: Երեխայի առջև պետք խնդիր դնել, գիտակցական մակարդակը այնքան բարձրացնել, որ երեխան կարողանա ընտրել իրեն անհրաժեշտ և պիտանի ինֆորմացիան, այլ ոչ թե սահմանափակել երեխային օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից: Անհրաժեշտություն է առաջանում նաև աշխատանքներ տարվեն ծնողների շրջանում:

Հետազոտության նպատակներն են՝

1, Ուսումնասիրել SՏՏ միջոցների դերին և ազդեցությանը երեխայի հոգեբանական զարգացման մեջ:

Հետազոտության խնդիրներն են՝

1, Ուսումնասիրել SՏՏ ոլորտի ազդեցությունը երեխայի վարքագծի վրա

2, Բացահայտել SՏՏ դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

3, Իրականացնել հետազոտություն պարզելու SՏՏ-ի ազդեցությունը դրական ու բացասական կողմերի վրա:

1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

21-րդ դարը տեղեկատվական հեղափոխության դար է: Տեղեկությունների ստեղծումը, դրա փոխակերպումը ծառայությունների և ապա տարածումը համարվում են արդի աշխարհի տնտեսության առանցքը: Տեղեկատվական ու հեռահաղորդակցական հեղափոխությունը ներառել է սոցիալական կյանքի բոլոր ոլորտների վրա աշխատողներից պահանջելով առավել խոր ու արդիական հմտություններ: Այս գործընթացները առաջին պլան են մղել գիտությունը՝ այն դարձնելով զարգացման գլխավոր գործոն: ՏՀՏ-ի ներդրումը խթանում է ուսուցման ինտերակտիվ և կենսունակ մեթոդներ, ակտիվ ու ստեղծագործ , իսկ ուսուցումը կազմակերպվում է առավել փոխգործակցային մեթոդներով: ՏՏ-ի միջոցով կրթությունը սովորողների մոր խթանում է ինքնուրույն աշխատելու , առցանց թիմային փոխհարաբերություններ ծավալելու և վերլուծական ու քննադատական հայացքով խնդիրները դիտարկելու կարողություններ:^[1]

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, առողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհը :Մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան:Մեդիամիջոցների արագ փոփոխման հետևանքով մանկավարժական ուսումնասիրությունները կորցնում են իրենց արդիականությունը:Տեղեկատվական դարաշրջանում կրթական ոլորտի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվություն և հաղորդակցություն արդի միջոցների և տարածման հետ:

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի , դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ:^[2]

1,Բայան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան: Լույս 1983, էջ 31-33:

2,Մխիթար Գոշ <<Գիտամեթոդական հանդես >> 2013 թ,էջ 84-86

1.1 SՏՏ-ի արդյունավետ կիրառումը դպրոցում

SՏՏ-ի ինտեգրումը դասապրոցեսին բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը: SՏՏ-ները ուսուցմնա պրոցեսը դարձնում են ավելի հետաքրքիր ,բովանդակալից` ներկայացնելով

անհրաժեշտ ինֆորմացիան անհրաժեշտ ժամանակին:

SՏՏ-ն անհրաժեշտ է ժամանակակից դասին: Դասապրոցեսին ակտիվ օգնական և մասնակից կարող է լինել աշակերտը: Յուրաքանչյուր

աշակերտ յուրացնում է նոր գիտելիքները տարբեր ձևով: SՏՏ-ի կիրառմամբ ուսուցման պրոցեսում:՝աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասապրոցեսի կազմակերպման մեջ:

Այսպիսով` SՏՏ-ների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է, և

դրական նշանակությունը ակնհայտ է: Սակայն հարց է առաջանում , թե որքան արդյունավետ են դրանք օգտագործվում :^[6]

2.1 SՏՏ-ն ուսումնական գործընթացում

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման նախապայմաններից մեկը: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որը անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում է ուսումնական գործընթացում

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը: Հիմնականում դպրոցներն ունենում են համակարգչային սենյակ, համացանց, որից ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային դասընթացներ:

SZS-ի գործաձույթյամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական նյութը դարձնել ավելի ինտերակտիվ:²

Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն

էլ կարող է փոփոխել ու նույնիկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Մա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում, դասարանում, շրջապատում կա մի բան, որը կախված է իրենից:

1, Նոր թեմայի ներկայացում

▪ Դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսնյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ: Նմանատիպ դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

2, Ուսուցչի բացատրություններին ուղեկից

▪ Օգտագործվում են կոնկրետ դասորի համար ստեղծված նյութ համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ,

▪ տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են

▪ իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են իրենց

▪ կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է

▪ կիրառական տեսանելի ու հասկանալի:

▪ 3, Աշակերտի անհատական աշխատանք

▪ Ուսուցիչը դառնում է ուղեկից, ով ցույց է տալիս ճանապարհը, բայց ճանապարհի ամբողջ <<ծախսն>> իր վրա չի վերցնում:

▪ Աշակերտը ընթացքում ոչ միայն պետք է ապահովի իր

ի գործադրի, ցույց տա իր մոտեցումներն ու ինքը փորձի ճանապարհն առավել առավել գեղեցկացնել, հետաքրքրացնել: Իսկ նորագույն տեխնոլոգիաների միջավայրը երեխաների սիրելիներից է, որը կարելի է և պետք է օգտագործել ի շահ:

4. Գիտելիքի ստուգում

▪ Հմտագրային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Հնարավոր է կազմել այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքներ, որոնք կլինեն մեկ օրինակով: Մաամենահարմար տարբերակներից է ապահովել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում:

Ի՞նչ է ստանում ուսուցիչը S2S-ի կիրառման միջոցով

▪ *Նա խնայում է իր անձնական ժամանակը, որը կարող է, բայց չէր հասցնում անցկացնել իր ընտանիքի հետ, ծախսել իր անձնական կարիքների բավարարման և ի վերջո առանց տեսր ու կարմիր գրչի բազմոցին հանգիստ նստելու համար:*

▪ *Տեսնում է իր աշխատանքի արդյունքը: Ստանում է այն զգացողությունը, որ իր ժամանակը ծախսվել է արդյունավետ և նպատակային:*

▪ *Ստանում է բավարարվածության զգացում իր աշխատանքից՝ տեսնելով աշակերտների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը դասադրոցեսին:*

▪ *Ան ընդհատ զարգանում ու կատարելագործվում է որպես*

▪ *մասնագետ, կիրառում է ժամանակակից մեթոդներ իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, նոր հմտություններ ձեռք բերելու և միշտ ձեռքը ժամանակի զարկերակին պահելու համար:^[7]*

7,Imdproc,am

3. ՏՀՏ-ի կիրառումը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում

Յուրաքանչյուր առարկայի նկատմամբ հետաքրքրությունը սովորողի մոտ ձևավորվում է այն ժամանակ, երբ նրան պարզ է, թե ինչի մասին է խոսում ուսուցիչը, երբ հետաքրքրիր են խնդիրներն ու վարժությունները, որոնք նյութի յուրացման ժամանակ նպաստում են ինքնուրույնության զարգացմանը, սովորեցնում են ոչ միայն եզրակացություններ ու ընդհանրություններ անել, այլև բացահայտում են ստացված գիտելիքների հետագա կիրառման հնարավորությունները՝ զարգացնելով սովորողի անհատական առանձնահատկությունները: Ահա թե ինչն^օ ուսուցիչը անընդհատ պետք է ձգտի դասավանդման համակարգերի նորացմանը, որը պետք է ուղղված լինի սովորողների մոտ ուսումնական գործընթացի նկատմամ շահագրգռվածության բարձրացմանը:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տալիս է այն, ինչը չի կարող տալ դասագիրքը, դասերին համակարգիչը հանդիսանումն է մի միջոց, որի շնորհիվ սովորողը կարողանում է ավելի լավ ճանաչել ինքն իրեն, իր ուսուցման անհատական առանձնահատկությունները՝ նպաստելով ինքնուրույնության զարգացմանը: Իսկ համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման գլխավոր խնդիրը, մի կողմից մարդու մտավոր հնարավորությունների ընդլայնումն է, մյուս կողմից՝ համակարգչի միջոցով ստացված տեղեկույթի կիրառման կարողությունը:

Ուսումնական գործընթացում օգտագործվել են տեղեկատվական-
հաղորդակցական տեխնոլոգիաների հետևյալ միջոցները,

- Մուլտիմեդիոն հնարավորությամբ դաս, դասարանում առկա է 1 համակարգիչ, որից ոչ միայն ուսուցիչն է օգտվում որպես «էլեկտրոնային գրատախտակ >>, այլ աշակերտ, օրինակ՝ նախագծերի պաշտպանության ժամանակ:

▪ Դաս, որն անցնում է համակարգիչների օգնությամբ, որոնց միջոցով սովորողները խմբերով կամ առանձին- առանձին կատարում են լաբորատոր աշխատանքներ, գորշնական, թեստեր և այլն:

▪ Աշխատանք էլեկտրոնային դասագրքերով հատուկ ուսուցանող համակարգերի օգնությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները բնութագրվում են նաև այն միջավայրում, որտեղ դրանք իրականացվում են, և այն բաղադրիչներով, որոնք դրանք պարունակում են ,

- Տեխնիկական միջավայր
- Առարկայական միջավայր
- Մեթոդական միջավայր

ՏՀՏ-ների կիրառումը հետաքրքրական է նրանով, որ ուղղված է սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացմանը՝ դարձնելով ուսուցչի աշխատանքը առավել արդյունավետ:

Մաթեմատիկայի դասերին համակարգչային տեխնոլոգիաները խնայում են ժամանակը, բանձրացնում են ուսուցման դրդապատճառները, թույլ են տալիս անցկացնել գիտելիքների , կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում, մեծացնում են ուսման, առարկային նկատմամբ հետաքրքրությունը, թույլ են տալիս տեսանելի և գունեղ ներկայացնել նյութը: Մաթեմատիկայի դասերին տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակահարմար՝ կիրառել նոր հասկացությունների ներմուծման, մոդելների ցուցադրման, մոդելավորման, որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորման, գիտելիքների ստուգման ժամանակ:

Մուլտիմեդիոն և ինտերակտիվ սարքավորումների միջոցով աշխատանքը սովորողի մոտ բարձրացնում է ուսման նկատմամբ հետաքրքրությունը, հնարավորություն է ստեղծել հետաքրքրաշարժ դաս, և որ ամենակարևորն է, թույլ է տալիս ստեղծել անմիջական՝ հետադարձ կապ, արդյունքը երևում է անմիջապես՝ արդյո՞ք նյութը յուրացվեց, թե՞ ոչ:

Բացի այս ամենը՝ յուրաքանչյուր դասին սովորողներին հնարավորություն է տրվում ինքնաարտահայտվել, ցուցաբերել սեփական ուժերը և այլն:

Այսպիսով՝ ՏՀՏ-ների կիրառությունը մաթեմատիկայի դասերին հնարավորություն է տալիս

- Համալիր ձևով լուծել կրթական, դաստիարակչական, զարգացնող խնդիրները
- Յուրաքանչյուր սովորողի համար դնել կոնկրետ խնդիրներ կապված նրա ընդունակություններից, պատրաստվածության մակարդակից
- Օգտագործել էլեկտրոնային միջոցներ, տեսակներ, որոնք ակտիվացնում են ուսումնական գործունեությունը
- Սովորողների մոտ ձևավորել գիտելիքների ինքնուրույն ստացման կարողություններ
- Համացանցում տեղեկույթի որոնման, համախմբման և մշակման կարողությունների զարգացում
- Իրականացնել անմիջական հետադարձ կապ և օգնություն զարգացման համակարգ ունեցող ուսումնական գործունեությունը:²

Տեղեկատվական դարաշրջանում կրթական ոլորտի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար, չի կարող հեռու մնալ այս գործընթացից:

Մանկավարժական տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները,

- Ուսուցման որակի ապահովում և կրթական բաց համակարգերի (բաց կրթություն)կառուցման սկզբունքներ
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծագործական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց
- Կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում
- Տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան և կրթության ու կրթական ծառայությունների ինտեգրումը

- Տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատների մտավոր

զարգացման վրա: <<3>>

Բոլորիս ընտանիքներում իր պատվավոր տեղն է զբաղեցնում հեռուստացույցը՝ որպես ներ կենցաղի ամենօրյա ուղեկից : Նախկին բակային և մանկական խաղերից փոարինելու են եկել հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսն ու պլանշետները, ինչպես նաև համացանցը: Հեռուստացույց դիտելը դարձել է այնքան

հարազատ բան, որ մենք նույնիսկ մոռանում ենք նրա վնասակար կողմերի մասին:

Հեռուստատեսության առավելությունն այն է, որ նա <<պատուհան է դեպի աշխարհ>>, դիտողին կապում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչ-որ իմաստով դարձնում է դրանց մասնակիցը: Այդ իմաստով հեռուստատեսությունը կարող է մեծ ներդրում կատարել շատ խնդիրներ լուծելու և մեր հոգևոր հորիզոնն ընդլայնելու հարցում հասնել ցանկալի արդյունքի:

Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը

Շատ երեխաներ իրենց օրն անցկացնում են էկրանի առջև ժամերով նստած: Հեռուստացույցի առջև երկար նստելը վնասակար է երեխաների առողջության համար: Ծնողները քաջատեղյակ են դրա մասին, սակայն ոչ մի կերպ չեն կարողանում երեխային կտրել հեռուստացույցից:

Հոգեբանները պնդում են, որ հեռուստացույցը առաջին հերթին ազդում է երեխայի զարգացող նյարդային համակարգի վրա, որն էլ անդրադառնում է երեխայի առողջության և վարքի վրա: Հեռուստացույցը սետեղծում է հիպոտոնիկ մի դաշտ, որն էլ ստիպում է երեխաներին ժամերով գամվել էկրանին:

Հեռուստացույցը շատ դիտելուց ակտիվանում է երեխայի աջ կիսագունդը, որը պատասխանատու է զգացմունքային ռեակցիաների

համար: Հեռուստացույցը վատ է անդրադառնում երեխաների հոգեկան

ներաշխարհի և վարքագծի վրա: Երեխաների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների կասկածելի նորամուծությունները՝ դաժանությունը, արյունը, սպանությունները: Այս ամենը ձևավորում է անբնական վերաբերմունք մահի հանդեպ: Երեխան այս ամենը դիտելուց հետո դառնում է նյարդային, կռվարար, ջղային, գայրացկոտ: Ամեն առիթով սկսում է լաց լինել, չի լսում ծնողներին:

Համակարգիչ, համացանց

Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սուկ հզոր տեխնիկական միջոց լինելուց և դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոփոխությունների գորեղ խթան:

Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որ հետագայում ծավալուն մշակույթի առիթ տվեց, ձևավորվեց նաև շնորհիվ երեխայի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների:

Սրանցից առավել հայտնիների թվում է Չվեյցարացի հոգեբան Ժ. Պիաժեի մշակած տեսությունը: Համաձայն այս տեսության՝ երեխայի զարգացումը կատարվում է 4 փուլով, որոնցից յուրաքանչյուրում նա բնորոշվում է միանգամայն տարեր իմացական հետաքրքրություններով ու միջավայրում գործելու եղանակներով:

Երեխան պարզապես փոքրիկ մարդ չէ: Մեծանալիս նա կտրուկ կերպարանափոխությունների է ենթարկվում: Փուլերից յուրաքանչյուրը երեխայի ուսման տարբեր կազմակերպում և տարբեր միջավայր է պահանջում: Ահա այս միջավայրերը ստեղծելու առումով է, որ համակարգիչը մեծ հնարավորություն է խոստանում: Մարդու միտքը միշտ ձգտում է ստեղծել ցանկացած գործունեության համար հարմար միջավայր, իսկ համակարգիչը առաջարկում է նախապես և մեծապես մշակված միջավայրեր: Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը:

Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությանը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արձարծվում և բարձրացվում են սոցիալ-մշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Հմացանցը տեղեկատվության անփոխարինելի աղյուր է ուսումնական և սոցիալական տեսակետից: Հակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասնագետից առցանց ֆորումների միջոցով, լիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից: Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են:

Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Հմացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, երոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացառվում, որ երեխաները ևս նմանօրինակ ինֆորմացիայի հանդիպեն:

Մեռերին և սեռական կյանքին վերաբերող տեղեկատվական և տեսանյութի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա բացասական հետևանքներ ունենալ տարիքին բնութագրական տվյալ ոլորտի նկատմամբ

դրսևորվող գերուշադրության ու հետաքրքրության վրա, ընդհանրապես չձևավորված սեռական, սոցիալական, հոգեկան ոլորտների զարգացման ընթացքների վրա:

Այսօր որոշ երկրներում կան որոնման յուրատեսակ համակարգեր՝ նախատեսված երեխաների համար:

Այդ որոնող համակարգերը ստուգում և արգելում են անպատշաճ բառերը, որոնք բերվում են որոնման ժամանակ: Այդ համակարգում աշխատում են մասնագետներ և գիտնականներ, մանկավարժներ և բացառվում է որևէ անպատշաճ կայքի դուրս հանդիպում:

Մարդկությունը բավական շուտ գիտակցեց համակարգչի ազդեցությունը մարդու ֆիզիկական առողջության վրա, սակայն դեռևս քիչ են խոսում մարդու հոգեկան աշխարհի վրա համակարգչի ազդեցության մասին:

Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ⁴: Ինֆորմացիոն աշխարհն իր բոլոր դրսևորումներով ազդում է մարդու արժեքային

համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Այսինքն համացանցը ազդում է երեխայի

աշխարհայացքի ձևավորման վրա: Բուռն երևակայության շրջան համարվող մանկական տարիքում համակարգչային խաղերն իրենց գունավոր աշխարհներով, հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով, հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային:

Շատ ավելի լուրջ հետևանքներ է ունենում այն փաստը, որ շատ խաղերում ազդեցիկ վարքի ձևեր ու մոդելներ են դրսևորվում, որոնք երեխաներն առանց գիտակցական

վերաբերմունքի ու գնահատականի նմանակման ուժով յուրացնում են:

Խաղալով երեխաները նույնանում են իրենց վիրտուալ կերպարի հետ՝ դառնալով ազդեցիկ, կոնֆլիկտային, դյուրագրգիռ ու նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակարգչից:

Արդյունքում՝ երեխաների մոտ կարող է ձևավորվել այն դիրքորոշումը, որ եթե

վիրտուալ աշխարհում կարելի է, թույլատրելի է սպանել, կործանել ու քանդել, ապա դա կարելի է անել նաև իրական աշխարհում:

Դրանք կարող են նաև մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել:
Մեծ մասամբ երեխաների մոտ հոգեբանական կախվածություն առաջանում է
դերային

խաղերի նկատմամբ⁴:

Մինչդեռ, վերջերս հոգեբույժներն ու հոգեբաններն ահազանգում են մի նոր, քիչ
ուսումնասիրված << հիվանդության>>՝ համակարգչային հախվածության մասին:
Միաժամանակ, համակարգչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան
զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի
աջջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր
թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգառումներ: Բացասական
հետևանքները կաշող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա
(մասնավորապես երեխայի հիշողությունն է վատացնում, դպրոցում դասերի
ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու
բղատողություններ անում), հոգեվիճակիների, անձնային հատկությունների
ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Առավել շատ են
հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման
բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ: ^[5]⁶

Ուսումնասիրությունները հաստատում են, որ համակարգչից չափից ավելի
օգտվելը կարող է առաջացնել ագրեսիա, որն ավելի շատ նկատվում է հուզական,
վարքային և ներքին մղման կառավարման խնդիրներ ունեցող երեխաների շրջանում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի համակարգչից կախվածության
հոգեբանական հարցը, որը հաճախ համեմատվում է հիվանդագին
խաղամոլության հետ: ⁷

Այստեղ է, որ անհրաժեշտություն է մեղիագրագիտությունը:

⁶ 4.Антон Платов., Дети и родители Сеть. Мир компьютеров. №3. 2004, с. 42-44:

5.Наталья Геннадьевна Мякинник., «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?» Абульханова Славская КÀ - стратегия жизни, М.: 1991
стр.15-17

Մեղիագրագիտություն

Մեղիակրթությունը և մեղիադաստիարակությունը դարձել են դարի հրամայական: Բոլոր զարգացած երկրներում առաջնային տեղ է հատկացվում մեղիագրագիտությանը, որը մարդկանց տալիս է ինֆորմացիայի սինթեզի, քննադատաբար գնահատման և վերլուծություն կատարելու հմտություններ: Մեղիագրագիտությունը անհրաժեշտ է բոլորին, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաներին: Եթե նախադպրոցական կամ կրտսեր դպրոցական տարիքի երեխանը ինչ-որ չափով վերահսկվում են ծնողների կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավելապես ազատ են իրենց ընտրությունների և որոշումներ կայացնելու հարցում, հետևապես այստեղ է անհրաժեշտ մեղիադաստիարակությունը: Մեղիագրագետ քաղաքացին ունի բարձր գիտակցված մակարդակ, իր գործողություններում ավելի վստահ է, ցանկացած իրավիճակում կարողանում է արագ կողմնորոշվել և տեղեկատվական հոսքերից քաղել այն, ինչ իրեն պետք է և օգտակար: Այս հարցում մեծ անելիքներ ունի ժամանակակից դպրոցի ուսուցիչը: Ուսուցիչը ամենօրյա մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ իր առարկաներին ինտեգրելով մեղիագրագիտության տարրերը, կկարողանա դաստիարակել առողջ քննադատություն ունեցող սերունդ: Մեղիագրագետ սերունդը, հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելու կանոններին, կարող է խուսափել մի շարք խնդիրներից:

Հետազոտական մաս

Այսպիսով, կարելի է ասել, որ հեռուստացույցը ազդում է երեխայի ուշադրության կենտրոնացման, ճանաչողական գործընթացների ընթացքի վրա: Երեխաները դառնում են

նյարդային, ջղային և ավելի զգայուն: Թվարկածները ակնառու ցույց տալու համար, անցկացվում է հետևյալ հետազոտությունը:

Հետազոտական աշխատանքը իրականացվում է 6-12 տարեկան սովորողների շրջանում:

Հետազոտմանը մասնակցում են 12 երեխա:

Սովորողներին առաջադրվում է նկար, որտեղ պետք է գտնեն 10 տարբերություն սահմանված ժամանակահատվածում: Այս աշխատանքը սովորողներից պահանջում է ուշադրության կենտրոնացում, համադրելու և հակադրելու կարողություն, արագ կողմնորոշվելու ունակություն:

Սովորողները մեծ սիրով սկսում են ուսումնասիրել նկարը և արագ-արագ գտնել ու նշել տարբերությունները: Նույնիսկ սահմանված ժամանակից շուտ, դասարանի 90%-ը գտնում է տարբերությունները:

2-րդ օրը սովորողները հեռուստացույցով մուլտֆիլմ են նայում՝ 20 րոպե

տևողությամբ: Մուլտֆիլմը դիտելուց հետո, սովորողներին առաջադրվում է նկար, որտեղ նորից պետք է գտնեն 10 տարբերություն սահմանված ժամանակահատվածում:

Նախ արձանագրենք, որ սովորողները նույն խանդավառությամբ չեն աշխատում: Դժվար են կենտրոնանում աշխատանքի վրա, ուշադիր չեն մանրուքներին, նյարդային են, զայրանում են տարբերությունները երկար փնտրելիս:

Հետևաբար, սահմանված ժամանակահատվածում ոչ բոլորն են հասցնում գտնել տարբերությունները՝ սովորողների 70%-ը:

Առաջին օրը, որ երեխաները առանց հեռուստացույցի առաջ նստելու էին առաջադրանքը կատարել, ունեցանք գերազանց արդյունքներ՝ 12 սովորողից միան 4-ը չկարողացան տրված ժամանակահատվածում գտնել բոլոր տարբերությունները, իսկ 2-րդ օրը, որ մուլտֆիլմ դիտելուց հետո էին կատարել աշխատանքը, ունեցանք 70% արդյունք՝ 12 սովորողից 3-ը չկարողացան սահմանված ժամանակահատվածում գտնել 10 տարբերությունները:

Մուլտֆիլմը դիտելու ընթացքում ստովորողները ժամանակ առ ժամանակ կրկնօրինակում էին մուլտֆիլմի հերոսներին, կրկնում նրանց շարժումները, երգում նրանց հետ, մուլտհերուսների հետ տխրում և ուրախանում:

Սա խոսում է այն մասին,որ շատ կարևոր է, թե երեխան ինչ է դիտում և դա հետագայում ինչպես կանրադառնա նրա հոգեբանության զարգացման մեջ:

Եզրակացություն

Իմ կարծիքով՝ ուսումնական պրոցեսում ՏՀՏ-ների արդյունավետ կիրառումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով

1, Էլեկտրոնային ձեռնարկների, կրթական հաստատության՝ համացանցի բացակայությամբ;

2, Մանկավարժների՝ ՏՀՏ-ների միջոցների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետման մակարդակով :

3, Հաճախակի կազմակերպվող առցանց մրցույթների, ՏՀՏ ոլորտին վերաբերող:

ՏՀՏ-ների արդյունավետ օգտագործման պրոբլեմներից մեկն այն է, որ օրինակ հիմնականում դասարաններում սովորում են մեծ քանակի աշակերտներ, իսկ ամբողջ դպրոցում առկա չեն քիչ քանակի համակարգիչներ: Օրինակ՝ եթե մի դասարանում սովորում է 28 աշակերտ և դպրոցն ունի 5 համակարգիչ, պրոեկտորն էլ բացակայում է, ապա այս դեպքում ուսուցիչը ինչպես կարող է անցկացնել իր դասը ՏՀՏ-ի կիրառմամբ:

ՏՀՏ-ների կիրառմանը դպրոցում կնպաստեն նաև հաճախակի կազմակերպվող մրցույթները, որոնք կմեծացնեն աշակերտների և ուսուցիչների հետաքրքրություններն ու ցանկությունները դրանց կիրառման ուղղությամբ:

Այսպիսով՝ տեղակատվական տեխնոլոգիաների օգտագործումը և ազդեցությունը երեխայի հոգեբանական զարգացման մեջ կարող է վճռորոշ և, նույնիսկ, ճակատագրական դեր ունենալ:

Կատարած հետազոտությունը ցույց տվեց, որ երեխաների աշխարհայացքի, սոցիալիզացիայի, կրթական մակարդակի, վարքագծի, ինչպես նաև շրջակա միջավայրում ինտեգրվելու մեջ մեծահասակների դաստիարակությունից և ցույց տված օրինակներից զատ շատ կարևոր են տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս ամենի հետ մեկտեղ պետք է գիտակցել, որ երեխան ընդօրինակում է այն, ինչ տեսնում է իր շրջապատում: Այս հարցում մեծ անելիքներ ունեն և՛ ծնողները, և՛ մանկավարժները: Կարևոր է, որ մեր երեխաները մեծանան խելացի, հետաքրքրասեր, բանիմաց, կարողանան առանձնացնել զլիավորը երկրորդականից, կարողանան իրենց սեփական կարծիքը հայտնել, դատողություններ անել և լինել հոգեպես կայուն ու առողջ:

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է օգտագործել հոգուտ երեխայի. անհրաժեշտ է մշակել այնպիսի ռազմավարություն, որը թույլ կտա օգտվել նոր ժամանակների ընձեռած լավագույն հնարավորություններից՝ զերծ մնալով վնասակարից: Ուստի, մեղիագրագիտությունը կարևոր նախապայման է կիրթ և լիարժեք հասարակություն ունենալու համար:

Օգտագործված գրականության ցանկ

- 1,Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան: Լույս 1983
- 2, Մխիթար Գոշ <<Գիտամեթոդական հանդես>>,Լույս 2013.236 էջ
- 3, Մխիթար Գոշ <<Գիտամեթոդական հանդես>>,Լույս 2015.302 էջ
- 4, Антон Платов., Дети и родители Сеть. Мир компьютеров. № 3. 2004
- 5, Наталья Геннадьевна Мякинник., «Компьютер в жизни детей и подростков: польза

или

вред?» Абульханова Славская КА - стратегия жизни, М.: 1991

6,armedu.am

7.imdproc.am